



«Հաստատում եմ»

Ռեկտոր _____ Ա.Յու. Սարգսյան

«27» դեկտեմբերի 2019 թ.

Կ.Տ.

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ
ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՀ, ք.Ստեփանակերտ Մխիթար Գոշ 5

Ստեփանակերտ 2019

Ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի կազմը

Անուն, Ազգանուն	Պաշտոնը հաստատությունում	Պատասխանատվությունը խմբում
Արմեն Սարգսյան	Ռեկտոր	Ինքնագնահատման զեկույցի պատրաստման գործընթացի համակարգող
Վիտյա Յարամիշյան	Ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր	IV և VIII չափորոշիչների նախապատրաստման խմբի պատասխանատու
Վալերի Ավանեսյան	Գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր	VI և IX չափորոշիչների նախապատրաստման խմբի պատասխանատու
Գեորգի Սահակյան	Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր	ԱրՊՀ ինքնագնահատման հանձնաժողովի անդամ
Ռուսլան Ավետիսյան	Վարչական աշխատանքների գծով պրոռեկտորի պաշտոնակատար	VII չափորոշիչի նախապատրաստման խմբի պատասխանատու
Գայանե Մարգարյան	Գիտքարտուղար	V չափորոշիչի նախապատրաստման խմբի պատասխանատու
Հասմիկ Ղազարյան	Ակ. Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի վարիչ	I չափորոշիչի նախապատրաստման խմբի պատասխանատու, «Հայոց լեզու և գրականություն» բակալավրի կրթական ծրագրի պատասխանատու
Շուշան Ասրյան	Տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի դոցենտ	II չափորոշիչի նախապատրաստման խմբի պատասխանատու
Լուսինե Մարգարյան	Բանասիրական ֆակուլտետի դեկան	III և X չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ

Վարդգես Սաֆարյան	Պատմության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ	III չափորոշիչի նախապատրաստման խմբի պատասխանատու
Հասմիկ Մինասյան	Որակի ապահովման կենտրոնի վարիչ	X չափորոշիչի նախապատրաստման խմբի պատասխանատու, ԱրՊՀ ինքնագնահատման հանձնաժողովի անդամ
Գոհար Գասպարյան	Ուսումնական գործընթացի վերահսկման բաժնի պետ	ԱրՊՀ ինքնագնահատման հանձնաժողովի անդամ
Նանա Առուստամյան	Գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության բաժնի պետ	IX չափորոշիչի նախապատրաստման, ԱրՊՀ ինքնագնահատման հանձնաժողովի անդամ
Շահեն Այդինյան	Մանկավարժության և սպորտի ֆակուլտետի ղեկան	ԱրՊՀ ինքնագնահատման հանձնաժողովի անդամ
Էրիկ Կազարամանյան	Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգերի սպասարկման բաժնի պետ	ԱրՊՀ ինքնագնահատման հանձնաժողովի անդամ
Զարինե Սառաջյան	Լրատվության և ՀԿ բաժնի պետ	VIII չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ
Իրենա Խաչատրյան	Ուսումնական գործընթացի կազմակերպման բաժնի պետ	X չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ, ԱրՊՀ ինքնագնահատման հանձնաժողովի անդամ
Նարինե Գրիգորյան	Հաշվապահական հաշվառման բաժնի պետ	II և VII չափորոշիչների նախապատրաստման խմբի անդամ, ֆինանսական գործունեության վերաբերյալ գործընթացների պատասխանատու
Կարեն Մեծլումյան	ՈւՀՏԱ և կարիերայի բաժնի պետ	IV և VIII չափորոշիչների նախապատրաստման խմբի անդամ, կարիերայի գործընթացների պատասխանատու
Նարինե Ավանեսյան	Ֆինանսահաշվային	VI չափորոշիչի

	ամբիոնի վարիչ	նախապատրաստման խմբի անդամ, «Ֆինանսներ /ըստ ոլորտի/» բակալավրի կրթական ծրագրի պատասխանատու
Կարինե Հարությունյան	Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի դասախոս	«Տեղեկատվական տեխնոլոգիաներ» բակալավրի կրթական ծրագրի պատասխանատու
Գալստյան Հասմիկ	Կենսաբանության ամբիոնի դոցենտ	VI չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ
Նելլի Բաղդասարյան	Պատմության ամբիոնի դոցենտ	VI չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ
Շուշան Ասկարյան	Գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ	I չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ
Էլլա Ղազարյան	Որակի ապահովման կենտրոնի մեթոդիստ	I չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ
Գայանե Աբրահամյան	ՈւՀՏԱ և կարիերայի բաժնի 1-ին կարգի մասնագետ	II չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ
Ռուզաննա Մանգասարյան	Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան	III չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ
Կարինե Բալայան	Կենսաբանության ամբիոնի դոցենտ	III չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ
Միրա Յարամիշյան	Ակ.Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դոցենտի պաշտոնակատար	III չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ
Արեգա Ինանց	Գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության բաժնի տեսուչ	III և V չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ
Ալվարդ Պետրոսյան	Ուսումնական գործընթացի կազմակերպման բաժնի տեսուչ	IV չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ

Վոլոդյա Միրզոյան	Բնագիտական ֆակուլտետի դեկան	V չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ
Կարինե Միքայելյան	Կադրերի բաժնի պետ	V չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ
Եղիշե Առուշանյան	Հրատարակչության բաժնի պետ	VII չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ
Հասմիկ Հարությունյան	Գիտական գրադարանի վարիչ	VII չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ
Էվելինա Բարսեղյան	ՈւՀՏԱ և կարիերայի բաժնի ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով մեթոդիստ	IX չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ
Մարիաննա Սարգսյան	ՈւՀՏԱ և կարիերայի բաժնի մասնագետ	Ինքնավերլուծության խմբի անդամ
Նանար Ծատրյան	«Անգլերեն լեզու» կրթական ծրագրի 1-ին կուրսի մագիստրանտ	IX չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ
Արևիկ Զալյան	«Հայոց լեզվի պատմություն և գրաքննադատություն» կրթական ծրագրի 1-ին կուրսի մագիստրանտ	I չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ
Մարիամ Գրիգորյան	Ասպիրանտ	III չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ
Արսեն Հայրապետյան	«Տնտեսագիտություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող	II չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ
Մերի Զաքարյան	«Ֆինանսներ» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանող	IV չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ
Լուիզա Ներսիսյան	Իրավաբան	VI չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ
Տաթև Միքայելյան	«Իրավագիտություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանող	VIII չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ

Անուշ Ղարիբյան	«Կենսաբանություն» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող	X չափորոշիչի նախապատրաստման խմբի անդամ
Լիլիթ Մարգարյան	Ուսանողական խորհրդի նախագահ	Ինքնավերլուծության խմբի անդամ
Աննա Գասպարյան	Ուսանողական գիտական ընկերության նախագահ	Ինքնավերլուծության խմբի անդամ
Լուսինե Վանյան	Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի դասախոս	Թարգմանությունների պատասխանատու
Յուրի Սարգսյան	Հայաստանի ամերիկյան համալսարանի շրջանավարտ	Թարգմանությունների պատասխանատու
Մանուշ Մինասյան	ԱՀ ազգային վիճակագրա- կան ծառայության նախագահ	Գործատու, ինքնավեր- լուծության խմբի անդամ
Արմինե Ալեքսանյան	ԱՀ փոխարտգործնախարար	Գործատու, ինքնավերլու- ծության խմբի անդամ
Ալինա Բաղդասարյան	Ստեփանակերտի թիվ 1 դպրոցի փոխտնօրեն	Գործատու, ինքնավեր- լուծության խմբի անդամ
Անահիտ Պողոսյան	Ստեփանակերտի թիվ 7 դպրոցի տնօրեն	Գործատու, ինքնավեր- լուծության խմբի անդամ
Արթուր Ավետիսյան	Ստեփանակերտի թիվ 6 դպրոցի տնօրեն	Գործատու, ինքնավեր- լուծության խմբի անդամ
Կարեն Առուշանյան	ԱՀ ազգային վիճա- կագրական ծառայության նախագահի տեղակալ	Գործատու, ինքնավեր- լուծության խմբի անդամ
<i>Անհրաժեշտության դեպքում տողեր ավելացնել</i>		

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	8
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	8
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	9
ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ	11
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	11
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ	21
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ	35
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ	56
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ	80
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ	99
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ	115
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ	132
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ	147
X. ՈՐԱԿԻՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ	160

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Ուսումնական հաստատության կառավարումը, կրթական և հետազոտական գործունեությունը և հասարակությանը մատուցվող ծառայությունները պարբերաբար բարելավվում են և միտված են.

- որակի մշակույթի ձևավորմանը,
- կրթական այնպիսի միջավայրի ստեղծմանը, որը կնպաստի աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին համապատասխան ուսումնառողների գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը,
- մասնագիտական կրթության արդյունավետության բարձրացմանը և հասարակության առջև հաշվետվողականության ապահովմանը,
- ազգային և միջազգային մակարդակներում ուսումնական հաստատության կողմից մատուցվող ծառայությունների համադրելիության և մրցունակության, ինչպես նաև թափանցիկության ապահովմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԳՆ – Արտաքին գործերի նախարարություն

ԱՀ – Արցախի Հանրապետություն

ԱրՊՀ – Արցախի պետական համալսարան

ԳԽ – Գիտական խորհուրդ

ԼՂՀ – Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն

ԿԳՄՆ – կրթության, գիտության և սպորտի նախարարություն

ՀԼԿ – հանրային կապերի և լրատվության բաժին

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

ՄԿԾ – մասնագիտական կրթական ծրագիր

ՄՈՒՀ – մասնագիտական ուսումնական հաստատություն

ՈԱ – Որակի ապահովում

ՈԱԱԿ – ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամ

ՈԱԿ – Որակի ապահովման կենտրոն

ՈԱՇ – որակավորումների ազգային շրջանակ

ՈԻԳԸ – Ուսանողական գիտական ընկերություն

ՈԻԽ – Ուսանողական խորհուրդ

ՈւՀՏԱ և Կ – ուսանողների հետ տարվող աշխատանքների և կարիերայի բաժին

ՈւՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր – ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր

ՊԴԱ – Պրոֆեսորադասախոսական անձնակազմ

ՊԻՄԲ – Պլանավորում-իրականացում-ստուգում- բարելավում

ՊՈԱԿ – պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՌԾ – Ռեզիմավարական ծրագիր

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Արցախի պետական համալսարանը իր ստեղծման օրից առայսօր առանձնահատուկ տեղ է գրավում Արցախի Հանրապետության ոչ միայն բարձրագույն կրթության և գիտության բնագավառում, այլև մշակութային, հասարակական-քաղաքական կյանքում՝ մշտապես կրելով «Մայր բուհ» պատվանունը: Արցախի մայր բուհը մանկավարժական ինստիտուտի կարգավիճակով ստեղծվել է 1969 թվականին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կենտրոն Ստեփանակերտ քաղաքում՝ հզոր ազդակ հանդիսանալով հայկական երկրամասում ազգային գործոնի պահպանման ու զարգացման համար:

Հիմնադրման պահին բուհը կոչվում էր Բաքվի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղ, 1974թ. վերանվանվում է՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտ, 1988թ.՝ Վանաձորի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղ, 1992թ.՝ Լեռնային Ղարաբաղի պետական համալսարան, իսկ 1996թ.՝ Արցախի պետական համալսարան:

Իր գործունեության 50 տարիների ընթացքում համալսարանը տվել է շուրջ 23.000 շրջանավարտ:

ԱրՊՀ շրջանավարտներ են Արցախի Հանրապետության նախագահը, Ազգային ժողովի նախագահը, պետնախարարը, օրենսդիր, գործադիր, դատական իշխանությունների բարձրագույն ղեկավարների մեծ մասը, ինչպես նաև հայտնի մանկավարժներ, գիտնականներ, զինվորականներ, գործարարներ, քաղաքագետներ, իրավաբաններ, շինարարներ, մարզիկներ, այլ բնագավառների մասնագետներ:

Ներկայումս ԱրՊՀ-ն, բացի վարչական շենքից, ունի երեք ուսումնական մասնաշենք և մեկ ուսանողական հանրակացարան, 5 ֆակուլտետ, 16 ամբիոն, 174 հիմնական և 106 ժամավճարային հիմունքներով աշխատող դասախոս, շուրջ 2600 սովորող:

Համալսարանն ունի նաև իր կերպարի մատուցման արտաքին բաղադրիչները՝ դրոշմ, պատկերանշանը (լոգո), հիմնը, որոնք տեղեկություն են հաղորդում բուհի մասին:

Համալսարանում ժամավճարային հիմունքներով դասավանդում են բարձրաստիճան պաշտոնյաներ /ԱԺ նախագահը, փոխնախագահը, մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարը, արդարադատության նախարարը, Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչության պետը և ուրիշներ/:

Ուսանողների և դասախոսների տրամադրության տակ է հանրակացարանը՝ ավելի քան 250 բնակիչ-տեղ հնարավորությամբ, որտեղ բնակվում են ոչ ստեփանակերտաբնակ ուսանողներն ու հրավիրված մասնագետները:

Գիտական գրադարանն ունի ավելի քան 100 հազար կտոր գիրք: Համալսարանական ներքին ցանցում տեղադրված է նաև էլեկտրոնային գրադարանը՝ մոտ 45000 անուն գրականությամբ: Գործում է գերարագ ինտերնետային կապը:

ԱրՊՀ-ն ունի հրատարակչություն, որտեղ հրատարակվում են «ԱրՊՀ գիտական տեղեկագիրը»՝ հումանիտար գիտություններ և բնական գիտություններ ուղղվածություններով, «Հայագիտական հանդեսը», «Արցախի համալսարան» պաշտոնաթերթը ու «Քո ժամանակը» ուսանողական թերթը, գիտամեթոդական և այլ գրականություն: 2019թ. համալսարանում հիմնադրվել է նոր տպարան:

Պայմանագրային հիմունքներով համալսարանում դասախոսում են ինչպես Արցախի, այնպես էլ ՀՀ-ից և արտերկրից հրավիրված բարձրակարգ մասնագետներ: Համալսարանն իր գոր-

ծունեության շուրջ 50 տարիների ընթացքում շարունակ բարելավել է ուսումնական գործընթացը:

Կարևորելով Արցախի քաղաքական ու մշակութային առանձնահատկությունը՝ պարբերաբար համալսարան են այցելում և դասախոսություններով հանդես եկել անվանի գիտնականներ, պետական, քաղաքական, հասարակական, հոգևոր գործիչներ, ուլքեր, իրենց փորձը և գիտելիքները դասախոսներին և ուսանողներին փոխանցելով, որոշակի ներդրում են ունենում Արցախի զարգացմանը:

ԱրՊՀ-ն ռազմավարական նպատակներն իրականացնելու համար ունի համապատասխան ֆինանսական /բյուջետային և արտաբյուջետային միջոցներ, դրամաշնորհային ծրագրեր/ ու մարդկային ռեսուրսներ:

Համալսարանում 2008-2009թթ. դիպլոմավորված մասնագետներ պատրաստելու համակարգից անցում կատարվեց ուսուցման եռաստիճան համակարգի՝ բակալավրիատ, մագիստրատուրա և հետբուհական կրթություն՝ համաձայն Բոլոնյան հռչակագրի: Ներդրվեց ուսանողների գիտելիքների ստուգման համակարգչային-թեստային եղանակը: Այս նորամուծությունների շնորհիվ բուհը գիտական աշխարհին ներկայացավ որպես մասնագետների պատրաստման բավականաչափ զարգացած ու խոշոր մի կենտրոն, որը զգալիորեն նպաստում է Արցախի Հանրապետության գիտատեխնիկական ու տնտեսական ներուժի ամրապնդմանը:

Համալսարանում գործում են ուսումնական և գիտական մի քանի կենտրոններ, մասնագիտացված լաբորատորիաներ, կաբինետներ, այդ թվում՝ հայերենի, ռուսերենի, անգլերենի, գերմաներենի, ֆրանսերենի ուսուցման: Բուհը հաջողությամբ համագործակցում է ոչ միայն ԱՀ և ՀՀ բուհերի ու գիտահետազոտական կենտրոնների հետ, այլև միջազգային ճանաչում ունեցող այնպիսի կառույցների հետ, ինչպիսիք են Ռուսաստանի Դաշնության կրթության ակադեմիան, Լյովենի կաթոլիկ համալսարանը, Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանը, Բելրուսի Հայկազյան համալսարանը, կապեր են պահպանվում մի շարք չճանաչված երկրների՝ Բասկերի երկրի, Մերձդնեստրի, Հարավային Օսեթիայի, Աբխազիայի համալսարանների հետ, ինչը մենք անչափ բարձր ենք գնահատում:

Որակյալ մասնագետների պատրաստումը մենք դիտարկում ենք որպես կենսական նշանակության խնդիր:

Մենք, ԱրՊՀ-ն հռչակելով որպես սովորող կազմակերպություն, կամավոր մեզ պարտավորեցրել ենք ինտեգրվելու միջազգային, առաջին հերթին՝ համաեվրոպական կրթական դաշտին, ուստի ինքներս էլ պետք է ամեն ինչ անենք, որպեսզի ԱրՊՀ դիպլոմ կրող մասնագետը իրավունք և հնարավորություն ունենա հավասարապես օգտվելու այն հնարավորություններից, որոնցից օգտվում են ճանաչված երկրների մասնագետները:

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱՎՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

Որպես Արցախի Հանրապետության խոշոր գիտակրթական օջախ՝ ԱրՊՀ-ն ձգտում է՝

- դառնալ կրթական համակարգի նորագույն մտքի, կրթական հետազոտության և նորարարության հարցերով ու մատուցվող կրթական ծառայություններով առաջատարը Արցախի Հանրապետությունում.
- ապահովել մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխանեցումը աշխատաշուկայի պահանջներին և եվրոպական բարձրագույն կրթական տարածքի հիմնարար սկզբունքներին.
- ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները կիրառելով կրթական և հետազոտական գործընթացներում՝ ապահովել ուսուցման և հետազոտությունների բարձր արդյունավետություն, որը կնպաստի Արցախի Հանրապետության անվտանգության ամրապնդմանը, կայուն զարգացմանը, միջազգային ինտեգրմանը:

ՉԱՓՈՂՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

- Հիմքեր
- [ԱրՊՀ կանոնադրությունը](#)
 - [ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագիրը](#)
 - [ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի ժամանակացույց-պլանը](#)
 - Լիցենզիա ([բակլավվրիատ 1.1](#), [մագիստրատուրա 1.2](#), [որոշման հավելված 1.3](#), [որոշման հավելված 1.4](#))

Վերլուծել և հիմնավորել, թե որքանով է հաստատության ռազմավարական ծրագիրը համապատասխանում ՄՈՒՀ-ի առաքելությանը, նպատակներին և խնդիրներին /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/

ԱրՊՀ-ն գիտական և կրթական գործունեություն իրականացնող պետական հաստատություն է, որի առաքելությունը սահմանում է նրա հիմնադիր փաստաթուղթը՝ կանոնադրությունը ([նոր խմբագրությամբ հաստատվել է ԼՂՀ կառավարության կողմից 20 մայիսի 2008 թ. N 375](#)): ԱրՊՀ կանոնադրության 1-ին հոդվածն ամրագրում է. «Համալսարանի՝ որպես պետական ինքնավար բարձրագույն ուսումնական հաստատության գործունեությունը նպատակաուղղված է մանկավարժական, հայագիտական, բնագիտական, սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար գիտության և տեխնիկայի, սպորտի, մշակույթի տարբեր ուղղություններով

կրթության, հիմնարար գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը...»: Համալսարանի կանոնադրական կարգավիճակին համապատասխան՝ նրա առաքելությունն ընդգրկում է գործունեության երեք հիմնական ուղղություն՝ բարձրագույն մասնագիտական կրթություն, գիտական հետազոտություններ, հանրային ծառայություններ:

Սկսած 2012 թվականից՝ բուհում մասնագիտական կրթական ծրագրերը՝ մշակված վերջնարդյունքների հիման վրա, իրականացվում են որակավորումների ազգային շրջանակի 6-րդ /բակալավրի/, 7-րդ /մագիստրոսի/ և 8-րդ /հետազոտողի/ մակարդակներով:

Եթե մինչ ՌԾ-ի ընդունումը առաքելության մեջ նշված կիրառական գիտելիքի փոխանցումը ապահովվում էր 6-րդ մակարդակում, իսկ գիտահետազոտականը՝ 7-րդ և 8-րդ մակարդակներում, ապա ՌԾ-ի ընդունումից հետո, պայմանավորված նոր քաղաքականությամբ, գիտահետազոտական բաղադրիչը ապահովվում նաև 6-րդ մակարդակում:

Մինչև 2019 թվականը ԱրՊՀ առաքելությունն ու նպատակներն արտահայտված էին կանոնադրության/2008/ մեջ, և բուհն իր գործունեությունը ծավալում էր համաձայն ռեկտորների ներկայացրած նախընտրական զարգացման ծրագրի, ռեկտորատի և գիտխորհրդի որոշումների: Արցախի կայունության ու պաշտպանվածության ապահովման, Արցախը գլոբալ կրթական բարեփոխումներին մասնակից դարձնելու, առկա բոլոր մարտահրավերներին դիմակայելու համար ԱրՊՀ խորհուրդը 2019թ-ի մարտի 5-ին ընդունեց ռազմավարական ծրագիր (այսուհետ՝ [ՌԾ, 2019-2023թթ.](#)), որից հետո ռազմավարության իրականացման վերահսկման նպատակով կազմվեց ժամանակացույց-պլան: ՌԾ-ում առավել հստակ ձևակերպվեց համալսարանի առաքելությունը:

«Հիմնվելով ակադեմիական ազատությունների և ինքնավարության, ուսանողակենտրոն ուսուցման, կրթություն-աշխատաշուկա համագործակցության, կիրառական գիտելիքի փոխանցման և գիտահետազոտական աշխատանքների վրա, մասնագիտական ներուժի կենտրոնացման, ուսուցման և ուսումնառության նորարարական միջավայրի ստեղծման և առաջընթաց հետազոտական աշխատանքների իրականացման միջոցով պատրաստել մրցունակ, մասնագիտական և ընդհանրական գիտելիքներով, հմտություններով զինված, ժողովրդավարական սկզբունքներով առաջնորդվող մասնագետներ» ([ՌԾ, 2019-2023թթ., էջ 9-10](#)): Առաքելությունից բխող նպատակներին ու խնդիրներին համամապատասխան՝ մշակվեց զարգացման նոր հայեցակարգ:

ՌԾ-ն, ըստ ռազմավարական նպատակների իրականացման համար գործողությունների կատարման ժամանակացույցի ([ՌԾ ժամանակացույց-պլան](#)), հստակ սահմանում է դրանց հասնելու ուղիները, համապատասխան ռազմավարությունները և որպես համալսարանի ռազմավարական պլանավորման փաստաթուղթ՝ բացահայտում համալսարանի ներկան, փորձում կանխատեսել ապագան՝ նախանշելով զարգացման համար առավել նպաստավոր ուղիներ:

ՌԾ-ն ԱրՊՀ զարգացման ռազմավարությունը կառուցել է առաքելության, տեսլականի, հիմնարար արժեքների, ռազմավարական նպատակների, աջակցող նպատակների, ընթացիկ գերակայությունների և կոնկրետ գործողությունների հիմքի վրա, որը համահունչ է ԱրՊՀ ծավալած գործունեությանը, նրա վարած քաղաքականությանը:

ԱրՊՀ առաքելության կատարումը և հեռանկարում նրա տեսլականի իրականացումը պայմանավորված են ՌԾ-ում սահմանված 6 ռազմավարական նպատակների իրագործմամբ, որոնց համար առաջադրված են խնդիրներ և համապատասխան քայլեր:

ԱրՊՀ առաքելությամբ սահմանված մրցունակ, մասնագիտական և ընդհանրական գիտե-

լիքներով, հմտություններով ու կարողություններով զինված մասնագետների պատրաստման և վերապատրաստման համար ռազմավարական ծրագրով նախատեսվում է՝

1. զարգացնել ապագա դիմորդների և ուսումնառողների մասնագիտական կողմնորոշման համակարգը ([ՌԾ, էջ 17](#)),

2. մասնագիտությունների կրթական ծրագրերը դարձնել աշխատաշուկայի պահանջներին համահունչ՝ հազեցված անհրաժեշտ ռեսուրսներով և ապահովված համապատասխան դասախոսական կազմով ([ՌԾ, էջ 13](#)),

3. ձևավորել մրցունակ գիտական և նորարարական մարդկային ներուժ, որը կկարողանա հետազոտել և շարունակական լուծումներ առաջարկել Արցախի Հանրապետության հիմնախնդիրների վերաբերյալ, կնպաստի հանրապետության անվտանգության ամրապնդմանը, կայուն զարգացմանը, միջազգային ինտեգրմանը ([ՌԾ, էջ 16](#)),

4. աջակցել հասարակության մտավոր, կրթական, տնտեսական, գիտական և մշակութային առաջընթացին՝ նպաստելով համալսարանի ու նրա գործունեության ճանաչմանն ու արտաքին օժանդակությանը ([ՌԾ, էջ 23](#)),

5. բարելավել համալսարանի կառավարման համակարգը և նպաստել դրա արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը ([ՌԾ, էջ 20](#)),

6. ապահովել համալսարանի արտաքին կապերի համակողմանի զարգացումը, խթանել ԱրՊՀ գործունեության միջազգայնացումը ([ՌԾ, էջ 25](#)):

ՌԾ-ի ռազմավարական ուղղությունները ցույց են տալիս, որ առաջիկա տարիներին բուհի գործունեությունը ամբողջապես նպատակաուղղված է լինելու բուհի առաքելության իրագործմանը, Արցախի Հանրապետությունում բուհի տեղի և դերի հստակեցմանը:

ԶԱՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակներն ու խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

- Հիմքեր
- ԱրՊՀ առաքելության, սահմանած նպատակների և խնդիրների վերանայման քաղաքականությունը
 - Ներքին և արտաքին շահակիցների պահանջները բացահայտող մեխանիզմները (օրինակ՝ հարցումներ [ուսանողների](#) և [չրջանավարտների](#), ֆոկուս խմբեր, հարցազրույցներ և այլն)
 - ԱրՊՀ առաքելության վերանայումն արտահայտող որոշումներ (փաստաթղթեր)

Վերլուծել, թե ինչպես է ՄՈՒՀ-ը վերհանում ներքին և արտաքին շահակիցների կարիքները: Հիմնավորել մոտեցման արդյունավետությունը/ *կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/*

ԱրՊՀ-ն ունի իր առաքելությամբ պայմանավորված արտաքին և ներքին շահակիցների հստակ շրջանակ, որում ընդգրկված են՝

- ԱրՊՀ դիմորդները, ուսանողները, շրջանավարտները և նրանց ծնողները,
- ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը և ուսումնաօժանդակ անձնակազմը,
- գործատուները,
- ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությունը,
- ԱՀ Կառավարությունը:

ԱրՊՀ-ն, հավատարիմ լինելով կառավարման ժողովրդավարական սկզբունքներին,

ձգտում է ապահովել ազատ կամքի արտահայտության և որոշումների կոլեգիալ ընդունմանը նպաստող միջավայր, որի արդյունքում ինչպես ԱրՊՀ կանոնադրությունը, այնպես էլ ՌԾ-ն համալսարանի առաքելությունը սահմանել են մասնակցականության և կոլեգիալության սկզբունքներով: ՌԾ-ի մշակմանը իրենց մասնակցությունն են ունեցել թե՛ ներքին և թե՛ արտաքին շահակիցները, որոնցից կազմված աշխատանքային խումբը նախանշված ժամկետում, ելնելով համալսարանի առջև դրված խնդիրների իրատեսական իրականացման պահանջներից, ինչպես նաև հաշվի առնելով համապատասխան ստորաբաժանումներից ստացած առաջարկություններն ու դիտողությունները, կազմել ու ռեկտորատի քննարկմանն է ներկայացրել Ռազմավարական ծրագրի նախագիծը, որից հետո այն տեղադրվել է համալսարանի կայքում, շրջանառվել համալսարանի շահակիցների շրջանում՝ լայն քննարկման և հետադարձ կապի ստացման նպատակով: Շահակիցների կողմից կատարված առաջարկություններն ու լրացումները հաշվի առնելուց հետո ՌԾ-ն վերջնական տարբերակով քննարկվել և ընդունվել է նախ՝ ԱրՊՀ գիտխորհրդի, ապա՝ ԱրՊՀ խորհրդի կողմից, որտեղ ընդգրկված են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շահակիցներ: Նույն ընթացակարգով են կատարվել նաև ԱրՊՀ կանոնադրության փոփոխությունները և լրացումները՝ ԱՀ Կառավարության հաստատմանը ներկայացնելուց առաջ:

ԱրՊՀ առաքելության մեջ, գերակա ուղղություններում, նպատակներում և խնդիրներում վերլուծված են շահակիցների առանձին խմբերը, նրանց կարիքները և դրանց բացահայտման մեխանիզմները:

ԱրՊՀ կարևորագույն շահակիցներն են սովորողները: Ըստ այդմ՝ ՌԾ-ում համալսարանի հիմնարար արժեքներ են հռչակված «համակողմանի զարգացած, ազգային արժանապատվությամբ, հայրենասիրությամբ ու քաղաքացիական գիտակցությամբ օժտված անձի ձևավորումը», «մատչելի և ուսանողակենտրոն կրթությունը», որը ենթադրում է ուսանողների ներգրավում տարբեր քննարկումներում, ուսանողների կարիքների բացահայտմանն ուղղված որոշումների ընդունման, ինչպես նաև որակի ապահովման գործընթացներում ([ՌԾ, էջ 11](#)):

ՌԾ-ն սովորողների կրթական կարիքների բավարարման համար ռազմավարական նպատակ է սահմանել բարձրորակ կրթությունը, որն էլ առաջադրում է համապատասխան խնդիրներ՝ լուծման անհրաժեշտ քայլերով ([ՌԾ, էջ 13-15](#)):

Ըստ ՌԾ-ի՝ ԱրՊՀ-ն իր առջև խնդիր է դնում ընդլայնել նաև սովորողների ինքնավարության մակարդակը ([ՌԾ իւ.3.3](#)), բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը ուսումնառությունից և օժանդակ ուսանողական ծառայություններից ([ՌԾ խնդիր 3.4](#)):

Համալսարանի կարևորագույն շահակիցներ են և դիմորդները, որոնց մասնագիտական կողմնորոշման նպատակով բուհը, հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջները, իրականացնում է անհրաժեշտ քայլեր ([ՌԾ, խնդիր 3.1, 3.2](#)):

ՌԾ-ն, բազմակողմանի կապեր հաստատելով իր շրջանավարտների հետ, այն նպատակամղում է համալսարանի զարգացմանն ու շրջանավարտների շարունակական կրթության ապահովմանը:

Համալսարանում կրթական գործընթացի կազմակերպման, իրականացման և արդյունավետության վերաբերյալ կարծիքների քննարկման, ինչպես նաև ներքին շահակիցների կարիքների բացահայտման ու համակարգման նպատակով գործում են հարցման կանոնակարգեր, որոնց համաձայն կատարվում են ամենամյա [ուսանողների](#) և [շրջանավարտների](#) հարցումներ:

Ըստ ԱրՊՀ ՌԾ-ի, շրջանավարտների շրջանում կատարվող ամենամյա հարցումների միջոցով նախատեսում է մշակել գնահատման չափանիշներ համալսարանի կրթական և այլ

ծառայությունների գործունեության վերաբերյալ:

Ներքին կարևոր շահակիցներից է համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը: Դրանից էլնելով՝ որակյալ գիտական և մանկավարժական կադրային ներուժը ՌԾ-ն սահմանում է որպես ԱրՊՀ առաքելության իրականացմանն աջակցող նպատակ: ՌԾ-ն նախատեսում է շահակիցների այս խմբի որակական բարելավման բարեփոխումների ծրագիր ([ՌԾ խնդիր 1.4](#)): Ընդգրկված լինելով բուհի կառավարման մարմիններում, համահամալսարանական և ֆակուլտետային հանձնաժողովներում՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմը իր ներկայացուցիչների միջոցով հնարավորություն է ունենում արտահայտելու տեսակետ և ներկայացնելու առաջարկություններ: Այնուամենայնիվ, պրոֆեսորադասախոսական ողջ անձնակազմի կարիքների բացահայտման նպատակով մշակվել են ընթացակարգ և համապատասխան հարցաթերթիկներ, որոնք թույլ են տալիս բացահայտել առկա խնդիրները:

Եթե մինչև ՌԾ-ի ընդունումը պրոֆեսորադասախոսական անձնակազմի կարիքների բացահայտումը կատարվում էր ամբիոնների, ֆակուլտետային խորհուրդների կամ գիտխորհրդի միջոցով, և նրանց լուծումը կրում էր իրավիճակային բնույթ, ապա ՌԾ-ի ընդունումից հետո վերհանված կարիքները սահմանված են որպես խնդիրներ, որոնց լուծման համար ներկայացված են կոնկրետ քայլեր:

ՌԾ-ն հաշվի է առնում նաև համալսարանի բոլոր տարակարգերի աշխատողների սոցիալական շահերը: Ռազմավարական ծրագիրը, որակյալ կադրային ներուժը դիտարկելով որպես համալսարանի առաքելությանն աջակցող նպատակներից մեկը, խնդիր է դնում բարձրացնելու ԱրՊՀ աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը ([ՌԾ, Նպատակ 5](#)): ԱրՊՀ արտաքին շահակիցներից են գործատուները, ուստի ՌԾ-ն ռազմավարական գործակցությունը հիմնական գործատու կազմակերպությունների և հանրային կառույցների հետ դիտարկում է որպես համալսարանի առաքելության իրականացման ընթացիկ գերակայություն: Այն կոչված է ուղղորդելու ռազմավարական նպատակներին հասնելու մոտեցումները ([ՌԾ, խնդիր 6.3](#)):

ՌԾ-ն նախատեսում է բարելավել համալսարան-գործատու փոխկապակցության համակարգը, իրականացնել մասնագետների և կրթական ծառայությունների շուկայական պահանջարկի կանխատեսումներ ու ներքին ռեսուրսների մշտադիտարկում: Այս գործընթացի ստեղծման մեխանիզմը բուհում արդեն մեկնարկել է:

http://www.asu.am/index.php?option=com_content&view=article&id=1809%3A-1-r-&catid=11%3A2011-03-28-07-25-39&Itemid=61&lang=am&fbclid=IwAR2egVzqHc7UDsxwUDhdg0YCV047vClumYIcW3zw_XYToeu92MYNHcsl56k

http://www.asu.am/index.php?option=com_content&view=article&id=1020%3A2017-04-26-13-51-16&catid=11%3A2011-03-28-07-25-39&Itemid=61&lang=am&fbclid=IwAR0PT8j1nvbhw_nABD4_CqUX1UWK8XeN2nywCbhGNSqaG9Ftq1mTL3QI57c

http://www.asu.am/index.php?option=com_content&view=article&id=1313%3A1-r-&catid=11%3A2011-03-28-07-25-39&Itemid=61&lang=am&fbclid=IwAR0txbItM8xCNGM3zEQEMlaTqoPZP3XWA5UyZfvKe5AohUaIYdo3AIUpwCE

ԱրՊՀ արտաքին շահակիցներ են նաև ԱՀ Կառավարությունը և ԱՀ ԿԳՍ նախարարությունը:

ՌԾ-ում նրանց կարիքները պետք է դուրս բերվեին Կառավարության և ԿԳՍ նախարարության ՌԾ-ից, սակայն քանի որ դրանք չկան, ԱրՊՀ-ն դա անում է պաշտոնյաներին բուհ հրավիրելու, նրանց հետ շփվելու և քննարկումներ իրականացնելու տարբերակով՝ մշտապես հաշվի առնելով նաև ՀՀ պետական քաղաքականությունը գիտության և կրթության ոլորտում:

Համալսարանում արտաքին և ներքին շահակիցների կարիքների վերհանման և առկա վիճակի բարելավմանն ուղղված գործընթացները համակարգվում են բուհում գործող կանոնակարգերով, ընթացակարգերով, որոնք պարբերաբար վերանայվում են: Այդ ամենը արտացոլված է գիտխորհրդի նիստերի արձանագրություններում, տեղադրված համալսարանի ներքին ցանցում ու վեբ-կայքում՝ [asu.am](http://www.asu.am/index.php?option=com_content&view=article&id=280&Itemid=100&lang=am) և մատչելի է հանրությանը (http://www.asu.am/index.php?option=com_content&view=article&id=280&Itemid=100&lang=am):

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

- Հիմքեր
- Առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման քաղաքականությունն ու ընթացակարգերը
 - Շահակիցներից ստացված արձագանքները /քննարկումների արձանագրություններ/
 - Ռազմավարական ծրագրի իրականացումը գնահատելու քաղաքականությունը
 - Ռազմավարական ծրագրի իրականացման գնահատմանը նպաստող այլ հիմքեր
 - ԱրՊՀ առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման տարեկան զեկույցները

Ռազմավարական ծրագրի իրականացման և որակի ապահովմանը նպաստող մեխանիզմների վերլուծություն (տրամադրել համապատասխան հիմքեր և կատարել հղումներ համապատասխան փաստաթղթերին): Վերլուծել, թե ինչքանով են որակի ապահովման մեխանիզմները նպաստում շարունակական բարելավմանը:

ԱրՊՀ-ում ռազմավարական նպատակների իրականացման առաջընթացը գնահատելու համար գործում են մի շարք մեխանիզմներ և ընթացակարգեր:

ԱրՊՀ-ում ՌԾ-ի իրականացման ընթացքը գնահատելու նպատակով մշակվել է «ԱրՊՀ 2019-2023թթ. զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման [ժամանակացույց-պլան](#)» (հաստատվել է ԱրՊՀ գիտխորհրդի կողմից 2019թ. ապրիլի 5-ի 1-Լ որոշմամբ): Փաստաթղթում ներկայացված են յուրաքանչյուր ռազմավարական խնդրի իրագործման համար նախատեսված գործողությունները, ակնկալվող արդյունքները, իրականացման վերջնաժամկետները, պատասխանատուները, որոնք մշակել են գործողությունների կատարման քայլեր: Ռազմավարական նպատակներից յուրաքանչյուրի կատարման առաջընթացը ստուգելու համար սահմանվել են նաև գնահատման ցուցիչներ:

ԱրՊՀ-ում մշակված են նաև կարճաժամկետ աշխատանքային ծրագրեր, որոնցում ներկայացված են իրականացվող գործառույթների նպատակները, լուծելի խնդիրները, ժամանակա-

ցույցը, պատասխանատուները և ցուցիչները: Սա հնարավորություն է տալիս տվյալ ուստարվա համար նախատեսված գործողությունների կատարողականը ենթարկելու մշտադիտարկման, կառավարելու ՌԾ-ի իրականացման ընթացքը և անհրաժեշտության դեպքում՝ կատարելու շտկումներ: ՌԾ-ի իրականացման ընթացքը գիտխորհրդի մշտական ուշադրության կենտրոնում է:

ՌԾ-ի առաջընթացի վերահսկման նպատակով ԱրՊՀ-ում լրամշակվել և հրատարակվել է գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) լրակազմ, որով նախկինում ևս վերահսկվում էր զարգացման ծրագիրը: Փաստաթուղթը ընդգրկում է ԱրՊՀ գործունեության բոլոր հիմնական ոլորտներին վերաբերող կարևորագույն ցուցանիշների փոփոխման ընթացքը և վերլուծությունը:

Մշակվել է Որակի ապահովման ձեռնարկը, որը, կառուցված լինելով ՌԾ-ի առաջնահերթությունների վրա, իր ընդգրկած մեխանիզմներով կգնահատի արդյունքները և դրա հիման վրա կմշակի բարելավման ծրագիր: Որակի ապահովման գործիքները ընթացքի մեջ են:

ԱրՊՀ առաքելության և հիմնական նպատակների իրականացումը գնահատող ինքնատիպ մեխանիզմներից է նաև ԱրՊՀ-ում գործող վարից վեր հաշվետվողականությունը, որը հիմք է հետադարձ կապի ապահովման քաղաքականության ներդրման համար: Յուրաքանչյուր տարի ստորաբաժանումների ղեկավարները և ռեկտորը հանդես են գալիս տարեկան ընդհանուր հաշվետվությամբ. այն տպագրվում և բաժանվում է շահակիցներին, տեղադրվում կայքում: (կցել տարեկան հաշվետվությունները):

Վերլուծել Չափանիշ 1-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<ol style="list-style-type: none"> 1. ԱրՊՀ-ն ԱՀ խոշոր կարևորագույն գիտակրթական և մշակութային կենտրոնն է, ունի դրական վարկանիշ և գերիշխող դիրք՝ աշխատաշուկան որակյալ մասնագետներով ապահովելու գործում (50-ամյա գործունեության ընթացքում՝ շուրջ 23000 շրջանավարտ): 2. ԱրՊՀ-ն ունի ռազմավարական ծրագիր և հստակ ձևակերպված առաքելություն ու տեսլական և դրանց իրականացմանը միտված ժամանակացույց պլան, որը հնարավորություն է տալիս վերահսկելու և գնահատելու գործընթացը, արձանագրելու կատարման առաջընթացը: 3. ԱրՊՀ-ում առկա են ուսումնական գործընթացները կանոնակարգող փաստաթղթեր: 4. Ռազմավարական գործընթացներում ընդգրկված են արտաքին շահակիցները: 5. Ռազմավարության իրականացման և գնահատման համար առկա է փորձառու և մասնագիտացված աշխատակազմ: 6. Բուհի ղեկավարությունն ու անձնակազմը պատրաստակամ են անհրաժեշտ աշխատանքներ տանելու կրթության, գիտության ու տնտեսության տարբեր բնագավառների զարգացման ուղղությամբ, ընդունելու նորարարական տարբեր մոտեցումներ և դրանք ներդնելու ուսուցման գործընթացում: 7. Բոլոր մակարդակներում պլանավորման առկայություն: 	<ol style="list-style-type: none"> 1. ԱրՊՀ հիմնական շահակիցների կարիքների բացահայտման ներքին մեխանիզմների անկատարություն: 2. ՌԾ-ում սահմանված գերակա խնդիրների և առանձին գործողությունների իրականացման ռեսուրսային հենքի ապահովման նպատակով երկարաժամկետ ռազմավարական բյուջեի ոչ բավարար ֆինանսավորում: 3. Կրթության ֆինանսավորման և դրա արդյունավետ օգտագործման մեխանիզմների անկատարություն: 4. Արտաքին աշխատաշուկայի հետ թույլ կապ:
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ
<ol style="list-style-type: none"> 1. Արտաքին շահակիցների հետաքրքրվածությունը բուհով: 	<ol style="list-style-type: none"> 1. Որոշ նույն մասնագիտությունների գծով կրթական ծրագրեր իրականացնող այլ բուհերի առկայություն:

<p>2. Արտաքին ֆինանսավորման նոր աղբյուրներ:</p> <p>3. Հասարակությանը տրամադրվող մասնագիտացված ծառայություններ:</p> <p>4. Հետազոտական աշխատանքների առևտրայնացում:</p> <p>5. Կրթության բոլոր օղակների փոխկապակցման հնարավորության առկայություն:</p> <p>6. Բուհի արտաքին ճանաչման հնարավորություն:</p> <p>7. Միջազգային տարբեր կրթական ծրագրերի մասնակացության հնարավորություն:</p> <p>8. Սփյուռքահայ բարերարների ներգրավման հնարավորություն:</p>	<p>2. Բնագիտական հոսքերում քիչ դիմորդներ:</p> <p>3. Ժողովրդագրական բացասական միտումներ:</p> <p>4. Տարածաշրջանի քաղաքական անկայունություն:</p> <p>5. Հասարակության և տնտեսության արագընթաց զարգացումներին կրթության համակարգի ոչ համարժեք արձագանք:</p>
--	--

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները

ԱրՊՀ վարած քաղաքականությունը և ծավալած գործունեությունը համապատասխանում են որդեգրած առաքելությանը և համահունչ են ԱՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին, սակայն այն կատարելագործելու և իր առջև դրված մարտահրավերները ընդունելու տեսանկյունից հարկ է վերանայել և նորովի մոտենալ համալսարանի կողմից վարվող քաղաքականությանը:

Այդ առումով նախատեսվում է թույլ կողմերի և վտանգների հաղթահարման ուղղությամբ իրականացնել հետևյալ քայլերը.

1. Վերանայել որակի կառավարման համակարգը. ներդնել հիմնական շահակիցների կարիքների բացահայտման գործուն մեխանիզմներ:
2. Որոնել լրացուցիչ և արտաբյուջետային ֆինանսական հնարավորություններ ռազմավարական ծրագրում սահմանված գերակա խնդիրների և առանձին գործողությունների իրականացման նպատակով:
3. Կիրառել ճկուն մարտավարություն՝ կրթության ոլորտի մարտահրավերներին դիմադրելու համար:
4. Իրականացնել համապատասխան աշխատանքներ ուսանող-շրջանավարտ-գործատու հետադարձ կապի մեխանիզմների զարգացման ուղղությամբ՝ ապահովելով գործունեության թափանցիկություն և հասարակական պատասխանատվության բարձրացում:
5. Մշակել եվրոպական կրթական դաշտի հետ համադրելիության եզրեր և վերանայել այլ հաստատությունների հետ համագործակցության մեխանիզմները:

6. Ձևավորել մրցունակ գիտական և նորարարական մարդկային ներուժ, որը տարածաշրջանային հետազոտությունների արդյունքում կնպաստի ԱՀ անվտանգության ամրապնդմանը, կայուն զարգացմանը, միջազգային ինտեգրմանը:
7. Ունենալով օրենսդրական անկայուն դաշտ արտահամալսարանական իրականությունում՝ արդյունք թելադրողի պահվածքով օրենսդրական նախաձեռնությունների հեղինակը դառնալ և կրթական օրենսդրական դաշտը կարգավորողի և ձևավորողի հանձնառությունը ստանձնել:
8. Զարգացնել դիմորդների նախաբուհական աջակցման համակարգը:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: *ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառնումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի նորմերը:*

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

Ըստ ԱրՊՀ ՊՈԱԿ զարգացման ռազմավարական ծրագիր 2019-2023թթ.-ի տեսլականի՝

- ԱրՊՀ-ն ունի գործուն և արդյունավետ կառավարում և վարչարարություն, որն ապահովում է կրթության որակի անընդհատ, շարունակական բարելավում,
- դաստիարակում է ազգային, բարոյական, հոգևոր և համամարդկային արժեքներ ունեցող ապագա մասնագետներ՝ հասանելի, մատչելի և նախընտրելի հասարակության ամենատարբեր շերտերի ներկայացուցիչների համար,
- ստեղծում է նպաստավոր միջավայր՝ անհատի համակողմանի զարգացման, պետական մտածելակերպով օժտված քաղաքացու ձևավորման համար: #page=4">

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Հաստատության կառավարման համակարգն ապահովում է սահմանված էթիկայի կանոններին համապատասխան որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

- Հիմքեր
- [Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին ԱՀ օրենք, հոդված 11](#)
 - Բարձրագույն և հետբուհական մասնագիտության մասին ԱՀ օրենք, [Հոդված 15](#), [Հոդված 6](#)
 - [Կրթության մասին ԱՀ օրենք, Հոդված 40](#)
 - [Բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգ](#)
 - [ԱրՊՀ կանոնադրությունը](#)
 - [ԱրՊՀ ՊԴ կազմի ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգ](#)
 - [ԱրՊՀ ներքին կարգապահական կանոններ](#)
 - [ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագիր 2019-2023թթ.](#)
 - [ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի 2019-2023թթ ժանակացույց](#)
 - [ԱրՊՀ ՊՈԱԿ գիտական խորհրդի կանոնակարգ](#)
 - [ԱրՊՀ ՊՈԱԿ ռեկտորատի կանոնակարգ](#)
 - [ԱրՊՀ ՊՈԱԿ Ուս խորհրդի կանոնակարգ](#)
 - [Կարգ ԱրՊՀ ՊՈԱԿ ամբիոնի գործունեության մասին](#)
 - [ԱրՊՀ ՊՈԱԿ ֆակուլտետի օրինակելի կանոնադրություն](#)
 - [Հավելված 2.1 2013թ.ԱրՊՀ ռեկտորի գործունեության ծրագիր](#)
 - [Հավելված 2.2, Հավելված 2.3](#) ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագիր
 - [Հավելված 2.4 Ամբիոնի զարգացման ծրագիր](#)

- [Հավելված 2.5 ԱրՊՀ կառուցվածքը ըստ ստորաբաժանումների](#)
- [Հավելված 2.6 Էթիկայի կանոնագիրը](#)
- [Հավելված 2.7 ԱրՊՀ ռեկտորի ընտրության կարգ](#)

Ներկայացնել կազմակերպական կառուցվածքում ներգրավված [մարմինների տեղաբաշխման քարտեզը](#):

Վերլուծել կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչքանո՞վ է այն նպաստում հաստատության առաքելության արդյունավետ իրականացմանը և որքանո՞վ է այն հասանելի անձնակազմին:

ԱրՊՀ զարգացման գործընթացում կարևորվում է կառավարման համակարգի որակի բարձրացումը, նրա կոլեգիալության, համագործակցության սկզբունքների արմատավորմանը կառավարման հետագա ժողովրդավարացումը: ԱրՊՀ կառավարման համակարգի իրավական հիմքերը սահմանված են կրթության ոլորտի ԱՀ օրենքներով, ԱրՊՀ կանոնադրությամբ, ԱրՊՀ-ի կողմից կառավարման և աշխատանքային տարբեր հարաբերությունների կարգավորման գործող կարգերի միջոցով: ԱրՊՀ-ն կառավարվում է միանձնյա ղեկավարման և կոլեգիալության սկզբունքների գույակցմամբ, խորհրդի, գիտական խորհրդի և ռեկտորատի գործառույթների իրականացմամբ ([Բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգ](#), [ԱրՊՀ ՊՈԱԿ գիտական խորհրդի կանոնակարգ](#), [ԱրՊՀ ՊՈԱԿ ռեկտորատի կանոնակարգ](#)):

ԱրՊՀ խորհուրդը կոլեգիալ կառավարման բարձրագույն մարմինն է ([Բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգ](#)), որտեղ կատարվում է ռեկտորի ընտրություններ, լավում է հաշվետվությունը, հաստատվում է ԱրՊՀ Զարգացման ռազմավարական ծրագիրը:

ԱրՊՀ ԳԽ-ն համակարգում է բուհի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման և կառավարման հիմնահարցերը ([ԱրՊՀ ՊՈԱԿ գիտական խորհրդի կանոնակարգ](#)):

Դեռևս 2013թ.-ից ԱրՊՀ կառավարման գործընթացը հիմնվում էր ԱրՊՀ ռեկտորի գործունեության ծրագրի վրա ([Հավելված 2.1 2013թ.ԱրՊՀ ռեկտորի գործունեության ծրագիր](#)): Այնուհետև ընդունվեց ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագիրը 2013-2018թթ., որը սակայն ավելի հավակնոտ էր, և նախանշված նպատակները համարժեք չէին ԱրՊՀ-ի հնարավորություններին: Ուստի 2019թ. ընդունվեց ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագիր 2019-2023թթ.-ը ([ՌԾ, 2019-2023թթ.](#)), որի մշակման ժամանակ հաշվի են առնվել ԱրՊՀ-ում առկա ակադեմիական և ֆունկցիոնալ ռեսուրսները և կատարման ժամանակացույցը, որտեղ ԱրՊՀ ռազմավարությունն առավել հստակ է, և որի հետ համապատասխանեցված են ֆակուլտետների զարգացման ծրագրերը ([Հավելված 2.2](#), [Հավելված 2.3](#)) և ամբիոնների զարգացման ծրագրերը ([Հավելված 2.4 Ամբիոնի զարգացման ծրագիր](#))՝ դրանով ապահովելով ԱրՊՀ առաքելության իրականացումը, հասանելի և մասնակից դարձնելով ԱրՊՀ ստորաբաժանումներին:

Համալսարանի գործունեության տարբեր բնագավառների անմիջական ղեկավարումն ու համակարգումը իրականացնում են ռեկտորի հրամանով նշանակվող պրոռեկտորները: Ուսանողների հետ տարվող աշխատանքները համակարգվում են ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից:

Կանոնադրական պահանջներից և զարգացման ռազմավարական ծրագրից ածանցվում են

ԱրՊՀ խորհրդի, ԳԽ-ի, ռեկտորատի որոշումները՝ միտված ԱրՊՀ առաքելությանն ու նպատակների իրականացմանը: Համալսարանը, պահպանելով արդյունավետ կառավարման, հաշվետվողականության, թափանցիկության նորմերն ու կանոնները, ծառայած խնդիրները ու առաջարկությունները քննարկում է ստորին օղակից (ամբիոն, ֆակուլտետի նիստ) մինչև վերին օղակը:

ԱրՊՀ կառուցվածքային ստորաբաժանումները (ֆակուլտետներ, ամբիոններ, ուսումնամեթոդական բաժին, գրադարան և այլն) գործում և կառավարվում են ԱՀ օրենսդրության, ԱրՊՀ ներքին իրավական ակտերի և իրենց կանոնադրությունների հիման վրա ([Կարգ ԱրՊՀ ՊՈԱԿ ամբիոնի գործունեության մասին](#), [ԱրՊՀ ՊՈԱԿ ֆակուլտետի օրինակելի կանոնադրություն](#)):

ԱրՊՀ ֆակուլտետներում կառավարչական որոշումների կայացման ընթացքի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք իրականացվել են համապատասխան կարգերի, օրենքների պահանջներին համապատասխան:

ԱրՊՀ ամբիոնը, որպես ուսումնական և գիտական կառուցվածքային ստորաբաժանում միավորելով մասնագիտական ընդհանրություն ունեցող գիտամանկավարժական կազմը, կազմակերպում է որոշակի ուսումնական մասնագիտության (կրթական ծրագրի) կամ ՄԿԾ-ի համապատասխան ուսումնամեթոդական ու գիտահետազոտական գործընթացը՝ ԱրՊՀ կանոնադրությամբ սահմանված գործառույթների շրջանակում: Ելնելով ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի՝ համալսարանի կազմակերպական կառուցվածքի կատարելագործմամբ կառավարման արդյունավետության բարձրացման խնդրից և «Որակի ներքին ապահովման ձեռնարկում» նախանշված նպատակներից՝ ԱրՊՀ-ում իրականացվել են [կառուցվածքային բարեփոխումներ](#)՝ ստեղծելով Հոգեբանական կենտրոնը, Որակի ապահովման կենտրոնը, Ուսումնական գործընթացի վերահսկման բաժինը, Իրավաբանական կլինիկան, Գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության բաժինը, Ուսանողների հետ տարվող աշխատանքների և կարիերայի բաժինը: Այժմ բուհի կառուցվածքը հնարավորություն է տալիս առավել արդյունավետ լուծելու կրթության կազմակերպման և որակի ապահովման խնդիրները՝ ելնելով ՌԾ-ի նպատակներից:

ԱրՊՀ ՈւԽ-ն ուսանողական ինքնակառավարման մարմին է և իր ներկայացուցիչներն ունի ԱրՊՀ խորհրդում և ԳԽ-ում: ՈւԽ-ի լիազորությունները սահմանված են, թե՛ համալսարանի կանոնադրությամբ և թե՛ ՈւԽ-ի կանոնակարգով ([ԱրՊՀ ՊՈԱԿ Ուս խորհրդի կանոնակարգ](#)):

ԱրՊՀ-ն սեփականության իրավունքով տիրապետում է գույքի, շենք-շինությունների: Համալսարանի ֆինանսական միջոցները՝ ռեսուրսային բազայի հիմքերը ձևավորվում են վճարովի հիմունքներով սովորող ուսանողների վարձավճարներից, պետական բյուջեից և այլ մուտքերից: Դրանք ուղղվում են կանոնադրական և ռազմավարական խնդիրների իրականացմանը: Ծախսերի և եկամուտների առավել մանրամասն վերլուծությունը ներկայացված է 7-րդ չափանիշում:

ԱրՊՀ ուսումնական գործընթացները, գիտահետազոտական, ֆինանսական և տնտեսական գործունեության վարչարարությունն ու կառավարումն իրականացնող բաժինները ապահովված են համապատասխան աշխատասենյակներով և կահավորանքով՝ փաստելով, որ համալսարանի կառավարման համակարգն ունի ակադեմիական և ֆինանսական ռեսուրսներ՝ համապատասխան գործառույթների իրականացման համար: ՊՂ կազմի ծանրաբեռնվածությունը կարգավորվում է ըստ համապատասխան տարակարգերի ([Տե՛ս Չափանիշ 5](#)): Ստորաբաժանումների աշխատողների ծանրաբեռնվածության կարգավորման համար պլանավորվում է աշխատողի զբաղեցրած պաշտոնին համապատասխան, ընդհանուր անձնա-

կազմի արդյունավետության վերահսկողության, անձնակազմի պահանջմունքների պլավավորման աշխատանքներ ([ՌԾ, 2019-2023թթ.](#)):

ԶՍՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը:

- Հիմքեր
- [Կրթության մասին ԱՀ օրենք, Հոդված 28](#)
 - [Բարձրագույն և հետբուհական մասնագիտության մասին ԱՀ օրենք, Հոդված 17, Հոդված 19](#)
 - [Բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգ](#)
 - [ԱրՊՀ կանոնադրությունը](#)
 - [ԱրՊՀ ՊՈԱԿ ֆակուլտետի օրինակելի կանոնադրություն](#)
 - [Կարգ ԱրՊՀ ՊՈԱԿ ամբիոնի գործունեության մասին](#)

Ներկայացնել որոշում կայացնելու գործընթացում դասավանդողների և ուսումնառողների ներգրավվածության արդյունավետության վերլուծությունը:

ԱՀ կրթության օրենսդրությունը, ԱրՊՀ կառավարման համակարգը, գործող կանոնադրությունն ու կանոնակարգերը դասախոսներին և ուսանողներին հնարավորություն են տալիս ընդգրկվելու տարբեր մակարդակների կառավարման օղակների կազմերում և անմիջականորեն մասնակցելու թե՛ բուհի կառավարման գործընթացին, թե՛ հարցերի քննարկմանը և թե՛ դրանց վերաբերյալ որոշումների կայացմանը, ինչը թափանցիկ և հասկանալի է դարձնում բուհի գործունեությունը ([Բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգ](#), [ԱրՊՀ կանոնադրությունը](#)):

ԱրՊՀ կուրեզալ կառավարման մարմինը Խորհուրդն է, որի կազմի 28 անդամներից 7-ը ՊԴ անձնակազմի, 7-ը ուսանողական կազմի ներկայացուցիչներն են, որոնց ընտրությունը իրականացվում է ըստ համապատասխան ընթացակարգերի: Բացի այդ, ուսանողները ընդգրկված են ԳԽ-ին կից որակի ապահովման ևս երկու հանձնաժողովներում: ԳԽ անդամների թիվը և կազմը սահմանվում են համալսարանի կանոնադրությամբ, որտեղ ի պաշտոնե անդամների մեջ ընդգրկված են նաև ՈւԽ և ՈւԳԸ նախագահները:

Ֆակուլտետի կառավարման մարմիններն են ֆակուլտետի մեծ խորհուրդը, ֆակուլտետի խորհուրդը և դեկանը, որոնք իրենց իրավասության սահմաններում ընդունում են ինքնուրույն որոշումներ: Ֆակուլտետի կառավարման մարմիններում ևս ուսանողների և ՊԴ կազմի ընտրությունը կատարվում է ըստ համապատասխան կարգերի ([ԱրՊՀ ՊՈԱԿ ֆակուլտետի օրինակելի կանոնադրություն](#)):

ԱրՊՀ խորհրդի և ԳԽ-ի ընդունած որոշումները հիմք են ընդունվում ֆակուլտետների ամբիոնների գործունեություններում և որոշումների կայացման գործընթացում, միննույն ժամանակ ըստ անհրաժեշտության ներքին օղակներից ևս կատարվում են առաջարկություններ՝ ապահովելով աշխատանքի արդյունավետություն և հետադարձ կապ ([Կարգ ԱրՊՀ ՊՈԱԿ ամբիոնի գործունեության մասին](#)):

Ֆակուլտետներում դեկանները յուրաքանչյուր ռեկտորատից անմիջապես հետո իրականացնում են դեկանատի նիստեր և ամբիոնների վարիչներին, դեկանատի աշխատողներին տեղեկացնում են կայացված որոշումների վերաբերյալ, իսկ ամիսը մեկ անգամ հաղիպում են ավագների հետ և ռեկտորատի որոշումները ավագների միջոցով տեղեկացում են ուսանող-

ներին:

ՊԴ և ուսանողները իրավունք ունեն և մասնակցում են ամբիոնի կրթական, գիտական հարցերի քննարկմանը և լուծմանը: ԱրՊՀ-ում կապված ինքնավերլուծության հետ ակտիվ աշխատանքներ են իրականացվում ուսանողների և ՊԴ-ի հետ՝ ուսման որակի ապահովման խնդիրների շուրջ, ինչի արդյունքում նրանք դառնում են առավել իրազեկված և համապատասխան քննարկումներում ու նիստերում հանդես են գալիս իրենց կարծիքներով, ինչը նպաստում է կայացվող որոշումների արդյունավետության բարձրացմանը:

ԱրՊՀ ՊԴ անձնակազմը և ուսանողները կառավարման գրեթե բոլոր մակարդակներում անմիջականորեն մասնակցում են որոշումների ընդունման գործընթացին, նրանց մասնակցությունը կառավարման մարմիններում կանոնակարգված է, նրանց ընտրությունն այդ մարմիններում իրականացվում է համաձայն գործող ընթացակարգի, սակայն դեռևս կարիք կա բարելավելու վերջիններիս մասնակցության ակտիվության ապահովման մեխանիզմները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈԻՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան, և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Հիմքեր

- Կրթության մասին ԱՀ օրենք, [Հոդված 14](#), [Հոդված 17](#)
- [ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագիրը](#)
- [ԱրՊՀ գործունեության տարեկան հաշվետվություն](#)
- [ԱրՊՀ ՈԻՆ և ՈԻԳԸ գործունեության գնահատման կարգը](#)
- [Դասախոսների ուսումնական ծանրաբեռնվածություն](#)
- [Հավելված 2.2](#), [Հավելված 2.3](#) Ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագիր
- [Հավելված 2.4](#) [Ամբիոնի զարգացման ծրագիր](#)

Վերլուծել պլանավորման և վերջիններիս իրականացման արդյունավետությունը/կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչքանո՞վ է այն նպաստում հաստատության առաքելության արդյունավետ իրականացմանը:

ԱրՊՀ-ում կառավարումը կենտրոնանում է պլանավորման գործառույթի շուրջ և ելնելով գործունեության բնույթից, իրականացվում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում:

Երկարաժամկետը ռազմավարական պլանավորումն է՝ առաքելության, նպատակների, զարգացման ուղղությունների հաստատումը, այլ կերպ՝ համալսարանի զարգացման և բարեփոխումների ռազմավարության ամրագրումը: Զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման և մշտադիտարկման համար հիմք են հանդիսանում ռազմավարական գործողությունների պլանում ամրագրված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցիչները՝ հինգ տարվա կտրվածքով, որոնք սահմանվում են յուրաքանչյուր նպատակի և խնդիրների իրականացման համար:

Կարճաժամկետ պլանավորման հիմքում ընկած է նաև «Կրթության մասին» ԱՀ օրենքը: ԱրՊՀ գործունեության մեջ տարեկան պլանավորումը դրսևորվում է առաջին հերթին կրթական գործընթացի պլանավորմամբ, ՄԿԾ-ի հիման վրա աշխատանքային ուսումնական պլանների կազմամբ, դրանց հիման վրա դասախոսների հաստիքների և ուսումնական բեռնվածության տարեկան պլանավորմամբ, ինչպես նաև առկա և հեռակա ուսուցման հա-

մակարգերում ընթացիկ տարվա բյուջեով նախատեսված ռեսուրսներին համապատասխան՝ բակալավրիատի և մագիստրատուրայի տվյալ կիսամյակի ուսումնական պարապմունքների սկիզբի, ավարտի, հաջորդ կիսամյակի պարապմունքների մեկնարկի, միջանկյալ և եզրափակիչ ստուգաքննների կազմակերպմամբ ու միջանկյալ և եզրափակիչ քննությունների անցկացմամբ, պարտքերի մարման ժամկետների հստակ սահմանմամբ:

Կարճաժամկետ պլանավորումն իրականացվում է համալսարանի գործունեության բոլոր ուղղություններով՝ ակադեմիական և ֆունկցիոնալ ռեսուրսների, կրթական ծրագրերի և այլն, ինչը հստակ կերպով արտահայտվում է ռեկտորի, պրոռեկտորների, ամբիոնի վարիչների, դեկանների և այլ ստորաբաժանումների ղեկավարների, ՊԳ անձնակազմի տարեկան հաշվետվություններում ([ԱրՊՀ գործունեության տարեկան հաշվետվություն](#)):

ԱրՊՀ ֆինանսական պլանավորման միջնաժամկետ պլանավորումը վերաբերում է թե՛ դրամական եկամուտներին, և թե՛ ծախսերին, որն առավել հստակ է դարձնում ՌԾ-ի իրականացման ֆինանսական տեսլականը:

Համալսարանի զարգացման ռազմավարական պլանի շրջափուլը իր մեջ ներառում է իրականացման և մշտադիտարկման մեխանիզմներ, իսկ պլանավորման, իրականացման և մշտադիտարկման գործընթացի շարունակականությունը ապահովում է գործող մեխանիզմի արդյունավետությունը: ԱրՊՀ-ում տարբեր մակարդակով իրականացվող մշտադիտարկման արդյունքներն օգտագործվում են գործընթացների իրականացման արդյունավետությունը բարձրացնելու և պլանավորման բարելավման համար:

Համալսարանում պլանավորման գործընթացների կատարման մշտադիտարկումներ իրականացվում են տարբեր եղանակներով, որոնցից են՝

1. ռեկտորի, պրոռեկտորների, Որակի ապահովման կենտրոնի վարիչի, դեկանների, ամբիոնների վարիչների կողմից դասախոսությունների և գործնական պարապմունքների լսումները,
2. ամբիոնների, ստորաբաժանումների ղեկավարների տարեկան հաշվետվությունները,
3. արտաքին և ներքին շահակիցների շրջանում հարցումները և կարքիների բացահայտման նպատակով կազմակերպվող տարաբնույթ միջոցառումների անցկացումը և դրանց վերլուծությունը (հաղիպումներ գործատուների հետ, կլոր սեղաններ և այլն):

ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագրում ներառված նպատակների իրականացման արդյունքների գնահատման կառուցակարգերից է ռազմավարական ծրագրի կազմման տրամաբանությունը: Մասնավորապես՝ ծրագրում հստակեցվում են կատարման ժամկետները, պատասխանատու ստորաբաժանումները: Դա հնարավորություն է տալիս վերահսկելու նպատակների իրականացման ընթացքը և անհրաժեշտության դեպքում շեղումները վերացնելու նպատակով կատարելու համապատասխան ճշգրտող գործողություններ, ինչն էլ ապահովում է պլանավորման արդյունավետությունը:

ԶԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

- Հիմքեր
- [ԱրՊՀ բակալավրիական ուսուցման կուրսերում դասավանդվող մոդուլներից, դասավանդող դասախոսներից ուսանողի բավարարվածության, սեմինարավարներից ուսանողի բավարարվածության, ուսանողի կողմից մագիստրոսական ուսուցման որակի գնահատման հարցաթերթ](#)
 - [ԱրՊՀ-գործատու համագործակցությունը ապահովող մշտական հանձնաժողովի](#)

աշխատակարգ

Նշել վերջին երեք տարիներին հաստատության գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունների արդյունքները և դրանց արտացոլումը ռազմավարական ծրագրում:

ԱրՊՀ ռազմավարությունը առավելապես նախանշում է զարգացման գերակա ուղղությունները՝ հիմնվելով արտաքին ու ներքին գործոնների վրա, իսկ տարեկան ծրագրերը կազմվում են ըստ տվյալ տարվա համար առավել էական իրավիճակային գործոնների:

Զարգացման ռազմավարական ծրագրում հիմք է ընդունվել համալսարանի զարգացման փորձը, ստեղծված գիտակրթական ներուժը, նյութատեխնիկական բազան, ԱՀ տնտեսական ու սոցիալական զարգացմանը կրթական ծառայություններով ու գիտական մշակումներով նպաստելու կարևորությունը, ինչպես նաև բարձրագույն կրթության եվրոպական տարածքին ինտեգրվելու անհրաժեշտությունը: Դրանց իրագործման համար ռազմավարական ծրագրով նախատեսվել են՝ կրթության որակի բարելավման համար ուսուցման տեխնոլոգիաների ու բովանդակության արդիականացում, գործարար խաղերի, իրավիճակային վերլուծությունների լայն կիրառություն:

Համալսարանի գործունեության վրա ազդող այնպիսի արտաքին գործոններ, ինչպիսիք են ընդունելությունը, ֆինանսավորման համակարգը, հասարակական պահանջները, օրենսդրական փոփոխությունները, և ներքին գործոններ, ինչպիսիք են ՊԴ կազմի ուսումնահետազոտական գործունեությունը, ուսանողների թվի տատանումը, լաբորատոր գործիքակազմի ապահովվածությունը, ենթակառուցվածքների աշխատանքի կազմակերպման արդյունավետությունը և այլն, ուսումնասիրվում և վերլուծվում են համապատասխան բաժինների կողմից արտացոլվելով ինչպես ռեկտորատի և ԳԽ-ի որոշումներում, այնպես էլ ռեկտորի տարեկան հաշվետվությունում: Մակայն ԱրՊՀ-ում ոչ բոլոր դեպքերում են իրականացվում գործոնների խորքային ուսումնասիրություններ:

Գործոնների ուսումնասիրության մեխանիզմ է նաև ինստիտուցիոնալ կարողությունների վերլուծությունները՝ կապված ռազմավարական պլանավորման, բուհի գործունեության բարելավման հետ:

ԱրՊՀ ղեկավարության՝ ուսանողների հետ պարբերաբար հանդիպումները, ռեկտորի մոտ հստակեցված ժամանակացույցով ընդունելության կազմակերպումը հնարավորություն են տալիս լսել նրանց կարծիքներն ու առաջարկությունները, որոնք հաշվի են առնվում որոշումների կայացման ժամանակ (օրինակ՝ ավարտական աշխատանքի կամ մագիստրոսական թեզի ղեկավարի ընտրությունը և այլն):

Ներկայումս ԱրՊՀ-ում էլեկտրոնային հարցումների կազմակերպման արդյունքում զգալի բարելավվել է ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրության գործիքակազմի կիրառումը, ինչը դրական է անդրադառնում ստացվող տեղեկատվության և կայացվող որոշումների վրա:

Համալսարանում ներքին և արտաքին գործոնների իրականացված հետազոտությունների հիման վրա պլանավորվում են նոր բարեփոխումներ, որոնցից առանձնահատուկները ԱրՊՀ գլխավոր մասնաշենքի պայմանները բարելավելու նպատակով իրականացվող վերակառուցման և վերանորոգման գործընթացներն են, որոնք ապագայում բարելավվելու են ուսումնառության պայմանները՝ ապահովելով առավել ժամանակակակից լսարաններ, գրադարան, ընթերցասրահներ, ուսումնաօժանդակ բաժիններ:

ԱրՊՀ-ում կրթության որակին նպաստող և խոչընդոտող գործոնների բացահայտման գործընթացի արդյունավետության նպատակով պլանավորվում է ընդունել ուսումնական ռեսուրսների արդյունավետության և հասանելիության գնահատման մեխանիզմ:

ԶԱՓՈՐՈՇԻՉ Ե. Քաղաքականություն և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

- Հիմքեր
- [ԱրՊՀ կանոնադրությունը](#)
 - [Կուրսային աշխատանքների իրականացման կարգ](#)
 - [Ավարտական աշխատանքների իրականացման կարգ](#)
 - [Մագիստրոսական թեզերի իրականացման կարգ](#)
 - [Որակի ապահովման մշտական հանձնաժողովի աշխատակարգ](#)
 - [ԱրՊՀ որակի ապահովման ձեռնարկ](#)
 - [Հաշվետվություն ԱրՊՀ 2017-2018 ուստարվա գործունեության](#)

Վերլուծել որակի ապահովմանը նպաստող մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից: Նշել, թե ինչքանով են որակի ապահովման մեխանիզմները նպաստում շարունակական բարելավմանը:

ԱրՊՀ քաղաքականությունը կոչված է աջակցելու համալսարանին՝ իր առաքելությունն ու ռազմավարական նպատակներն արդյունավետ կերպով իրականացնելու և կրթության որակն ապահովելու համար: Որակի ապահովման շրջանակներում իրականացվում են գործունեության հետևյալ ուղղությունները՝

- ԱրՊՀ կառավարման մարմինների կողմից իրականացվող ռազմավարական պլանավորումը,
- ստորաբաժանումների կողմից իրականացվող պլանավորումը՝ ըստ գործընթացների և կառավարման բոլոր մակարդակներում գործընթացների փաստաթղթավորումը,
 - պլանավորված աշխատանքների իրականացման հաշվետվողականությունը և գնահատումը,
 - որակի կառավարման պատասխանատուների և որակի կառույցի կողմից կրթության որակի մշտադիտարկումը:

ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի տրամաբանական կառուցվածքը ամբողջությամբ հիմնված է որակի կառավարման սկզբունքների վրա: Ռազմավարական գործողությունների պլանում ամրագրված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցիչները հնարավորություն են տալիս գնահատելու յուրաքանչյուր նպատակի և խնդիրների իրականացումը, հետևություն անելու նաև հետագա բարեփոխումների համար, ինչը միայն մասամբ էր իրականացվում մինչև ԱրՊՀ կառավարման գործընթացում:

Համալսարանում քաղաքականության և ընթացակարգերի վարչարարության, կառավարման առանձնահատկությունները և իրականացման կառուցակարգերը մասնակի նպատակներին ծառայեցնելը, ինչպես նաև որակի գնահատման և ապահովման մարմինները հստակեցնելը՝ հնարավոր է դարձել «ԱրՊՀ որակի ներքին ապահովման ձեռնարկի» ընդունման միջոցով:

Պլանավորման, իրականացման, գնահատման և բարելավման սկզբունքով մշակվել են

կրթական ծրագրերի կազման, հաստատման և իրականացման ընթացակարգերը:

Որակի ապահովման մշտական հանձնաժողովի համագործակցությունը Որակի ապահովման կենտրոնի, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հետ հնարավոր է դարձնում որակի ապահովման ու վերահսկողության գործընթացների իրականացումը ([Որակի ապահովման մշտական հանձնաժողովի աշխատակարգ](#)):

ԱրՊՀ բոլոր ստորաբաժանումների ղեկավարների աշխատանքները ևս պլանավորվում են, որի հիման վրա կայացվում է համապատասխան ստորաբաժանումների գործունեությունը, ներկայացվում են հաշվետվություններ, որոնք գնահատվում են, վեր են հանվում առկա հիմնախնդիրները:

Որակի ապահովման սկզբունքներից թերևս առավել խոցելին գնահատման համակարգն է, քանի որ հստակեցված չեն առանձին ստորաբաժանումների ղեկավարների, բաժինների ղեկավարների աշխատանքների համապատասխան չափիչները, ինչպես նաև աշխատողների պարտականությունները:

Որակի ապահովման սկզբունքների կիրառման առումով կարևոր են ուսումնական գործընթացի տարբեր բնագավառների համար հստակ ժամանակացույցերի կիրառումը, կուրսային, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի, հոդվածների կատարումը՝ ըստ ընդունված և գործնական կիրառություն ստացած կարգերի պահանջների:

Կրթության որակի աուդիտի հարցերով զբաղվում են համալսարանի կառավարման բոլոր մակարդակներում՝ քննարկելով ինչպես ընթացիկ առաջադիմության, այնպես էլ տարեկան առաջադիմության խնդիրները: ԱրՊՀ-ն որակի շարունակականության ապահովման համար կարևորում է հետադարձ կապը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին բոլոր շահակիցների հետ, այդ թվում՝ շրջանավարտների, որի համար ստեղծվել է շրջանավարտների բազա, որն իր նպատակին ծառայեցնելու համար պլանավորվում է ձևավորել և զարգացնել «մենթորների» ինստիտուտը՝ սերտացնելով շրջանավարտ-համալսարան, շրջանավարտ-ուսանող կապերը:

Որակի ապահովման քաղաքականության արդյունավետության բարձրացման առումով պլանավորվում է ՌԾ-ի վերջնարդյունքների մշտադիտարկման մեխանիզմների և գործիքների մշակում և կիրառում:

Այսպիսով, ԱրՊՀ քաղաքականությունը և ընթացակարգերի վարչարարությունը իրականացվում է որակի կառավարման սկզբունքով, իսկ քաղաքականության որակի ապահովման բարելավման առումով պլանավորվում են առանձին օղակների ղեկավարների աշխատանքի արդյունավետության գնահատման մեխանիզմների, համապատասխան չափիչների մշակում և դրանց հետագա կիրառում, աշխատողների պարտականությունների հստակեցում:

ԶԱՓՈՐՈՇԻՉ զ. ՄՈՒՀ- ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

- Հիմքեր
- [ԱրՊՀ որակի ապահովման ձեռնարկ](#)
 - [ԱրՊՀ ՊՈԱԿ ուսանողների կողմից ՊԴ կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյական հատկանիշների գնահատման սոցիոլոգիական հարցման կանոնակարգ](#)
 - [ԱրՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցման կանոնակարգ](#)

Վերլուծել ՄՈՒՀ- ում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ

գործընթացների գնահատման մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԱրՊՀ գործունեության ծավալումը հիմնվում է տեղեկատվության հավաքագրման և ամփոփման վրա, որի մասին արդեն նշվել է չափորոշիչ «դ»-ում: Սակայն դրանց հավաստիությունը պարզվում է դասախոսների և ուսանողների ֆոկուս խմբերի հարցումների միջոցով: Առանձին տեղեկատվության հավաստիության մեջ համոզվելու համար լրացուցիչ հարցում է կազմակերպվում մեկ այլ ֆոկուս խմբում:

Գործող մասնագիտական ծրագրերի արդյունավետության գնահատման ձևերն ու կառուցակարգերը արդեն իսկ ներկայացված են չափանիշ 3-ի «ե» չափորոշիչում, իսկ այլ գործընթացներին առնչվող տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող կառուցակարգերը՝ չափանիշ 1-ի «գ» չափորոշիչում:

Մասնագիտությունների կրթական ծրագրերի գնահատման մեխանիզմները և դրանց արդյունավետությունը նկարագրված է սույն ինքնավերլուծության 3-րդ չափանիշի «ա» և «ե» չափորոշիչներում:

Կրթական ծրագրերի արդյունավետության մասին անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը և ամփոփումը իրականացվում է ՄԿԾ-երից շահակիցների բավարարվածության գնահատման նպատակով առանձին ստորաբաժանումների ղեկավարների կողմից իրականացվող քննարկումների, բանավոր, գրավոր հարցումների միջոցով: Հարկ է նշել նաև, որ դեռևս հետազոտության նախագծում, իրականացում, ընտրակազմի մշակում, մեթոդների ստեղծում, փորձարկում, ինչպես նաև տվյալների բազայի ստեղծում, որոնք ՄԿԾ-ի արդյունավետության ապահովման անհրաժեշտ տեղեկատվության ապահովման կարևոր մեխանիզմներ են, համալսարանում մասնակի են իրականացվում:

ԱրՊՀ-ում ՄԿԾ-ի և այլ գործընթացների արդյունավետության գնահատման մեխանիզմներ են.

- համալսարանի գիտական խորհրդում համալսարանի կարգերի և այլ նորմատիվ փաստաթղթերի, մասնավորապես կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգի քննարկման և հաստատման գործընթացը,
- գիտական խորհրդում ՄԿԾ-ների վերաբերյալ ընթացիկ հարցերի քննարկումները,
- զարգացման ռազմավարական ծրագրի կատարողականի վերաբերյալ ընթացակարգերի մշակումը,
- ամբիոնների, ֆակուլտետների տարեկան հաշվետվությունները, որոնք ներառում են համապատասխան առաջարկներ ՄԿԾ-ի բարելավման ուղղությամբ՝ արտաքին շահակիցների կարծիքների հաշվառմամբ (ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներ, պրակտիկաներ, այլն),
- որակի ապահովման բաժնի կողմից ավարտական որակավորման աշխատանքների և մագիստրոսական թեզերի՝ ըստ պահանջների կատարման որակի և պլագիատի ստուգումը:

ԶԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմներ:

- Հիմքեր
- [ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագիրը](#)
 - Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվություն ([Հավելված 2.9.1](#), [Հավելված 2.9.2](#))

- [ԱրՊՀ մասին տեղեկատվության տարածման կարգը](#)
- [«Ֆինանսների նկատմամբ մասնագիտական պահանջները ժամանակակից աշխարհում» թեմայով կլոր սեղանի կազմակերպում ֆինանսների ամբիոնի կողմից](#)

Վերլուծել ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված որակական և քանակական տեղեկատվության հրապարակումների գնահատման մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԱրՊՀ-ում տեղեկատվության տարածման բաժինը Լրատվության և հանրության հետ կապերի բաժինն է, որի գործունեությունը բխում է կանոնադրությունից, հանրային նշանակության միջոցառումների կազմակերպման ուղեցույցի պահանջներից և գործող այլ կարգերից:

Բաժինը <http://www.asu.am> կայքի «ԱրՊՀ», «Ֆակուլտետներ», «Ստորաբաժանումներ», «Գիտություն», «Հրապարակումներ», «Ուսանող», «Դիմորդ», «Հայտարարություններ» ենթաբաժինների միջոցով իրականացնում է կանոնադրությամբ նախատեսված գործառույթները: Կայքում տեղադրվում են բակալավրիատի կրթական ծրագրերը և դառնում հասանելի բոլոր շահառուների համար:

ԱրՊՀ-ում գործում է տեղեկատվության հասանելիության ու տարածման գնահատման մեխանիզմներ: Բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի և դրանց համապատասխան շնորհվող որակավորումների մասին տեղեկատվությունը տեղակայված է ԱրՊՀ պաշտոնական կայքում (www.asu.am): Բացի այդ, որակավորման և մասնագիտական կրթական ծրագրերի ուղղությամբ տեղեկության տարածումը իրականացվում է նաև դիմորդներին տրվող տեղեկատվության ձևով՝ մայրաքաղաքի, շրջանների դպրոցներ այցերի ընթացքում: Տեղեկացվածության և տեղեկատվության հրապարակումները գնահատելու ուղղությամբ ԱրՊՀ-ում, ինչպես նաև շրջանավարտների շրջանում իրականացվում են պարբերական հարցումներ:

Որպես տեղեկատվության գնահատման մեթոդ է կիրառվում նաև «Ֆեյսբուք» սոցիալական կայքում տեղակայված ԱրՊՀ պաշտոնական էջը:

Հանրության հետ կապերի բարելավման առումով ստեղծվել է «Հարց ու պատասխան բաժինը», որի միջոցով շահառուները ստանում են համապատասխան տեղեկատվություն իրենց կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ: Համալսարանը տեղեկատվության տարածման առումով կանգնում է խնդիրների առջև, երբ facebook սոցիալական ցանցը ընդլայնելու դեպքում, այնտեղ հայտնվում են նաև աղբյուրանական օգտատերեր, որոնք իրականացնում են ապատեղեկատվություն՝ ընդհուպ կայքի վրա հարձակումներ և այլն:

Վերլուծել Չափանիշ 2-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ol style="list-style-type: none"> 1. ԱրՊՀ-ն ունի հստակ ձևավորված կառավարման համակարգ, որի գործունեությունը կանոնակարգվում է ԱՀ օրենսդրությամբ, համալսարանի և նրա համապատասխան ստորաբաժանումների կանոնադրություններով և կառավարումն իրականացվում է կառավարման էթիկայի սկզբունքների համապատասխան՝ բոլոր մակարդակներում: 2. Իրականացվում է և՛ միանձնյա և՛ կոլեգիալ կառավարում, որը հնարավորություն է ստեղծում որոշումների կայացման ընթացքում հիմնվել առավել շատ կարծիքների վրա: 3. Համալսարանի զարգացման տեսլականը հստակեցված է ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի և համապատասխան ժամանակացույցի միջոցով: 4. Զարգացման ռազմավարական ծրագրի, ֆակուլտետների զարգացման ծրագրի և ամբիոնի զարգացման ծրագրերի միջև առկա է միասնական քաղաքականության տրամաբանություն և սկզբունքներ: 5. ԱրՊՀ-ում առկա են ֆինանսական, կրթական, կառավարչական գործընթացները կարգավորող կարգեր: 6. Համալսարանն ունի կազմակերպական նոր կառուցվածք, որը փոխվել է՝ հաշվի առնելով ժամանակակից մարտահրավերները և պահանջները: Նոր կառուցվածքը հնարավորություն է տալիս իրականացնելու ԱրՊՀ առաքելությունը: 7. Համալսարանում իրականացվող գործընթացները ելնում են երկարաժամկետ, կարճաժամկետ պլանավորման սկզբունքներից: 8. ԱրՊՀ-ում ապահովված է ներքին շահակիցների, մասնավորապես ուսանողների, ՊԴ անձնակազմի մասնակցությունը կառավարման գործընթացներին: 9. ՈւԽ-ն ինքնավար կառույց է: 	<ol style="list-style-type: none"> 1. Կառավարման մարմինների գործունեության գնահատման կառուցակարգերի անկատարություն: 2. Գործընթացների մշտադիտարկման քաղաքականության և ընթացակարգերի ու հստակ կառուցակարգերի իրականացման փորձի պակաս: 3. Հետադարձ կապի ապահովման կառուցակարգերի լիարժեք պարբերաշրջանային գնահատման փորձի պակաս: 4. Ուսանողների հարցումների տվյալների արդյունքների մշակման և արձագանքման ոչ լիարժեք կառուցակարգ: 5. Հաշվետվողականության գնահատման գործիքների, չափիչների և կառուցակարգերում որակի բարելավման պահանջների բացակայություն: 6. Որոշումների կայացման արդյունավետության նպատակով համապարփակ տվյալների բազայի բացակայություն: 7. Մասնագիտությունների գծով շուկայական իրավիճակի վերլուծության անկատարություն: 8. Հնարավոր ռիսկերի գնահատման և համապատասխան միջոցառումների իրականացման բացակայություն: 9. Դեռևս չլուծված շենքային պայմաններ:

<p>10. ԱրՊՀ-ն ապահովված է կայուն աշխատակազմով:</p> <p>11. ԱրՊՀ-ում առկա են կարիերայի, ուսանողների հետ տարվող աշխատանքների, հանրային կապերի և լրատվության ստորաբաժանումներ:</p> <p>12. ԱրՊՀ-ում որոշումները կայացվում են համապատասխան վերլուծությունների հիման վրա:</p> <p>13. ԱրՊՀ-ում կրթության որակի ապահովման գործընթացը կանոնակարգվել է, ինչը հնարավորություն է տալիս խուսափելու հնարավոր բացթողումներից:</p> <p>14. Կառավարման էլեկտրոնային միջոցների կիրառումը զգալիորեն բարելավել են կառավարման և տեղեկատվության հավաքագրման ու հրապարակման գործընթացները՝ ապահովելով նաև բոլոր շահառուների մասնակցությունը կայացվող որոշումներում:</p> <p>15. ԱրՊՀ բոլոր մակարդակներում կազմակերպվող տարաբնույթ միջոցառումներին ուսանողներն ունեն ակտիվ մասնակցություն, ինչը դրական է ազդում նրանց, որպես քաղաքացու և որպես մասնագետի ձևավորման վրա:</p>		
Հնարավորություններ	Վտանգներ	
<p>1. Եվրոպական առաջատար համալսարանների հետ փորձի փոխանակում, որը հնարավորություն կստեղծի կառավարման նորագույն մոդելների ներդրման առումով:</p> <p>2. ՀՀ Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի հետ համագործակցությունը, որը կառավարման կազմի համալրման և կայունության ապահովման հնարավորություն է ստեղծում:</p> <p>3. Արտաքին շահակիցների մասնակցություն ԱրՊՀ կառավարման գործընթացներին և հետադարձ կապի ընդլայնում, որը դրական կազդի կրթության որակի և համալսարանի վարկանիշի ձևավորման</p>	<p>1. Երկրի կայունության խախտում՝ կապված պատերազմական գործուղությունների հնարավոր վերսկսման հետ:</p> <p>2. Ֆինանսական մուտքերի հնարավոր նվազում՝ կապված արտաքին գործոնների հետ, մասնավորապես ժողովրդագրական բացասական միտումների:</p> <p>3. Տնտեսության կառուցվածքային տեղաշարժերով պայմանավորված մասնագիտությունների պահանջարկի փոփոխություն:</p> <p>4. Կրթության ոլորտում օրենսդրական դաշտի հաճախակի փոփոխություններ:</p>	

վրա:	5. ԱրՊՀ ակադեմիական ազատության սահմանափակություն:
------	---

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

Բարելավման ուղղություններ

1. Որոշումների կայացման արդյունավետության նպատակով արտաքին և ներքին գործոնների համապարփակ տվյալների բազայի ստեղծում և վերլուծելություն՝ հատկապես նոր ռազմավարական պլանի պահանջներից ելնելով:
2. Բարձրագույն կրթության կառավարման ժամանակակից և Բոլոնիայի գործընթացի սկզբունքներին համահունչ համակարգի մշակում և շարունակական բարելավում:
3. Որոշումների կայացման տարբեր մակարդակներում շահառուների մասնակցության ակտիվության բարձրացմանն ուղղված ընթացակարգերի մշակում:
4. ԱրՊՀ կառավարման համակարգում ընդգրկված դասախոսների և ուսանողների մասնակցության արդյունավետության գնահատման համար ավելի հստակ կառուցակարգերի և մասնակցության խթանման ընթացակարգերի մշակում:
5. Կառավարման մարմինների գործունեության գնահատման կառուցակարգերի կատարելագործում:
6. Գործընթացների մշտադիտարկման քաղաքականության և ընթացակարգերի, հստակ կառուցակարգերի իրականացման մեջ առավել շատ անձանց ներգրավում՝ վերջիններիս տեղեկացվածության և փորձի կիրառման, իսկ որոշների մոտ՝ դրանց բարձրացման նպատակով:
7. Հետադարձ կապի ապահովման կառուցակարգերի լիարժեք պարբերաշրջանային գնահատման գործընթացի ներդրում՝ բոլոր ֆակուլտետների և ամբիոնների անմիջական մասնակցությամբ:
8. Ուսանողների հարցումների արդյունքների մշակման և արձագանքման կառուցակարգերի կատարելագործում:
9. Հաշվետվողականության գնահատման գործիքների և կառուցակարգերի կատարելագործում:
10. ՊԴ կազմի ծանրաբեռնվածության, աշխատողների պարտականությունների հստակեցման մեխանիզմների կատարելագործում:
11. Մասնագիտությունների գծով շուկայական իրավիճակի առվել խոր վերլուծություն:
12. Հնարավոր ռիսկերի գնահատում և համապատասխան միջոցառումների իրականացման սցենարի մշակում:
13. Շենքային պայմանների բարելավում:
14. Ուսանողների համար ուսուցման՝ իրենց ցանկալի գրաֆիկի, դասախոսի ընտրության հնարավորությունների մեխանիզմների ձևավորում:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-երը համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

Չափանիշով նկարագրվող բնագավառի համար ԱրՊՀ ռազմավարական ծրագրում ձևակերպված են հաստատության հավակնությունները ([ՌԾ, էջ 10](#)):

Գիտակցելով իր առաքելության կարևորությունը և ելնելով այդ իրողությունից՝ իբրև նպատակ՝ ՌԾ-ում առաջնային է համարվում մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ Արցախի Հանրապետության որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանության հարցը ([ՌԾ, էջ 13](#)): Համալսարանի գործունեությունը նպատակաուղղված է մանկավարժական, հայագիտական, բնագիտական, սոցիալ-տնտեսական, հումանիտար գիտության և տեխնիկայի, սպորտի, մշակույթի տարբեր ուղղություններով կրթության, հիմնարար գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպմանը: ԱրՊՀ-ն հավակնում է դառնալու հաստատություն, որն առաջարկում է կրթական նորագույն տեխնոլոգիաների, դասավանդման, ուսումնառության նորագույն մեթոդների վրա հենված համակողմանի գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ապահովող մրցունակ կրթական ծրագրեր՝ համահունչ եվրոպական բարձրագույն կրթական տարածքի հիմնարար սկզբունքներին, նոր սերնդի կրթության խնդիրներին ներկայացվող առանձնահատուկ կրթական մոտեցումներին: Այդ գործընթացում համալսարանը ձգտում է հաշվառելու ԱՀ աշխատաշուկայի պահանջները, նաև կարևորում է համահայկական կրթական տարածքում ներկայանալու և մրցունակ լինելու առաջնահերթությունը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

- Հիմքեր**
- Մասնագիտության կրթական ծրագրի նկարագիրը ([Հավելված 3.1.4](#), [Հավելված 3.1.5](#), [Հավելված 3.1.6](#))
 - [ԼՂՀ-ում կրթական ծրագրի իրականացման լիցենզավորման կարգերը, լիցենզիայի ձևերը](#)
 - [ԼՂՀ կրթության որակավորումների շնորհման կարգը](#)
 - [Նախկինում շնորհված որակավորումների համապատասխանեցման կարգը](#)
 - [ԱրՊՀ ռազմավարական ծրագիրը /2019-2023/](#)
 - ՄՈՒՀ-ի առաքելությունը և խնդիրները (ԱրՊՀ հայեցակարգը):
 - ՈԱՇ – ՄԿԾ համադրելիություն. « Հայոց լեզու և գրականություն» ([Հավելված](#)

[3.1.1](#)), «Ֆինանսներ /ըստ ոլորտի» ([Հավելված 3.1.2](#)), «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» ([Հավելված 3.1.3](#))

- ՄԿԾ վերջնարդյունքների և ուսպլանների քարտեզներ՝ «Հայոց լեզու և գրականություն» ([Հավելված 3.2.4](#)), «Ֆինանսներ /ըստ ոլորտի» ([Հավելված 3.2.5](#)), «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» ([Հավելված 3.2.6](#))
- [Հավելված 2.2](#), [Հավելված 2.3](#) Ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագիր
- [Հավելված 2.4 Ամբիոնի զարգացման ծրագիր](#)

Վերլուծել ՄԿԾ-ում նշված ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչությունը հաստատության առաքելության հետ և համադրելիությունը պետական կրթական չափորոշիչների և Որակավորումների ազգային շրջանակի հետ:

ա/ ՄԿԾ-ում նշված ուսումնառության ակնկալվող արդյունքները համահունչ են հաստատության առաքելությանը:

Գիտակցելով իր առաքելության կարևորությունը և ելնելով այն առաջնահերթությունից, որ իր կողմից մատուցվող կրթական ծառայությունների որակն անմիջականորեն փոխազդում է երկրի առաջընթացի որակին՝ ԱրՊՀ-ն, համաձայն ԱՀ Կառավարության հաստատած մասնագիտությունների, երեք հիմնական ուղղություններով՝ բարձրագույն մասնագիտական կրթություն՝ ՈԱՇ-ի սահմանած մակարդակներով /բալալավրի, մագիստրոսի, հետազոտողի որակավորումներ/, գիտական հետազոտություն և հանրային ծառայություն, առաջարկում է կրթական ծրագրերի ընդգրկուն ցանկ՝ մանկավարժական, բնագիտական, հումանիտար, տնտեսագիտական, սոցիալական :

2013թ. սկսած՝ մեկնարկեց բոլոր մասնագիտությունների համար կրթական չափորոշիչների մշակման գործընթացը և այդ հիմքով կրթական ծրագրերի իրականացումը: Աշխատանքներն իրականացվում էին՝ հիմք ընդունելով կրթական կառուցվածքում կատարված փոփոխությունները և ռեկտորի կողմից ներկայացված ԱրՊՀ 5-ամյա զարգացման ծրագրում ամրագրված դրույթները /ՌԾ, [Համալսարանի առաքելությունը](#), Կրթական գործունեության արդիականացում/:

Այդ չափորոշիչների մշակման գործընթացը մեկնարկելիս ԱրՊՀ-ն մի կողմից՝ կարևորում էր համահայկական կրթական տարածքում ներկայանալու և մրցունակ լինելու հնարավորության իրացումը, մյուս կողմից՝ գիտակցելով աշխատաշուկայի պահանջի հաշվառման կարևորությունը՝ ներգրավում էր գործատուներին մանակավարժական գործունեության մեջ: Բոլոր մասնագիտությունների գծով՝ առանձնապես *Տնտեսագիտություն, Իրավագիտություն, Լրագրություն, Քաղաքագիտություն* մասնագիտությունների դասավանդման գործընթացում ներգրավված էին ոլորտի պատասխանատուներ, գործատուներ, ինչը ՌԾ-ի կատարողականի պահանջ էր նաև:

Հայտնի է, որ հասարակության շրջանում նկատելի է մանկավարժի մասնագիտության նկատմամբ հետաքրքրության նվազում, հատկապես բնագիտական մասնագիտությունների գծով, բայց և մյուս կողմից, մեծացել է դպրոցի՝ մասնագետներով համալրման պահանջը, ինչին նպաստել է նաև ԼՂՀ Կառավարության այն որոշումը, որ թոշակառու ուսուցիչներին այլևս աշխատելու հնարավորություն չի տրվում: Ըստ այդմ, կրթական ծառայությունները պետական կրթական այդ պահանջներին ու չափորոշիչներին համապատասխանեցնելու

թելադրանքով և նաև աշխատաշուկայի մուտքի պահանջով ու առաքելությամբ սահմանվածին համահունչ՝ 2015 թվականից բակալավրի 15 կրթական ծրագրերով ԱրՊՀ-ն մի շարք մասնագիտությունների գծով ընդլայնել է մանկավարժական ուղղվածությունը: Ըստ որի՝ մանկավարժական կրթաբլոկի ցանկն ընդլայնվել է թե՛ տեսական դասընթացների, թե՛ փորձուսուցման տևողության ու ձևերի բազմազանեցմամբ: Մանկավարժական ուղղվածության կրթական ծրագրերում յուրաքանչյուր կրթական ծրագրի գծով ապահովվում է դասավանդման մեթոդիկայի ուսուցումը: Ամփոփիչ որակավորման քննական հարցաշարի 1/3-ը կազմվում է մանկավարժական կրթաբլոկի դասընթացներից:

Հաշվի առնելով տարածաշրջանային առանձնահատկությունները՝ կրթական ծրագրում կարևորվում է նաև մասնագիտական-հետազոտական բաղադրիչը, այն է՝ կրթել մանկավարժ՝ մասնագետ-հետազոտողի կարողություններով: Դա նաև հնարավորություն է տալիս բակալավրիական մանկավարժական կրթությունը շաղկապելու մագիստրոսական ոչ մանկավարժական կրթությանը:

Ներկայումս՝ 2018-2019 ուստարում, համալսարանի 5 ֆակուլտետներում իրականացվում է 75 կրթական ծրագիր, որից 25-ը՝ բակալավրի /13 մանկավարժական և 12 սոցիալական կամ համալսարանական/, 44-ը՝ մագիստրոսի /17 մասնագիտություն և 27 մասնագիտացում/, 6-ը՝ ասպիրանտուրայի կրթական աստիճաններում:

Հիմնադրման օրվանից համալսարանի գերակա ուղղություններն էին բնական և հումանիտար գիտությունները, ըստ այդմ՝ մինչև 2015 թ. բուհում այդ ուղղություններով իրականացվում էր բակալավրիատի 28 մասնագիտություն՝ 35 կրթական ծրագրով, մագիստրատուրայի 14 մասնագիտություն՝ 31 մասնագիտացմամբ: Այդ ուղղություններն առայսօր էլ ուղենշային են բուհի առաքելության առաջնահերթություններում: Տնտեսական, սոցիալական/իրավագիտություն, քաղաքագիտություն, լրագրություն, թարգմանչական գործ/ ուղղություններն ավելի երիտասարդ են, և նրանց ներդրումը պայմանավորված էր ԱՀ հասարակատնտեսական ու իրավական համակարգերի ձևավորման ու զարգացման պահանջով: ԱրՊՀ-ն, 2019թ. ընդունելով ռազմավարական հնգամյա ծրագիր և առաջնահերթորեն կարևորելով կրթական ծրագրերի արդյունավետ իրականացումը, առաջադրեց ՄԿԾ-ների վերակառուցման, իրականացվող աշխատանքների համակարգային պլանավորման պահանջ, որի համաձայն՝ լրամշակված ծրագրերում առարկաների էլքային արդյունքները քարտեզագրվեցին կրթական ծրագրի վերջնարդյունքների համապատասխան (ՄԿԾ վերջնարդյունքների և ուսպլանների քարտեզներ՝ «Հայոց լեզու և գրականություն» ([Հավելված 3.2.4](#)), «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» ([Հավելված 3.2.5](#)), «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» ([Հավելված 3.2.6](#))):

Լրամշակված ծրագրերում պլանավորվեցին ուսանողի առաջընթացի քայլերը՝ տրվող դասընթացների տրամաբանական հաջորդականության, մասնագիտական կրթության բովանդակության աստիճանական լրացման ու համակողմանիության ապահովման, տեսական գիտելիքները գործնական հմտություններով զուգակցելու, նյութը վերլուծելու և գնահատելու բաղադրիչների համակցությամբ՝ առաջնահերթորեն ապահովելով կրթական ծրագրերի՝ ԱՀ ՈԱՇ-ին համադրելիությունը (ՈԱՇ-ՄԿԾ համադրելիություն. «Հայոց լեզու և գրականություն» ([Հավելված 3.1.1](#)), «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» ([Հավելված 3.1.2](#)), «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» ([Հավելված 3.1.3](#))):

բ/ ՄԿԾ-երը ԱրՊՀ ՌԾ-ի առաջնահերթությունն են և կազմում են հաստատության

պլանավորման բաղկացուցիչ հիմնական մասը:

Դրանց իրացման խնդիրներն արտացոլված են համալսարանի բոլոր ստորաբաժանումների ռազմավարական ծրագրերում և այդ ծրագրերի իրականացմանն ուղղված աշխատանքային պլաններում ([Հավելված 2.2](#), [Հավելված 2.3](#) Ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագիր, [Հավելված 2.4 Ամբիոնի զարգացման ծրագիր](#)):

ՄԿԾ-երի իրականացմանն ուղղվող համալսարանի ֆինանսական միջոցների հատկացման մասին տեղեկատվությունը տե՛ս Չափանիշ 7-ի չափորոշիչ Գ-ում:

Հիմքեր՝

- Հաստատության մասնաշենքերը և դրանց օգտագործման նպատակները
- Լաբորատորիաները, ուսումնական կաբինետները, հայագիտական կենտրոնը, հոգեբանական կենտրոնը, իրավաբանական կլինիկան, լրագրության ստուդիան, համակարգչային սրահը:
- Գրադարանների, պաշտոնական համացանցային կայքերի և գրականության հասանելի այլ աղբյուրների ցանկը, համակարգչային սրահների հասանելիությունը (Տե՛ս Չափանիշ 7):
- Անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական անձնակազմ ([Տե՛ս Հավելված 5.1](#)) և [ուսումնասովանողական կազմ](#) (Տե՛ս Չափանիշ 5, չափորոշիչ ա, աղյուսակ 1, 2):

Համալսարանի ռեսուրսային բազան ենթակառուցվածքները ու համապատասխան մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնասովանողական կազմի առկայությունը հնարավորություն են ընձեռում ԱրՊՀ ռազմավարական ծրագրի, ըստ այդմ՝ մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար, ինչի մշտական կատերալագործումը, լինելով առաջնահերթային բուհի ռազմավարությունում, հնարավոր կդարձնի որակի շարունակական բարելավումն ու կայունությունը:

Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է մասնագիտությունների կրթական ծրագրերի առաջավոր փորձի համեմատական վերլուծություն (բենչմարքինգ):

ԱրՊՀ կրթական ծրագրերը մշակելիս մշտապես հաշվառվել են ՀՀ բուհերի համապատասխան փորձի արդյունքները (ուսումնական պլանների համադրման և համապատասխանեցման գործընթացներն իրականացվել են միջհամալսարանական պայմանագրերով), քանի որ մատուցվող կրթական ծառայությունները, ԱՀ հատուկ կարգավիճակից ելնելով, նախ և առաջ պետք է համադրելի և փոխձանաչելի լինեն ՀՀ բուհական տարածքում: ԱրՊՀ կրթական ծառայությունների միջազգայնացման հնարավորությունը և միջազգային փոխանակման ծրագրերը ներկայումս միջնորդավորված են ՀՀ կրթական տարածքով:

Բացի այդ՝ ուսումնասիրվել են նաև Ղազախստանի Հանրապետության Տարազի պետական համալսարանի, ՌԴ Մոսկվայի մանկավարժական ինստիտուտի, ՌԴ Վոլգոգրադի պետական համալսարանի, ՌԴ Ուրալյան պետական մանկավարժական համալսարանի կրթափորձը, ժամանակակից կրթական մոդելների ներդրման հնարավորությունները՝ համանման իրողությունները ճիշտ ընկալելու և գնահատելու համար:

ԱրՊՀ նոր ՄԿԾ-երը մշակելիս կարևորվել են արտաքին փորձագետների և ներքին շահակիցների կարծիքները, իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ՝ հարցումներ, կլոր սեղան-քննարկումներ: Ամբիոնների կողմից ուսումնասիրվել են նաև «ԱրՊՀ շրջանա-

վարտների վերաբերյալ գործատուների կարծիքի ուսումնասիրության հարցման արդյունքները» ([Ձեկույց Արցախի Հանրապետության կրթական համակարգի ընտրանքային հետազոտության](#), Ստեփանակերտ, 2019), որոնց հիման վրա բացահայտվել են տարբեր մասնագիտությունների շրջանավարտների մասնագիտական պատրաստվածության աստիճանին վերաբերող որոշ հարցեր:

Նոր կրթական ծրագրերը նաև խորհրդատվական քննության են հղվել արտաքին կարծիքի (*Հայոց լեզու և գրականություն* մասնագիտության դեպքում՝ ՀՀ Վանաձորի պետական մանկավարժական համալսարան և ներքին շահակիցներին. նշյալ դեպքում՝ Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան հ.1 հիմնական դպրոց):

Այլ ՄՈՒՀ-երի առաջավոր փորձի համեմատական վերլուծություն բուհերի միջհամագործակցային մակարդակով փաստացի չի արվել, բայց ճանաչողական նպատակներով մշտակա ուսումնասիրություն ու նորի, համանման երևույթների վերհանման փնտրումներ եղել են:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

- Հիմքեր
- Ուսումնառության արդյունքները ու նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումները և մեթոդները (*Հայոց լեզու և գրականություն* ([Հավելված 3.2.1](#)), Ֆինանսներ /ըստ ոլորտի/մասնագիտությունների ([Հավելված 3.2.2](#)), Տեղեկատվական տեխնոլոգիաներ ([Հավելված 3.2.3](#)))
 - Դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման քննարկումներ՝ ռեկտորատի որոշումներով (2016թ. հունվարի 13, արձ. հ.1, 2016թ. նոյեմբերի 3, արձ. հ.23, 2016թ. նոյեմբերի 22, արձ. հ.24, 2016թ. նոյեմբերի 28, արձ. հ.25, 2017թ. փետրվարի 9, արձ. հ. 4, 2017թ. փետրվարի 27, արձ. հ. 6, 2017թ. մարտի 17, արձ. հ. 8, 2017թ. մարտի 28, արձ. հ. 9, 2017թ. մայիսի 15, արձ. հ. 13, 2017թ. օգոստոսի 21, արձ. հ. 17, 2017թ. սեպտեմբերի 19, արձ. հ. 19, 2017թ. հոկտեմբերի 6, արձ. հ. 20) (*Տե՛ս Հավելված 3.6*)
 - Ընթացակարգ [Արցախի պետական համալսարան ՊՈԱԿ պրոֆեսորադասախոսական համակարգի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման](#)
 - [ԱրՊՀ ՊՈԱԿ դասալսումների կազմակերպման և անցկացման կարգ](#)
 - [ԱրՊՀ ՊՈԱԿ ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյական հատկանիշների գնահատման սոցիոլոգիական հարցման կանոնակարգը և հարցաշարը](#)
 - [ԱրՊՀ ՊՈԱԿ ուսանողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպման կարգ](#)
 - [Արցախի պետական համալսարանում դասախոսների տարբերակված հավելավճարի կարգ](#)

- [Դասընթացի նկարագրի նմուշը](#)
- [Դասընթացի մասնագրի նմուշը](#)

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագիր ([Հավելված 3.6.5](#)):

ՄԿԾ-ով նախատեսված դասընթացների և ուսումնառության ակնկալվող արդյունքների (ՈւԱ) համապատասխանությունը (անհրաժեշտության դեպքում ավելացնել տողերը և սյունները) ([Հավելված 3.6.3](#)):

Վերլուծել ՄԿԾ-ում նշված դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Մինչև ՌԾ-ի մշակումը և նրանում ՄՈՒՀ-ի առաջնահերթությունների սահմանումը, ՄԿԾ-երի վերջնարդյունքների հստակեցման պահանջի առաջադրումը՝ ուսումնական գործընթացը կազմակերպվում էր ավանդական սկզբունքով՝ ելնելով նպատակներով սահմանված առաքելությունից և ներքին կանոնակարգերով ու ընթացակարգերով համակարգվող կարգերի հետևողությունից: Այդ առումով մշակված առարկայական նկարագիրը կրթական ծրագրի իրականացումը հավաստող օղակ էր միայն կանխատեսորեն և ոչ հստակ վերջնարդյունքին միտված քայլերով: Եվ դա հիմնավորվում է այն իրողությամբ, որ ուսումնական պլաններով առաջնորդվելով՝ ուսուցման ողջ գործընթացը կազմակերպվում էր ավանդական արհեստավարժության հիմունքով և գիտելիքահեն կրթության ապահովմամբ: Հնի ու նորի գուգակցումը աստիճանական էր:

Ուսումնառության արդյունքների, դասավանդման մեթոդների և գնահատման չափանիշերի համապատասխանության հարցը և ըստ այդմ՝ արդյունավետությունը միշտ եղել են առանցքային, և իրականացվող աշխատանքները միտված էին գտնելու այն լավագույն կապը, որ պիտի ապահովեր ակնկալվող արդյունքը: Դրանք իրականում գործում էին ավանդական սկզբունքով, և արդյունավետության գնահատումը իրականացվում էր դասախոսների դասալսումների, ամբիոնային փոխդասալսումների, ուսանողների ընթացիկ ստուգումների արդյունքների վերլուծություններով, ուսանողների առաջադիմության կիսամյակային, ամենամյա ամփոփումներով, որոնք քննարկվում էին ամբիոններում, ֆակուլտետի խորհրդում, ռեկտորատում և համապատասխան հանձնարարականներով նախանշվում լավարկման քայլերը:

Երևան հանվող խնդիրների, թերացումների շտկման պահանջը ենթադրում էր համապատասխան ընթացակարգերի մշակում և ըստ այդմ իրականացվող աշխատանքների համակարգում: Այն, որ աշխատանքն իրականացվում էր, կարող են հաստատել նաև գործող կարգերում արված փոփոխությունները և նոր ընթացակարգերի մշակումները:

ԱրՊՀ գիտխորհրդի 2015 թ. օգոստոսի 24-ի N 23-Լ որոշմամբ՝ [ԱրՊՀ ՊՈԱԿ ուսանողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպման կարգը հաստատելու մասին](#), հստակեցվել է ինքնուրույն աշխատանքների կազմակերպման գործընթացը: Ամբիոններում վերանայվել ու լրամշակվել են նաև առարկայական նկարագրերի ձևանմուշները, լրացվել դրանք ինքնուրույն աշխատանքների պահանջի և գնահատման սկզբունքների նշումներով:

Արդյունքում՝ մշակված առարկայական նկարագրերը ուսումնական գործընթացը ավելի հարմարավետ ու վերահսկելի են դարձրել :

Հընթացս հաստատվել են կարգեր՝ դասախոսական աշխատանքը գնահատելու,

վարկանշավորելու ([Արցախի պետական համալսարանում դասախոսների տարբերակված հավելավճարի կարգ, ԱրՊՀ ՊՈԱԿ ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյական հատկանիշների գնահատման սոցիոլոգիական հարցման կանոնակարգը և հարցաշարը հաստատելու մասին ԱրՊՀ գիտական խորհրդի 2013թ. հոկտեմբերի 31-ի N04-L որոշում](#)), ապա և հաստատվել են հարցաթերթերի լրամշակված նմուշներ, որոնք ուղղված են պարզելու դասավանդման մեթոդների, գնահատման սկզբունքների և ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետությունը: Այդպիսով՝ փորձ էր արվում հետադարձ կապով՝ արդյունքով գնահատելու դասավանդման արդյունավետությունը, ուսանողների բավարարվածության աստիճանը, բայց և արդյունքների համապարփակ վերլուծություն և դրանից բխող քայլերի հաջորդականություն չէր ծրագրվում:

ՌԾ-ի իրականացումը ենթադրում է նաև նոր գործիքակազմի ներդրում, որը տեսանելի կդարձնի դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը և չափելի՝ գնահատումը: Գործընթացը մեկնարկված է: Ներկայումս առարկայական նկարագրի նոր ձևանմուշ է մշակվել ([Արցախի պետական համալսարան» ՊՈԱԿ դասընթացի առարկայական նկարագրի նմուշը հաստատելու մասին 2019թ. մայիսի N 3-Լ որոշում](#)), որում հստակորեն նշված ու տեսանելի է ակնկալվող արդյունքների, դասավանդման մեթոդների և գնահատման չափանիշների միջև առկա կապը: Դրանք ՄԿԾ-երի վերջնարդյունքների իրացումը հավաստող քայլեր են և միտված են ՌԾ-ով սահմանված կրթական որակի շարունակական բարելավմանն ու կրթական արդյունքների իրացման արդյունավետության բարձրացմանը: Բուհում մեկնարկել է նաև ուսումնամեթոդական կայուն հիմքի ստեղծման նպատակալաց աշխատանք: Այդ աշխատանքների իրականացմանը հետամուտ է Որակի ապահովման կենտրոնը, որի կողմից մշակվում են հարցաթերթեր, իրականացվում են հարցումներ՝ պարզելու դասավանդման ու ուսումնառության առավել արդյունավետ միջոցները, ուսումնական գործընթացի կազմակերպման հնարավորությունները:

Ֆակուլտետներին կից ստեղծվել են որակի ապահովման հանձնաժողովներ, որոնց աշխատանքներն առաջնայնորեն ուղղված են դասընթացի վերջնարդյունքների, դրանց իրացման նպատակով կիրառվող դասավանդման և ուսումնառության, գնահատման մեթոդների մասին ուսանողների կարծիքները հետախուզելուն, առաջարկները գրառելուն, դրանով նաև դասախոսին մեթոդապես օգնելուն և ուսումնական գործընթացը ուսանողակենտրոն դարձնելուն (իբրև օրինակ՝ տե՛ս բանասիրական ֆակուլտետի խորհրդի N 3 նիստի արձանագրությունը և [Ֆակուլտետի որակի ապահովման հանձնաժողովի N2 նիստի արձանագրությունը](#)):

Մանկավարժական ուղղվածությամբ մասնագիտությունների փորձուսուցվող խմբերի հարցումներից, լրացված թղթապանակներից պարզվում է, որ ուսանողների ուժեղ կողմերն են կայուն և հիմնարար գիտելիքները և ժամանակակից մեթոդներին տիրապետելու կարողությունները, և դրանք հնարավորություն են տալիս ուսանողին ինքնավստահ լինելու և լիարժեք ինքնիրացվելու: Հատկանշելի է, որ դպրոցում նրանց կիրառած մեթոդները հետաքրքրություն են առաջացրել աշակերտների շրջանում, և նրանց ներկայությունը դպրոցում աշխուժություն է առաջացրել: Սա նույնպես վկայում է բուհի դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետության, դրանք ուսանողի կողմից օրինակելու փաստի մասին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

- Հիմքեր
- [Ուսանողների գիտելիքների համակարգչային թեստային ստուգման գործընթացի կանոնակարգը](#)
 - [Կուրսային աշխատանքի նախապատրաստման և պաշտպանության կարգ](#)
 - [Ավարտական աշխատանքի նախապատրաստման և պաշտպանության կարգ](#)
 - [Մագիստրոսական թեզի նախապատրաստման և պաշտպանության կարգ](#)
 - [Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ](#)
 - [Ակադեմիական ազնվության և անազնվության կանոնակարգ](#)

Հավատարմագրման դիմում-հայտում ամրագրված 3 ՄԿԾ-ների համար ներկայացնել ուսումնառության արդյունքները և համապատասխան գնահատման մեթոդները (Հայոց լեզու և գրականություն ([Հավելված 3.3.1](#)), Ֆինանսներ /ըստ ոլորտի/մասնագիտությունների ([Հավելված 3.3.2](#)), Տեղեկատվական տեխնոլոգիաներ ([Հավելված 3.3.3](#)):

Վերլուծել ՄԿԾ-ում նշված ուսանողների գնահատման և գրագողության դեմ պայքարի նախատեսված մոտեցումների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԱրՊՀ-ում 2009 թ. ներդրվել է ուսանողների գիտելիքների գնահատման բազմաձև համակարգ: Ուսանողների գիտելիքների գնահատումն իրականացվում է գնահատման 4 ձևերով՝ ավանդական ստուգարքի, ավանդական քննության, առանց եզրափակիչ գնահատմամբ ստուգման, եզրափակիչ գնահատմամբ քննության միջոցով: Մինչև 2014թ. առանց եզրափակիչ գնահատման դասընթացները, գնահատվելով որպես տարբերակված ստուգարքներ, ՄՈԳ-ը ձևավորող բաղադրիչ չէին: 2014թ. ուսանողների գիտելիքների գնահատման կարգում փոփոխություն է կատարվել. յուրաքանչյուր գնահատման ձևի բաղադրիչները, գնահատման մեթոդաբանությունը հստակորեն սահմանվել են, գնահատման չափանիշների թափանցիկությունն ապահովվել է. ստեղծվել է ձևավորող /քայլերով հաշվարկված/ և ընդհանրացնող գնահատման հավասարակշռություն:

Հստակորեն առանձնանված չեն հմտությունների գնահատման չափանիշները գիտելիքի գնահատման չափանիշներից, բայց գիտելիքի ստուգումը զուգակցված է գործնական հմտության ստուգմամբ: Թե՛ ընթացիկ և թե՛ եզրափակիչ ստուգումներն իրականացվում են բանավոր ու գրավոր՝ հարցատուներում ներառելով թե՛ գիտելիքը, թե՛ գործնական հմտությունը ստուգող առաջադրանքներ: Առանց եզրափակիչ գնահատման դասընթացների ընթացիկ 2 ստուգումներն/ 8-ական միավոր/ իրականացվում են թե՛ գրավոր, թե՛ բանավոր՝ տոմսում ներառելով նվազագույնը 4 հարց՝ 2-ական ենթահարցերով, իսկ քայլը գնահատվում է 0.5 միավոր: Եզրափակիչ գնահատմամբ ստուգումները/5-ական միավոր/ իրականացվում են համակարգչային ստուգմամբ. յուրաքանչյուր ընթացիկ ստուգման հարցաշար կազմված է 8 բջիջից՝ նվազագույնը 20-ական առաջադրանքներով: Մեկ ընթացիկ ստուգումը

ներառում է տվյալ դասընթացի առնվազն 160 առաջադրանք, որից ուսանողին ծրագրային ընտրությամբ տրվում է 25 առաջադրանք՝ քայլը 0.2 միավորով, իսկ եզրափակիչ քննությունը գնահատվում է 6 միավոր առավելագույն արժեքով, իրականացվում է բանավոր՝ քննական տոմսերով՝ բաղկացած նվազագույնը 3 հարցից՝ 2-ական ենթահարցերով. քայլը՝ 0.5 միավոր: Թե՛ եզրափակիչ գնահատմամբ, թե՛ առանց եզրափակիչ գնահատման դասընթացների ստուգումների արդյունքներին հավելվում է [ինքնուրույն աշխատանքի](#) համար տրվող 2 միավորը և ևս 2 միավոր՝ [դասահաճախումների](#) համար:

Գնահատման համակարգում առաջնությունը տալով օբյեկտիվությանն ու անաչառությանը և իբրև սկզբունք կարևորելով անկանխատեսելիությունը առաջադրանքների/խնդիրների լուծման գործընթացում՝ իբրև գիտելիքի ստուգման ձև՝ ներդրվել է համակարգչային-թեստային ստուգումը: Իրականացվել են թեստային գնահատման գործընթացի բարելավման աշխատանքներ. բուհի բոլոր ստորաբաժանումներում թեստային լավորակ առաջադրանքների կազմման հարցի շուրջ կազմակերպվել են մեկշաբաթյա դասընթացներ և հանդիպում թեստավորման կենտրոնի տնօրենի հետ: Այս աշխատանքի բարելավման գործընթացը մշտապես ենթադրում է հետևողականություն, վերլուծություն ու թերացումների շտկում:

Գիտելիքի և հմտությունների գնահատման համարժեքությունն ապահովվում է դասավանդման և ուսումնառության մեթոդների համապատասխանությամբ, լսարանային աշխատանքի և ինքնուրույն աշխատանքների փոխկապակցված գնահատմամբ:

Բացի ուսանողի արտալսարանային ինքնուրույն աշխատանքից՝ ուսանողի ՄՈԳ-ը ձևավորող դասընթացներում իբրև բաղադրիչ առանձնացվում է ուսանողի հետազոտական հնարավորությունները բացահայտող ինքնուրույն աշխատանքը՝ 2 միավոր արժեքով: Այն հիմնականում նախատեսում է դասընթացի շրջանակում թեմատիկ շնորհանդեսների ներկայացում, թեմատիկ նախագծերի ստեղծում և այլն: Թե՛ եզրափակիչ, թե՛ առանց եզրափակիչ գնահատման դասընթացների 20 միավորը ձևավորվում է քայլ առ քայլ՝ ունենալով յուրաքանչյուր բաղադրիչի ձևավորման հստակ պատկերացում, համակարգելով ողջ կիսամյակում ուսանողի կողմից կատարած աշխատանքը: Մինչև ընթացիկ ստուգումները դասախոսի կողմից իրականացվում են խորհրդատվություններ, հստակեցվում ստուգումների իրականացման մեթոդները, քննարկվում նախապես ներկայացված պահանջները, ապա՝ նաև արդյունքները:

Ընթացակարգերով մշակված ու հստակեցված են նաև գիտական դասընթացային աշխատանքների, ավարտական աշխատանքների և թեզերի գնահատման չափանիշները (ներկայացման որակ՝ 8 միավոր, ձևակերպման որակ՝ 4 միավոր /գնահատում է ներամբիոնային հանձնաժողովը/, ինքնուրույնության աստիճան՝ 4 միավոր/գնահատում է ղեկավարը/, թեմայի արդիականության հիմնավորում՝ 2 միավոր, նորույթը՝ 2 միավոր), բողոքարկման կարգը, որոնք հնարավորություն են տալիս օբյեկտիվ գնահատելու ուսանողի գիտահետազոտական աշխատանքը:

Առ այսօր էլ գնահատման մեխանիզմների բարելավման գործընթացը մնում է առաջնային:

ԱրՊՀ-ում ուսանողների գնահատման անաչառությունն ապահովելու և գրագողության ու ակադեմիական անազնվության դեմ պայքարելու ուղղությամբ իրականացվող աշխատանքները, մշտակա վերահսկողությունը որոշակիորեն նպաստել են այդ տիրույթում անառողջ երևույթների բացառմանը ([Ակադեմիական ազնվության և](#)

անազնվության կանոնակարգը հաստատելու մասին ԱրՊՀ գիտական խորհրդի 2017թ. դեկտեմբերի 20-ի N46-L որոշում): ԱրՊՀ ընթացակարգով սահմանվում և կարգավորվում է գիտական՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գրաքննությունը՝ թեմաների կրկնությունից և գրագողությունից խուսափելու նկատառումով (ԱրՊՀ «Կուրսային աշխատանքի նախապատրաստման և պաշտպանության», «Ավարտական աշխատանքի նախապատրաստման և պաշտպանության» «Մագիստրոսական թեզի նախապատրաստման և պաշտպանության» կանոնակարգերը հաստատելու մասին ԱրՊՀ գիտխորհրդի 2014թ. հունվարի 31-ի N1-L որոշումը): Կարգով առաջնորդվելով՝ նկատելիորեն մեծացել է ամբիոնների պատասխանատվությունը գիտական աշխատանքների մասնագիտական ու տեխնիկական որակն ապահովելու առումով:

Վերահսկողական և նախագորշական աշխատանքների իրականացումից բացի, գնահատման համակարգում կարևորելով կարգապահությունն ու պատասխանատվությունը, ակադեմիական ազնվությունը, այլ կարգավորումներին զուգահեռ, գործում է նաև կարգապահական տույժի կիրառման մեխանիզմը (Ուսանողների գիտելիքների համակարգչային թեստային ստուգման գործընթացի կանոնակարգը հաստատելու մասին ԱրՊՀ գիտական խորհրդի 2012թ. հոկտեմբերի 15-ի որոշումը):

ԶԱՓՈՐՈՇԻՉ Պ. ՄՈւՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը:

- Հիմքեր
- Կանոնակարգ ԱրՊՀ ՊՈԱԿ ուսումնական պլանների ձևավորման և պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների
 - ԱրՊՀ ՊՈԱԿ մագիստրատուրայի ընդունելության կարգ
 - Հավելված 3.4.1. Գործատուներն ընդգրկված են բուհի ստորաբաժանումների խորհուրդներում և ՄԿԾ-ների քննարկման գործընթացում
 - Հավելված 3.4.2. ԵՊՄՀ-ի և ԵՊՀ առանձին մասնագիտությունների գծով կրթական ծրագրերի համապատասխանեցման և համագործակցության համաձայնագրեր կան (տե'ս)
 - Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգը

Ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը (նշելով երկիրը և ուսանողների թվաքանակն ըստ տարիների), որոնց հետ հաստատությունն ունի ուսանողների փոխանակումն ու շարժունությունն ապահովող գործող համաձայնագրեր:

Արցախի պետական համալսարանը 2007-2008 ուստարում ընդգրկվեց Բոլոնյան գործընթացում, և լինելով ու կրթական իրողություններով համապատասխանելով ՀՀ համանուն դաշտին՝ իբրև հենանիշ ընդունեց նախ՝ ԵՊՀ, ապա՝ ԵՊՄՀ-ի կրթական ծրագրերը. վերջինս՝ մանկավարժական ուղղվածություն որդեգրելուց հետո: Հիմք ընդունելով արցախյան կրթական իրականության պահանջները՝ հիմնական կրթական ծրագրերը մշակելիս հաշվի են առնվել նաև ՀՀ այլ բուհերի ծրագրային չափորոշիչներն ու պահանջները, որն էլ ապահովել է ուսանողների արտահամալսարանական շարժունությունը:

ԱրՊՀ-ն ուսանողների փոխանակումն ու շարժունությունն ապահովող լիարժեք գործող համաձայնագրեր դեռևս չունի, առկա են միջբուհական համագործակցության պայմանագրեր /Տե՛ս Պայմանագրերը՝ հավելվածով/, և համապատասխան ընթացակարգեր, որոնց հիմքով իրականացվում է ուսանողների շարժունությունը: Ըստ այդմ էլ ուսանողների արտահոսքը՝ փոխանակումն ու շարժունությունը հավաստող առանձին դեպքերը, համագործակցային պայմանագրերի շրջանակներում, արդյունք են ներքին պայմանավորվածությունների, ինչը որոշակիորեն թելադրված է նաև ԱՀ հատուկ կարգավիճակով: Միջազգային հավատարմագրումը լրջորեն կարող է ներագդել և այդ բնագավառում ԱրՊՀ դիրքը բարելավելուն:

Բայց այն, որ ԱրՊՀ կրթական ծրագրերը համադրելի են թե՛ ԱՀ, թե՛ ՀՀ, թե՛ ՌԴ բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերին, թերևս հավաստվում են միջբուհական տեղափոխությունների տվյալներով.

	<i>Երկիր, հաստատություն</i>	<i>2015-2016</i>	<i>2016-2017</i>	<i>2017-2018</i>	<i>2018-2019</i>
	<i>ՀՀ</i>	1	5	4	3
<i>1</i>	<i>ՀՀ, ԵՊՀ</i>	<i>1</i>	<i>1</i>	<i>2</i>	<i>1</i>
	<i>ՀՀ, ԵՊՄՀ</i>		<i>1</i>	<i>1</i>	<i>1</i>
	<i>Հայ-ռուսական համալսարան</i>				<i>1</i>
	<i>ՀՀ, Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական պետական համալսարան</i>		<i>1</i>		
	<i>ՀՀ, Մ.Հերացու անվան բժշկական համալսարան</i>		<i>1</i>	<i>1</i>	
	<i>ՀՀ, «Մոնթե Մելքոնյան» համալսարան</i>		<i>1</i>		
<i>2</i>	<i>ԱՀ</i>	2	7	1	2
	<i>ԱՀ, Մեսրոպ Մաշտոց Համալսարան</i>	<i>1</i>			
	<i>ԱՀ, «Գրիգոր Նարեկացի» համալսարան</i>		<i>1</i>		<i>1</i>
	<i>ԱՀ, Շուշիի տեխնոլոգիական համալսարան</i>		<i>3</i>	<i>1</i>	<i>1</i>
	<i>ԱՀ, Ազրարային</i>	<i>1</i>	<i>3</i>		

	համալսարան				
	ՌԴ			1	
	Մոսկվայի նոր իրավաբանական համալսարան			1	
	Ընդհանուրը	3	12	6	

Ուսանողների արտահոսք

	Երկիր, հաստատություն	2015-2016	2016-2017	2017-2018	2018-2019
1	ՀՀ	4		2	1
	ՀՀ, ՀՊՏՀ	1			
	ՀՀ, ԵՊՀ	2			
	ՀՀ, ԵՊՄՀ	1		2	1
2	ԱՀ	9	153		
	ԱՀ, Մեսրոպ Մաշտոց Համալսարան	3			
	ԱՀ, «Գրիգոր Նարեկացի» համալսարան	3			
	ԱՀ, Ազրարային համալսարան	3			
	ԱՀ, Շուշիի տեխնոլոգիական համալսարան		153		
	Ընդհանուրը	13	153¹	2	1

Ուսանողների արտահոսքի մասին նշյալ ժամանակահատվածում տեղեկությունները լիարժեք չեն, քանի որ ԱրՊՀ-ից մեկ այլ բուհ տեղափոխվելու դեպքում ուսանողը դիմում էր գրում՝ ուսանողության շարքերից ազատվելու: Առանձին դեպքերում նշվում էր պատճառը: Ըստ այդ նշումների՝ տրված է արտահոսքի պատկերը:

Ներկայացնել այն ուսումնական հաստատությունների ցանկը (նշելով երկիրը և դասավանդողների թվաքանակն ըստ տարիների), որոնց հետ հաստատությունն ունի դասավանդող անձնակազմի փոխանակումն ու շարժունությունը ապահովող գործող համաձայ-

¹ ԱրՊՀ ճարտարագիտական ֆակուլտետը վերակազմավորվել է և ամբողջապես ընդգրկվել 2015թ. հիմնադրված Շուշիի տեխնոլոգիական համալսարանի կառուցվածքային համապատասխան ստորաբաժանման հիմքում:

նագրեր:

Դասախոսների փոխանակում և շարժունություն ապահովող գործող համաձայնագրեր առկա չեն, բայց կան միջբուհական համագործակցության պայմանագրեր, որոնցում դրույթներով ամրագրված են ուսանողների և դասախոսական անձնակազմի փոխանակման պատրաստակամությունն ու պարտավորվածությունը/ տե՛ս Պայմանագրերը՝ հավելվածով/:

Մինչ այժմ այդ գործընթացն իրականացվում էր ԱրՊՀ և այլ բուհերի համագործակցային պայմանագրերի շրջանակում, բուհերի ղեկավարների բանավոր պայմանավորվածություններով, ԱՀ արտգործնախարարության անմիջական աջակցությամբ, առանձին անհատների նախաձեռնությունների իրականացմամբ/ կցվում են համապատասխան միջոցառումները/։ Ստորև ներկայացվող տեղեկությունը կարող է հաստատել այն իրողությունը, որ ԱրՊՀ-ն առավելագույնս օգտագործում է այն հնարավորությունը, որ ԱՀ այցելող բոլոր նշանավոր պետական, քաղաքական, մշակութային գործիչները անպայման հյուրընկալվեն բուհում, հանդես գան դասախոսությամբ, որոնք և հաճախ վերաճում են իրական համագործակցության/ տե՛ս նաև Չափանիշ 9, Չափորոշիչ գ/:

Ըստ այդմ՝

դասավանդողների ներհուսքն արտահայտվում է՝

ա/ ոլորտային մասնագետների մեկնազամյա կամ կարճաժամկետ հանդիպումներով, դասընթացների վարմամբ,

բ/ կրթական ծրագրերում առկա որոշ դասընթացների վարմամբ,

գ/առցանց դասախոսությունների իրականացմամբ:

Առավել հաճախակի ԱրՊՀ-ում իրացվում է առաջինը, որի ղեկքում ուսանողին հաղորդվում են հավելյալ տեղեկություններ, նրան մասնակից դարձնում ԱՀ կրթական տարածքից դուրս գործող իրողություններին՝ այդպիսով որոշակիորեն նպաստելով ԱՀ-ում սովորող ուսանողի ներառականությանը բաց կրթության միջավայրին: Իսկ տրվածի գնահատման հնարավորության առումով, բնականաբար, այն սահմանափակ է:

Երկրորդ ղեկքում դասընթացը տրվում է սեղմ ժամկետում, բայց ամբողջական ծավալով. այդորինակ նախագծեր իրականացվել են «Իրավագիտություն», «Տնտեսագիտություն», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» մասնագիտությունների գծով:

Առցանց դասախոսություններ նույնպես իրականացվում են:

	Երկիր, հաստատություն	2015-2016	2016-2017	2017-2018	2018-2019
1.	ՀՀ, ԵՊՀ	5	6	18	8
2.	ՀՀ, ՀՊՄՀ		3	8	1
3.	Հայ-ռուսական համալսարան			1	
4.	Նիդեռլանդների Քլինգենդեյլի ինստիտուտ		1		

5.	Չեխիայի Դաշնություն, GERGE_EI պետական համալսարան				1
6.	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ				1
7.	ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ				1
8.	Սնծովյան և Կասպից տարածաշրջանի քաղաքական և սոցիալական հետազոտությունների ինստիտուտ				1
9.	ՌԴ, ԳԱ կենտրոնական տնտեսամաթեմատիկա կան ինստիտուտ	2		2/սոցանց/	2
10.	ԳՊՀ				1
11.	ՀՀ, «ԱՆԻՄԱ» հոգեբանական կենտրոն				1
12.	ՀՀ, Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտ ական ինստիտուտ			2	1
13.	ՀՀ, ՀՊՏՀ				1
14.	ՀՀ արդարադատության նախարարություն			1	
15.	ՀՀ, Հայաստանի ագրարային պետական համալսարան	8			
16.	Ընդհանուրը	15	10	32	19

Դասավանդողների արտահոսքի տվյալները սահմանափակվում են այլ բուհերի ամփոփիչ որակավորման քննություններին ԱրՊՀ մասնագետների հրավերով/ ԱՀ,

Մերոպ Մաշտոց Համալսարան, ԱՀ «Գրիգոր Նարեկացի» համալսարան, Գորիսի պետական համալսարան/

	<i>Երկիր, հաստատություն</i>	<i>2015</i>	<i>2016</i>	<i>2017</i>	<i>2018</i>
<i>1</i>	-	-	-	-	-

Վերլուծել և հիմնավորել մասնագիտության կրթական ծրագրերի բովանդակային հուսալիությունը, ՄՈՒՀ-ի և այլ հաստատությունների համապատասխան մասնագիտական ծրագրերի հետ համադրելիությունը, ինչպես նաև այդ մոտեցումների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչքանո՞վ է այն նպաստում ուսումնասողների ու դասավանդողների շարժունությանը:

Այն, որ ԱրՊՀ-ում մասնագիտական կրթական ծրագրերը բովանդակային առումով հուսալի և համադրելի են այլ հաստատությունների համապատասխան մասնագիտական ծրագրերին, հասաստում է թե՛ համագործակցային պայմանագրի շրջանակում ուսանողի փոխանակման՝ ԵՊՄՀ-ով միջնորդավորված արտերկրյա մեկամյա ուսուցման հնարավորության իրացումը, թե՛ այլ բուհերի ուսանողների ներհոսքը ԱրՊՀ:

2017-2018 ուստարում 2 ուսանող («Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության, 2-րդ, 4-րդ կուրսեր), 2018-2019 ուստարում 1 ուսանող («Թարգմանչական գործ» մասնագիտության, 3-րդ կուրս), ԵՊՄՀ-ով միջնորդավորված, հնարավորություն են ստացել մեկ տարի ուսանելու Հունգարիայի Պիտեր Պազման կաթոլիկ համալսարանում, ապա վերադառնալու և կրթությունը շարունակելու ԱրՊՀ-ում: Չնայած մեծ չեն փոխանակման ծրագրերում ընդգրկված ուսանողների թիվը և ԱՀ կարգավիճակով պայմանավորված՝ նաև ուսանողների ներհոսքը, բայց թեկուզ և մեկ դեպքի առկայությունը հավաստում է այդ գործընթացի հնարավորությունը և կրթական ծրագրերի համադրելիությունը: Ուսանողների արտահոսքի և ներհոսքի աճի տեմպերը մեծապես պայմանավորված են հասարակատնտեսական պայմաններով ու քաղաքական իրողություններով՝ արցախյան իրականությամբ: Իրավական տեսանկյունից կանոնակարգված են այդ հարաբերությունները ([Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության կարգը](#)), իսկ ընթացիկ ենթակետերի հստակեցում, այնուամենայնիվ, ենթադրվում է՝ պայմանավորված կոնկրետ դեպքերով ու դրանց կարգավորման պահանջներով:

Ուսումնասիրվել է նաև վերջին 5 տարիների դիմորդների թվակազմը, մասնագիտական նախընտրությունները: Հատկանշելի է, որ Արցախի Հանրապետությունում ԱրՊՀ-ն ընտրող դիմորդների բաժնեմասը ընդհանուր դիմորդների թվում 2014 թ. կազմել է 82%, 2018 թ.՝ 84% /Տե՛ս [ԱրՊՀ ԳԱՑ](#), էջ 8/: Մա վկայում է Արցախի պետական համալսարանի՝ ԱՀ բարձրագույն կրթության ոլորտում առաջատարը լինելու փաստը ու նաև հավաստում, որ կրթության ներառականության ու բաց միջավայրի առկայության պայմաններում էլ ԱրՊՀ-ն շարունակում է լինել մրցունակ նաև ՀՀ բարձրագույն կրթական հաստատությունների շարքում:

ԶՍՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

Հիմքեր	<ul style="list-style-type: none"> • ԱրՊՀ ՊՈԱԿ կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերնայման ընթացակարգ • ԱրՊՀ ՊՈԱԿ ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյական հատկանիշների գնահատման սոցիոլոգիական հարցման կանոնակարգը և հարցաշարը • ԱրՊՀ ՊՈԱԿ ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման կանոնակարգ • Աշխատակարգ ԱրՊՀ-գործատու մշտական հանձնաժողովի • ԱրՊՀ ՊՈԱԿ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը • Դասընթացի նկարագրի նմուշը • Դասընթացի մասնագրի նմուշը
--------	---

Վերլուծել ՄԿԾ-ի մշտադիտարկման, գնահատման և վերանայման մեխանիզմները և դրանց արդյունավետությունը:

Մատուցվող կրթական ծառայությունների որակի ապահովումն առաջնահերթելով և հաշվի առնելով արդեն իսկ գործող «Արցախի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյական հատկանիշների գնահատման սոցիոլոգիական հարցման կանոնակարգը և հարցաշարը հաստատելու մասին ԱրՊՀ գիտխորհրդի 2013թ. հոկտեմբերի 31-ի N04-L որոշման հիմքից իրականացված աշխատանքների արդյունքները՝ 2014թ. ընդունվեց «Արցախի պետական համալսարան ՊՈԱԿ-ի կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերնայման ընթացակարգը հաստատելու մասին» հոկտեմբերի 7-ի N45-L որոշումը: ԱրՊՀ-ում մեկնարկեց կրթական ծրագրերի արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված աշխատանքներ. դրանք հիմնականում իրականացվում էին էլքային արդյունքների տվյալների հիման վրա՝ փորձելով բարելավել դասավանդման և ուսումնառության գործընթացները, գնահատման մեխանիզմները: Ըստ այդմ՝ 2015թ. ընդունվեց [ԱրՊՀ» ՊՈԱԿ ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման կանոնակարգը և հարցաթերթը հաստատելու մասին](#) ԱրՊՀ գիտխորհրդի հունիսի 23-ի N12 որոշումը: Այդ աշխատանքները սկզբնական փուլում կարելի է որակել որպես իրավական հիմքերի ստեղծում և ըստ այդմ՝ առաջին քայլերի ձեռնարկում:

2015թ. մի շարք մասնագիտությունների գծով փոխելով ուղղվածությունը և դարձնելով մանկավարժական՝ ԱրՊՀ-ում վերանայվեցին կրթական ծրագրերը: Այդ փոփոխությունը պայմանավորված չէր կրթական ծրագրերի մշտադիտարկման հետևանքով վերհանված խնդիրներով կամ նախորդ կրթական ծրագրերի ոչ նպատակային լինելով: Դա օրենսդրական դաշտում կատարված փոփոխության և բուհին առաջարկվող մասնագիտական ուղղվածության ընտրության պահանջ էր: Մի կողմից՝ օրենսդրական դաշտի փոփոխականությունը, մյուս կողմից՝ ԱրՊՀ-ում կրթական ծրագրերի գնահատման, վերանայման, մշտադիտարկման գործընթացին բնորոշ մշտական փնտրումը և գործընթացի ու ուսումնառության ձևերի բարելավմանն ուղղված և դեռևս չբավարարված ցանկությունը դարձան գործող կրթական ծրագրերի փոփոխությունների ուղեգիծ, ինչի հետևանքով կատարվող հաճախակի փոփոխությունները արվածի և արվողի արդյունավետ գնահատման հնարավորու-

թյուն չեն տվել: Կրթական ծրագրերի մշակման և ներդրման գործընթացը կարելի է բնութագրել որպես *օր առաջ դրանք ստեղծելու և ունենալու հանձնարարական*, քան մատուցվող կրթական ծառայությունների ելքային արդյունքները լիարժեք բնութագրող ծրագրերի մշակման գործընթաց: Դա նաև պայմանավորված էր աշխատաշուկայի պահանջների համապարփակ վերլուծության բացակայությամբ, առաջարկ-պահանջարկի հստակ գնահատում չունենալու իրողությամբ, ինչն էլ ենթադրում է, որ կրթական ծրագիր-աշխատաշուկա փոխկապակցված բովանդակությամբ ծրագրերի մշակումը կրում էր կանխատեսող բնույթ:

Իրականացվող փոփոխությունները թեև բխում էին խորքային պատճառների բացահայտման և ըստ այդմ՝ թերացումների շտկման պահանջից, և գիտակցվում էր ելքային արդյունքը պլանավորման ու որոշման պայմաններից բխեցնելու անհրաժեշտությունը (**Տե՛ս Հավելված 3.5.1**, Ռեկտորատի արձանագրություններ), բայց և համակարգային գործողություններ չէին իրականացվում՝ չունենալով հստակ քայլերով նախանշված ՌԾ և ՄԿԾ-երով սահմանված վերջնարդյունքներ:

Փորձ էր արվում դրանք շտկելու՝ վերջին փուլում փոփոխություններ կատարելով, գնահատման մեխանիզմները վերահսկելի դարձնելով: Ընդունված նոր ՌԾ-ում մշտադիտարկումը ծրագրված է որպես հիմնական կիրառական գործիք, նաև հստակ սահմանված են քանակական և որակական ցուցիչները, որոնցով հնարավոր կդառնա արդյունավետության գնահատումը: Այդ գործընթացի առաջին քայլերից էր [ԱրՊՀ Որակի ապահովման ձեռնարկի](#) մշակումն ու հաստատումը: Այն նախատեսում է մշտադիտարկման բազմաթիվ մեխանիզմներ և գործիքներ, որոնց գործարկումն արդեն սկսված է:

Նկարագրել վերջին 5 տարիների ընթացքում մասնագիտության կրթական ծրագրի վերանայման շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքները և դրանց հիման վրա իրականացրած բարելավումները:

2013թ. սկսած յուրաքանչյուր տարի ուսումնական պլանները վերանայվում էին՝ հիմք ընդունելով ռեկտորի նախընտրական ՌԾ-ի դրույթները և ԱրՊՀ-ում կրթական ծրագրերի գնահատման, վերանայման, մշտադիտարկման գործընթացի ու ուսումնառության ձևերի բարելավման պահանջը:

Այդ տարիների՝ 2013-2018թթ. ընթացքում մշտական հետևողությամբ փորձ էր արվում մատուցվող կրթական ծառայությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներում հաշվի առնել ժամանակի կրթական պահանջը, ուսումնասիրել և ներդնել դասավանդման, ուսումնառության և հետազոտության փոխկապակցման կրթափորձը՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կիրառելու նպատակով: Այդ ուղղությամբ կատարվել են տարբեր աշխատանքներ: Վերանայվել են բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական ծրագրերի կառուցվածքը, բովանդակությունը, իրականացման գործընթացները (ուսումնական պլանների փոփոխություններն իրականացվում էին համաձայն ամբիոնների ամենամյա քննարկումների արդյունքում ձևավորված առաջարկությունների, որ ներկայացվում և հաստատվում էին բուհի գիտական խորհրդում): Հատկանշելի է, որ ուսումնական պլանի իրականացումն ավանդական սկզբունքով էր դրսևորվում. առարկաների ելքային արդյունքները քարտեզագրված չէին կրթական ծրագրի վերջնարդյունքների համապատասխանությամբ: ԱրՊՀ-ն դեռևս չուներ կրթական ծրագրի կառուցվածքն ու բովանդակությունը սահմանող նորմատիվային փաստաթուղթ: Ինչ-որ առումով տարերայնորեն էր իրականացվում գործընթացը, չնայած դասընթացների արդյունավե-

տության բարձրացման խնդիրները մշտական քննարկումների դաշտում և ուշադրության կենտրոնում էին: Ըստ այդմ՝ ստեղծվել են էլեկտրոնային դասախոսությունների բանկ, առկա են բոլոր դասընթացների առարկայական նկարագրերը, որոնք բովանդակում են դասընթացի նպատակը, ծրագիրը, պահանջները, գնահատման մեթոդաբանությունը, հարցաշարերը, տրված են գրականության ցանկը, ինքնուրույն աշխատանքի հանձնարարականները:

Թե՛ նախկին, թե՛ նոր ուսումնական պլանները կազմելիս հաշվի էին առնվում երկրի իրականությունը/ կարգավիճակ, աշխատաշուկա, կրթական կարիքներ/, ՀՀ բուհերի կրթական համակարգի առանձնահատկությունները և ուսումնական պլանների համադրելիությունը: 2013-2018թթ. ուսումնառողների արտահոսքի ու ներհոսքի տեղեկությունները փաստում են այդ պլանների համադրելիությունը, իսկ աշխատաշուկայում իրենց մասնագիտական հնարավորություններն իրացրած շրջանավարտները/թե՛ նախկինում, թե՛ նշյալ ժամանակահատվածում/ այդ պլանների արդյունավետությունն ու համապատասխանությունը աշխատաշուկային:

Գրեթե բոլոր մասնագիտությունների գծով *Ընդհանուր և մասնագիտական հատուկ դասընթացներում* առկա են արցախյան դաշտի նույն իրողությունների գիտական ճանաչմանն ուղղված դասընթացներ: Դրանք, բացի ուսումնագիտական առումով արժևորվելուց, մասնագիտական ու հանրային արժեքների գիտակցության ձևավորման դաշտում նպաստում են ազգային բաղադրիչը կարևորելու գիտակցության ամրակայմանը:

Կամընտրական բաղադրիչը բակալավրի ծրագրում կազմում է 6.6%, իսկ մագիստրոսական ծրագրում՝ 15%: Ուսանողի կողմից կամընտրական դասընթացների ընտրությունը իրացվում է մասամբ. *ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական ու ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամասերում* ուսանողները դասընթացն ընտրելու հնարավորություն և պայմաններ ունեն, բայց *ընդհանուր մասնագիտական դասընթացներ* կառուցամասից առարկայական ընտրություն կատարելու հնարավորությունը սահմանափակ է, քանի որ ուսանողներին ըստ էության չի տրվում ազատորեն ընտրություն կատարելու և անհատական ծրագրով սովորելու հնարավորություն: Այդ դեպքում կամընտրական այս կամ այն դասընթացի ներառումը և ամբիոնի վարիչի կողմից կատարվող ընտրությունը հիմնավորվում է բնագավառի պահանջի, դասընթացի արդյունավետության, այն դասավանդող դասախոսի մասնագիտական պատրաստականության բարձր մակարդակի առկայության անհրաժեշտությամբ: Ուսանողի կողմից չընտրվելով՝ ընտրվում է ամբիոնում՝ կոլեկտիվ քննարկման, մասնագիտական խորհրդակցության արդյունքում՝ համապատասխան հիմնավորումներով:

Իրավական-նորմատիվային փաստաթղթերով կանոնակարգված են բուհ-դպրոց, բուհ-գործատու հարաբերությունները և նախանշված դրանց իրականացման հնարավորությունները: Կատարվում են աշխատանքներ գործընթացում նրանց ներկայությունը զգալի դարձնելու համար: Մասնավորապես բուհի կառավարման բոլոր օղակների խորհուրդներում ընդգրկվում են ոլորտային պատասխանատուներ: Ամփոփիչ որակավորման քննությունների հանձնաժողովների նախագահները կամ հրավիրյալ անձինք նաև իրական գործատուներ են: Գիտխորհրդին կից ստեղծված է [բուհ-գործատու համագործակցությունը համակարգող հանձնաժողով](#), ֆակուլտետի խորհուրդներում ներգրավված են գործատուներ՝ հրավիրյալ անդամների կարգավիճակով, և նրանք ունեն լիարժեք մասնակցության իրավունք ու քվե՝ քննարկվող հարցերի շուրջ իրենց կարծիքն ու

վերաբերմունքն արտահայելու:

Ներկայումս գործընթացի իրականացման վեկտորը ճիշտ պլանավորումն առաջնահերթելու ուղղությամբ է փոխվել. կա լիարժեք ընկալում և գիտակցում, որ իրականացվող քայլերը պետք է պայմանավորվեն ինքնավերլուծության արդյունքներով, և յուրաքանչյուր փոփոխություն պետք է ունենա քայլերով հիմնավորված հաշվարկ, ինչը սահմանված է ՌԾ-ում և արտացոլված ՌԾ-ի իրականացման ժամանակացույց-պլանում:

ԱրՊՀ ՌԾ-ն ընդունելով որպես իրականացվող աշխատանքները ուղենշող և համակարգող փաստաթուղթ՝ սահմանված Նպատակ 1, խնդիր 1.1-ից բխում և ենթադրվում է ունենալ կրթական ծրագրերի պատասխանատուներ, որոնք անմիջականորեն կընդգրկվեն կրթական ծրագրերի մշակման գործընթացում: Բացի այդ՝ ԱրՊՀ-ն չունի կրթական ծրագրի կառուցվածքն ու բովանդակությունը սահմանող նորմատիվային փաստաթուղթ, ինչի ստեղծումը դարձավ առաջնային: Մեկնարկեցին փաստաթղթային հիմքերի ստեղծման ու դրան համապատասխան կրթական ծրագրերի վերակառուցման աշխատանքները ([Արցախի պետական համալսարան» ՊՈԱԿ բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը հաստատելու մասին](#) ԱրՊՀ գիտխորհրդի 2019թ. հունիսի 28-ի N6 Լ որոշումը):

2019 թվականի մարտին ամբիոնների վարիչների ներկայացումների հիմքով առաջարկվեցին բոլոր մասնագիտությունների կրթական ծրագրերի պատասխանատուներ ([Հավելված 3.5.2](#)՝ Ներկայացում առ 2019, մարտի 14): Պատասխանատուները, հիմք ընդունելով «ԼՂՀ կրթության որակավորումների շնորհման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ Կառավարության 2013թ. ապրիլի 25-ի N944-Ն որոշման դրույթները, սահմանեցին մասնագիտությունների վերջնարդյունքները՝ կազմելով ՄԿԾ-ի և ԱՀ ՈԱՇ-ի համադրելության աղյուսակներ (**Տե՛ս Հավելված 3.5.3**): Վերջնարդյունքները սահմանելով՝ կրթական ծրագրի պատասխանատուները համապատասխան քննարկումներ անցկացրին բնագավառի մասնագետների և արտաքին շահակիցների հետ (**Տե՛ս Հավելված 3.5.4**), ապա կազմվեցին ուսումնական պլանի քարտեզները ([Հավելված 3.5.5](#)՝ ֆակուլտետային արձանագրություններ):

Արված քննարկումների հիմքով լրամշակվեցին ուսումնական պլանի քարտեզները, ուսումնական պլանները վերակառուցվեցին, ներկայացվեցին ֆակուլտետի խորհրդի քննարկմանը և կրթական ծրագրի բովանդակությունն ու կառուցվածքը հաստատող փաստաթղթի հետ հաստատվեցին գիտխորհրդում:

Վերլուծել Չափանիշ 3-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

ՄԿԾ-երը համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

<i>Ուժեղ կողմեր</i>	<i>Թույլ կողմեր</i>
<p>1. ԱրՊՀ-ն ԱՀ բարձրագույն մասնագիտական կրթության տարածքում առաջատարն է ու երկրի կրթական կարիքների պահանջարկից բխող մասնագիտական ներուժի հիմնական ստեղծողն ու կադրուժ ձևավորողն ու առաջարկողը:</p>	<p>1. Աշխատաշուկա-բուհ կապի դեռևս թույլ գործակցություն: 2. Մասնագիտությունների կրթական ծրագրերի առաջավոր փորձի համեմատական վերլուծության իրականացման մեխանիզմների անկատա-</p>

<p>2. Առկա է մասնագիտական համապատասխան որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական կայուն կազմ՝ ՄԿԾ-երի նպատակների իրականացման համար:</p> <p>3. Գնահատման բոլոր ձևերի բաղադրիչները, գնահատման մեթոդաբանությունը հստակորեն սահմանված են, գնահատման չափանիշների թափանցիկությունն ապահովվում է, գնահատման համակարգում իբրև արժեքներ են ընկալվում կարգապահությունն ու պատասխանատվությունը և ակադեմիական ազնվությունը:</p> <p>4. Առկա են լրամշակված առարկայական նկարագրեր, որոնցում ներառված են ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդներն ու համապատասխան հանձնարարականները. մի կողմից՝ ուսուցումը դառնում է ուսանողակենտրոն, մյուս կողմից՝ խրախուսվում դասախոսի ակադեմիական ազատությունը:</p> <p>5. Ստեղծվել են մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականության հիմք հանդիսացող իրավական-նորմատիվային փաստաթղթեր /ՌԾ իրականացման պլան-ժամանակացույց, Որակի ապահովման ձեռնարկ/, և դրանք մեկնարկային կիրառում են ստացել:</p> <p>6. ԱրՊՀ-ն օգտագործում է օտարերկրյա բուհերի հետ միջնորդավորված կապի հնարավորությունը և դրանով փորձում խթանել ուսանողների շարժունությունը /Հունգարիայի Պիտեր Պազման համալսարանի հետ՝ Իս. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի միջնորդությամբ/:</p>	<p>բություն:</p> <p>3. Ուսանողների և դասավանդող անձնակազմի շարժունության չիրացված հնարավորություն՝ ԱՀ միջազգայնորեն ճանաչված չլինելու իրավական ընթացակարգային հիմքերի բացակայության պատճառով:</p> <p>4. Դասախոսի ծանրաբեռնվածության ծավալային բազմազանություն. Արդյունքում՝ դասախոսի մասնագիտական ուղղության հստակ չառանձնացում և առանձին ուղղություններով արհեստավարժության մակարդակի բարձրացման խոչընդոտում:</p>
<p><i>Հնարավորություններ</i></p>	<p><i>Վտանգներ</i></p>
<p>1. ԱՀ այցելող ՀՀ և օտարերկրյա քաղաքական ու հասարակական գործիչների, մտավորականների ու բարձրաստիճան պաշտոնյաների հետ գիտաճանաչողական հանդիպումների, քննարկումների կազմակերպում, աշխարհի անցուղարձին ուսանողին մշտակա</p>	<p>1. Աշխատաշուկայի համակողմանի վերլուծության բացակայություն</p> <p>2. Բուհի ակադեմիական ազատություն չունենալը և ըստ այդմ՝ Որակավորումների արժանահավատությունը ստուգելու հետա-</p>

<p>հետևողության ապահովում</p>	<p>գոտություն իրականացնելու և արդյունքներն իրացնելու հնարավորություն չունենալը</p> <p>3. Արտահամալսարանական իրականությունում օրենսդրական դաշտի փոփոխականություն</p> <p>4. Հասարակության շրջանում մանկավարժի մասնագիտության նկատմամբ հետաքրքրության նվազում, սոցիալական-տնտեսական հարաբերությունների ազդեցություն</p> <p>5. Նույն մասնագիտությամբ ԱՀ կառավարության կողմից ՀՀ բուհերում նպատակային տեղերի հատկացում</p>
-------------------------------	---

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

Բոլոր ստորաբաժանումների խորհուրդներում ընդգրկելով պրակտիկ բնագավառի առաջատար մասնագետների և խորհրդակցական ձայնի իրավունքով ապահովելով նրանց մասնակցությունը նիստերին ու կարևոր խորհրդակցություններին՝ նրանցով կամրջել բուհ-շուկա հարաբերությունները և աշխատաշուկայի իրական գնահատման հնարավորություն ստեղծել:

1. Մասնագիտությունների կրթական ծրագրերի առաջավոր փորձի /բենչմարքինգի/ համեմատական վերլուծության իրականացման մեխանիզմների հստակեցում, իրավական-նորմատիվային հիմքի ստեղծում:
2. Ուսանողների և դասավանդող անձնակազմի շարժունությունն ապահովող հնարավորությունների համապարփակ վերլուծություն, գնահատում, համարժեք իրավական հիմքի ստեղծում և գործիքակազմի ներդրում:
3. Դասախոսի ուսումնական ծանրաբեռնվածության ծավալային բազմազանությունը դարձնել միջառարկայական կապերի ապահովման լավագույն հնարավորություն՝ դասընթացները բաշխելիս հաշվի առնելով դասընթացների բովանդակային մերձությունը:
4. Ունենալով օրենսդրական անկայուն դաշտ արտահամալսարանական իրականությունում՝ արդյունք թելադրողի պահվածքով դառնալ օրենսդրական նախաձեռնությունների հեղինակ և ստանձնել բարձրագույն կրթական օրենսդրական դաշտը կարգավորողի ու ձևավորողի հանձնառությունը:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

Ուսանողների ինքնավարության ընդլայնումը ([խնդիր 3.3. ՌԾ](#)) ԱրՊՀ ռազմավարական ծրագրի առանցքային կետերից է: Այդ ուղղությամբ պլանավորվում է՝ նպաստել ուսանողների հետազոտական գործունեությանը, ստեղծագործական և միջանձնային շփման հմտությունների ձևավորմանը, մշակել ուսանողների գործունեության գնահատման արդյունավետ համակարգ և խրախուսման կառուցակարգեր: Ռազմավարական խնդիր է նաև ուսանողներին տրամադրվող օժանդակ ծառայությունների արդյունավետության բարձրացումը ([խնդիր 3.4. ՌԾ](#)): Նախատեսվում է կանոնակարգել կրթական և այլ ծառայությունների գնահատման չափանիշները, ուսանողների կարիերայի զարգացման և շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալների հավաքագրման գործընթացները, զարգացնել ուսումնառության օժանդակության մատչելի ռեսուրսներ, ընդլայնել կարիքավոր ուսանողների պահանջների բավարարման շրջանակները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

- [ԱՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման \(ազատման\) և վերականգնման կարգ](#)
- [Արցախի պետական համալսարանի և ԼՂՀ դպրոցների համագործակցության ծրագիր](#)
- [Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմության ցուցաբերած շրջանավարտների՝ համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումը շարունակելու» կարգ](#)
- [Կարգ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված տեղերի ընդունելության \(ըստ բակալավրի կրթական ծրագրի](#)
- [Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հեռակա ուսուցման ընդունելության կարգ](#)
- [Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգ](#)
- [ԱրՊՀ ՊՈԱԿ մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգ](#)
- [Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգ](#)

Հիմքեր

ԱրՊՀ ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի և ուսուցման ձևերի						
<i>Ուսանողների թիվը՝</i>	<i>Ուսուցման ձևը</i>	<i>2014/2015</i>	<i>2015/2016</i>	<i>2016/2017</i>	<i>2017/2018</i>	<i>2018/2019</i>
Բակալավրի	Առկա	1469	1287	1618	1519	1501
	Հեռակա	1197	1035	985	837	758
	Ընդամենը՝	2666	2322	2603	2356	2259
	Այդ թվում՝ վճարովի	2095	1768	1908	1705	1604
Մագիստրոսի	Առկա	470	415	293	290	350
	Հեռակա	112	71	62	46	47
	Ընդամենը՝	582	486	355	336	397
	Այդ թվում՝ վճարովի	322	228	151	157	173
Հետազոտողի	Առկա	47	26	5	4	7
	Հեռակա	25	18	15	17	14
	Ընդամենը՝	72	44	20	21	21
	Այդ թվում՝ վճարովի	28	18	15	17	14
Անվճար սովորող ուսանողների և հետազոտողների թիվը		875	838	904	834	886
Վճարովի սովորող ուսանողների և հետազոտողների թիվը		2445	2014	2074	1879	1791

Ուսանողների և հետազոտողների ընդհանուր թիվը	3320	2852	2978	2713	2677
Ուսումնառողների շարժունությունը					
Ուսումնառողների շարժը վերջին 5 տարվա կտրվածքով					
Ուսանողների արտահոսք					
Հաստատություն/երկիր	2014/ 2015	2015/ 2016	2016/ 2017	2017/ 2018	2018/ 2019
Արցախի Հանրապետություն					
1 ՀԱԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղ		3			
2 Շուշիի տեխնոլոգիական համալսարան			153*		
3 Գրիգոր Նարեկացի համալսարան		3			
4 Մեսրոպ Մաշտոց համալսարան	6	3			
Հայաստանի Հանրապետություն					
5 ՀՊՏՀ		1			
6 ԵՊՀ		2			
7 Մ.Հերացու անվ. բժշկական համալսարան	1				
8 Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ		1		2	1
Ընդամենը՝	7	13	153*	2	1
*Շուշիի ՏՀ տեղափոխված ուսանողներ / ԱրՊՀ ռեկտորի 17.08.2016 թ. №352/հրամանի՝ կապված «Տնտեսագիտության և ճարտարագիտության» ֆակուլտետի ճարտարագիտությունը այդ բուհ տեղափոխելու հետ/					
Ուսանողների ներհոսք					
Հաստատություն/երկիր	2014/ 2015	2015/ 2016	2016/ 2017	2017/ 2018	2018/ 2019
Արցախի Հանրապետություն					
ՀԱԱՀ Ստեփանակերտի մասնաճյուղ	1	1	3		
Շուշիի տեխնոլոգիական համալսարան			3	3	1
Նարեկացի համալսարան	2		1		1
Մեսրոպ Մաշտոց համալսարան		1			
Գյուրջյան կիրառ. արվեստի համալսարան	1				
Հայաստանի Հանրապետություն					
ԵՊՀ	1	1	1	2	1
Մ.Հերացու անվ. բժշկական համալսարան	1		1	1	

	Խ.Արժույանի ՀՊՄՀ			1	1	1
	Բրյուսովի անվ. ԼՀ համալսարան			1		
2	Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան	1				1
3	Մոնթե Մելքոնյանի անվ. ՌՀ			1		
4	Նոր իրավաբանական Համալսարան/ Մոսկվա				1	
	Ընդամենը`	7	3	12	8	5

Հեռացումներ և վերականգնումներ

	Ուսանողների թիվը	2014/ 2015		2015/ 2016		2016/ 2017		2017/ 2018		2018/ 2019	
		1	Դուրս մնացած ուսանողների թիվը / տոկոսը	177	5.45%	175	6.2%	273	9.2%	84	3.1%
2	Վերականգնված ուսանողների թիվը / տոկոսը	218	6.7%	301	10%	232	7.8%	181	6.7%	182	6.9%

%-ներով ներկայացված են տվյալ ուսումնական տարվա ուսանողների ընդհանուր թվի համեմատ

ԱրՊՀ-ում ուսանողների հեռացումն ու վերականգնումն իրականացվում է ԱՀ ԿԳ նախարարի 2012թ. նոյեմբերի 17-ի N10-Ն հրամանով հաստատված [ԱՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման \(ազատման\) և վերականգնման կարգի](#) համաձայն:

ԱրՊՀ-ից ուսանողների հեռացումների պատճառները ներկայացված են չափորոշիչ ա-ի վերջում:

Վերլուծել հաստատությունում գործող ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Հավանական դիմորդների հավաքագրման ուղղությամբ ԱրՊՀ-ում կատարվում են կոնկրետ աշխատանքներ: Այդ նպատակով գիտական խորհուրդը 2016թ. մայիսի 4-ի N17-Լ որոշմամբ ընդունել է [Արցախի պետական համալսարանի և ԼՂՀ դպրոցների համագործակցության ծրագիրը](#), որի շրջանակներում 7 միջնակարգ և 2 ավագ դպրոցների հետ կնքված են համագործակցային պայմանագրեր, որոնց համաձայն՝ ԱրՊՀ դասախոսները (առավել հաճախ՝ տնտեսագիտության տեսության և կառավարման, ֆինանսահաշվախի, իրավունքի, մանկավարժության և հոգեբանության, ակ.Ս.Աբրահամյանի անվ. հայոց լեզվի ամբիոնների դասախոսները: Հիմք՝ ամբիոնների հաշվետվությունները) ավագ դասարանների դպրոցականների մասնագիտական կողմնորոշման նպատակով պարբերաբար դասախոսություններ են կազմակերպում ուսումնական հաստատություններում: Դրան զուգընթաց համալսարանում դպրոցների աշակերտների ներգրավմամբ պարբերաբար կազմակերպվում են առարկայական օլիմպիադաներ

(մաթեմատիկայից, կիրառական մաթեմատիկայից և ինֆորմատիկայից), ինչը նույնպես նպաստում է ապագա դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը: Տարվա ընթացքում կազմակերպվող դասախոսական և ուսանողական բազմաթիվ այցելությունները հանրապետության դպրոցներ և «*Բաց դռների օրերի*» շրջանակներում աշակերտների ճանաչողական այցերը համալսարան դարձել են բարի ավանդույթ: Դպրոցների հետ կապը շարունակական և կայուն է հատկապես մանկավարժության և հոգեբանության ամբիոնում:

ԱրՊՀ հավանական դիմորդների որոշ մասը ներգրավվում է քոլեջներից, որոնց շրջանավարտների ընդունելության կարգը սահմանված է ԼՂՀ կառավարության 2010թ. հունվարի 26-ի №29-Ն որոշմամբ հաստատված [Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմության ցուցաբերած շրջանավարտների՝ համապատասխան բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցումը շարունակելու կարգով](#):

Հավանական դիմորդների շրջանում համալսարանի վերաբերյալ բարձր վարկանիշ ձևավորելու նպատակով ԱրՊՀ հանրային կապերի և լրատվության բաժնի կողմից պատրաստվում են համալսարանի մասին պատմող բուկլետներ, տեսահոլովակներ, տեսաֆիլմեր և տեղեկատվական այլ նյութեր, որոնք հրապարակվում են պաշտոնական կայքի էջերում սոցիալական ցանցերում, տարբեր հանդիպումներում: ԱրՊՀ պաշտոնական կայքում (www.asu.am) գործում է «*Դիմորդ*» բաժինը, որտեղ մանրամասն տեղեկատվություն կա բոլոր մասնագիտությունների և մասնագիտացումների, ընդունելության կարգի և այլ անհրաժեշտ հարցերի վերաբերյալ: Նախատեսված է առաջիկայում պաշտոնական կայքում տեղադրել նաև բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի մասնագրերը, ինչը կնպաստի դիմորդների առավել արդյունավետ կողմնորոշմանը:

Դիմորդների ընդունելությունը ԱրՊՀ բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգում իրականացվում է ԼՂՀ կառավարության 2012թ. մայիսի 14-ի №301-Ն որոշմամբ հաստատված [Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված տեղերի ընդունելության \(ըստ բակալավրի կրթական ծրագրի\)](#) կարգի համաձայն հանրապետական միասնական քննությունների արդյունքում: Ընդունելության գործընթացը կազմակերպում և իրականացնում է ԱրՊՀ ընդունող հանձնաժողովը, որը դիմում-հայտի լրացման ժամանակ դիմորդին տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն: Ընդունելությանը վերաբերող անհրաժեշտ տեղեկատվությունը, այդ թվում՝ ընդունելության կարգը, մասնագիտությունների ցանկը, տեղերի քանակը, վարձավճարների չափերը, դիմում-հայտի ձևը, ներբուհական քննություններին ներկայացվող պահանջները, միասնական և ներբուհական քննությունների ժամանակացույցը և այլն, փակցվում է «Դիմորդի անկյունում»: Թափանցիկությունը ապահովելու համար յուրաքանչյուր օրվա վերջում հրապարակվում է բոլոր մասնագիտությունների գծով դիմորդների քանակը:

Քննությունների դրական շեմը հաղթահարած, սակայն ընդունելության մրցույթից դուրս մնացած դիմորդները կարող են բուհ ընդունվել լրացուցիչ փուլում կազմակերպվող մրցույթի արդյունքում:

Բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգում ընդունելությունն իրականացվում է ԱՀ կրթության և գիտության նախարարի 2014թ. հուլիսի 16-ի №150-Ն հրամանով հաստատված [Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և հավատարմագրված ոչ](#)

պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների հեռակա ուսուցման ընդունելության կարգի համաձայն: Մասնագիտությունների ցանկը և հատկացվող տեղերի քանակը հաստատվում են ԱՀ կառավարության կողմից: ԱրՊՀ ռեկտորի կողմից կազմված ընդունող հանձնաժողովը կազմակերպում է ներբուհական քննությունները, որոնք վերահսկվում են ԱՀ ԿԳՍ նախարարության կողմից: Ընդունելության քննությունները բովանդակային և կազմակերպչական առումով համապատասխանում են բակալավրիատի առկա համակարգի պետական միասնական քննությունների պահանջներին:

Մագիստրատուրայում ընդունելությունը իրականացվում է ԼՂՀ կրթության և գիտության նախարարի 2008 թ. ապրիլի 25-ի N57/Մ §2 հրամանով հաստատված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգի համաձայն: Գիտական խորհրդի կողմից հաստատված է մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգը (ԱրՊՀ ՊՈԱԿ մագիստրատուրայի ընդունելության կանոնակարգ, 2014թ. օգոստոսի 28-ի №39-Լ որոշում, լրաց. 23.06.2015թ. №11-Լ որոշում), որտեղ նշվում են դիմորդների ընդունելության և մրցույթի անցկացման փուլերի հստակ ժամկետները, մրցույթի պահանջները: Մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպելու նպատակով ռեկտորի հրամանով կազմվում է ընդունող հանձնաժողով և քննությունների անցկացման առարկայական քննական հանձնաժողովներ:


Անվճար և վճարովի տեղերի համար ընդունելությունն իրականացվում է փուլերով: Առաջին փուլում ընդունելությունն անցկացվում է հունիս ամսում՝ անվճար տեղերի համար, բակալավրի շրջանավարտի՝ ՄՈԳ-ի հիման վրա:

Երկրորդ փուլում վճարովի տեղերի համար կարող են դիմել նաև այլ բուհերի շրջանավարտները: Ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքներով՝ տվյալ մասնագիտության բակալավրի ամփոփիչ ատեստավորման քննական ծրագրին համապատասխան անցկացված քննության արդյունքներով:

Ասպիրանտուրայում ընդունելությունն իրականացվում է ԱՀ կառավարության 2016թ. ապրիլի 29-ի N203-Ն որոշմամբ հաստատված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման, դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգի համաձայն: Ռեկտորի հրամանով ստեղծվում են ասպիրանտուրայի ընդունելության հանձնաժողով և մասնագիտական քննական հանձնաժողովներ: Ընդունելությունը կատարվում է մրցութով:

Համաձայն Արցախի պետական համալսարանի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (2014-2018թթ.)՝ ԱրՊՀ-ն դիմորդների թվով առաջատարն է Արցախի բուհերի շրջանում: Այդպես, 2014թ. տվյալներով ԱրՊՀ մասնաբաժինը կազմել է 82%, 2015, 2016, 2017, 2018, 2019 թթ.՝ համապատասխանաբար 82.6%, 88.5%, 79%, 84% և 76.9%:

Պետք է նկատել, որ վերջին տարիներին բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման համակարգեր ընդունվող ուսանողների ընդհանուր թիվը զգալիորեն նվազել է՝ դպրոցների շրջանավարտների ընդհանուր թվի նվազման հետ կապված: 2019/2020 ուսումնական տարվա ընդունելության ցուցանիշը գերազանցել է վերջին երեք տարիների ընդունելության թվերը (*տե՛ս Գծապատկեր. ԱրՊՀ դիմորդների թիվը՝ ԱՀ բուհերի դիմորդների ընդհանուր թվից*):



Գծապատկեր. ԱրՊՀ դիմորդների թիվը՝ ԱՀ բուհերի դիմորդների ընդհանուր թվից

Վերհանել հեռացումների և վերականգնումների պատճառները և տրամադրել սովյալ խնդիրների լուծման տարբերակները / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ներքոբերյալ աղյուսակում ներկայացված են ԱրՊՀ ուսանողության շարքերից սովորողների հեռացումների պատճառները (տե՛ս *Աղյուսակ. ԱրՊՀ ուսանողության շարքերից սովորողների հեռացումների պատճառները*):

Նկատելի է, որ 2014-2019թ.թ. հեռացումների գերակշռող մեծամասնության (344 ուսանող՝ 43,8%) պատճառը առարկայական պարտքերը չմարելն էր: 221 ուսանող (ընդհանուր թվի՝ 28,2%) ազատվել է իր դիմումի համաձայն, որից 57%-ի պատճառը եղել են ընտանեկան պայմանները, 31 ուսանող (14%) պատճառները չի նշել, 28 ուսանող (12,7%) տեղափոխվել է այլ բուհ, 18 ուսանող (8,15%) մեկնել է հանրապետությունից: 153 ուսանող (ընդհանուր արտահոսքի 19,5%-ը) 2016-2017 ուս. տարում տեղափոխվել է Շուշիի տեխնոլոգիական համալսարան: Հատկանշական է, որ ավանդաբար ԱրՊՀ-ից ուսման վարձավճարը չմուծելու պատճառով ուսանողներ գրեթե չեն հեռացվում, այլ բուհի կողմից հնարավոր քայլեր են ձեռնարկվում՝ բարերարների ներգրավման, սոցիալական ծրագրերի իրականացման, վարձի մուծման ժամկետները երկարաձգելու և այլ միջոցներով ուսանողներին օժանդակելու համար: Վարձավճարը չմուծելու պատճառով հեռացման եզակի դեպքերը պայմանավորված են ուսանողի կողմից վարձավճարը մուծել չցանկանալով:

ԱրՊՀ-ից ուսանողների արտահոսքի նվազմանը նպաստում է 2018թ. բուհի որդեգրած նոր քաղաքականությունը՝ ուսանողների կարիերայի զարգացման, բուհ-գործատու կապերի ամրապնդման, ուսանողների մասնագիտական պատրաստման գործընթացում արտաքին շահակիցների՝ գործարար ոլորտի ներկայացուցիչների, պետական պաշտոնյաների, ուսումնական հաստատությունների տնօրենների և այլ անձանց մասնակցության աստիճանի բարձրացման, ամփոփիչ ատեստավորման քննությունների ժամանակ պետական հանձնաժողովների կազմում նրանց ներգրավման ուղղությամբ:

Այս խնդրի լուծմանը կարող է նպաստել նաև պարապմունքներին նրանց հաճախումների հաշվառման և բացակայությունների համար տույժերի կիրառման քաղաքականության վերանայման ուղղությամբ կատարվող աշխատանքը:

Աղյուսակ. ԱրՊՀ ուսանողության շարքերից սովորողների հեռացումների պատճառները

Հեռացումների պատճառները	2014/ 2015	2015/ 2016	2016/ 2017	2017/ 2018	2018/ 2019	Ընդամենը
Այլ բուհ տեղափոխման կապակցությամբ	7	13	153*	2	1	176
Ակադեմիական արձակուրդից ժ/կ չվերադառնալու կապակցությամբ	8	5	5	3	2	23
Առարկայական պարտքերը և տարբերությունները չմարելու կապակցությամբ	115	105	60	37	27	344
Անհարգելի բացակայությունների համար	1	4	2	1	3	11
Ուսման վարձը չվճարելու կապակցությամբ			1	2		3
Ավարտական աշխատանքի նախապաշտպանությանը չմասնակցելու կապակցությամբ				1		1
Մահվան կապակցությամբ	1	3		1		5
Իր դիմումի համաձայն, որից՝	45	45	52	37	42	221
<i>Ընտանեկան պայմաններից ելնելով</i>	27	24	34	18	24	127
<i>Հանրապետությունից տեղափոխվելու կապակցությամբ</i>	6	2	1	6	3	18
<i>Ամուսնության կապակցությամբ</i>	1		3		1	5
<i>Այլ բուհ տեղափոխվելու կապակցությամբ</i>	1	4	5	7	11	28
<i>Աշխատանքի անցնելու կապակցությամբ</i>	2		2			4
<i>Ֆինանսական միջոցները չներելու կապակցությամբ</i>		1	1	1		3
<i>Մասնագիտությունը չլինելու կապակցությամբ</i>				1		1
<i>Մարզական մրցումներին հաճախակի մասնակցության կապակցությամբ</i>				1		1
<i>Առողջական խնդիրների պատճառով</i>	1	1		1		3
<i>Առանց պատճառի նշելու</i>	7	13	6	2	3	31
	177	175	273	84	75	784

ՀԱՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

- Հիմքեր
- [ԱրՊՀ ՊՈԱԿ ուսանողական կուրսի ավագության կարգ](#)
 - [ԱրՊՀ ՊՈԱԿ կուրսի կառուցման կարգ](#)
 - [ԱրՊՀ ՊՈԱԿ ուսանողների կողմից ՊԴ կազմի գիտամասնակավարժական գործունեության և բարոյական հատկանիշների գնահատման սոցիոլոգիական հարցման կանոնակարգ](#)
 - [ԱրՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության](#)

[վերաբերյալ հարցման կանոնակարգ](#)

- [ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի կանոնադրություն](#)

Վերլուծել ուսանողների կարիքների վերհանման ՄՈՒՀ-ի քաղաքականության և ընթացակարգերի իրականացման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման և այդ ուղղությամբ գործող մեխանիզմների արդյունավետության բարձրացման նպատակով 2013-2018թթ. ԱրՊՀ-ում ձևավորվել են մի շարք հաստիքային և ոչ հաստիքային կառույցներ, որոնց աշխատանքի բովանդակության մեջ համապատասխան կանոնադրություններով և ընթացակարգերով նախատեսվել են հստակ գործառույթներ: Հստակ գործում է ուսանողական ակտիվը՝ ավագների համակարգը: Այսպես, առկա և հեռակա ուսուցման համակարգերի բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր ուսանողական կուրսերում և խմբերում առավել կազմակերպված և պատասխանատու ուսանողների կազմից ռեկտորի հրամանով նշանակվում են կուրսերի (խմբերի) ավագներ: Ուսումնական տարվա սկզբին բակալավրիատի առկա ուսուցման համակարգի առաջին կուրսերում հիմնական պրոֆեսորադասախոսական կազմից նշանակվում են կուրսղեկներ: Թե՛ ավագների և թե՛ կուրսղեկների պարտականությունների և լիազորությունների շրջանակը սահմանված են ԳԽ կողմից հաստատված կանոնակարգերով ([ԱրՊՀ ՊՈԱԿ ուսանողական կուրսի ավագության կարգ](#) և [ԱրՊՀ ՊՈԱԿ կուրսղեկության կարգ](#)): Բոլոր ֆակուլտետներում նշանակված են հաստիքային ՈՒՀՏԱ գծով մեթոդիստներ, իսկ ԱրՊՀ վարչակազմում գործում է ՈՒՀՏԱ և Կ բաժինը, որի հաստիքակազմում կա ՈՒՀՏԱ գծով երկու մեթոդիստ: Նշված անձանց գործունեությունը կարգավորող փաստաթղթերում նախատեսված են ուսանողների կրթական կարիքների վերհանման գործառույթներ: Օրինակ, ուսանողական կուրսի (խմբի) ավագի կարգի մեջ նշված է, որ նա իրավունք ունի «... ուսումնասիրել ուսանողների կոլեկտիվ կարծիքները և ներկայացնել առաջարկություններ ստուգարքների, քննությունների անցկացման ժամանակացույցի մշակման և այլ միջոցառումների անցկացման վերաբերյալ»: Այս խնդրի լուծմանը նպաստում է նաև ուսանողների ներգրավվածությունը համալսարանի կառավարման մարմիններում՝ ֆակուլտետների խորհուրդներում, գիտական խորհրդում, խորհրդում:

Ուսումնառության արդյունավետ պայմանների ապահովման առումով առավել կոնկրետ գործառույթներ ունի կուրսղեկը, ով ուղղակիորեն պատասխանատու է ուսանողների բոլոր տեսակի կարիքների ուսումնասիրման և վերհանման, այդ նպատակով դասախոսների ու ամբիոնների միջև փոխգործակցության կազմակերպման, առողջ մթնոլորտի ձևավորման և այլ խնդիրների լուծման համար:

ԱրՊՀ-ում ուսանողների կրթական կարիքների, ինչպես նաև ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության աստիճանի վերհանման ու բարձրացման արդյունավետ միջոցառումներ են պարբերաբար անցկացվող հարցումները, որոնք իրականացվում են ԱրՊՀ որակի ապահովման և ՈՒՀՏԱ և Կ բաժինների համագործակցության արդյունքում՝ համակարգչային եղանակով ([ԱրՊՀ ՊՈԱԿ ուսանողների կողմից ՊԴ կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյական հատկանիշների գնահատման սոցիոլոգիական հարցման կանոնակարգ](#) և [ԱրՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցման կանոնակարգ](#)): Կարևոր է, որ անցկացված հարցումների արդյունքները ոչ միայն քննարկվում են համապատասխան ֆակուլտետ-

ներում, այլն դրանց հիման վրա մշակվում և կատարողներին են ներկայացվում բարելավման համապատասխան միջոցառումներ:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման արդյունավետ միջոցառումներից են նաև ԱրՊՀ ռեկտորի, պրոռեկտորների, դեկանների և բաժինների պետերի պարբերական հանդիպումները ուսանողական ակտիվների հետ, որոնց արդյունքում մշակվում են կոնկրետ հանձնարարականներ և իջեցվում կատարողներին: ԱրՊՀ կառավարման խորհրդի նախագահը (2018թ.-ից ԱրՊՀ կառավարման խորհրդի նախագահը ԱՀ պետական նախարարն է) նույնպես պարբերաբար հանդիպում է ուսանողական ակտիվի հետ և քննարկում հրատապ հարցեր: Ուսանողների կրթական կարիքների վերհանման ուղղությամբ աշխատանք է կատարում ԱրՊՀ հոգեբանական կենտրոնը, որը նույնպես ունի իր կանոնադրությունը ([ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի կանոնադրություն](#)): 2017-2018թթ. ուստարում կենտրոնն իրականացրել է առաջին կուրսի ուսանողների, իսկ հունիս ամսում՝ բոլոր կուրսերի ուսանողների ուսումնական մոտիվացիայի ուսումնասիրման ծավալուն հետազոտություններ, արդյունքները վեր են լուծվել և ներկայացվել պատասխանատու կառույցներին: Բացի այդ, կենտրոնի մասնագետները լուրջ աշխատանք են կատարելում առաջին կուրսեցիների հետ՝ աջակցելով բուհական գործունեության մեջ նրանց արդյունավետ ներգրավման, ուսանող-ուսանող և դասախոս-ուսանող հարաբերությունների կառուցման աշխատանքներին: Առկա են արձանագրությունները: Կենտրոնին կից գործող «Պոզիտիվ» ակումբի հիմնական գործառնությունը ուսանողներին վերաբերող հիմնախնդիրների բացահայտումը և դրանց կարգավորման ուղղությամբ երաշխավորությունների մշակումն է: Ուսանողների կրթական և այլ կարիքների վերհանման կարևոր հարթակ է ուսանողական խորհուրդը (այս մասին ավելի մանրամասն՝ տե՛ս *Չափորոշիչ Է*), որում ներգրավված ուսանողներն իրենց խնդիրն են համարում ուսանողների կարիքների իմացությունը և ըստ կառավարման աստիճանների դրանց ներկայացումը: Ուսխորհրդի կողմից վերհանված խնդիրների թվից կարելի է առանձնացնել ուսման վարձավճարների դժվարություն ունեցող ուսանողների կարիքավորության աստիճանի ուսումնասիրումը և նրանց բարոյական ու նյութական աջակցություն ցուցաբերելը, ուսանողների ակտիվ ներգրավումը պարապմունքների կազմակերպման և գիտելիքների գնահատման համակարգի կատարելագործմանը վերաբերող քննարկումներում, տարաբնույթ միջոցառումների կազմակերպման վերաբերյալ ուսանողների ցանկությունների ուսումնասիրումը և հաշվառումը, հանրակացարանաբնակ ուսանողների կարիքների վերհանումն ու լուծումը: Այդ նպատակով ԱրՊՀ մասնաշենքերում տեղադրվել են նաև «Վստահության արկղեր», որոնք, սակայն, բարձր արդյունավետությամբ աչքի չեն ընկել, քանի որ, ըստ ուսանողների հավաստիացումների, դրանց անհրաժեշտությունը չի եղել՝ համալսարանական կառույցների աշխատանքի բավարար թափանցիկության շնորհիվ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

- | | |
|--------|---|
| Հիմքեր | <ul style="list-style-type: none">• Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների նկարագրությունը, նպատակները և ժամանակացույցը• Լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների բարելավման մեխանիզմները և ծրագրերը |
|--------|---|

• Խորհրդատուների աշխատանքի ժամանակացույցը		
Պատասխանել հետևյալ հարցին.	%	
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված խորհրդատվական ծառայությունների մասին:	74,87	
Ուսանողների ո՞ր տոկոսն է ընդգրկված լրացուցիչ խորհրդատվական պարապմունքներում:	42,24	
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված խորհրդատվական ծառայություններից:	81,54	
Հետևյալ հարցերին պատասխանել՝ այ՛ն կամ ո՛չ:	ԱՅՈ	ՈՉ
Արդյոք ուսումնառողներին հատկացվում են խորհրդատուներ:	✓	
Եթե ոչ, արդյոք դա նախատեսվում է:		
<p><i>Վերլուծել լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների և ակադեմիական օժանդակություն ու ուղղորդում տրամադրելու համար գործընթացի կազմակերպման արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i></p> <p>ԱրՊՀ-ն Արցախի խոշորագույն գիտակրթական կենտրոնն է, ինչի շնորհիվ հաճախ է հյուրընկալում ԱՀ-ից և ՀՀ-ից, ինչպես նաև արտերկրից ներկայացած պետական, ազգային ու գիտական ճանաչված գործիչների, ովքեր հանդես են գալիս դասախոսություններով: Այս առումով կարող ենք պնդել, որ բուհում ուսանողների համար ուսումնական պլաններից և ծրագրերից դուրս լրացուցիչ պարապմունքների կազմակերպման մակարդակը բարձր հիմքերի վրա է, որովհետև այդ պարապմունքների հաճախականությունը մեծ է, և որակը՝ բարձր: ԱՀ կառավարության աջակցությամբ համալսարանում 2016թ.-ից իրականացվում է ոչ ֆորմալ կրթական ծրագիր, որի շնորհիվ ուսանողների համար լրացուցիչ պարապմունքներ են վարում բարձր վարկանիշ ունեցող տասնյակ ճանաչված գործիչներ: Լրացուցիչ դասընթացներ են կազմակերպվում նաև ԱրՊՀ հետ համագործակցող բուհերից՝ ԵՊՀ-ից, ՀՊՏՀ-ից, Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ-ից, Հայ-ամերիկյան համալսարանից և այլ բուհերից մասնագետների հրավիրման ճանապարհով, ինչպես նաև համալսարանի ուսանողներին այդ բուհերում մասնագիտական դասընթացների ուղարկելով: 2018թ.-ից ԱրՊՀ-ն կազմակերպում է տասնյակ ուսանողների (2018թ.՝ մոտ 90, 2019թ.՝ մոտ 80) ընդգրկմամբ ամառային միջազգային ճամբար-դպրոց, որտեղ կրկին դասախոսություններով հանդես են գալիս ճանաչված գործիչներ: Այս մասին մանրամասն տեղեկություններ են զետեղված «Արցախի համալսարան» պաշտոնաթերում, ԱրՊՀ պաշտոնական կայքէջում http://www.asu.am և ֆեյսբուքյան էջում https://www.facebook.com/Artsakh-State-University:</p> <p>Համալսարանում կա նաև ամբիոններում ուսանողների համար խորհրդատվական և լրացուցիչ պարապմունքների կազմակերպման փորձ: Բոլոր ամբիոններն ավանդաբար ունեն ուսանողների համար ակադեմիական խորհրդատվության կազմակերպման գրաֆիկներ, որոնցում հստակ նշանակված են այն դասախոսներն ու մասնագետները, օրերն ու ժամերը, որոնց համաձայն ուսանողները կարող են դասախոսներին դիմել իրենց հետաքրքրող հարցերով: Ստուգարքներից և քննություններից մի քանի օր առաջ դասախոսները նշանակում են խորհրդատվական ժամեր, որոնց ընթացքում ուսանողները հնարավորություն են ունենում առաջիկա ստուգման վերաբերյալ խորհրդատվություն ստանալ դասախոսից: Խորհրդատվական ծառայությունների մատուցումն առավել նշանակալի է լինում ամփոփիչ ատեստավորման քննությունների և ավարտական աշխատանքների ու</p>		

մագիստրոսական թեզերի պաշտպանությունների նախօրյակին, երբ ուսանողները մեծ հաճախականությամբ դիմում են դասավանդող դասախոսներին և ստանում համապատասխան խորհրդատվություն: Ուսանողներին տրամադրվող անհատական խորհրդատվական համակարգը բակալավրիատում, ի տարբերություն մագիստրատուրայի, դեռևս թույլ է կանոնակարգված: Առաջիկայում անհրաժեշտ կլինի զարգացնել անհատական-խորհրդատվական պարապմունքների կազմակերպման համակարգը, առանձնապես դրա անհրաժեշտությունն զգացվում է հեռակա ուսուցման համակարգում: Ներկայումս բուհում քննարկվում է նաև հեռավար ուսուցման համակարգի ներդրման հարցը:

ԱրՊՀ կառուցվածքում գործող կառույցներից է [հրավաքանական կլինիկան](#), որում ընդգրկված ուսանողները փորձառու մասնագետի ղեկավարությամբ ավճար խորհրդատվական ծառայություններ են մատուցում ուսանողներին, դասախոսներին, բնակչությանը և, առհասարակ, բոլոր ցանկացողներին:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ղ. ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

- Հիմքեր
- [ԱրՊՀ կանոնադրությունը](#)
 - [ԱրՊՀ ներքին կարգապահական կանոններ](#)
 - [Հանրակացարանում ուսանողների բնակության կարգ](#)
 - [Առաջարկությունների, դիմում-բողոքների ներկայացման և քննարկման կարգ](#)
 - [ԱրՊՀ ուսանողներին կրթաթոշակ տրամադրելու կարգ](#)
 - [ԱրՊՀ ուսանողներին զեղչեր տրամադրելու կարգ](#)

<i>Պատասխանել հետևյալ հարցին:</i>	%
Ուսանողների n ր տոկոսն է տեղեկացված իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին:	72,8
Ուսանողների n ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից:	48,9
Ուսանողների n ր տոկոսն է բավարարված այդ ծառայություններից:	67,9

ԱրՊՀ կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված է, որ ուսանողներն իրավունք ունեն ինչպես «ընդգրկվելու և մասնակցելու համալսարանի համապատասխան կառավարման մարմինների աշխատանքներին» այնպես էլ «օգվելու համալսարանի գրադարանից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական, մարզական և այլ ստորաբաժանումների ծառայություններից»: Վարչական օժանդակությունից և ծառայություններից օգտվելու խնդրին ապագա ուսանողները փաստացի առնչվում են այն ժամանակ, երբ առաջին անգամ մուտք են գործում համալսարան, փաստաթղթերը հանձնում են ընդունող հանձնաժողովին կամ հանձնում են ընդունելության քննություններ: Արցախի տարբեր շրջաններից ներկայացած և հանրակացարանում բնակվելու կարիք ունեցող ուսանողները նույնպես ներկայացնում են դիմում-հայտ: Բուհը նրանց օժանդակություն ցուցաբերելու նպատակով մշակել և կիրառում է Հանրակացարանում ուսանողների բնակության կարգ, որում սահմանված են հանրակացարանում տեղեր հատկացնելու առաջնահերթությունները, բնակության պայմաններն ու պահանջները: Հանրակացարանում բնակվող ուսանողները գտնվում են վարչակազմի մշտական ուշադրության կենտրոնում: Հանրակացարանի ուսանողները նաև ընտրում են ՈՒԽ-ում իրենց ներկայացուցչին, ով ունի ՈՒԽ նախագահության անդամի լիազորություններ և կարող է ցանկացած ժամանակ խնդիրներ բարձրացնել այդ կառույցում և ակնկալել համապատասխան լուծումներ: Օրինակ, 2018թ. հանրակացարանաբնակ ուսանողների առաջարկությամբ պայմանագիր ստորագրվեց Ղարաբաղ-Տեղեկում ընկերության հետ՝ ուսանողներին ինտերնետ կապով ապահովելու վերաբերյալ: Հանրակացարանաբնակ ուսանողների միջնորդությամբ են կատարվել նաև ձմռան ժամանակահատվածում ջեռուցման գրաֆիկների օպտիմալացման, հարկերում և սեկցիաներում մասնակի վերանորոգումների իրականացման աշխատանքները: Հանրակացարանաբնակ ուսանողների մոտ անվտանգության, ապահովվածության ու արդարության զգացումներ ապահովելու նպատակով այդ աշխատանքներում ներգրավված են նաև ՈՒՀՏԱ և Կ բաժնի մեթոդիստները:

Բուհում գործում է նաև Առաջարկությունների, դիմում-բողոքների ներկայացման և քննարկման կարգը, որի առկայության և գործողության մասին բոլոր ուսանողները իրազեկվում են ուսումնառության առաջին շաբաթների ընթացքում՝ ուսանողական խորհրդի, կուրսղեկների, ֆակուլտետների մեթոդիստների, դեկանների, ՈՒՀՏԱ և կարիերայի, հանրային կապերի և լրատվության բաժինների ջանքերով: Առաջին կուրսեցիների համար յուրաքանչյուր տարի մշակվում է ուղեցույց, որում տեղադրվում են նրանց համար անհրաժեշտ տեղեկությունները:

Տարբեր հարցերով ուսանողներին ընդունելու և օժանդակություն ցուցաբերելու համար համալսարանի ռեկտորն ունի սահմանված ժամանակացույց՝ յուրաքանչյուր շաբաթվա հինգշաբթի օրը՝ ժամը 14.00-17.00, սակայն դրա առկայությունը չի խոչընդոտում ուսանողներին՝ տարաբնույթ հարցերով բոլոր աշխատանքային օրերին ևս իրենց խնդիրները ներկայացնելու համար: Գործող օրենսդրության պահանջներին համապատասխան կրթաթոշակներ, նպաստների ու զեղչերի տրամադրման նպատակով դիմումներ ներկայացնելու համար համապատասխան կարգերով սահմանված են հստակ ժամանակացույցներ, որոնք, որպես կանոն, ներառում են տվյալ ուսումնական փուլի առաջին օրերը կամ շաբաթները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Հիմքեր	• ՈւՀՏԱ և կարիերայի բաժնի կանոնադրություն
Պատասխանել հետևյալ հարցերին:	%
Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված կարիերային նպաստող ծառայությունների մասին	53,87
Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում այդ ծառայություններից	35,15
Ուսանողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ ծառայություններից	59,47
<p><i>Վերլուծել ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների արդյունավետությունը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:</i></p> <p>ԱրՊՀ ռազմավարական ծրագրում ամրագրված են ուսանողներին կարիերայի նախապատրաստման (ՌԾ խնդիր 3.4., քայլ 4), աշխատաշուկայում նրանց մրցունակության, շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալների հավաքագրման, գործատուների հետ համագործակցության, ուսանողների պրակտիկ փորձառության հնարավորությունների ընդլայնման վերաբերյալ մի շարք խնդիրներ և միջոցառումներ, որոնց ուղղությամբ աշխատանքների համակարգումն իրականացվում է 2018թ. ստեղծված ՈւՀՏԱ և կարիերայի բաժնի կողմից: Ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստելու և մասնագիտական աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանն աջակցելու նպատակով բաժինն իրականացնում է թեմատիկ սեմինար-դասընթացներ, խորհրդատվություններ, ուսումնական ծրագրով չնախատեսված լրացուցիչ պրակտիկաներ և ինթերշիֆ ծրագրեր, կազմակերպում է ստաժավորման ու կամավորական աշխատանքներ, համագործակցում է գործատուների հետ, նրանց հետ ստորագրում պայմանագրեր (օրինակ՝ «Միներջի» ընկերության), հրավիրում հանդիպումներ, խորհրդակցություններ, ընդունելություններ, համացանցի միջոցով կապեր ձևավորում տարբեր թիրախային խմբերի հետ, փորձում ֆակուլտետներում զարգացնել կարիերայի պատասխանատուների ինստիտուտը:</p> <p>ԱՀ կրթական համակարգում ուսանողների կարիերայի օժանդակությանը և բուհ-տնտեսություն փոխգործակցությանն ուղղված մեխանիզմների բացակայությունը, աշխատաշուկայում գործազրկության բարձր մակարդակը, ինչպես նաև մասնագիտական աշխատաշուկայի դեռևս չձևավորված լինելը էապես բարդացնում են համալսարանում ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների մատուցումը: Այդ խոչընդոտներից է նաև շրջանավարտների հետ թույլ հետադարձ կապը, ինչը պայմանավորված է բուհական համակարգում համապատասխան ավանդույթների բացակայությամբ: Այդ պատճառով բաժինն իր ստեղծման օրվանից ձեռնամուխ է եղել շրջանավարտների կոնտակտային տվյալների բազայի ստեղծման աշխատանքներին (շրջանավարտների գրանցման թերթիկի միջոցով): Ընթացիկ ուսումնական տարվա ավարտին նախատեսվում է ներդնել ուսանողների էլեկտրոնային փոստի հասցեների ներբուհական համակարգ: Նախատեսվում է ուսանողներին տրամադրված հասցեները պահպանել նաև ուսումնառության ավարտից հետո, ինչը կնպաստի շրջանավարտների հետ գործուն կապի արդյունավետության բարձրացմանը: Ներկայումս դժվարություններ կան շրջանավարտների՝ աշխատանքի տեղավորման մասին հավաստի վիճակագրություն ձևավորելու հարցում, որի լուծման համար նախատեսվում է նախկին տարիների շրջանավարտների շրջանում իրականացնել</p>	

առցանց հարցում՝ նրանց զբաղվածության և այլ հարցերի վերաբերյալ: Մասնագետների պատրաստումը աշխատաշուկայի պահանջներին համապատասխան՝ մեծապես պայմանավորված է բուհ-գործատու սերտ համագործակցությամբ: Այս առումով օգտակար ենք համարում ամփոփիչ ատեստավորման քննությունների ժամանակ պետական կառավարման համակարգի և մասնավոր սեկտորի ճանաչված և հեղինակություն ունեցող մասնագետների ներգրավումը: Ներկայումս ակտիվ աշխատանքներ են կատարվում պետական և մասնավոր սեկտորի գործատուների հետ համագործակցության պլաններ մշակելու ուղղությամբ: Պլանով նախատեսվում են իրականացնել փոխադարձ այցելություններ, կազմակերպել աշխատաժողովներ, կլոր սեղաններ և շահագրգիռ քննարկումներ:

ՉՍՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

- Հիմքեր
- [ԱրՊՀ Գիտահետազոտական կենտրոնի կանոնադրություն](#)
 - [ԱրՊՀ Հոգեբանական կենտրոնի կանոնադրություն](#)
 - [ԱրՊՀ Հայագիտական կենտրոնի կանոնադրություն](#)
 - [ԱրՊՀ Իրավաբանական կլինիկայի կանոնադրություն](#)
 - [ԱրՊՀ Ուսանողական գիտական ընկերության կանոնադրություն](#)
 - [ԱրՊՀ գիտական գրադարանի կանոնադրություն](#)

ՄՈՒՀ-ի համար գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների թիվը՝ ըստ կրթական ծրագրերի

	Ուսումնառողներ	2014	2015	2016	2017	2018
	Բակալավր	61	314	146	184	212
	Մագիստրոս	292	214	220	95	201
	Հետազոտող	-	-	-	-	-

Ուսումնառողների մասնակցությամբ իրականացվող ծրագրերի ցանկը և դրանցում ներգրավված ուսանողների թիվն ըստ տարիների

	Գիտահետազոտական ծրագիր	2015	2016	2017	2018	2019
1	Ծմակահողի ամառային դպրոց	5	6	5	5	5
2	Կենսաբանության լաբորատորիա	-	-	-	5	5
3	Հոգեբանական աջակցություն Շոդ կենտրոնին	-	-	-	32	29
4	Իրավաբանական խորհրդատվություն ազգաբնակչությանը	-	-	3	4	3
5	Արցախի գյուղերի պատմությունը	4	5	4	-	-
6	Վիճակագրական ռեսուրսների զարգացումն Արցախում			-	-	5

Ուսումնառողների հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրված աշխատանքների թիվը

	Տպագրված աշխատանք	2014	2015	2016	2017	2018
1	Հեղինակությամբ	25	11	23	28	48
2	Համահեղինակությամբ	8	4	12	23	13

Վերլուծել հաստատության գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԱրՊՀ-ն համապատասխան ընթացակարգերով ձգտում է խթանել ուսանողների մասնակ-

ցությունը գիտահետազոտական աշխատանքներում և գրավիչ դարձնել գիտությամբ զբաղվելը: Այդ նպատակով բուհն ունի համապատասխան կառույցներ՝ կենտրոններ և լաբորատորիաներ, որոնցում իրականացվող ծրագրերում ընդգրկված են նաև ուսանողները: Ուսանողներն Արցախի և առանձին բնակավայրերի պատմության, բարբառների, ազգագրության, բանահյուսության վերաբերյալ գիտական աշխատանքներ են կատարում հայագիտական կենտրոնում, երեխաների մտավոր և ֆիզիկական զարգացման, ուսանողների ուսումնական մոտիվացիայի, դասախոս-ուսանող հարաբերությունների և ուսումնառության խնդիրների վերաբերյալ՝ հոգեբանական կենտրոնում, քաղաքացիների իրավունքների ու ազատությունների վերաբերյալ՝ իրավաբանական կլինիկայում: Գործում է ուսանողական գիտական ընկերությունը, որը նպատակային աշխատանք է կատարում սովորողներին գիտահետազոտական աշխատանքների գործիքակազմին հաղորդակից դարձնելու ուղղությամբ:

Համալսարանի գրեթե բոլոր կարևոր իրադարձությունները նշանավորվում է ուսանողական գիտական ժողովների և ֆորումների հրավիրմամբ: Այդպիսի գիտաժողովներ են կազմակերպվել 2015թ.՝ Ցեղասպանության 100-ամյակի, 2016թ.՝ Արցախի անկախության հռչակման 25-ամյակի, 2017թ.՝ Շուշիի ազատագրման 25-ամյակի, 2018թ.՝ Ղարաբաղյան շարժման 30-ամյակի կապակցությամբ: 2019թ. նոյեմբերի 3-5-ը ՈԻԳԸ անմիջական ջանքերով հրավիրվել է ԱրՊՀ 50-ամյակին նվիրված միջազգային ուսանողական գիտաժողով և ուսանողական ֆորում, որին մասնակցել է շուրջ 150 ուսանող Արցախից, ՀՀ բուհերից և արտերկրից: Սակայն, տարբեր պատճառներով, գիտությամբ զբաղվելն ուսանողների համար դեռևս քիչ է գրավիչ, քիչ են այն հետազոտական ծրագրերը, որոնցում ներգրավված են ուսանողները, իսկ նրանց կատարած անհատական աշխատանքների, դասընթացային գիտական, երբեմն նույնիսկ ավարտական աշխատանքների և թեզերի նախապատրաստման ժամանակ դեռևս ամբողջությամբ հաղթահարված չէ տեսական-ակադեմիական ոճը՝ ի վնաս կիրառական և պրակտիկ նշանակության: Երբեմն լինում են նաև ակադեմիական անազնվության, զրազողության դեպքեր, որոնց դեմ ԱրՊՀ-ն պայքար է իրականացնում տարբեր մակարդակներում, մասնավորապես՝ որակի ապահովման կենտրոնում, որտեղ ներդրված է հակապլագիատ ծրագիրը: Նախատեսված է հետագայում այդպիսի ծրագիր ներդնել համահամալսարանական մակարդակով: Հետազոտական աշխատանքների կատարման ժամանակ անհրաժեշտություն կա բարձրացնելու դրանց կիրառական նշանակությունը: Այդ խնդիրը լուծվում է մի շարք ամբիոններում: Օրինակ, պատմության ամբիոնում ուսանողներին թեմաներ են հանձնարարվում Արցախի համայնքների ու գյուղերի պատմությունը արձանագրելու համար, աշխարհագրության ամբիոնում միտում կա Արցախի վերաբերյալ ուսումնասիրություններ ու հետազոտություններ կատարելու, տնտեսագիտության տեսության և կառավարման, ֆինանսահաշվային ամբիոններում վերլուծվում է Արցախի տնտեսությունը և ֆինանսական համակարգը, ակ.Ս.Աբրահամյանի անվ հայոց լեզվի, հայ գրականության և լրագրության ամբիոններում հետազոտություններ են կատարվում արցախի բանահյուսության ու բարբառի վերաբերյալ, սակայն այս ամենը համակարգելու և հստակ մեթոդաբանությամբ կայուն հիմքերի վրա դնելու անհրաժեշտություն է զգացվում: Գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրվմանը նպաստում է նաև Արցախի գիտական կենտրոնի հետ համագործակցությունը, որտեղ գիտական թեմաներ իրականացնող դասախոսները մասնակից են դարձնում նաև ԱրՊՀ ուսանողներին:

<p>Այստեղ կարևոր է նշել, որ բուհի ռազմավարության մեջ գիտահետազոտական ուղղությունը հռչակվել է գերակա, և խնդիր է դրված ուսանողներին լայնորեն ներգրավել գիտական հետազոտություններում: Համալսարանի ՌԾ-ում կան հստակ ցուցիչներ՝ գիտահետազոտական աշխատանքի համակարգի կատարելագործման վերաբերյալ, որի հիման վրա մշակվում է բարելավման պլան: Մշակված է գիտահետազոտական աշխատանքի զարգացման ռազմավարությունը:</p>	
<p>ՉԱՓՈՐՈՇԻՉ է. ՄՈԻՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:</p>	
<p>Հիմքեր</p>	<ul style="list-style-type: none"> • «Կրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 49 • «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 17 • ԱրՊՀ կանոնադրությունը • ԱրՊՀ ներքին կարգապահական կանոններ
<p>Պատասխանել հետևյալ հարցերին:</p>	<p style="text-align: right;">%</p>
<p>Ուսանողների ո՞ր տոկոսն է տեղեկացված համապատասխան ծառայությունների վերաբերյալ:</p>	<p style="text-align: right;">81</p>
<p>Ուսանողների ո՞ր տոկոսն է օգտվում համապատասխան ծառայությունից:</p>	<p style="text-align: right;">36,42</p>
<p>Ուսումնառողների ո՞ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացից:</p>	<p style="text-align: right;">66,34</p>

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող ուսումնառողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմնի աշխատանքների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԱրՊՀ ուսանողների իրավունքները և պարտականությունները սահմանված են ԱՀ օրենսդրությամբ ([«Կրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 49](#), [«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ԼՂՀ օրենք, հոդված 17, 3-րդ կետ](#)), [ԱրՊՀ կանոնադրությամբ](#), [ԱրՊՀ ներքին կարգապահական կանոններով](#), [Ուսանողական խորհրդի կանոնադրությամբ](#) և ԱրՊՀ ներքին իրավական այլ ակտերով: Ուսանողների իրավունքների և շահերի պաշտպանության համար համալսարանում ձևավորված է բազմամակարդակ համակարգ: Ինչպես նշված է 4.4 չափորոշի վերլուծությունում, ուսանողներն իրենց հուզող տարբեր խնդիրներով դիմում են կուրսղեկներին, ՈՒՀՏՍ մեթոդիստին, դեկանին, ինչպես նաև ՈւԽ-ին, ՈւԳԸ-ին, ֆակուլտետի ուսանողական խորհրդին: Համալսարանական մակարդակում ուսանողներն ուղղակիորեն կամ ՈՒԽ-ի միջոցով կարող են դիմել ռեկտորին և պրոռեկտորներին: Ուսանողների խնդիրների անմիջական լուծումն ապահովվում է ԱրՊՀ ռեկտորի, պրոռեկտորների, ՈՒՀՏՍ և Կ բաժնի, անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ բաժինների կողմից: Այս առումով ՈՒՀՏՍ և Կ բաժինն աջակցում է ուսանողական ինքնավար մարմինների գործունեությանը, ապահովում նրանց փոխգործակցությունը վարչական ստորաբաժանումների հետ, խթանում ուսանողների մասնակցությունը համալսարանի ներքին և արտաքին կյանքին, աջակցում ուսանողների իրավունքների պաշտպանության արդյունավետ իրականացմանը, նրանց սոցիալական խնդիրների լուծմանը, իրականացնում է տարբեր ծրագրեր:

Ուսանողների իրավունքների պաշտպանության և ինքնակազմակերպման համար համալսարանում գործող կառույցների թվում առանձնանում է ուսանողական խորհուրդը (ՈՒԽ): ՈՒԽ-ի գործող կանոնադրությունն ընդունվել է 2015թ. դեկտեմբերի 23-ին ՈՒԽ համագումարի կողմից: Կանոնադրությունը քննարկվել է նաև ԱրՊՀ գիտական խորհրդում և ԱրՊՀ կանոնադրության պահանջների համաձայն հաստատվել է լիազոր մարմնի կողմից: ՈՒԽ կանոնադրությամբ սահմանված են նրա ղեկավար մարմինները՝ համագումարը, լիազումար նիստը և նախագահությունը: ՈւԽ-ն ապահովում է ուսանողների մասնակցությունը ԱրՊՀ կառավարմանը, պաշտպանում է ուսանողների օրինական շահերն ու իրավունքները, նպաստում է ուսանողների կրթական, հոգևոր, բարոյական և ստեղծագործական վերելքին, ԱրՊՀ կառավարման մարմինների քննարկմանն է ներկայացնում ուսանողությանն առնչվող հարցեր, մասնակցություն է ուսումնական գործընթացի կազմակերպման և նրա արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներին, կապեր է հաստատում և համագործակցում ԱՀ, ՀՀ և արտերկրի ուսանողական կազմակերպությունների հետ, նպաստում է ուսանողների ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանմանը, ուսումնառության պայմանների ու կենցաղի բարելավմանը և այլն: Բոլոր վերոհիշյալ գործառույթներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն առնչվում են ուսանողների իրավունքներին:

ՈՒԽ-ն իր գործունեության ընթացքում ձևավորել է ուսանողների իրավունքների պաշտպանության տարբեր մեխանիզմներ՝ ուսանողների խնդիրների, իրավունքների խախտումների բացահայտում, բարձրաձայնում, կառավարման մարմիններում քննարկում և այլն:

Ուսանողներն իրազեկված են ՌԻԽ գործունեության մասին և նրանց ճնշող մեծամասնությունը անհրաժեշտության դեպքում դիմում է ՌԻԽ-ին: Ուսանողների 20-25%-ը առաջադրվում է ՌԻԽ մարմիններում ընտրվելու համար, շուրջ 250 ուսանող ընտրվում է ՌԻԽ տարբեր մակարդակների կառույցներում, տարեկան շուրջ 150 ուսանող օգտվում է ՌԻԽ-ի սոցիալական աջակցության ծրագրերից (ուսման վարձի գեղչում, ամառային հանգիստ, հանրակացարանաբնակ ուսանողներին աջակցություն և այլն):

Ուսանողների խնդիրները քննարկվում են նաև ֆակուլտետների ՌԻԽ-ներում, ՌԻԽ նախագահությունում, իրավական և այլ հանձնաժողովներում: Հարցի բովանդակությունից կախված՝ ընտրվում է դրան արձագանքելու արդյունավետ ուղին: ՌԻԽ-ն ներկայումս կիրառում է ուսանողների համախմբման նոր առցանց գործիք՝ ֆեյսբուքյան խումբը:

ԱրՊՀ կառավարման մարմիններում ուսանողների մասնակցության մասին տեղեկատվությունը ներկայացված է 2.2 չափորոշի վերլուծությունում, իսկ վարչական ստորաբաժանումներին դիմելու խնդիրների մասին՝ 4.4-ում:

Համալսարանի ռազմավարական ծրագրում ամրագրված է «Ուսանողների ինքնավարության ընդլայնում» խնդիրը ([ՌԾ խնդիր 3.3](#)), որի շրջանակներում նախատեսվում է այսուհետև ևս նպաստել ուսանողական կազմակերպությունների հետազոտական գործունեությանը, տրամադրել ուսանողական կազմակերպություններում ընդգրկված ուսանողներին համապատասխան ռեսուրսներ՝ տեղական և արտագնա գիտաժողովներին մասնակցելու համար, կատարելագործել սովորողների գործունեության գնահատման համակարգը, ուսանողական կառույցներում ակտիվ և որակյալ գործունեություն ծավալող ուսանողների խրախուսման կառուցակարգը, նպաստել ուսանողների ստեղծագործական և միջանձնային շփման հմտությունների ձևավորմանը, կամավորական աշխատանքներում ներգրավվածության աճին, մեծացնել ուսանողների դերը համալսարանում ընթացող բարեփոխումների իրականացման գործընթացում և այլն:

ԶՍՓՈՐՈՇԻԶ ք. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

- Հիմքեր
- [Ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության գործունեության գնահատման կարգ](#)
 - [ԱրՊՀ ուսանողներին կրթաթոշակ տրամադրելու կարգ](#)
 - ՄՈՒՀ-ում գործող ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների մատուցման գնահատման և որակի ապահովման քաղաքականությունը, ընթացակարգերը և մեխանիզմները
 - Հաստատության գործունեության որակի ապահովման գործընթացներում ուսումնառողների դերը սահմանող կանոնակարգերը
 - Ուսումնական գործընթացների վերաբերյալ ուսումնառողների արձագանքի օրինակները

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

«Ուսանողական խորհրդի կանոնակարգին» և «Ուսանողական գիտական ընկերության կանոնադրությանը» զուգահեռ ԱրՊՀ-ն 2018թ. ընդունել է նաև [Ուսանողական խորհրդի և Ուսանողական գիտական ընկերության գործունեության գնահատման կարգ](#), որով սահմանված է, որ այդ կառույցների գործունեության արդյունավետությունը գնահատվում է

«նրանց գործառույթների լիարժեք կատարման նկատմամբ սահմանված մշտադիտարկմամբ և հաշվետվողական մեխանիզմների կիրառմամբ: ՈՒԽ և ՈՒԳԸ ընթացիկ գործունեության արդյունավետությունը գնահատվում է նրանց կողմից ինքնավերլուծության իրականացման և համապատասխան կառույցների կողմից՝ հետևյալ մեխանիզմով. Ֆակուլտետների ՈւԽ և ՈՒԳԸ կառույցները յուրաքանչյուր ամիս պարբերաբար կատարում են կատարած աշխատանքի վերլուծություն, ֆակուլտետի ղեկանի հետ համաձայնեցնելուց հետո ինքնագնահատման արդյունքները քննարկում են ՈՒՀՏԱ և Կ բաժնում: Քննարկումից հետո ընդհանրացված գնահատականները ներկայացվում են ՈՒՇՀՀՏԱ գծով և գիտության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորներին: Եռամսյակը մեկ ֆակուլտետների և համալսարանական ուսանողական կառույցների ղեկավարների աշխատանքը խրախուսվում է ռեկտորի կողմից սահմանված ամենամսյա բազմապատիկ և ըստ աշխատանքի որակի տարբերակված պարգևատրմամբ՝ [կրթաթոշակներով](#):

Իր գործունեության 50 տարիների ընթացքում ԱրՊՀ-ն թողարկել է ավելի քան 23 հազար շրջանավարտ՝ մի քանի տասնյակ մասնագիտությունների գծով: Նախկինում շրջանավարտների հետ տարվող աշխատանքը կանոնակարգված չէր, սակայն վերջին տարիներին այդ ուղղությամբ զգալի աշխատանքներ են կատարվել՝ նրանց հետ հետադարձ կապի հաստատման ու աշխատաշուկայում ներգրավման, զբաղվածության մակարդակի մշտադիտարկման ուղղությամբ: Նշված աշխատանքների բարելավման նպատակով ներկայում համալսարանն իրականացնում է մի շարք նպատակային միջոցառումներ: Օրինակ, 2019թ. մարտ ամսում կազմակերպվել են Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցների տնօրենների, ուսմասվարների, դասղեկների, ԱրՊՀ վերջին 7 տարիների շրջանավարտ հանդիսացող ուսուցիչների, հոգեբանների, սոցիալական ու հատուկ մանկավարժների մեկշաբաթյա մասնագիտական հավաքներ, որոնց ընթացքում քննարկվել են դպրոց-բուհ փոխգործակցության հարցերը, կատարվել են շրջանավարտների կարծիքների ուսումնասիրություններ՝ պարզելու համար, թե որ չափով է ԱրՊՀ-ն ապահովում որակյալ կրթություն՝ աշխատաշուկայում հաջողությամբ ներգրավելու համար և ո՞ր ուղղությամբ են առկա կոնկրետ խնդիրներ: Կատարված ուսումնասիրությամբ պարզվել է և նշված մասնագետների կողմից բարձրաձայնած հիմնական խնդիրը եղել է այն, որ ԱրՊՀ-ն հաջողությամբ ապահովում է բարձրորակ կրթություն՝ աշխատաշուկայի պահանջները բավարարելու համար, սակայն համեմատաբար ցածր է մնում պրակտիկ կարողությունների ձևավորման մակարդակը:

Շրջանավարտների հետ հետադարձ կապի ամրապնդման, բուհ-աշխատաշուկա հարաբերությունների զարգացման ուղղությամբ զգալի աշխատանքներ է կատարվում նաև այլ ստորաբաժանումներում, մասնավորապես՝ տնտեսագիտության ֆակուլտետում, որտեղ հաճախակի են կազմակերպվում կլոր սեղաններ, գիտական ընթերցումներ և քննարկումներ՝ ներգրավելով ԱրՊՀ տարբեր տարիների շրջանավարտների՝ տնտեսության, ֆինանսական համակարգի, գործարար ոլորտի ներկայացուցիչների:

2018թ. համալսարանը կարևոր քայլ է կատարել ուսանողների կրթական, խորհրդատվական և օժանդակող այլ ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ՝ ձևավորելով հատուկ կառույց՝ Որակի ապահովման կենտրոն: 2019թ. հրատարակվել է [«ԱրՊՀ Որակի ապահովման ձեռնակ»](#) ուսումնամեթոդական կարևոր ուղեցույցը, որում տեղ են գտել որակի ապահովման քաղաքականությունը, հիմնական գործընթացները և մեխանիզմները: Որակի

<p>ապահովման գործընթացների գնահատման համար մշակվում են համապատասխան գործիքներ:</p> <p>ԱրՊՀ վերջին տարիների շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ ամփոփ տվյալները բերված են աղյուսակում:</p> <p>Շրջանավարտների զբաղվածության մակարդակը վերջին հինգ տարվա համար (թվով):</p>						
	Զբաղվածություն/ուսման շարունակություն	2014	2015	2016	2017	2018
1	Ավարտելուց անմիջապես հետո	-	-	-	-	-
2	Նախքան ավարտելը	-	-	-	-	-
3	Մասնագիտությամբ				86	84
4	Ոչ-մասնախիտությամբ				27	42
5	Ավարտելուց հետո ուսումը շարունակող ուսանողների տոկոսը				37.95	44.43
6	Ավարտելուց 2-5 տարի հետո զբաղվածության մակարդակը					
7	Գործազուրկ ուսանողների տոկոսը				44.3	46.96
8	Ավարտելուց 5 տարի հետո զբաղվածության մակարդակը				-	-
<p><i>Վերլուծել Չափանիշ 4-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:</i></p> <p><i>Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:</i></p> <p>Ամփոփելով Չափանիշ 4-ը՝ վստահաբար կարելի է պնդել, որ ԱրՊՀ-ն հաջողություններ ունի ուսանողներին օժանդակություն և աջակցություն ցուցաբերելու ուղղությամբ՝ կրթական միջավայրի արդյունավետության ապահովման նպատակով:</p>						

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<p>1. ԱրՊՀ-ն Արցախի բացարձակ առաջատարն է դպրոցների, ուսումնական այլ հաստատությունների շրջանավարտների կողմից նախընտրելի բուհ լինելու առումով:</p> <p>2. ԱրՊՀ-ն ունի ընդունելության կազմակերպման հստակ ու թափանցիկ համակարգ, որի բաղադրիչներն սկսվում են դպրոց բուհ կապերի իրագործումից և դրսևորվում ԱրՊՀ հանրակացարանում ուսանողների բնակեցմամբ, նրանց համար ուսումնառության համապատասխան պայմանների ապահովմամբ:</p> <p>3. ԱրՊՀ-ում ձևավորված և գործում է ուսանողների համակողմանի աջակցման ինստիտուցիոնալ համակարգ՝ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր, ՈՒՀՏԱ և Կ բաժին, ՀԿ և Լ բաժին,</p>	<p>1. Միջին և ցածր ակադեմիական առաջադիմությամբ սովորող ուսանողները գիտահետազոտական աշխատանքներում քիչ են ներգրավված:</p> <p>2. Համալսարանի և նրա շրջանավարտների հետադարձ կապը դեռևս թույլ և անկատար է:</p> <p>3. Համալսարանն իր կենդարյա պատմության ընթացքում ուսանողների կարիերայի զարգացման ուղղությամբ կայուն ավանդույթներ չի ձևավորել՝ պայմանավորված բուհական ոլորտում Արցախի համար գերիշխող դիրքով և իրական մրցակից հանդիսացող բուհերի բացակայությամբ:</p> <p>4. Ուսանողների մոտ դեռևս առկա է</p>

<p>ուսանողական խորհուրդ, ուսանողական գիտական ընկերության, ֆակուլտետի ՈՒՀՏԱ գծով մեթոդիստ, առաջին կուրսերի կուրսղեկներ, ուսանողական կուրսերի (խմբերի) ավագներ:</p> <p>4. Ուսանողների աջակցման համակարգի բոլոր հաստիքային և ոչ հաստիքային կառույցների գործառույթները հստակեցված են համապատասխան կանոնադրություններով, կարգերով:</p> <p>5. ԱրՊՀ կառուցվածքում 2018թ.-ից գործող ՈՒՀՏԱ և Կ բաժինն ունի լայն հնարավորություններ՝ կազմակերպելու համագործակցությունը հիմնական գործատու հանդիսացող ԿԳՍ նախարարության և հանրակրթության համակարգի ուսումնական հաստատությունների հետ՝ կատարելագործելու ինչպես մասնագիտական պատրաստման որակը, այնպես էլ զարգացնելու ուսանողների կարիերան:</p> <p>6. ԱրՊՀ-ում իրավական և հումանիտար առումով ուսանողները պաշտպանված են՝ այդ գործընթացների նկատմամբ մշտական վերահսկողության իրականացման կայուն համակարգի ձևավորման շնորհիվ:</p> <p>7. Ուսանողների կարիերայի զարգացման ուղղությամբ իրականացվում են նպատակային աշխատանքներ, որոնք արտահայտվում են ոչ ֆորմալ կրթական ծրագրերի ներդրմամբ, բուհ-գործատու կապերի համակարգի ստեղծմամբ:</p> <p>8. Ուսանողներին աջակցություն և օժանդակություն ցուցաբերելու ուղղությամբ աշխատանքը գտնվում է մշտական վերահսկողության ներքո՝ ապահովված նրանց կողմից ինքնավարության գործուն համակարգի ներդրմամբ և ուսանողական ինքնավար բոլոր կառույցների ինքնագնահատմամբ, հաշվետվողականությամբ:</p> <p>9. Կրթական արդյունավետ միջավայրի ձևավորմանը բուհը հասել է կառավարման համակարգի բոլոր մակարդակներում ուսանողների ներգրավմամբ, նրանց կրթական</p>	<p>որոշակի թերահավատություն, իներտություն և պասիվություն՝ ինքնուրույն կառուցելու իրենց իսկ հաջողությունը, կարիերան:</p> <p>5. Ուսանողները տարբեր առիթներով վարչական կազմի գրեթե բոլոր օղակների՝ կուրսի ավագի, կուրսղեկի, մեթոդիստի, ուսանողական խորհրդի, դեկանատի և այլ կառույցների կողմից ստանում են աջակցություն և օժանդակություն, սակայն լիարժեք փաստաթղթային, իրավական ձևակերպումներ տրվում են հիմնականում բարձր օղակներին՝ դեկանին և ռեկտորին գրավոր դիմելու ժամանակ:</p>
--	--

<p>կարիքների վերհանման գործուն մեխանիզմների մշակմամբ:</p> <p>10. Ուսանողները ներգրավված են գիտահետազոտական աշխատանքներում, նրանց կողմից իրականացված ուսումնասիրությունները հաճախ Արցախի համար յուրահատուկ են:</p>	
<p>ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p>	<p>ՎՏԱՆԳՆԵՐ</p>
<p>1. ԱՀ կառավարության կողմից ԱրՊՀ-ում ներդրված ոչ ֆորմալ կրթական ծրագրերը կարող են ավելի արդյունավետ լինել, եթե պլանավորման ժամանակ հաշվի առնվեն ուսանողների և դասախոսների ցանկությունները, անհրաժեշտությունները:</p> <p>2. ԱՀ տնտեսության առաջանցիկ զարգացումը, աշխատանքի շուկայի ձևավորումը հնարավորություններ կստեղծեն ԱրՊՀ համալսարանական, ոչ մանկավարժական մասնագիտությունների շրջանավարտներին մասնագիտական աշխատանքով լիարժեք ապահովման, բուհ-գործատու կապերի ամրապնդման համար:</p> <p>3. Արցախի հիմնահարցի կարգավորման և ապաշրջափակման դրական միտումները լայն հնարավորություններ կբացեն կրթական միջավայրի օպտիմալացման, միջազգային ինտեգրման, համագործակցության զարգացման, ուսանողների փոխանակման ծրագրերի իրականացման առումով:</p>	<p>1. Ժողովրդագրական գործընթացների արդյունքում տարեցտարի նվազում է հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտների քանակը, ինչը կարող է հանգեցնել ԱրՊՀ ընդունվող դիմորդների թվի նվազման և ուսանողական խմբերի թերհամալրման:</p> <p>2. Արցախում աշխատանքի շուկայի զարգացման ցածր տեմպը խոչընդոտում է ԱրՊՀ բարձրորակ մասնագետների պատրաստմանը:</p> <p>3. ԱրՊՀ մասնագետների պատրաստման գործում Արցախի տնտեսության մասնավոր հատվածի ցածր ներգրավվածությունը չի նպաստում ուսանողների ուսումնական մոտիվացիայի բարձրացմանը:</p> <p>4. Ուսանողների սոցիալական խնդիրների չլուծված լինելը նրանց ստիպում է աշխատանքը, հաճախ ոչ մասնագիտական և հոգնեցուցիչ, համատեղել ուսման հետ, ինչը բացասաբար է անդրադառնում հատկապես մագիստրոսական կրթական ծրագրերի լիարժեք իրականացման վրա:</p> <p>5. Գիտահետազոտական աշխատանքների ցածր գրավչությունը կարող է հանգեցնել ուսանողների մոտ սովորելու ցանկության կտրուկ նվազման կամ հանգեցնել միայն ավարտական վկայականի համար սովորելու անցանկալի իրավիճակին:</p> <p>6. Բարձրագույն կրթության բնագավառը կանոնակարգող օրենսդրությունը հնացել է, ինչը որոշակիորեն խանգարում է ԱրՊՀ-ում նոր գաղափարների ներդրմանը:</p>

Բնագավառի բարելավման նպատակով նախատեսվում է առաջիկա տարիներին *ձեռնարկել հետևյալ քայլերը.*

1. Հնարավոր բոլոր եղանակներով ուսանողական միջավայրում բարձրացնել ուսումնագիտական և հետազոտական գործունեության գրավչությունը՝ բնագավառին հատկացվող միջոցների ավելացմամբ և դրանց հմուտ կառավարմամբ, գիտական ծրագրերի ծավալների մեծացմամբ, գիտական նորարարությունների քարոզմամբ, դրանց կիրառական նշանակության բարձրացմամբ:

2. Կատարելագործել համալսարանի հետ շրջանառությունների հետադարձ կապը՝ էլեկտրոնային հասցեների համակարգի ներդրմամբ, նրանց համար շարունակական կրթության ապահովման համակարգի ձևավորմամբ, վերապատրաստումների և ծրագրային թարմացումների կիրառմամբ:

3. Նախատեսվում է ուսանողներին տրամադրված էլեկտրոնային հասցեները պահպանել նաև ուսումնառության ավարտից հետո, ինչը կնպաստի շրջանավարտների հետ գործուն կապի արդյունավետության բարձրացմանը:

4. ԱրՊՀ շրջանավարտների հետ հետադարձ կապերի ամրապնդման ուղղությամբ լավագույն ձեռքբերումը կարող է լինել «ԱրՊՀ Շրջանավարտների միություն» հասարակական կազմակերպության ձևավորումը, որը կարող է նպաստել ինչպես համալսարանի առջև դրված խնդիրների կատարման որակի բարձրացմանը, այնպես էլ նրա շրջանավարտների կարգավիճակի բարձրացմանը, մասնագիտական պատրաստման որակի բարելավմանը,

5. Նախատեսված է առաջիկայում համալսարանի պաշտոնական կայքում տեղադրել նաև բոլոր մասնագիտական կրթական ծրագրերի մասնագրերը, ինչը կնպաստի դիմորդների առավել արդյունավետ կողմնորոշմանը,

6. Առաջիկայում անհրաժեշտ կլինի զարգացնել և հնարավորինս կատարելագործել ուսանողների համար անհատական-խորհրդատվական պարապմունքների կազմակերպման համակարգը, առանձնապես դրա անհրաժեշտությունն զգացվում է հեռակա ուսուցման համակարգում, ինչպես նաև լայնորեն քննարկել հեռավար ուսուցման համակարգի ներդրման հարցը:

7. Շրջանավարտների աշխատանքի տեղավորման մասին հավաստի վիճակագրություն ձևավորելու հարցում առկա դժվարությունները հաղթահարելու համար նախատեսվում է նախկին տարիների շրջանավարտների շրջանում իրականացնել առցանց հարցում՝ նրանց զբաղվածության, կրթության որակի և այլ հարցերի վերաբերյալ,

8. ԱրՊՀ-ում գործող կառույցների՝ հոգեբանական կենտրոնի, իրավաբանական կլինիկայի, հայագիտական կենտրոնի, ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության և նոր ձևավորվող «Բանավեճի ակումբի» աշխատանքների ակտիվացմամբ, ուսանողների հետ շահագրգիռ քննարկումների և նրանց ստեղծարար մտածողության զարգացմամբ պլանավորվում է ստեղծել ուսանողների ուսումնական մոտիվացիայի բարձրացման, ինքնակրթության խթանման, սեփական հաջողություններն ինքնուրույն կառուցելու կայուն դիրքորոշման, սեփական տեսակետ ունենալու և այն պաշտպանելու կարողությունների մշակման գործուն մեխանիզմ:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱԾԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիջիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիջիաները ձևակերպված են որպես նպատակ կամ ինդիք:

Համալրել և կատարելագործել պրոֆեսորադասախոսական կազմը՝ մասնագիտական կրթական ծրագրերի նպատակներին համապատասխան (*ՌԾ Խնդիր 1.4*):

- 1) իրականացնել պրոֆեսորադասախոսական առկա ներուժի գնահատում՝ ըստ մատուցվող կրթական ծրագրերի, մասնագիտական որակների և տարիքային կազմի.
- 2) մշակել դասախոսական կազմի համալրման և կատարելագործման երկարաժամկետ ծրագիր.
- 3) կազմակերպել դասախոսների վերապատրաստում՝ ուղղված՝ կրթական նոր տեխնոլոգիաների յուրացմանը, էլեկտրոնային ուսուցման դասընթացների մշակմանն ու իրականացմանը, որակի ապահովման համակարգի վերաբերյալ ծրագրի մշակմանն ու վերապատրաստման իրականացմանը.
- 4) ներդնել դասախոսների գիտամանկավարժական գործունեության արդյունավետության գնահատման և վարկանշավորման ցուցանիշների գործուն համակարգ ու ճշգրիտ գնահատման և ինքնագնահատման ընթացակարգ:

ՉԱՓՈՂՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Հիմքեր

- Ընթացակարգ [Արցախի պետական համալսարան>> ՊՈԱԿ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման](#)
- Ընթացակարգ [Արցախի պետական համալսարան>> ՊՈԱԿ ֆակուլտետի դեկանի ընտրության](#)
- Ընթացակարգ [Արցախի պետական համալսարան>> ՊՈԱԿ ամբիոնի վարիչի ընտրության](#)
- [Կարգ ԱրՊՀ ՊՈԱԿ ֆակուլտետի մեթոդիստի գործունեության](#)
- [ԱրՊՀ ՊՈԱԿ ֆակուլտետների տեսուչների, գործակարգավորիչների, ամբիոնների լաբորանտների գործառական պարտականությունները ԱրՊՀ ՊՈԱԿ կաբինետի վարիչի գործառական պարտականությունները](#)

Վերլուծել ՄՈՒՀ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական որակների համապատասխանությունը ՄՈՒՀ-ի առաքելությանը և կրթական ծրագրի նպատակներին:

ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական անհրա-

Ժեշտ որակների առկայությունը հավաստելու համար իբրև հիմք կարող է լինել այն, որ ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական համակազմում սահմանված են [ասիստենտի, դասախոսի, ավագ դասախոսի, դոցենտի և պրոֆեսորի տարակարգերը](#), որոնցից յուրաքանչյուրի համար առանձնացված են հստակ չափանիշներ:

ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմն ուղղակի մասնակցությամբ պատրաստում է մասնագիտական և ընդհանրական գիտելիքներով, հմտություններով զինված, ժողովրդավարական սկզբունքներով առաջնորդվող մրցունակ մասնագետներ: Իր առաքելությունն իրականացնելու, ռազմավարական ծրագրի խնդիրները լուծելու համար պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմն ունի մասնագիտական անհրաժեշտ որակներ: Իր կանոնադրական կարգավիճակին համապատասխան՝ համալսարանի առաքելությունն է՝ ապահովել բարձրագույն մասնագիտական կրթություն՝ որակավորումների ազգային շրջանակի սահմանված մակարդակներով:

Ստորև, ըստ տարակարգերի, ներկայացվում է ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի քանակակազմը վերջին 3 տարիներին.

Աղյուսակ 1. ԱրՊՀ հիմնական պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմերը

Ուսումնական տարի	2015/2016	2016/2017	2017/2018
Տարակարգեր			
Պրոֆեսոր	19	16	16
Դոցենտ	74	77	73
Ավագ դասախոս	59	54	58
Դասախոս և ասիստենտ	55	55	52
Ընդամենը	207	205	199
Այդ թվում՝ գիտական աստիճանով	89	88	87
Ուսումնաօժանդակ կազմ	59	59	56

Ներկայացված թվային տվյալները ցույց են տալիս, որ վերջին երեք տարիներին պրոֆեսորադասախոսական կազմի 8 %-ը պրոֆեսորներ են, 37%-ը՝ դոցենտներ, իսկ գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը կազմում է հիմնական դասախոսական կազմի մոտ 44 %-ը:

Ուսումնաօժանդակ կազմի թվաքանակը պայմանավորված է կրթական ծրագրերում ներգրավված ուսանողների և դասախոսների թվով: Ուսանող-դասախոս հարաբերակցության գործակիցը կազմում է 12,5:

Կատարվել է նաև պրոֆեսորադասախոսական կազմի գենդերային, տարիքային և մասնագիտական որակավորումների ցուցանիշների վերլուծություն, որը ներկայացվում է աղյուսակի տեսքով:

ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական հիմնական կազմն՝ ըստ գենդերային և տարիքային գործոնի և մասնագիտական որակավորումի

<i>Ուսումնական տարի</i>	2015/2016 տղամարդ/կին	2016/2017 տղամարդ/կին	2017/2018 տղամարդ/կին
Տարակարգեր			
<i>Պրոֆեսոր</i>	16/3	14/2	14/2
<i>Դոցենտ</i>	15/59	15/62	15/58
<i>Ավագ դասախոս</i>	11/48	11/43	11/47
<i>Դասախոս և ասիստենտ</i>	13/42	11/44	10/42
Ընդամենը	55/152	51/151	50+149
Դասախոսների միջին տարիքը	51,9	50	50,7

Պրոֆեսորադասախոսական կազմի վերլուծությունն՝ ըստ գենդերային և տարիքային գործոնների ցույց է տվել, որ հիմնական դասախոսական կազմում գերակշռում են միջին տարիքի դասախոսները, որը վերջին 3 տարիների ընթացքում տատանվում է 50-ից 51-ի միջակայքում: 2015/2016, 2016/2017, 2017/2018 ուսումնական տարիներին հիմնական դասախոսական կազմում կին դասախոսների թիվը գերակշռում է տղամարդկանց թվին և կազմում է 75%: Կին-տղամարդ հարաբերակցության ցուցանիշների զգալի տատանումը պայմանավորված է տարածաշրջանի առանձնահատկությամբ, քանի որ հանրապետության տղամարդկանց ավելի քան 60 %-ը աշխատում է ուժային կառույցներում:

Հիմնվելով ԱրՊՀ կադրային ներուժի սվյալների վրա՝ կարող ենք հավաստել, որ ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը 3 հիմնական ուղղություններով՝ բակալավրի, մագիստրոսի, հետազոտողի, համապատասխանում է կրթական ծրագրերի նպատակների իրականացմանը (*Տե՛ս Հավելված 5.1*):

Նոր ՌԾ-ով նախատեսվում է ընդլայնել բուհի հետազոտական հնարավորությունները, և այդ ուղղությամբ բուհը կարևորում է պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական պատրաստականության բարձրացումը, նրանց ներգրավվածության ապահովումը հետազոտական նախագծերում:

Վերլուծել ՄՌԻՀ-ի պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման և հեռացման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը ձևավորվել և համալրվում է գործող ընթացակարգերին համապատասխան:

Պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման [ընթացակարգով](#) իրականացվում է պրոֆեսորադասախոսական համակազմի ձևավորումը և ընտրությունը: Դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական հմտությունների կատարելագործման և համակարգված ընտրություն կազմակերպելու նպատակով վերը նշված կարգում կատարվել են մի շարք փոփոխություններ (2014թ. N55L, 2016թ. N 20L, 2016թ. N 29L, 2017թ. N 14L):

Ընթացակարգով հստակ սահմանվում են դասախոսական կազմի մրցութային ընտրության, պաշտոնների տեղակալման կարգն ու պայմանները, տարբեր տարակարգերի (պրո-

Ֆետր, դոցենտ, ավագ դասախոս, դասախոս, ասիստենտ) բնութագրերը, ինչպես նաև ներկայացվում են դասախոսների հետ կնքվող պայմանագրերի համակարգը: Առաջնորդվելով նշված կարգի հիմնադրույթներով՝ պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության և պաշտոնների տեղակալման մրցույթների կազմակերպման ընդհանուր վերահսկողության նպատակով ստեղծվել և գործում է որակավորման մանդատային հանձնաժողով, որն ուսումնասիրում է մրցույթի մասնակիցների փաստաթղթերը և հանդես գալիս եզրակացությամբ, նաև առաջարկում է պայմանագրի գործողության ժամկետը՝ հիմք ընդունելով թեկնածուի՝ հավակնորդի համար սահմանված չափանիշներին համապատասխանության գնահատման արդյունքները:

Գործող ընթացակարգում հստակ ներկայացված են պրոֆեսորադասախոսական համակազմին առաջադրվող պահանջները, համակազմի ձևավորման և ընտրության անցկացման կարգերը, ինչպես նաև պաշտոնում նշանակելու ժամկետները:

Պրոֆեսորադասախոսական կազմը համալրվում է թափուր պաշտոնների տեղակալմամբ, որոնք ամբիոններում կարող են առաջանալ՝ տարեկան ուսումնական բեռնվածության երաշխավորված կայուն աճի, պրոֆեսորադասախոսական կազմից որոշ անձանց կենսաթոշակային կամ տարակարգերի տարիքային սահմաններին հասնելու և աշխատանքից ազատվելու, առանձին անձանց առողջական վիճակի կամ այլ պատճառներով գիտամանկավարժական գործունեության վաղաժամկետ դադարեցման հիմքերով, պայմանագրի ժամկետը լրանալուց հետո այն չվերակնքվելու դեպքում:

Գործող ընթացակարգը թույլ է տալիս նաև աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալուց հետո գիտամանկավարժական գործունեության արդյունքների գնահատման հիման վրա և ամբիոնում համապատասխան հաստիքի առկայության դեպքում պրոֆեսորադասախոսական համակազմի աշխատողի հետ մեկ անգամ կնքել նոր աշխատանքային պայմանագիր՝ մինչև 5 տարի ժամկետով, առանց մրցութային ընտրության՝ հիմք ընդունելով նախորդ ժամկետում հավակնորդի կողմից իրականացված գիտամանկավարժական գործունեության վերաբերյալ հաշվետվությունը:

Մրցութային ընտրության նպատակն ուղղված է հիմնական դասախոսական կազմի ձևավորմանը:

Լրացուցիչ դասախոսական կազմի /համատեղությամբ, ժամավճարային հիմունքով, 0,25 կամ 0,5 դրույքաչափով դասավանդողների դեպքում/ մրցութային ընտրություն չի անցկացվում, և նրանք հրամանագրվում են ռեկտորի կողմից մինչև 1 տարի ժամկետով: Ըստ կարգի դրույթների՝ ԱրՊՀ-ում վարչական աշխատանքի անցած դասախոսները համատեղության կարգով կարող են մինչև 0,5 դրույքի սահմաններում պահպանել իրենց պրոֆեսորադասախոսական տարակարգը և նույն դրույքի սահմաններում մասնակցել պրոֆեսորադասախոսական պաշտոնների տեղակալման գործընթացին: Լիազորությունների ավարտից հետո նրանք ապահովվում են ԱրՊՀ-ում իրենց գիտամանկավարժական համապատասխան պաշտոնով:

ԱրՊՀ ֆակուլտետի [դեկանի](#) և [ամբիոնի վարիչի](#) պաշտոնի թեկնածուների առաջադրման, ընտրության անցկացման և պաշտոնում հրամանագրման գործընթացները նույնպես կարգավորվում են գիտխորհրդի կողմից հաստատված ընթացակարգերով:

Ուսումնաօժանդակ կազմի աշխատողներն աշխատանքի են ընդունվում ռեկտորի հրամանով՝ համաձայն իրենց կողմից ներկայացված դիմումի: Ուսումնաօժանդակ կազմի աշխատանքն իրականացվում է գիտխորհրդի կողմից ընդունված ներքին կանոնադրություններով,

որտեղ հստակ նշված են յուրաքանչյուր աշխատողի գործառույթները, պարտականությունները և իրավունքները:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական և ուսումնառական կազմի աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են վերոնշյալ ընթացակարգերով, որտեղ նաև հստակ սահմանված են ասիստենտի, դասախոսի, ավագ դասախոսի, դոցենտի և պրոֆեսորի գործառույթները, իրավունքները և պարտականությունները, իսկ ուսումնառական կազմի գործառույթները, իրավունքները և պարտականություններն ամրագրված են գործող ընթացակարգերով, աշխատանքային պայմանագրերով:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրությունն ու իրականացվում է գործող կարգին համապատասխան, որը ապահովում է այդ գործընթացի թափանցիկությունն ու օբյեկտիվությունը, իսկ ընթացակարգի դրույթները, որոնք մասնագիտական աճի մշտական հետևողություն են ապահովում, հնարավորություն են տալիս գնահատելու գործընթացի արդյունավետությունը. Ինչպես՝ կենսաբանության ամբիոնում երիտասարդ ասպիրանտը 2008թ. ժամավճարային հիմունքներով ընդունվել է աշխատանքի, 2011թ. ստացել է ասիստենտի տարակարգ, 2012թ.՝ դասախոսի տարակարգ, 2014թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը և ստացել թեկնածուի գիտական աստիճան, 2015թ. նշանակվել է ավագ դասախոսի պաշտոնակատար, 2016թ. ՀՀ ԲՈԿ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում և 2018թ. ընտրվել է ԱրՊՀ դոցենտի պաշտոնում: Նշված օրինակում տարակարգերի աստիճանական փոփոխությունը պայմանավորված էր դասախոսի գիտամանկավարժական և գիտամեթոդական գործունեության աճով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈԻՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

- Հիմքեր
- Մասնագիտության կրթական ծրագրի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները:
 - Մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների վերանայման քաղաքականությունը:
 - Վերանայման վերլուծությունները և արդյունքների արտացոլումը նոր քաղաքականության մեջ:

Հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի կոմպետենցիաների համապատասխանությունը մասնագիտության կրթական ծրագրերի սահմաններում շնորհվող որակավորումներին:

ԱրՊՀ-ն, գիտակցելով իր առաքելության կարևորությունը, մատուցվող կրթական ծառայություններն իրականացնում է երեք հիմնական ուղղություններով՝ բալալավրի, մագիստրոսի և հետազոտողի: Ըստ այդմ առաջարկում է կրթական ծրագրերի ընդգրկուն ցանկ՝ մանկավարժական, բնագիտական, հումանիտար, տնտեսագիտական և սոցիալական: Համալսարանում 2019-2020 ուսումնական տարում գործում է 18 ամբիոն: Բոլոր ամբիոնների կրթական ծրագրերի և պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտացվածության համապատասխանության վերաբերյալ կատարված հարցումների արդյունքները փաստել են, որ պրոֆեսորադասախոսական կազմը բավարարում է վերը նշված 3 հիմնական ուղղություններով կրթական ծառայությունների պատշաճ կատարմանը (*Տե՛ս Հավելված 5.1*):

Յուրաքանչյուր ՄԿԾ-ի համար պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող իրավական հիմքերով հստակ պահանջներ չկային սահման-

ված: Այդ գործընթացն իրականացվում էր ավանդական արհեստավարժության հիմքով, հայտատուի մասնագիտական որակների հաշվառմամբ և ամբիոնների պրոֆեսորադասախոսական ներուժի հնարավորությունների ճանաչողությամբ: Մյուս կողմից՝ ԱրՊՀ ասպիրանտուրայի՝ որպես կրթական 3-րդ մակարդակի ներդրումը հնարավորություն էր տվել ընդունելություն կազմակերպել այնպիսի մասնագիտացումներով, որոնք հայտագրում էին ամբիոնները՝ ելնելով ամբիոնի մասնագիտական կադրուժի վերազինման անհրաժեշտությունից:

Բացի այդ, տարածաշրջանի առանձնահատկությամբ պայմանավորված, յուրաքանչյուրի մասնագիտական պատրաստականության ու որակավորման արժանահավատության մասին (ոչ միայն փաստաթղթային հիմքով) լիարժեք հնարավորություն կա հավաստի տեղեկանք ունենալու, առավելապես, որ հիմնականում պրոֆեսորադասախոսական համակազմը համալրվում է համալսարանի լավագույն շրջանավարտներով: Այսպես՝ 2003-2019թթ. ԱրՊՀ ասպիրանտուրա ընդունվածներից 92 հոգի պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն և ստացել գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, համալրել են համալսարանի պրոֆեսորադասախոսական համակազմը /հիմնական, համատեղությամբ և ժամավճարային հիմունքներով (*Տե՛ս Հավելված 5.3*):

Համալսարանի նոր ՌԾ-ով նախատեսվում են վերակառուցել ՄԿԾ-ները, ըստ այդմ՝ սահմանել պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող հստակ պահանջներ, որոնք կպահովեն այդ գործընթացի համակարգվածությունն ու հիմնավորվածությունը:

ԶԱՓՈՐՈՇԻՉ Գ. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

- Հիմքեր
- [ԱրՊՀ ՊՈԱԿ կրթության որակի ապահովման քաղաքականությունը](#)
 - [ԱրՊՀ ՊՈԱԿ դասալսումների կազմակերպման և անցկացման կարգ](#)
 - [ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգ](#)
 - [ԱրՊՀ ՊՈԱԿ ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյական հատկանիշների գնահատման սոցիոլոգիական հարցման կանոնակարգը և հարցաշարը](#)
 - [Արցախի պետական համալսարանում դասախոսների տարբերակված հավելավճարի կարգ](#)
 - Դասավանդողների մասնագիտական որակների և նրանց աշխատանքի գնահատման գործընթացի արդյունավետությունն արտահայտող այլ հիմքեր և վերլուծություններ
 - Արձագանքների օրինակները (ուսումնառողների, այլ դասավանդողների, ղեկավարների)

Վերլուծել և հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի պարբերաբար գնահատման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԱրՊՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը գնահատելու նպատակով գիտական խորհրդի որոշմամբ հաստատվել է [Արցախի պետական համալսարանի ՊՈԱԿ ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյական հատկանիշների գնահատման սոցիոլոգիական հարցման կանոնակարգը](#), ըստ որի՝ համալսարանի ուսանողների կողմից պրոֆե-

սորադասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյական հասկանիշների գնահատման սոցիոլոգիական հարցումն իրականացվում է առցանց եղանակով՝ առնվազն տարին մեկ անգամ՝ ռեկտորատի սահմանած ժամկետներում: Հարցումն անց է կացվում հարցաշարով, որում ուսանողը 5 միավորանոց սանդղակով գնահատում է բոլոր դասավանդող դասախոսներին, ինչպես նաև ներկայացնում է իր առաջարկություններն ուսման որակի բարելավման վերաբերյալ: Ըստ անհրաժեշտության՝ հարցաշարի հետագա փոփոխությունները կատարվում են ռեկտորատի քննարկման արդյունքում և հաստատվում ռեկտորի կողմից: Հարցումն անանուն է: Ցանկության դեպքում ուսանողը կարող է նշել իր անունը: Հարցման արդյունքները մշակվում են հարցումն անցկացրած ստորաբաժանման կողմից՝ այդ նպատակով կազմված ծրագրի միջոցով:

Հարցաթերթիկներում դասախոսի անուն ազգանվան դիմաց հաշվարկվում է նրա վարկանիշը՝ երկու բաղադրիչով.

- գիտամանկավարժական, որն արտածվում է հարցաթերթիկի առաջին 10 հարցերի համար ստացած գնահատականների գումարը 10-ի վրա բաժանելով,

- բարոյական, որն արտածվում է 11-ից 15-րդ հարցերի համար ստացած գնահատականների գումարը 5-ի վրա բաժանելով:

Դասախոսի ընդհանուր միջին գնահատականը կամ վարկանիշը դուրս է բերվում բոլոր հարցերի համար ստացած գնահատականների գումարը 15-ի վրա բաժանելով:

Դասախոսների վերաբերյալ ստացված բոլոր տվյալները վերամշակվում և պահպանվում են համապատասխան բաժնում՝ առնվազն 1 տարի, որից հետո արխիվացվում են:

Հարցման արդյունքները յուրաքանչյուր կիսամյակ քննարկվում են համապատասխան ամբիոնում, այնուհետև՝ ֆակուլտետի խորհրդի նիստում: Քննարկման արդյունքում մշակվում են համապատասխան առաջարկություններ և երաշխավորություններ՝ ուղղված դասախոսի դասավանդման որակի բարելավմանը:

Հարցման ամփոփ արդյունքները գիտամանկավարժական բաղադրիչի մասով տրամադրվում են ուսումնական աշխատանքների գծով, իսկ մյուս բաղադրիչների մասով՝ ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտորներին, նրանց կողմից ուստարվա վերջում ԱրՊՀ գիտական խորհրդում վերլուծություններ և առաջարկություններ ներկայացնելու նպատակով: Դասախոսն իրավունք ունի ամբիոնի վարիչից ստանալու իրեն վերաբերող գնահատականներն ու կարծիքները և ծանոթանալու դրանց:

Ուսանողական հարցման արդյունքներն օգտագործվում են դասախոսների ինքնավերլուծության իրականացմանը և նրանց կողմից դասավանդման մոտեցումների և կիրառվող մեթոդների շարունակական բարելավմանը աջակցելու, պաշտոնակալման, առաջխաղացման նպատակով, ուսումնական ծանրաբեռնվածության բաշխման ժամանակ, աշխատանքային պայմանագրի վաղաժամ լուծման կամ երկարաձգման նպատակով, ինչպես նաև մրցութային հանձնաժողովի կողմից: Հարկ է նշել, որ հարցման արդյունքներն օգտագործվում են միայն ամփոփ տեսքով, իսկ անհատական տվյալների գաղտնիությունը երաշխավորվում է:

Իրականացվող ուսանողական հարցումների արդյունքները, մասնավորապես հարցման արդյունքում դասախոսների ստացած միջին միավորը հաշվի է առնվում մրցութային ընտրության և առաջխաղացման գործընթացում:

Դասախոսների մասնագիտական որակների և նրանց կողմից իրականացվող ուսումնական աշխատանքի արդյունավետության գնահատման նպատակով համալսարանում

ուսումնական տարվա ողջ ընթացքում, ըստ սահմանված գրաֆիկի, որակի ապահովման կենտրոնի կողմից անց են կացվում դասալսումներ, որոնք արձանագրվում և քննարկվում են համապատասխան ամբիոններում:

ԱրՊՀ դասախոսների կրթական և գիտամանկավարժական գործունեությունը խթանելու նպատակով մշակվել է [Արցախի պետական համալսարանում դասախոսների հավելավճարի կարգը](#), որը հաստատվել է գիտխորհրդի 2018թ. փետրվարի 23-ի N7 -L որոշմամբ: Համաձայն ընդունված կարգի՝ դասախոսի աշխատավարձը բազային աշխատավարձի և հավելավճարի գումարն է: Վերջինս գոյանում է ուստարվա արդյունքներով՝ ամփոփելով դասախոսի ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների կատարողականը, ինչպես նաև հաշվի առնելով ուսանողների և ֆակուլտետի ղեկավարության գնահատման արդյունքներին համապատասխան ստացած միավորները: Սակայն ընդունված կարգը դեռևս չի կիրառվում մի շարք պատճառներով, որոնք կապված են գնահատման գործընթացի հստակեցման և ֆինանսական աջակցության աղբյուրներ ձեռք բերելու հետ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Պ. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

- Հիմքեր
- Պահանջվող որակավորումներին համապատասխան դասավանդողների կոմպետենցիաների շրջանակի ընդլայնումն ապահովող մեթոդները և հիմքերը
 - Դասավանդողների կատարելագործման միջոցառումների պլանները՝ ըստ մեթոդական, մասնագիտական և բարեփոխումների ուղղվածությունների
 - Դասավանդողների կատարելագործման թեմաները
 - Դասավանդողների կատարելագործման միջոցառումների ժամանակացույցը
 - [Արցախի պետական համալսարանի ուսումնական հրատարակությունների ձևերը և նրանց ներկայացվող պահանջները](#)
 - [Կարգ ԱրՊՀ ՊՈԱԿ գիտական, մեթոդական և այլ գրականության հրատարակման](#)
 - [ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգ](#)
 - [ԱրՊՀ աշխատողների և սովորողների արտասահմանյան գործուղումների կազմակերպման կանոնակարգ](#)
 - Ընթացակարգ [ԱրՊՀ ՊՈԱԿ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման](#)
 - [Արցախի պետական համալսարանում դասախոսների տարբերակված հավելավճարի կարգ](#)
 - [Կանոնակարգ ԱրՊՀ ՊՈԱԿ ուսումնական պլանների ձևավորման և պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների](#)
 - [ԱրՊՀ որակի ապահովման ձեռնարկ](#)

Վերլուծել և հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի կատարելագործման գործընթացների արդիականությունը վերջին 3 տարիների համար /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԱրՊՀ-ում իրականացվող քաղաքականությունը միտված է դասախոսական համակազմի

մասնագիտական զարգացմանը և աճին: Ընդունված կարգերի, կանոնակարգերի և ընթացակարգերի կիրառումը ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացքում թույլ է տալիս բացահայտել գործարկվող կարգի արդյունավետությունը, իսկ անհրաժեշտության դեպքում այն ենթարկվում է փոփոխությունների և լրացումների:

Նշված բոլոր փոփոխություններով հանդերձ՝ համալսարանում այսօր գործող [ԱրՊՀ ՊՈԱԿ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգը](#) համարվում է դասախոսների մանկավարժական և մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության հիմքը, քանի որ տարակարգերի աստիճանական աճ ապահովելու համար պրոֆեսորադասախոսական համակազմին անհրաժեշտ է ապահովել մասնագիտական զարգացում և կատարելագործում: Տարակարգերի աստիճանական փոփոխությունն ապահովելու համար անհրաժեշտ պայման է համարվում գիտամանկավարժական համապատասխան աշխատանքային փորձը, գիտական աստիճանը, կոչումը, ինչպես նաև ամենամյա գիտական կամ գիտամեթոդական աշխատանքների տպագրումը:

Յուրաքանչյուր ուսումնական տարում նվազագույնը 2 անգամ հայտարարվում է ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի թափուր պաշտոնների տեղակալման մրցույթ, որը հնարավորություն է տալիս մասնագիտական զարգացմանը զուգահեռ՝ օտգվել նաև ԱրՊՀ-ում գործող կանոնակարգային պահանջներով սահմանված արտոնություններից: Օրինակ՝ ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի տարեկան ուսումնական ծանրաբեռնվածությունը մեկ պաշտոնական դրույքի համար կազմում է՝ պրոֆեսորի – 700-750, դոցենտի – 750-800, ավ. դասախոսի – 800-850, դասախոսի – 850-900, ասիստենտի–900-950 ժամ: Հետևաբար մասնագիտական զարգացում և տարակարգերում աստիճանական աճ ապահովելով՝ պրոֆեսորադասախոսական համակազմը ունենում է համեմատաբար ցածր ուսումնական բեռնվածություն և բարձր վարձատրություն:

Դասախոսական կազմի մասնագիտական զարգացմանը նպաստում է նաև կլոր սեղանների կազմակերպումը, որը համալսարանում վաղուց ավանդույթ է դարձել: Այն միաժամանակ ապահովում է բուհ-գործատու կապը՝ քննարկումներին ընդգրկելով դասախոսների, գործատուների և ուսանողների: Ստեղծված կապի շնորհիվ գործատուների կողմից կազմակերպվող խնդրահարույց քննարկումներին մշտապես հրավիրվում են դասախոսներ և ուսանողներ: Այդպիսով ձևավորվել է մեկ ընդհանուր օղակ, որտեղ ապահովված է բուհ-գործատու-ուսանող կապը: ԱրՊՀ-ում պարբերաբար իրականացվում են ամբիոնային և ֆակուլտետային միջոցառումներ, ինտելեկտուալ խաղեր, օլիմպիադաներ և գիտական ընթերցումներ:

ԱրՊՀ դասախոսական կազմի մասնագիտական զարգացմանն ու կատարելագործմանն է ուղղված նաև աշխատակիցների և սովորողների արտասահմանյան գործուղումների կազմակերպման կանոնակարգի ընդունումը, որը հնարավորություն է ընձեռնում ներկայանալու և միջազգային հարթակներում ներկայացնելու Արցախը:

Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական զարգացմանը նպաստելուն է միտված նաև գիտական կամ գիտամեթոդական աշխատանքների տպագրության աջակցումը: Վերջինս իրականացնելու համար համալսարանն օժանդակում է պրոֆեսորադասախոսական կազմին՝ տրամադրելով քվոտաներ՝ յուրաքանչյուր ամբիոնի՝ 3-ական մամուլ և ֆակուլտետի՝ ըստ ամբիոնների քանակի 2-ական մամուլ՝ այդպիսով հնարավորություն ստեղծելով դասախոսների գիտական, գիտամեթոդական ուսումնամեթոդական աշխատանքների անվճար տպագրությանը:

Բացի այդ, ԱրՊՀ <<Գիտական տեղեկագիր>> պարբերականը լույս է տեսնում տարեկան 2 անգամ՝ 2 պրակով /հասարակական և բնագիտական/, և կրկին հնարավորություն է ստեղծում դասախոսական անձնակազմի գիտական հոդվածներն անվճար հիմունքներով տպագրության համար:

Հարկ է նշել նաև, որ գիտխորհրդի 03.10.2019 նիստի որոշմամբ հիմնադրվել է «Արցախի ժողովրդագիտությունը» մատենաշարը (շուրջ 20 հատոր), որի 1-ին և 2-րդ հատորների տպագրությունն ընթացքի մեջ է:

Բոլոր այս գործողությունները միտված են պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական գործունեության լավարկմանը, բացի այդ, բուհը որդեգրել է այնպիսի քաղաքականություն, որ դասախոսները գնահատվում են տարբեր կողմերից և տեսանկյուններից: Մի կողմից՝ գնահատում է ուսանողը՝ հարցումների միջոցով, գործընկերները՝ փոխդասալսումների միջոցով, ամբիոնի վարիչները՝ դասալսումներ իրականացնելով, մյուս կողմից՝ ըստ ընթացակարգերի՝ գնահատվում է դասախոսի հետազոտական ներուժը: Մա հնարավորություն է տալիս, որ բուհն ունենա իր ՊԴ կազմի առկա վիճակի ճշգրիտ պատկերը, և բացահայտի հնարավորությունները՝ որ ոլորտներում պետք է աջակցություն ցույց տա:

2019թ. ԱրՊՀ գիտխորհրդում հաստատվել և տպագրվել է ԱրՊՀ Որակի ապահովման ձեռնարկ-ուղեցույցը, որը նախանշում է որակի ապահովման քաղաքականությունը և որակի ապահովման հիմնական գործընթացներն ու մեխանիզմները: Այդ մեխանիզմների կիրառումը կապահովի մատուցվող կրթական ծառայությունների և այդ ծառայությունն ապահովող հիմնական դերակատար ՊԴ կազմի մասնագիտական կատարելագործման մշտադիտարկումն ու գործընթացների արդիականության ապահովումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

- Հիմքեր
- Հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի ցանկը (նշելով որակավորումները, գիտական աստիճանները և/կամ կոչումները) (*Հավելված 5.1*)
 - Հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի կայունությունն ապահովող քաղաքականությունը և ընթացակարգերը
 - Ընթացակարգ [ԱրՊՀ ՊՈԱԿ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման](#)
 - [Կանոնակարգ ԱրՊՀ ՊՈԱԿ ուսումնական պլանների ձևավորման և պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների](#)

Վերլուծել և հիմնավորել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական կարողությունների արդիականությունը վերջին 3 տարիների համար /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Վերջին 3 տարվա ընթացքում պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական աճի մասին հավաստում է ներքոնշյալ աղյուսակը, որում ներկայացվում են պրոֆեսորադասախոսական կազմի տարակարգերի փոփոխությունները.

Աղյուսակ 3
Պրոֆեսորադասախոսական կազմի տարակարգերի շարժն՝
ըստ ուսումնական տարիների

Տարակարգերի փոփոխությունը	Ասիստենտից դասախոս	Դասախոսից ավագ դասախոս	Ավագ դասախոսից դոցենտ
Ուսումնական տարի			
2016-2017	3	4	2
2017-2018	5	1	3
2018-2019	4	3	2

Աղյուսակում բերված տարակարգերի փոփոխությունները կատարվել են՝ հիմք ընդունելով հայտատուների կողմից ներկայացված փաստաթղթերը, որոնք բավարարել են ԱրՊՀ-ում գործող ընթացակարգի պահանջներին և փաստում են նրանց գիտամանկավարժական և գիտամեթոդական գործունեությունում աճը: Հարկ է նշել, որ նշված ուսումնական տարում կատարվել է նաև ավագ դասախոսից դասախոսի տարակարգի փոփոխություն, որը պայմանավորված է եղել հայտատուի գիտամանկավարժական, գիտամեթոդական գործունեության և սվյալ պաշտոնի համար ներկայացվող պահանջների անհամապատասխանությամբ:

Դրան հակառակ կատարվել է 1 թռիչքային փոփոխություն, որի դեպքում ասիստենտը ստացել է ավագ դասախոսի տարակարգ: Վերջինս պայմանավորված է եղել հայտատուի գիտամեթոդական գործունեության աճով և ամբիոնում թափուր հաստիքի առկայությամբ:

Նշված ուսումնական տարիներին կատարված տարակարգային բոլոր փոփոխությունները հիմնավորվում են գիտամանկավարժական գործունեության բնագավառում պաշտոնի հավակնորդների հաջողություններով և որակական առաջընթացով:

Կատարվել է նաև վերջին տարիներին ԱրՊՀ նոր աշխատանքի ընդունված պրոֆեսորադասախոսական կազմի վերլուծություն՝ ըստ տարիքային գործոնի և տարակարգերի, որը հնարավորություն է տալիս հաստատելու, որ կա մասնագետների երիտասարդացման միտում և նոր աշխատանքի ընդունված դասախոսների մասնագիտական որակ:

ԱրՊՀ նոր աշխատանքի ընդունված պրոֆեսորադասախոսական կազմի վերլուծություն՝ ըստ տարիքային զործոնների և մասնագիտական որակների

Ուսումնական տարի	2015/2016 հիմնական/ ժամավճարային	2016/2017 հիմնական/ ժամավճարային	2017/2018 հիմնական/ ժամավճարային
Տարակարգեր			
Պրոֆեսոր	0/5	0/5	0/5
Դոցենտ	3/15	2/13	0/13
Ավագ դասախոս	0/17	0/18	0/24
Դասախոս և ասիստենտ	10/75	7/53	4/61
Ընդամենը	13/112	9/89	4/103
Դասախոսների միջին տարիքը	45	45	44

Վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին ԱրՊՀ նոր աշխատանքի ընդունված դասախոսական կազմի միջին տարիքը տատանվում է 44-ից 45-ի միջակայքում, մինչդեռ հիմնական դասախոսական կազմում նշված ցուցանիշը տատանվում էր 50-ից 51-ի միջակայքում /Տե՛ս աղյուսակ 2/: Ակնհայտ է, որ նոր աշխատանքի ընդունվող կազմի միջին տարիքը համեմատաբար երիտասարդ է, ինչը կայունության քաղաքականությունն ապահովող կարևոր բաղադրիչ է: Հիմնականում նոր աշխատանքի ընդունվող կազմը երիտասարդացվում է ավագ դասախոսի և դասախոսի տարակարգ ունեցող մասնագետների շնորհիվ: Միաժամանակ կարելի է նկատել, որ նոր կադրերը, լինելով որակավորման ավելի ցածր օղակներում, հնարավորություն ունեն զարգացնելու իրենց մասնագիտական որակները և ապահովելու մասնագիտական աճը: Դրան նպաստում են համալսարանում գործող նորմատիվ ակտերը և ընթացակարգերը:

Դրանցից կարևորվում է [ԱրՊՀ ՊՈԱԿ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակայման ընթացակարգը](#), որը որոշակի երաշխիքներ է նախատեսում կրթական գործընթացում պրոֆեսորադասախոսական համակազմի երկարաժամկետ ընդգրկվածությունն ապահովելու համար: Ըստ գործող կարգի՝ պրոֆեսորադասախոսական համակազմի հետ աշխատանքային պայմանագրերը կնքվում են. առաջին անգամ ընտրվելու դեպքում՝ մինչև 3 տարի, այնուհետև՝ 3-5 տարի ժամկետով, իսկ ժամավճարով, 0,25 կամ 0,5 դրույքաչափով դասավանդողները հրամանագրվում են ռեկտորի կողմից մինչև 1 տարի ժամկետով: Առանձնահատուկ դեպքերում (ուսումնական բեռնվածության և հաստիքների թվաքանակի աճի, որոշակի անձի առողջական վիճակի կամ այլ պատճառներով գիտամանկավարժական գործունեության վաղաժամկետ դադարեցման) պրոֆեսորադասախոսական համակազմի թափուր պաշտոնում կարող է նշանակում կատարվել առանց մրցութային ընտրության՝ ռեկտորի հրամանով՝ մինչև 1 տարի ժամկետով:

ԱրՊՀ-ում գործում է նաև ժամավճարային հիմունքներով դասավանդող և հրավիրյալ դասախոսների համակարգը, որը երաշխավորում է կրթական ծրագրերի ապահովվածությունը նեղ մասնագիտացում և գործնական հմտություններ ունեցող մասնագետներով:

Կրթական ծրագրերի կադրային ապահովվածության կայունությունը երաշխավորում է նաև

ԱրՊՀ գիտական խորհրդի 2015թ.հունիսի 3-ի N16L որոշմամբ հաստատված [ԱրՊՀ ՊՈԱԿ ուսումնական պլանների ձևավորման և պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների որոշման կանոնակարգի](#) հավելվածներով: 2017թ. նոյեմբերի 2-ի N34 L որոշմամբ նշված կարգում կատարվել է փոփոխություն, որն ուղղված է ընթացիկ աշխատանքների արդյունավետությանը:

Ուսումնական գործընթացին օժանդակելու համար համալսարանում ուսումնասօժանդակ կազմի հաստիքները ձևավորվում են՝ հիմք ընդունելով ԱրՊՀ կառուցվածքը:

Վարչական և ուսումնասօժանդակ անձնակազմի հաստիքացուցակի ձևավորումը, աշխատողների պարտականությունների սահմանումն ըստ պաշտոնների, առաջխաղացումը կարգավորվում են ԱրՊՀ կանոնադրությամբ և առանձին ստորաբաժանումների կանոնադրություններով, որոնք հաստատվել են ԱրՊՀ գիտխորհրդի կողմից:

ԶԱՓՈՐՈՇԻՉ գ.ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

- Հիմքեր
- Ընթացակարգ [ԱրՊՀ ՊՈԱԿ պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման](#)
 - [ԱրՊՀ աշխատողների և սովորողների արտասահմանյան գործուղումների կազմակերպման կանոնակարգ](#)

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը վերջին 3 տարիների համար /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԱրՊՀ դասախոսական կազմի մասնագիտական զարգացմանը և կատարելագործմանն է ուղղված նաև աշխատողների և սովորողների արտասահմանյան գործուղումների կազմակերպման կանոնակարգի ընդունումը, որը հնարավորություն է ընձեռում դասախոսական համակազմին ինչպես նաև ուսանողներին ներկայանալու և միջազգային հարթակներում ներկայացնելու Արցախը:

Արտասահմանյան երկրներ գործուղվելու ֆինանսական աղբյուրներն են՝ պետական բյուջեից տրամադրված նպատակային միջոցները, ԱրՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշվում գործուղման համար նախատեսված միջոցները, դրամաշնորհների, պայմանագրերի (համաձայնագրերի) միջոցները, որոնց նախահաշիվներում նախատեսված են արտասահման մեկնելու ծախսերը, հիմնադրամների (ֆոնդերի) և այլ աղբյուրների միջոցները, ոչ արժույթային փոխանակման միջոցները:

Կատարվել է վերլուծություն 2015-2016, 2016-2017 և 2017-2018 ուսումնական տարիներին համալսարանի ֆինանսական միջոցների հաշվին մասնագիտական զարգացման և կատարելագործման նպատակով դասախոսական անձնակազմի մասնակցությունը գիտաժողովներում պարզաբանելու նպատակով: 2015-2016 ուսումնական տարում ԱրՊՀ ֆինանսական աղբյուրներով միայն մեկ ներկայացուցիչ է մասնակցել գիտաժողովի ք. Երևանում: 2016-2017 ուսումնական տարում ՀՀ-ում կազմակերպված մի շարք գիտաժողովների իրենց մասնակցությունն են ունեցել ԱրՊՀ 5 դասախոս: Եղել են նաև այլ մասնակցություններ, որոնք ապահովվել են սեփական միջոցներով: Նշված ուսումնական տարում կրկին ԱրՊՀ ֆինանսական միջոցների հաշվին Ռուսաստանի Դաշնության Օրյոլ քաղաք է մեկնել ԱրՊՀ ներկայացուցիչը՝ *Միջմշակության երկխոսություն և արդի մարտահրավերները* թեմայով գիտաժողովին Արցախի

պետական համալսարանը ներկայացնելու նպատակով: 2017-2018 ուսումնական տարում ՀՀ-ում կազմակերպված մի շարք գիտաժողովների իրենց մասնակցությունն են ունեցել 49 դասախոս, իսկ 2018-2019 ուսումնական տարում՝ 26 դասախոս, նույն ժամանակամիջոցում 1 դասախոս գիտաժողովի է մասնակցել արտերկրում: Ակնհայտ է, որ տարեցտարի նկատվում է դասախոսների մասնագիտական զարգացմանը նպաստող գործընթացներին ԱրՊՀ անմիջական մասնակցությունը և աջակցությունը:

Պրոֆեսորադասախոսական համակազմը ձևավորող տարակարգերին ներկայացվող չափանիշների աստիճանական բարդացումը նպատակաուղղված է մասնագետների գիտական կարողությունների և հմտությունների աճի ապահովմանը:

Այսպես, օրինակ, եթե դասախոսի տարակարգ ստանալու համար պարտադիր պայման է դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորումը, ով ունի տպագրված առնվազն 3 գիտական կամ ուսումնամեթոդական հոդված, ապա ավագ դասախոսի համար պարտադիր պայման է ասպիրանտուրայի ավարտումը կամ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունենալը, ով ունի 3 տարվա գիտական-մանկավարժական աշխատանքային փորձ՝ դասախոսի տարակարգով, տպագրված գիտական կամ ուսումնամեթոդական առնվազն 4 հոդված, կամ գիտամանկավարժական 15 տարվա աշխատանքային փորձ և առնվազն 3 գիտամեթոդական հոդված:

Ըստ գործող ընթացակարգի՝ դոցենտի և պրոֆեսորի թափուր պաշտոններին հավակնելու համար պարտադիր պայման է ՀՀ ԲՈԿ-ի համապատասխան կոչումների առկայությունը: Սակայն համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի կայուն զարգացումն ապահովելու համար գործող ընթացակարգում դոցենտի և պրոֆեսորի պաշտոններում հետագա պաշտոնավարման համար ՀՀ ԲՈԿ-ի կողմից շնորհված համապատասխան կոչումը պարտադիր, բայց ոչ բավարար պայման է: Օրինակ՝ դոցենտի պաշտոն զբաղեցնող անձի մասնագիտական կայուն զարգացումն ապահովելու համար գործող կարգի պահանջ է համարվում պաշտոնի նշանակմանը նախորդող յուրաքանչյուր տարում միջին հաշվով առնվազն մեկ գիտական գիտամեթոդական աշխատանքի տպագրումը: Իբրև օրինակ՝ կարող ենք նշել, որ նշված պահանջը չբավարարելու հիմքով 2018-2019 ուսումնական տարում բանասիրական ֆակուլտետի ակ. Սերգեյ Աբրահամյանի անվան հայոց լեզվի ինչպես նաև գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնների 2 դասախոսներ զրկվել են պրոֆեսորադասախոսական անձնակազմի թափուր պաշտոնների տեղակալման նպատակով հայտարարված մրցույթին մասնակցելու հնարավորությունից:

Պրոֆեսորի թափուր պաշտոն զբաղեցնող անձը մրցույթի հաջորդ փուլին կարող է մասնակցել, եթե պաշտոնի նշանակմանը նախորդող յուրաքանչյուր տարում ունի միջին հաշվով տպագրված առնվազն 1 գիտական-գիտամեթոդական, իսկ եռամյա կտրվածքով՝ նաև մեկ ուսումնամեթոդական աշխատանք: Նշված պահանջը նույնպես ուղղված է պրոֆեսորի պաշտոնը զբաղեցնող անձի մասնագիտական կարողությունների կայուն աճի ապահովմանը: Թափուր պաշտոնների համար ներկայացվող աստիճանական բարդացվող պահանջները մոտիվացնող գործոններ են, որոնք ուղղված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական զարգացումը և կատարելագործումն ապահովելուն:

Շատ կարևոր է սկսնակ դասախոսների մոտ մասնագիտական առաջընթացի խրախուսումը: Այսօր այն կարգավորվում է միայն պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման ընթացակարգով, որտեղ պահանջների աստիճանական կատարման արդյունքով փոխվում են տարակարգերը ասիստենտից դասախոս,

դասախոսից ավագ դասախոս, ավագ դասախոսից դոցենտ և դոցենտից պրոֆեսոր: Նշված տարակարգերի աստիճանական աճման արդյունքում դիտվում է ուսմանական բեռնվածության նվազում և աշխատավարձի աճ:

Չնայած որ ԱրՊՀ-ում չկա հստակ պահանջների համապատասխանությամբ խրախուսման ընթացակարգ, այնուամենայնիվ համալսարանում պարբերաբար կատարվում են խրախուսումներ և պարգևատրումներ համալսարանի հոբբեյանական տարեթվերին, տոնական օրերի նախաշեմին (ամանոր, մայիսյան եռատոն, կանանց միջազգային տոն) պրոֆեսորադասախոսական կազմի հոբբեյաններին, լավագույն ամբիոնների վարիչներին, դեկաններին, կուրսղեկներին, վարչական և ուսումնաօժանդակ կազմի անդամներին: Խրախուսումները և պարգևատրումներն արտահայտվում են դրամական պարգևների, շնորհակալագրերի, հուշանվերների տրամադրմամբ, պատվավոր պրոֆեսորի կամ դոկտորի կոչումների շնորհմամբ: Բարձրագույն գնահատանքի արժանի անձանց ԱրՊՀ-ն տարեկան միջինում 2-3 հոգու արժանացնում է «ԱրՊՀ ոսկե մեդալ» պարգևի: Նշված խրախուսումներից և պարգևատրումներից որոշներն ընդունվում են գիտխորհրդի որոշմամբ, մի մասը ռեկտորատի որոշմամբ, իսկ որոշները՝ ռեկտորի հրամանով:

Պարգևատրումներն իրականացվում են հաշվետվությունների, ընթացիկ աշխատանքների արդյունավետ իրականացման հիմքով:

Այսպիսով՝ չնայած չկա խրախուսման մշակված հստակ ընթացակարգ, այնուամենայնիվ չի անտեսվում կատարված բարեխիղճ աշխատանքը:

ՌԾ-ով սահմանված և արդեն իսկ ներդրվող մեխանիզմները, որակի ապահովման գործընթացները գնահատելու համապատասխան գործիքները կնպաստեն իրականացվող գործողությունների արդյունավետության բարձրացմանը:

ԶԱՓՈՐՈՇԻՉ է. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ ռազմավարական նպատակների իրականացման համար:

<p>Հիմքեր</p>	<ul style="list-style-type: none"> • Կարգ ԱրՊՀ ՊՈԱԿ ֆակուլտետի մեթոդիստի գործունեության • ԱրՊՀ ՊՈԱԿ ֆակուլտետների տեսուչների, գործակարգավորիչների, ամբիոնների լաբորանտների գործառական պարտականությունները ԱրՊՀ ՊՈԱԿ կաբինետի վարիչի գործառական պարտականությունները • ԱրՊՀ ՊՈԱԿ կաբինետի վարիչի գործառական պարտականությունները • Կանոնադրություն ԱրՊՀ ՊՈԱԿ կադրերի բաժնի • Կանոնադրություն ԱրՊՀ ՊՈԱԿ ընդհանուր բաժնի • Կանոնադրություն ԱրՊՀ ՊՈԱԿ գիտական գրադարանի • Կանոնադրություն ԱրՊՀ ՊՈԱԿ հրատարակչության բաժնի • Կանոնադրություն ԱրՊՀ ՊՈԱԿ փորձուսուցման բաժնի • Կանոնադրություն ԱրՊՀ ՊՈԱԿ հաշվապահական հաշվառման բաժնի • Կանոնադրություն ԱրՊՀ ՊՈԱԿ ուսանողների հետ տարվող աշխատանքների և կարիերայի բաժնի • Կանոնադրություն ԱրՊՀ ՊՈԱԿ հանրային կապերի և լրատվության բաժնի • Կանոնադրություն ԱրՊՀ ՊՈԱԿ տեղեկատվական տեխնոլոգիաների և համարգերի սպասարկման բաժնի • Կանոնադրություն ԱրՊՀ ՊՈԱԿ գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության բաժնի • Կանոնադրություն ԱրՊՀ ՊՈԱԿ որակի ապահովման կենտրոնի
---------------	---

- [Կանոնադրություն ԱրՊՀ ՊՈԱԿ ուսումնական գործընթացի կազմակերպման բաժնի](#)
- [Կանոնադրություն ԱրՊՀ ՊՈԱԿ ուսումնական գործընթացի վերահսկման բաժնի](#)
- [Կանոնակարգ ԱրՊՀ ՊՈԱԿ պարզևների և պատվավոր կոչումների շնորհման](#)

Վերլուծել ՄՈՒՀ-ի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի արդյունավետությունը վերջին 3 տարիների համար /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԱրՊՀ-ում վարչական և ուսումնաօժանդակ կազմի հավաքագրումը և ընտրությունը կատարվում է համաձայն դիմումների և բազային կրթության:

Վարչական և ուսումնաօժանդակ կազմում ընդգրկված աշխատողների իրավունքները, պարտականությունները և գործառույթները հստակ սահմանված են կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրություններում ամրագրված կետերով և աշխատանքային պայմանագրերով:

Յուրաքանչյուր ստորաբաժանում կատարված աշխատանքների վերաբերյալ ներկայացնում է տվյալ ուսումնական տարվա հաշվետվություն, որը ներառվում է համալսարանի ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունների գրքում: Քանի որ չկա վարչական և ուսումնաօժանդակ կազմի կատարողականի գնահատման հստակ մեխանիզմ այդ գնահատումն իրականացվում է՝ հիմք ընդունելով ներկայացված տարեկան հաշվետվությունները: Աշխատակազմի կարիքների վերհանման հստակ մեխանիզմ նույնպես համալսարանում ընդունված չէ, սակայն այդ հարաբերությունները կարգավորվում են գիտխորհրդի կողմից 2015թ. դեկտեմբերի 24-ին ընդունված N32 Լ որոշման դրույթներով, ըստ որի՝ դրամական օգնություն և աջակցություն է ցուցաբերվում աշխատակիցներին հետևյալ դեպքերում. աշխատակիցների մահվան դեպքում (աշխատակիցների հարազատներին), ընտանիքի անդամի մահվան դեպքում, դժբախտ պատահարի և երկարատև բուժում կամ թանկարժեք դեղորայք պահանջող ծանր հիվանդության դեպքում: Նշված դեպքերում համապատասխան օգնությունը ցուցաբերվում է՝ հիմք ընդունելով ներկայացված փաստաթղթերը:

Վարչական և ուսումնաօժանդակ կազմի խրախուսումը նույնպես կարգավորվում է վերը նշված կանոնակարգով, ըստ որի՝ խրախուսվում են՝ ա/ԱրՊՀ աշխատակցին՝ պարտականությունները բարեխիղճ կամ պարտականություններից դուրս այլ հանձնարարություններ և հատուկ առաջադրանքներ կատարելու համար, բ/ ԱրՊՀ-ում 10 տարուց ավելի աշխատանքային ստաժ ունեցող 40 և բարձր տարիքի հիմնական աշխատակցին՝ ծննդյան հոբելյանի առթիվ, գ/ գիտության, մշակույթի և սպորտի բնագավառում, հանրապետական և ավելի բարձր մակարդակի առարկայական օլիմպիադաներում և մրցույթներում մրցանակային տեղ շահած ուսանողի ղեկավարին:

Դրամական օգնության կամ աջակցության չափը որոշում է ԱրՊՀ ռեկտորը՝ ելնելով համալսարանի ֆինանսական հնարավորություններից. այն կարող է տարվա ընթացքում տրամադրվել մեկ անգամ՝ փաստաթղթերը ներկայացնելուց հետո 6-ամսյա ժամկետում: Աշխատողի դեպքում չի կարող գերազանցել նրա միջին ամսական աշխատավարձը:

Համալսարանի վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության վերլուծությունը և արդյունավետությունն ըստ վերջին 3 ուսումնական տարիների ներկայացվում է ստորև. ԱրՊՀ-ն 2016-2017 ուսումնական տարում ուներ 73 վարչական և 59 ուսում-

նաօժանդակ աշխատող (*Հավելված 5.2*): Սահմանվել են ուսումնաօժանդակ աշխատողների հիմնական գործառնությունները՝ ըստ առանձին տարակարգերի:

Կրթական գործունեության կազմակերպման արդյունավետության բարձրացման նպատակով 2017-2018 ուս.տարում հստակեցվել է նոր հաստիքացուցակը՝ բացվելով 2 նոր բաժին՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգերի սպասարկման բաժին և հոգեբանական կենտրոն, ինչի հետ կապված՝ վարչական աշխատողների թվաքանակը նախորդ տարվա համեմատ փոխվել է և կազմել 81: Բաժինների բացմանը զուգընթաց՝ հաստատվել է նրանց կանոնադրությունը: Հոգեբանական կենտրոնի բացման հետ կապված՝ Երևանից պարբերաբար հրավիրվում են մասնագետներ, ովքեր դասընթացներ են անց կացնում ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների, աշխատողների և Ստեփանակերտ քաղաքի ուսումնական տարբեր հաստատությունների աշխատողների հետ: Հոգեբանական կենտրոնը սերտ կապերի մեջ է Շուշիի համայնքային «Շող» կենտրոնի հետ, որտեղ «Հոգեբանություն» մասնագիտության ուսանողները տարվա ընթացքում մի քանի անգամ այնտեղ գտնվող երեխաների հետ անց են կացնում դասընթացներ:

Ուսումնաօժանդակ աշխատողների քանակը 2017-2018 ուս.տարում փոխվել է և դարձել 56՝ հաշվի առնելով, որ այդ ուսումնական տարում ճարտարագիտական ֆակուլտետն առանձնացվել է ԱրՊՀ-ից և միավորվել Շուշիի տեխնոլոգիական համալսարանի հետ, ինչի հետ կապված կրճատվել է ֆակուլտետի և ամբիոնի աշխատողների թիվը (ավագ լաբորանտներ, լաբորանտներ, տեսուչ, գործակարգավորիչ):

Կրթական գործունեության կազմակերպման արդյունավետության բարձրացման նպատակով 2018-2019 ուսումնական տարում հստակեցվել է նոր հաստիքացուցակը՝ մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժնից առանձնացվել է մագիստրատուրան և մտցվել ուսումնամեթոդական բաժնի մեջ՝ վերջինս վերանվանվելով *ուսումնական գործընթացի կազմակերպման բաժին*, իսկ մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժինը վերանվանվել է *գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության բաժին*:

Ուսանողների հետ տարվող աշխատանքների, հանրային կապերի և լրատվության բաժինը տրոհվել է 2 բաժինների՝ ուսանողների հետ տարվող աշխատանքների և կարիերայի ու լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժիններ:

Վերաբացվել է ուսումնական գործընթացի կազմակերպման բաժինը:

Հաստիքացուցակում կատարված փոփոխությունների հետ կապված՝ վարչական աշխատողների թվաքանակը նախորդ տարվա համեմատ փոփոխվել է և հասել 89-ի: Կառուցվածքային այս փոփոխությունները կատարվել են ուսումնական գործընթացն արդյունավետ կազմակերպելու, ՌԾ-ի նպատակների իրականացումն ապահովելու միտումով:

Յուրաքանչյուր կառույց ստեղծվել է գործառնությունների հստակ բաշխման պատկերացման հիմքով, և ըստ այդմ էլ ամրագրվել են դրանք կանոնադրությամբ:

Ուսումնաօժանդակ աշխատողների քանակը 2018-2019 ուս.տարում փոխվել է և դարձել 44՝ հաշվի առնելով, որ այդ ուսումնական տարում, բաժինների բացման հետ կապված, ուսումնաօժանդակ աշխատողներից տեղափոխվել են վերը նշված բաժինները: Թոշակային տարիքի հետ կապված՝ աշխատանքից ազատվել է 2 աշխատող: Համալսարանում իրականացվող կառուցվածքային փոփոխությունները՝ բաժինների միավորումը, տրոհումը և ստեղծումը, միտված են համալսարանի կրթական գործընթացի կարգավորմանը և առավել արդյունավետ իրականացմանը: Վերը նշված ստորաբաժանումների և պրոֆեսորադասախոսական կազմի համատեղ և անխափան աշխատանքի արդյունքում ԱրՊՀ գիտակրթական գործու-

ներությունը կազմակերպվում է պատշաճ մակարդակով: Վարչական և ուսումնաօժանդակ կազմը պրոֆեսորադասախոսական կազմի գործունեությանը նպաստում են տարբեր հարաբերություններում: Այդ հարաբերությունների իրականացումը պարզաբանված է ստորաբաժանումների գործառույթները կարգավորող կանոնադրություններում: Նշված հարաբերությունների ընթացքում առաջացած անհարմարությունները հաշվի են առնվում և հիմք հանդիսանում գործող իրավական ակտերում կատարվող հետագա լրացումների և փոփոխությունների համար՝ ապահովելով վարչական, ուսումնաօժանդակ աշխատակազմի և պրոֆեսորադասախոսական կազմի համատեղ գործունեության արդյունավետությունը:

Վերլուծել Չափանիշ 5-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

<i>Ուժեղ կողմեր</i>	<i>Թույլ կողմեր</i>
<p>1.ՄՈՒՀ-ը իր առաքելությամբ սահմանվածին հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար ունի մասնագիտական համապատասխան որակավորում և պատրաստակա նություն ունեցող կայուն պրոֆեսորադասախոսական համակազմ և համապատասխան ներուժ ունեցող ուսումնաօժանդակ կազմ:</p> <p>2.Մշակված, հստակ կանոնակարգված և օբյեկտիվորեն գործարկվում են պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության ընթացակարգերը. առկա է իրավական նորմատիվային կայուն հենք:</p> <p>3.ՄՈՒՀ-ում իրավական նորմատիվ ակտերով սահմանված և իրականացվում է պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացն ապահովող քաղաքականություն:</p> <p>4.ԱրՊՀ-ում գործում է արտասահմանյան գործուղումների կազմակերպման կանոնակարգը, որը նպաստում է դասախոսական համակազմի մասնագիտական զարգացմանը:</p>	<p>1.ՄՈՒՀ-ում դեռևս չկան հստակեցված գործող մեխանիզմներ պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության պարբերաբար գնահատման համար, թեև նշյալ նպատակի իրականացման համար անցկացվող ուսանողական հարցումները ձևավորել են դասախոսական կազմի պարբերաբար գնահատման մշակույթ:</p> <p>2.Դեռևս հստակեցված և իրավական հիմքերով ամրագրված չեն դասախոսական կազմին ներկայացվող պահանջները՝ ըստ կրթական ծրագրի ելքային արդյունքների:</p> <p>3.Բացակայում է սկսնակ դասախոսների գնահատման, խրախուսման և մենթորության համակարգը</p> <p>4.Դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրում ներառված չեն դասախոսական կազմի նեղ մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները</p> <p>5.Բացակայում են վարչական, ուսումնաօժանդակ, տեխնիկական աշխատողների որակավորման համակարգը և նրանց աշխատանքի արդյունավետության գնահատման մեխանիզմները:</p>

Հնարավորություններ	Վտանգներ
<ol style="list-style-type: none"> 1. ՀՀ և օտարերկրյա պրոֆեսորադասախոսական կազմի ներգրավվածության ապահովում՝ առցանց դասախոսությունների իրականացման շրջանակների ընդլայնմամբ: 2. Մասնագիտական որակավորման բարձրացմանն ուղղված դրամաշնորհային ծրագրերի մասնակցության աշխարհագրության ընդլայնում: 	<ol style="list-style-type: none"> 1. ԱՀ ռազմաքաղաքական իրականությամբ պայմանավորված՝ դասախոսների շարժունության, մասնավորապես ներհոսքի սահմանափակություն:
Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:	
<ol style="list-style-type: none"> 1. Հստակեցնել պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական կազմի գործունեության գնահատման ու խրախուսման մեխանիզմները, ներդնել դասախոսի գիտամանկավարժական գործունեության արդյունավետության գնահատման և վարկանշավորման ցուցանիշների գործուն համակարգ ու մշակել համապատասխան ընթացակարգ: 2. Կատարելագործել դասախոսի աշխատանքի տեղակալման չափանիշներն ու գործընթացները՝ ըստ կրթական ծրագրի ելքային արդյունքների՝ հստակորեն սահմանելով դասախոսական կազմին ներկայացվող պահանջները: 3. Վերամշակել դասախոսների որակավորման բարձրացման կրթական ծրագիրը՝ ներառելով նաև դասախոսական կազմի նեղ մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները: 4. Մշակել վարչական, ուսումնաօժանդակ, տեխնիկական աշխատողների պաշտոնի անձնագրերը, որոնք կհստակեցնեն թե՛ պաշտոնին ներկայացվող պահանջները, թե՛ կատարած աշխատանքի արդյունավետության գնահատման չափանիշները: 	

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ԶՄՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

Հետազոտական գործունեության իրականացման և հետազոտահեն կրթության վերաբերյալ բուհի հավակնությունները արտահայտված են [ԱրՊՀ ՊՈԱԿ զարգացման ռազմավարական ծրագրում \(2019-2023թթ.\)](#):

Ըստ ՌԾ-ի համալսարանը նախատեսում է ձևավորել անհրաժեշտ ներառական միջավայր գիտության բոլոր բնագավառների ուղղությամբ ԱրՊՀ-ում հիմնարար, հիմնախնդրային, կիրառական շեշտադրմամբ հետազոտությունների համար: Մասնավորապես՝ համալսարանը նպատակ ունի ձևավորել քննադատական մոտեցմամբ միջգիտակարգային հետազոտություններ կատարողների խումբ, որն իր մասնագիտական և գիտական մակարդակով կնպաստի գիտության բնագավառի նորարական վերափոխումներին, հետագայում՝ գիտական դպրոցների ձևավորմանը: ԱրՊՀ-ն առաջնահերթություն է դիտարկում Արցախի կայուն զարգացման գերակա ուղղություններով գիտահետազոտական թեմաների հնարավոր ցանկ ստեղծելը և նպատակ ունի չճանաչված պետությունների բուհերի գործընկերությամբ կազմակերպել գիտական գործունեության վարկանիշը բարձրացնող միջազգային ուսումնասիրություններ, նպաստել միջազգային հարթակներում հետազոտությունների արդյունքների ներկայացմանը, նպաստել միջազգային, ՀՀ և հանրապետական գիտական ծրագրերին, դրամաշնորհներին ԱրՊՀ հետազոտողների մասնակցությանը, որպես առաջնահերթություն դիտարկելով հետազոտության և ուսումնառության միջև կապը՝ ուսանողներին մասնակից դարձնել հետազոտություններին՝ ապահովելով փոխակերպվող արդի պահանջներին համապատասխան կարողությունների ձևավորումը: Այս նպատակների իրականացման հիմքում համալսարանը կարևորում է մրցունակ, հազեցված գիտատեխնիկական ռեսուրսային բազայի ստեղծումը, կայուն և շարունակական ֆինանսավորում ունենալու համար ֆոնդհայթայթման մեխանիզմների մշակումը՝ ներգրավելով Արցախի հիմնախնդիրներով մտահոգ բարերարներին և հիմնադրամներին:

Համալսարանը հետազոտության միջազգայնացման ուղղությամբ նպատակ ունի ներգրավել ՀՀ և միջազգային հետազոտական ներուժը ԱրՊՀ-ում իրականացվող նախագծերին:

Համալսարանը նպատակ ունի նպաստել գիտահրատարակչական գործունեության արդյունավետության բարձրացմանը, գիտնականների արժեքավոր և որակյալ աշխատությունների հրատարակմանը դասախոսների դասագրքաստեղծ գործունեությանը, բարձրացնել համալսարանում հրատարակվող գիտական պարբերականների որակը, աջակցել միջազգային բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում դասախոսների գիտական նյութերի հրատարակմանը:

ԶՄՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Հիմքեր

- [ԱրՊՀ ՊՈԱԿ զարգացման ռազմավարական ծրագիր](#) (2019-2023թթ.)
- [Հավելված 2.4 Ամբիոնի զարգացման ծրագիր](#)
- [ԱրՊՀ գործունեության հաշվետվություններ](#)
- [ԱրՊՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներ \(2014-2018\)](#)

Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների ռազմավարության արդյունավետությունը վերջին 3 տարիների համար և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:
Հետազոտությունների ռազմավարությունը և ուղղությունները

ԱրՊՀ ՊՈԱԿ [զարգացման ռազմավարական ծրագիրը](#) (2019-2023թթ.) փաստաթղթում առկա են հետազոտությունների ռազմավարությունները և ուղղությունները հստակեցնող հավակնություններ և հետաքրքրություններ:

Հավակնություններ և հետաքրքրություններ. Ստեղծել Արցախի կայուն զարգացման գերակա ուղղություններով գիտահետազոտական թեմաների հնարավոր ցանկ.

Ինքնավերլուծություն. Հատկանշական է, որ նախկինում, գիտահետազոտական ուղղվածությունների հստակեցումը և որպես ուղենիշային փաստաթուղթ օգտագործելը ԱրՊՀ ամբիոնների կողմից կիրառվել է տարեկան աշխատանքային ուսումնական պլաններում: Ըստ այդմ հղում կատարելով [ամբիոնների աշխատանքային պլաններին](#) և ռազմավարությունների համապատասխան բաժիններին՝ ստանում ենք հետևյալ [ստյուսակային պատկերը](#):

Հավակնություններ և հետաքրքրություններ. Ասպիրանտների և մագիստրանտների հետազոտական նախագծերում ներգրավվածության ապահովում:

Ինքնավերլուծություն. Ռազմավարական նպատակին վերաբերող **արձանագրված ցուցանիշները վերաբերում են** առկա ուսուցմամբ ասպիրանտներին և մագիստրանտներին:

Մասնավորապես ինքնավերլուծության ենթարկված ժամանակահատվածում 2016-2017 ուստարում հետազոտական նախագծում ընդգրկված է եղել 1 ասպիրանտ՝ առկա ուսուցմամբ սովորող 4 ասպիրանտներից: Առավել ցածր է հետազոտական նախագծերում ընդգրկված մագիստրանտների թիվը, մասնավորապես՝ 2017-2018 ուստարում 385 մագիստրանտներից հետազոտական նախագծերում ընդգրկվել է 3 մագիստրանտ ([Հավելված 6.2](#), Աղյուսակ 2):

Հատկանշական է, որ չնայած առկա ուսուցմամբ մագիստրանտների և ասպիրանտների ոչ մեծ տոկոսն է ներգրավված եղել դրամաշնորհային հետազոտական նախագծերում, դրա փոխարեն մագիստրանտները նշված տարիներին կատարել են հիմնահարցային արդիական հիմնախնդիրներին վերաբերող գիտահետազոտական աշխատանքներ՝ թեզեր, որոնց մեծ մասը բարձր է գնահատվել ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների կողմից և տեղ է գտել հաշվետվություններում (Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվություններ. առկա ([Հավելված 6.7](#)) և հեռակա ([Հավելված 6.8](#)) ուսուցման համակարգեր):

Հավակնություններ և հետաքրքրություններ. Նպաստել գիտահրատարակչական գործունեության արդյունավետության բարձրացմանը:

Ինքնավերլուծություն. Վերջին 3 տարիներին համալսարանում լուրջ աշխատանքներ են տարվում համալսարանում հրատարակվող գիտական պարբերականների որակը բարձրացնելու ուղղությամբ: Աշխատանքներ են տարվում նաև համալսարանի դասախոսների և գիտ-

նականների արժեքավոր և որակյալ աշխատությունների հրատարակման, դասագրքաստեղծ գործունեության, գիտական արդիական մենագրությունների հրատարակման ուղղությամբ: ԱրՊՀ ամբիոնների ռազմավարական ծրագրերում գիտահետազոտական աշխատանքների բաժիններում ոլորտը բարելավելուն ուղղված նպատակները և նպատակներին հասնելու մեխանիզմները հստակեցված են:

Հավակնություններ և հետաքրքրություններ. Մշակել ֆոնդահայթայթման մեխանիզմներ կայուն և շարունակական ֆինանսավորում ունենալու համար՝ ներգրավելով Արցախի հիմնախնդիրներով մտահոգ բարերարներին և հիմնադրամներին:

Ինքնավերլուծություն. Ընթացքի մեջ են ֆոնդահայթայթման մեխանիզմները կայուն և շարունակական ֆինանսավորում ունենալու համար՝ ներգրավելով Արցախի հիմնախնդիրներով մտահոգ բարերարներին և հիմնադրամներին: Հիմնարար և նպատակային ծրագրերի գումարները զրոյական մակարդակից 2017 թվականին կազմել են 11,136,1 դրամ: ԱրՊՀ-ն շոշափելի աճ է ապահովել դրամաշնորհային ծրագրերում ներգրավվածության առումով, մասնավորապես 2018թ. դրամաշնորհային ծրագրի արդյունքում ֆինանսավորված բազային լաբորատորիաների ֆինանսավորումը կազմել է 1,5 մլն դրամ: Զրոյական մակարդակից 2018թ. 592,800 դրամ են կազմել միջազգային գիտական համագործակցության ծրագրերից ստացվող գումարները ([ԳԱՑ](#), էջ 79):

Հավակնություններ և հետաքրքրություններ. Նպաստել միջազգային, ՀՀ և հանրապետական գիտական ծրագրերին, դրամաշնորհներին ԱրՊՀ հետազոտողների մասնակցությանը:

Ինքնավերլուծություն. Շարունակվում է ԱրՊՀ դասախոսների ընդգրկվածությունը ԱՀ ԿԳՄՆ, Արցախի գիտական կենտրոնի և ՀՀ գիտության պետական կոմիտեի կողմից հայտարարվող գիտական և գիտատեխնիկական կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված ամենամյա մրցույթներին: ԱրՊՀ դասախոսների ընդգրկվածությունը այս դրամաշնորհային ծրագրերում աճի միտումներ ունի: Ինչ վերաբերում է միջազգային դրամաշնորհներին մասնակցությանը, ապա այս առումով ԱՀ չճանաչվածությունը շարունակում է մնալ ամենագլխավոր խոչընդոտը ([ԳԱՑ](#), էջ 73):

Որպես ԱրՊՀ հետազոտական աշխատանքների արդյունքների վավերացման մեխանիզմները հաստատող փաստաթղթեր՝ համարվում են ԱրՊՀ տարեկան հաշվետվությունները, որոնք հաստատվում են ԱրՊՀ գիտխորհրդի կողմից, ինչպես նաև համալսարանի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներն ի մի բերող հրատարակությունները:

Քանի որ նախկինում հետազոտության արդյունավետությունը ոչ բավարար մակարդակի վրա էր, ապա նոր ՌԾ-ում հետազոտությունը հռչակվել է գերակա ուղղություն:

ԱրՊՀ հավակնություններն արտահայտող հետազոտության և զարգացման ուղղվածությամբ նպատակները շարունակում են մնալ ՄՈՒՀ-ի ուշադրության կենտրոնում և իրագործման փուլում են:

ԶԱՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Հիմքեր	<ul style="list-style-type: none"> • Հավելված 2.4 Ամբիոնի զարգացման ծրագիր • Կարգ ԱրՊՀ ՊՈԱԿ գիտական, մեթոդական և այլ գրականության հրատարակման • Կանոնակարգ ԱրՊՀ ՊՈԱԿ գիտական տեղեկագրի հրատարակման
--------	---

բակման

Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերի իրականացման արդյունավետությունը վերջին 3 տարիների համար և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր

ԱրՊՀ հետազոտական ոլորտում հետաքրքրությունների և հավակնությունների միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի ինքնավերլուծության համար հիմք են ընդունվել ամբիոնների [աշխատանքային տարեկան պլանները](#):

Հարկ է նշել, որ նախկինում ամբիոններն առաջնորդվում էին հետևյալ սկզբունքով՝ հետազոտությունների համար առաջնահերթ են համարվում արդիական և հրատապ ուսումնասիրությունները: Բայց պետք է արձանագրել, որ հստակեցված չէր կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ միջգիտակարգային հետազոտությունների անհրաժեշտությունը և դրանց կատարման մեխանիզմները: Հատկանշական է, որ համալսարանի ՌԾ-ով այդ առաջնահերթություններն առավել հստակեցված և համակարգված են, մասնավորապես ոլորտը բարելավելու ուղղությամբ գիտահետազոտական աշխատանքներում հստակ ուղենշվել և հետևողական աշխատանք է տարվում՝ ամբիոններում ձևավորելու գիտական հանձնախմբեր, որոնց գիտական գործունեությունն ուղղված կլինի միջգիտակարգային հետազոտություններ կատարելուն, արցախյան իրականությանը վերաբերող մասնագիտական խնդիրների ուսումնասիրությանը: Այդ նպատակով հստակեցվում են ամբիոնների հետազոտական ներուժի հնարավորությունները և դրանց իրացման պայմանները: Ըստ ՌԾ-ի յուրաքանչյուր ամբիոն մշակում և իրականացնում է իր մասնագիտական ուղղվածությանը համապատասխան կարճաժամկետ ռազմավարություն, որը ներկայացվում է ամբիոնի ուսումնական տարվա համար նախատեսված աշխատանքային պլանի տեսքով, ամփոփվում՝ ամբիոնի տարեկան հաշվետվությամբ: Ամբիոնների ռազմավարություններում ամրագրվում են նաև երկարաժամկետ ծրագրեր՝ ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական աշխատանքների ընդհանուր եզրերի և նախատեսվող վերջնարդյունքների հաշվառմամբ, ուղղվածություններում ամբիոնի գիտական ներուժի, գիտական ուսումնասիրությունների համակարգմամբ, տարբեր ուղղվածությունների արդյունքում մի քանի գիտահետազոտական ուղղությունների հաստատմամբ: Այս բոլոր հետազոտական և նորարարական ուղղվածությունների հաշվետվողականությունը բարձրացնելու համար կատարվում են ամենամյա հաշվետվություններ:

Միջգիտակարգային հետազոտությունների առումով հատկանշական է «Արցախի ժողովրդագիտությունը» մատենաշարի 20-հատորյակի 1-ին և 2-րդ հատորների հրատարակությունը, որը համալսարանական երկարաժամկետ գիտական հետազոտության առաջին փորձն է:

Աշխատանք է տարվում Արցախի գիտահետազոտական կարիքներին համապատասխան գիտահետազոտական թեմաների ցանկը միտել կիրառական հետազոտություններին և ըստ այդմ՝ հանձնարարվող գիտական դասընթացային, ավարտական, մագիստրոսական աշխատանքները դիտել որպես այդ արդյունքն ապահովող քայլեր:

Հետազոտությունների մեթոդաբանությունն ու հրապարակումներին ներկայացվող պահանջները

[ԱրՊՀ ՊՈԱԿ գիտական, մեթոդական և այլ գրականության հրատարակման կարգի, գիտական տեղեկագրի հրատարակման կանոնակարգի](#) համաձայն՝ աշխատանք է տարվում ԱրՊՀ

գիտական տեղեկագրերի հոդվածները, միջազգային գիտաժողովների հոդվածների ժողովածուները և ուսումնամեթոդական տպագրվող գրականությունը նախքան տպագրությունը գրախոսության ենթարկելու ուղղությամբ: Այդ նպատակով բացի մարդկային գործոնից մեծապես կիրառվում է նաև «Antiplagiat» ներհամալսարանական համակարգչային ծրագիրը: Գրքնության են ենթարկվում նաև ուսանողների գիտահետազոտական աշխատանքները ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի տեսքով: Համալսարանն աշխատանք է տանում նման երևույթների կանխարգելման ուղղությամբ՝ բացատրական և մեթոդական աշխատանք տանելով հետազոտողների բոլոր օղակներում՝ ուսանողից մինչև ասպիրանտ:

ԱրՊՀ կողմից հրատարակվող «Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր» պարբերականը լույս է տեսնում տարեկան երկու անգամ՝ երկու առանձին պրակներով («Հասարակական գիտություններ», «Բնական գիտություններ»): Համալսարանում մինչև 2018 թվականը հրատարակվել է նաև «Հայագիտական ուսումնասիրություններ» գիտական հոդվածների պարբերական ժողովածուն: ԱրՊՀ-ն ամենայն պատասխանատվությամբ է վերաբերում միջբուհական և միջազգային գիտաժողովների անցկացմանը: Գիտաժողովների ղեկույցները սահմանված չափորոշիչներին համապատասխանելու դեպքում տպագրվում են առանձին ժողովածուներում: Գիտաժողովներում ընդգրկվում են ուսանողությունը և պրոֆեսորադասախոսական կազմը, որոնք ներկայացնում են սեփական գիտահետազոտական աշխատանքների արդյունքները: Քննարկվող ժամանակահատվածում կազմակերպվել է 6 միջազգային գիտաժողով, որոնց արդյունքում տպագրվել են հոդվածների ժողովածուներ ([Հավելված 6.3](#), Աղյուսակ 5):

ԱրՊՀ դասախոսները մասնակցում են ԱՀ-ից դուրս կազմակերպվող միջազգային գիտաժողովներին: Գիտաժողովներին մասնակցության ցածր ցուցանիշները, եթե 2015-2017 թվականներին պայմանավորված էին հիմնականում ֆինանսական միջոցներով, ապա վերջին տարիներին դա կապված էր նաև միջազգային գիտաժողովների հոդվածները գիտական հրատարակումների ցանկում միավոր չհաշվելու փաստի հետ ([Հավելված 6.3](#), Աղյուսակ 6):

Ընդհանուր առմամբ դիտարկելով ԱրՊՀ դասախոսների [հրապարակումները](#) ԱՀ-ում, ՀՀ-ում, ԱՊՀ-ում և արտասահմանյան այլ երկրներում՝ ըստ հարաբերակցության տոկոսային ցուցանիշների ստանում ենք հետևյալ պատկերը, որը ներկայացված է ըստ ֆակուլտետների կազմված ստորև ներկայացված աղյուսակներում: Ընդ որում, աղյուսակներում ներառված են գրախոսվող և չգրախոսվող տեղեկագրերում, միջազգային գիտաժողովներում տպագրված գիտական հոդվածները: Հրապարակումների աշխարհագրության վերլուծությունը ինքնավերլուծության ենթարկված ժամանակահատվածի համար ցույց է տալիս, որ՝ գիտական հրատարակությունների առումով ամենաբարձր ցուցանիշը կազմում են ԱՀ-ում և ՀՀ-ում տպագրված հոդվածները, առավել ցածր ցուցանիշներ են արձանագրվել ԱՊՀ երկրներում հրատարակված հոդվածների առումով, իսկ ամենացածր ցուցանիշները կազմում են արտասահմանյան երկրներում հրատարակված գիտական հոդվածները:

Դիտարկումների համար հիմք են ընդունվել 2015-2018 տարիներին գիտական հրատարակումների համար գրանցված ցուցանիշները ([ԳԱՅ](#), էջ 89-98):

Համալսարանում կիրառվում է օնլայն գիտաժողովների պրակտիկան, մասնավորապես 2016 թ. ԱրՊՀ-ն մասնակցել է «Նորանկախ պետությունների համալսարանների ասոցիացիայի անդամ համալսարանների փոխհարաբերության նոր ուղղությունները», իսկ 2019թ.՝ «Опыт международного сотрудничества и новые направления взаимодействия членов АУННГ» թեմաներով օնլայն միջազգային գիտաժողովներին, որին մասնակցել են նաև ուսանողներ ու

դասախոսներ Աբխազիայից, Հարավային Օսեթիայից և Մերձդնեպրյան մոլդովական հանրապետությունից:

ԱրՊՀ-ում կիրառվում են նաև ԱՀ պրակտիկ ոլորտի գործադիր, օրենսդիր և դատական իշխանության ճյուղերի ներկայացուցիչների ակտիվ մասնակցությամբ գիտագործնական համաժողովներ, որոնց ընթացքում դասախոսները և ուսանողները ներկայանում են հետազոտական արդյունքներով: 2015 թվականի դեկտեմբեր 2-ին անցկացվել էր գիտաժողով «Մարդու իրավունքների կոնվենցիա» թեմայով:

Համալսարանի կողմից հետևողական աշխատանք տարվում Արցախի Հանրապետություն այցելող գիտնականների, դիվանագետների, տնտեսագետների, հասարակական-քաղաքական գործիչների մեկանգամյա հանդիպում-դասախոսությունների ձևաչափն ապահովելու ուղղությամբ, ինչը նպաստում է ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի գիտահետազոտական բաղադրիչի զարգացմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

- Հիմքեր
- [ԱրՊՀ հայագիտական կենտրոնի կանոնադրություն](#)
 - [ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի կանոնադրություն](#)
 - [ԱրՊՀ իրավաբանական կլինիկայի կանոնադրություն](#)
 - [ԱրՊՀ աշխատողների և սովորողների արտասահմանյան գործուղումների կազմակերպման կանոնակարգ](#)
 - [Ակադեմիական ազնվության և անազնվության մասին կանոնակարգ](#)

Վերլուծել ՄՈՒՀ-ում հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին նպաստող քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը և արդիականությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԱրՊՀ-ում կան որակյալ հետազոտությունների իրականացման համար բարենպաստ պայմանների ստեղծման մեխանիզմներ, որոնք կատարելագործման և ընդլայնման փուլում են, դրանք հիմնականում ամբիոններին կից կենտրոնների և լաբորատորիաների տեսքով են:

Հայագիտական կենտրոնը առաջնահերթում է հետազոտության բնագավառում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների մատենագիտական հիմքի ապահովումը, մատենագիտական, դաշտային ազգագրական և արխիվային նյութ է ապահովում Արցախի բնակավայրերի հետազոտությամբ զբաղվող ուսանողների և գիտնականների համար: Այն համագործակցում է ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հետ: Հայագիտական կենտրոնը աշխատանք է տանում նաև hayazg.info համացանցային տեղեկատվական կայքում ԱՀ-ին և ԱՀ նշանավոր անձանց /առայժմ 140 հոգի/ վերաբերող հանրագիտարանային նյութերի տեղադրման ուղղությամբ: Կենտրոնը պարբերաբար կազմակերպում է հիմնահարցային արդիական թեմաներով քննարկումներ՝ հետադարձ կապ ապահովելով բանախոսների և ուսանողների միջև, դրանով իսկ նպաստելով ուսանողների շրջանում գիտահետազոտական արդիական թեմաներով ուսումնասիրությունների կատարմանը:

Հոգեբանական կենտրոնն իրականացնում է հոգեթերապևտիկ, խորհրդատվական և վերականգնողական աշխատանքներ, ինչպես նաև անձի և սոցիալական կառույցների ու գործընթացների հոգեբանական հետազոտություններ: Կենտրոնի հնարավորություններն օգտագործվում են ուսանողների հետազոտական հմտությունները զարգացնելու ուղղությամբ: ԱրՊՀ Հոգեբանական կենտրոնի գործունեությունը:

Կենտրոնը զբաղվում է նաև հետկոնֆլիկտային հետազոտություններով, ինչը նպաստում է

Արցախի Հանրապետության խնդիրներին ծառայելուն, ինչը այսօր խիստ պահանջված է միջազգային հետազոտություններում:

ԱրՊՀ իրավաբանական կլինիկան իրականացնում է իրավագիտության բաժնի ուսանողներին պրակտիկ գիտելիքներով, կարողություններով և հմտություններով զինելով: Կլինիկան իրականացնում է իրավական գիտելիքների, կարողությունների և հմտությունների արմատավորմանը և զարգացմանն ուղղված դասընթացների կազմակերպման գործունեություն: Իր գործունեության կազմակերպման ընթացքում հիմնականում կենտրոնանալով քաղաքացիների շրջանում իրավաբանական խորհրդատվությունների վրա՝ կլինիկան ուսանողների համար հնարավորություններ է ստեղծում հետազոտական գործունեություն ծավալելու համար:

Հետազոտական նշանակություն ունի 2018 թ. «Կենսաբանության արդիականացումն Արցախում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2018թ. սեպտեմբերի 3-ից համալսարանի բնագիտական ֆակուլտետի կենսաբանության ամբիոնին կից բացված լաբորատորիան: Ծրագրի շնորհիվ համալսարանի ուսանողներն ուսումնառության ընթացքում ձեռք են բերում և կատարելագործում իրենց գիտելիքները, գործնական հմտություններն ու կարողությունները: Լաբորատորիայի աշխատանքներին ներգրավված են նաև համապատասխան մասնագիտության մագիստրանտներ: Ծրագիրը համագործակցում է ՀՀ ԳԱԱ Լ. Ա. Օրբելու անվան ֆիզիոլոգիայի ինստիտուտի, Երևանի պետական բժշկական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, ԱրՊՀ ու ԱՀ գիտական կենտրոնի փորձառու մասնագետների հետ:

[Համաձայն ակադեմիական ազնվության և անազնվության մասին մասին ԱրՊՀ կանոնակարգի](#) սահմանվում են «Արցախի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունում կատարվող գիտական և ուսումնագիտական աշխատանքներում ակադեմիական ազնվությունը պահպանելու և գրագողությունը կանխարգելելու հիմնական կանոնները: Կանոնակարգը հստակ բնութագրում է ակադեմիական ազնվությունը և ակադեմիական անազնվությունը, վերջինիս առկայության դեպքում սահմանելով տարբեր աստիճանի կանխարգելման մեխանիզմներ և տույժեր: Կանոնակարգը տարածվում է ԱրՊՀ [«Կուրսային աշխատանքի նախապատրաստման և պաշտպանության»](#), [«Ավարտական աշխատանքի նախապատրաստման և պաշտպանության»](#) [«Մագիստրոսական թեզի նախապատրաստման և պաշտպանության»](#) կանոնակարգերը հաստատելու մասին ԱրՊՀ գիտխորհրդի 2014թ. հունվարի 31-ի, N1-L որոշումների վրա: Կանոնակարգերի կիրառությունը պարտավորեցնում է ամբիոններին ապահովել գիտական աշխատանքների մասնագիտական և տեխնիկական որակը: Կանոնակարգերի իրացումը հատկապես ավարտական և մագիստրոսական թեզերի կրկնությունը և գրագողությունը կանխելու մեխանիզմների կիրառման առումով կատարում է համալսարանի որակի ապահովման կենտրոնը:

ԱրՊՀ բյուջեի կատարողականը կազմում են նաև գիտահետազոտական նպատակներով դրամական հատկացումները: Մասնավորապես ԱրՊՀ բյուջեի ֆինանսավորմամբ են տպագրվում «ԱրՊՀ գիտական տեղեկագիրը», միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուները և այլ գիտական աշխատություններ՝ տարեկան սահմանված գումարի չափով: Ստորև ներկայացնում ենք բյուջեի բաշխման քաղաքականությունը:

Աղյուսակ. ԱրՊՀ գիտահետազոտական աշխատանքներին հատկացված գումարները

ԱրՊՀ բյուջեով գիտահետազոտական աշխատանքներին հատկացված գումարները	2015թ.	2016թ.	2017թ.
Գիտական աշխ. գծով ծախս	1292,76	2497,4	1894,9
Ընդամենը	1292,76	2497,4	1894,9

ՀԱՓՈՐՈՇԻՉ Պ. ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

- Հիմքեր
- [ԱրՊՀ տարեկան հաշվետվությունները](#)
 - ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների կարգավորումը
 - Միջազգային (ԱՊՀ և օտարերկրյա) գրախոսվող ամսագրերում հրապարակումների ցանկը վերջին 3 տարվա համար

ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկ

	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	2015	2016	2017	2018	2019
1	Профилактическая медицина, Москва	+	1				
2	Бюллетень ВСНЦ СО РАМН, Иркутск	+	1				
3	Медицинский Альманах, Нижний Новгород	+	1				
4	Естественные и технические науки, Москва	+	1	2			
5	ЗНиСО, Москва	+	1				
6	Гигиена и санитария, Москва	+		1			
7	Медицинский научный вестник, Тамбов	-		1			
8	Современные проблемы науки и образования, Москва	+		1			
9	Международный журнал прикладных и фундаментальных исследований, Москва	-		1			
10	Медицинские новости Грузии, Тбилиси	+		1			
11	Символ науки, Уфа	-	1				
12	Российско-китайский научный журнал “Содружество”, Новосибирск	-		1			
13	Стратегическая	+			4		

	стабильность, Юбилейный						
14	Сборник научных трудов, Переяслав-Хмельницкий	-		1		1	
15	Инновационное развитие, Пермь	-		1			
16	Апробация, Махачкала	-				1	
17	Азия и Африка сегодня, Москва	+			1		
18	Бюллетень науки и практики, Нижневартковск	-			2		
19	Журнал научных и прикладных исследований	-				1	
20	Международный научный журнал центр социально-экономических исследований, Пермь					1	

Օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկը

	Ամսագիրը (երկիրը)	Վարկանիշը	2015	2016	2017	2018	2019
1	London Review of Education and Science	+		1			
2	Oxford Review of Education and Science	+		1			
3	American Journal of Science and Technologies	+		1			
4	Yale Journal of Science and Education	+		1			
5	American Scientific Journal	+		1			
6	Фонд содействия научному развитию “Novation”, Болгария, Варна	-		1			
7	The Scientific Heritage, Budapest	-			1		
8	ՏԳԻՐԱԿԱՆ հորիզոն!, Շանհայ						2
9	«Les constructions en briques du quartier fortifié de Tigranakert»/ Patrimoines en Matériau pour le développement des territoires»(ci-apres designe l'Quvrage) don't la direction scientifique est assure Mm Suzanne Monnot en produisant une contribution intitulé provisoirement						1

ՀՀ-ում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների ցանկի

	Ամսագիրը	Վար- կանիշը	2015	2016	2017	2018	2019
1.	ԱրՊՀ “Գիտական տեղեկագիր”	+	56	45	37	35	50
2.	ԱրՊՀ “Հայագիտական հանդես”	-	16	3	5		1
3.	Լրատու	+	6	22	21	17	10
4.	Կանթեղ	-	1	2	1	3	
5.	Մշակույթ	-		1			
6.	ԵՊՀ-ի “Armenian Folia Anglistika”	-	1				
7.	“Բանբեր” Երևանի Վ.Բրյուսովի անվան ՊԼՀ-ի	+	1			1	
8.	Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրները	-	1				
9.	Մանկավարժական միտք	-		2	1	2	
10.	“Գիտական տեղեկագիր” Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ	-		1	2		
11.	Մխիթար Գոշ	-		1			
12.	Հատուկ կրթության հիմնախնդիրներ	-		1			
13.	Բանբեր հայագիտության	+		1	1		
14.	ԿԳԿ-ի տարեգիրք “Կաճառ”	-	2	1	10		
15.	“Նորավանք” ԳԿՀ-ի “21-րդ ԴԱԸ”	-	1	5	2	2	
16.	ԵՊՀ “Գիտական տեղեկագիր”	+		2	1		
17.	“Օրինականություն” ՀՀ դատախազության հանդես	+		1			
18.	“Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում” գիտական հոդվածների ժողովածու	-	1	6			
19.	Ֆինանսներ և էկոնոմիկա	-	1	3	1	3	
20.	Հայաստանի բժշկագիտություն	+	1				
21.	Հայաստանի կենսաբանական հանդես	+		2	1		
22.	Կրթությունը և գիտությունը Արցախում	-	1	5	2		
23.	Բնագետ	+	1				
24.	Մաթեմատիկական դպրոցում		1	1			
25.	ՀՀ ԳԱԱ տեղեկագիր. Ֆիզիկա	+		1			
26.	Ջահուկյանական ընթերցումներ. գիտական	-		1	1		

	հոդվածների ժողովածու						
27.	ԱրՊՀ Գիտական ընթերցումներ	-		29	16	35	
28.	Դպրատուն, գիտական հոդվածների ժողովածու	+		1		2	2
29.	Проблемы современной русистики	-		3		1	
30.	Русский язык в Армении	+		1			
31.	Вестник ЕГУ языков и социальных наук им. В. Брюсова	+		1			
32.	Вестник ЕГУ. Серия “Русская филология”	+		1			
33.	Вестник РАУ: Гуманитарные и общественные науки	+		1			
34.	“Պատմություն և մշակույթ” Հայագիտական հանդես (գիտական հոդվածների ժողովածու)	-			1		
35.	Վեճեր և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում և գիտական հոդվածների ժողովածու	-			1		
36.	Հանրային կառավարում	+				2	
37.	Այլընտրանք	+				2	
38.	ՀՀ ԳԱԱ տեղեկագիր Մեխանիկա	+				2	1
39.	ՀԱՊՀ-ի “Լրաբեր” գիտական հոդվածների ժողովածու	-				1	
40.	Բարձր տեխնոլոգիաների տեղեկագիր	+			2		
41.	Armenian Journal of Physics	+				2	
42.	Journal of Contemporary Physics	+		1			
43.	Հայագիտական ուսումնասիրություններ	-				1	
44.	Գիտական Արցախ	+				6	2
45.	«Foreign Languages for Special Purposes, Երևան	-					2
46.	Հանրային կառավարում	-					1
47.	«Վեճ» Համահայկական հանդես	+					1
48.	Պատմություն և քաղաքականություն գիտական հանդես	+					1

49	Պետություն և իրավունք	-					1
----	-----------------------	---	--	--	--	--	---

Վերլուծել ՄՈՒՀ-ի հետազոտական գործունեության միջազգայնացման քաղաքականության արդյունավետությունը և վերջին հինգ տարիների նվաճումները /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Հարկ է նշել, որ մինչև 2014թ. հետազոտության միջազգայնացման նպատակ ՄՈՒՀ-ը չի ունեցել, այլ փորձել է ինտեգրվել ՀՀ հետազոտությունների դաշտին: 2015 թվականից սկսած՝ համալսարանը, չնայած առկա խոչընդոտներին, սկսեց փորձեր կատարել առանձին նախագծերով մուտք գործելու միջազգային հետազոտությունների ոլորտ: ՌԾ-ի հաստատումից հետո 2019թ. սկսած հետազոտության միջազգայնացումը դիտվում է որպես տեղեկատվական և ինտելեկտուալ շրջափակումից դուրս գալու ուղի և միջոց: Այս ուղղությամբ համալսարանը ձեռնարկում է գործուն քայլեր՝ իր գործունեությունը համապատասխանեցնելով գործող կանոնակարգերին, միաժամանակ ստեղծելով նոր կարգավորման մեխանիզմներ: Հատկանշական է, որ չնայած առկա դրական տեղաշարժերին, որոնք արձանագրվում են ԱրՊՀ գործունեության տարեկան հաշվետվության մեջ, ոլորտում կատարվող աշխատանքները շոշափելի և տեսանելի արդյունք կարող են գրանցել ՌԾ կատարման ավարտին:

Վերը նշվածով պետք է բացատրել այն փաստը, որ ԱրՊՀ-ում բացակայում են միջազգային հետազոտական նախաձեռնություններում ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածությունը խրախուսող կանոնակարգերը, ինչպես նաև ԱՊՀ երկրներում գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների, օտարերկրյա միջազգային գրախոսվող մասնագիտական ամսագրերում հրապարակումների կարգավորմանը վերաբերող հիմքերը:

Հետազոտության միջազգայնացման բնագավառում համագործակցության պայմանագրերը և համաձայնագրերը վերաբերում են ուսանողների փոխանակման, համատեղ գիտահետազոտական աշխատանքների իրականացման, դասախոսների վերապատրաստման և այլ բնագավառներին: Այս պայմանավորվածություններից գործակվել է ուսանողների փոխանակման ծրագիրը: Հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ առաջին քայլերն արվել են ԱՀ չճանաչվածության պայմաններում միջնորդավորված մեխանիզմներով : Մասնավորապես՝ 2017-2018 ուստարում 2 ուսանող՝ «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության, /2-րդ և 4-րդ կուրսեր/, 2018-2019 ուստարում 1 ուսանող «Թարգմանչական գործ» մասնագիտության, /3-րդ կուրս/, ԵՊՄՀ-ով միջնորդավորված, հնարավորություն են ստացել մեկ տարի ուսանելու Հունգարիայի Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանում: Ուսանողները ուսումնառության ընթացքում կատարել են նաև հետազոտական աշխատանքներ: Հատկանշական է, որ հետազոտության թեմաները հայագիտական ուղղվածություն են ունեցել, մասնավորապես՝ 1) Armenians in Moldova, 2) The Myth and Reality of “Return”— Diaspora in the “Homeland” 3) The First Republic of Armenia , 4) Armenian Genocide Memory in France : Ուսանողները վերադարձել և կրթությունը շարունակում են ԱրՊՀ-ում:

Հետազոտական գործունեության միջազգայնացման ուղղությամբ բուհը նախորդ տարիներին իրականացրել է բավարար չափով աշխատանք: Համալսարանը միջազգային համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր ունի շուրջ 47 համալսարանների, հաստատությունների և կազմակերպությունների հետ, որոնց շարքում են՝ Բելյորոսի Հայկազյան համալսարանը, Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանը, Բասկերի երկրի համալսարանը, Լյովենի կաթոլիկ համալսարանը, Օռլովի պետական համալսարանը, Ուրալի պետական իրավաբանական համալսարանը, ՀՀ գրեթե բոլոր բուհերը, հետխորհրդային տարածաշրջանի բոլոր չճանաչ-

ված պետությունների համալսարանները և այլն /տե՛ս ԱրՊՀ Պայմանագրեր (*Տե՛ս հավելված 9.3*):

2018թ. սեպտեմբերին CERGE-EI (Center for Economic Research and Graduate Education - Economics Institute) ծրագրի շրջանակներում անցվեցին լեզվով երկամսյա դասընթաց է կազմակերպել տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողների համար: CERGE-EI հիմնադրամը կոչված է զարգացնելու տնտեսագիտությունը հետխորհրդային երկրներում: Պայմանավորվածություն է ձևափոխվել առ այն, որ 2019-2020 ուստարում ևս CERGE-EI ծրագրի մասնակից, Պրահայի համալսարանի 2 հետազոտող դասընթացներ պետք է անցկացնեն ԱրՊՀ ուսանողների համար /մանրամասն տե՛ս Չափանիշ 9/:

Շարունակական ավանդույթ է ձևավորվել օտարերկրյա դասախոսների կողմից դասավանդման, առկա և հեռահար միջոցներով դասընթացների անցկացման ուղղությամբ:

ԱրՊՀ-ն արդյունավետորեն համագործակցում է Արցախի Հանրապետության ոչ պետական բուհերի հետ, մասնավորապես համալսարանի դասախոսների և ուսանողների հետազոտությունների վերջնարդյունքները ներկայացվում են միջբուհական, ինչպես նաև միջազգային գիտաժողովների ընթացքում (*ԳԱՅ*, էջ 101):

Աղյուսակի տվյալները կայուն ցածր մակարդակ են արձանագրում հետազոտական նպատակներով կամ գիտական համագործակցության շրջանակներում արտասահմանյան գործուղումների առումով: Սակայն ՀՀ գիտահետազոտական նպատակներով ԱրՊՀ գործուղումների թիվը բոլորովին այլ պատկեր է ներկայացնում (*Հավելված 6.4*. Աղյուսակ 14):

Համալսարանն աշխատանքներ է տանում նաև ՀՀ-ում կազմակերպվող միջազգային գիտաժողովներին ուսանողների մասնակցությունն ապահովելու համար (*Հավելված 6.4*. Աղյուսակ 15):

ՉԱՓՈՐՈՇԻՉ Ե. ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

- Հիմքեր
- [Մագիստրոսական թեզի նախապատրաստման և պաշտպանության կարգ](#)
 - Հետազոտական գործունեությունը ուսումնական գործընթացի հետ փոխկապակցելուն ուղղված քաղաքականությունը, ընթացակարգերը և մեթոդները
 - Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության արդյունավետությունը արտահայտող այլ հիմքեր և վերլուծություններ
 - Գործընթացի բարելավմանն ուղղված միջոցառումներ
 - Հետազոտական գործունեությունը և ուսումնական գործընթացի փոխկապակցումը արտահայտող հիմքեր (գիտական աշխատանքներ ուսանողների մասնակցությամբ, հետազոտությունների շնորհիվ վերանայված ծրագրեր, այլ աշխատանքներ)

Պատասխանել հետևյալ հարցերին:	%
Ուսումնառողների ^ո ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	86
Դասավանդողների ^ո ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	85,2
Գործատուների ^ո ր տոկոսն է բավարարված վերոնշյալ գործընթացներից:	-

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Օգտագործելով ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում՝ այս մեխանիզմը թույլ է տալիս նրանց բացահայտած գիտական արդյունքն անմիջականորեն ներդնել իրենց կողմից դասավանդվող դասընթացներում՝ հաշվի առնելով ընտրված մագիստրոսական մասնագրերի կարիքներն ու հնարավորությունները և կրթական ծրագրերի պահանջները: Այս համակարգը հատկապես գործուն է մագիստրոսական դասընթացների կիրառմամբ, որոնք ոլորտի գիտնականների ուսումնասիրման արդյունքներն են: Մագիստրոսական կրթական ծրագրերի դասընթացները ունեն հստակ ընդգծված հետազոտական ուղղվածություն /Մանրամասն տե՛ս Չափորոշիչ 3/: Կան նաև դասախոսների և ուսանողների համահեղինակային ուսումնասիրությունների հաջողված փորձեր, հիմնականում բնագիտական ուղղվածության գիտահետազոտական աշխատանքներում:

Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի, հետազոտությունների նորոգարական գաղափարները արտացոլվել են դասավանդման մեջ, ուղղակի այն ինստիտուցիոնալացված չի եղել, ինչը այժմ նախատեսվում է ՌԾ-ով:

Վերլուծել Չափանիշ 6-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>1.ԱրՊՀ կողմից ռազմավարական ծրագրում հետազոտությանը և զարգացմանն ուղղված գործելակերպ:</p> <p>2. Բուհական գիտաժողովների կազմակերպման, միջբուհական և միջազգային գիտաժողովների մասնակցության պարբերականություն, բուհի ուսանողության և պրոֆեսորադասախոսական անձնակազմի ակտիվ մասնակցության ներգրավմանն ուղղված ռազմավարություն:</p> <p>3. Արտաքին կապերի պլանավորում և իրագործում՝ քաղաքական գործոններով պայմանավորված միջազգային համագործակցության սահմանափակ հնարավորությունների պայմաններում:</p> <p>4. ԱրՊՀ-ում առկա գիտահետազոտական գործունեությունը համակարգող և ուսումնագիտական աշխատանքները փոխկապակցող օղակների և կանոնա-</p>	<p>1. Ամբիոնների գործունեության մեջ հետազոտական բաղադրիչը հստակեցնելուն ուղղված հայեցակարգերի բացակայություն:</p> <p>2.ԱրՊՀ-ում դասախոսների տարբերակված հավելավճարի կարգի որպես իրավական ակտի առկայություն, բայց կիրառման բացակայություն:Ըստ այդմ՝ որակի գնահատման մասնագիտական հանձնաժողովի բացակայություն</p> <p>3.ԱՀ չճանաչվածությամբ պայմանավորված միջազգային դրամաշնորհային ծրագրերում ներգրավվելու խնդիրներ:</p> <p>4. Միջազգային գրախոսվող բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում ԱրՊՀ դասախոսների գիտական նյութերի հրապարակումը խրախուսող ներբուհական քաղաքականության բացակայություն:</p> <p>5.Կոլեգիալ գիտական հետազոտությունների, ամբիոնների ներսում միասնական գիտական ուսումնասիրությունների առայժմ չհամակարգված պրակտիկա:</p>

<p>կարգերի առկայություն:</p> <p>6. Ոչ բավարար ֆինանսական ներդրումների պայմաններում ամբիոնների կողմից իրականացված են հետազոտություններ:</p> <p>7. Ամբիոններին կից կենտրոնների և լաբորատորիաների առկայություն, որոնք կարևոր գործառույթ են իրականացնում գիտահետազոտական աշխատանքների իրականացման գործում:</p> <p>8. Ակադեմիական ազնվությունը և անազնվությունը կանոնակարգող համալսարանական կարգերի առկայություն</p> <p>9. Ուսանողների փոխանակման ծրագրի առաջին հաջողված փորձ՝ հետազոտական գործառույթի փաստացի արձանագրմամբ:</p> <p>10. ԱրՊՀ դասախոսների ընդգրկվածություն ԱՀ ԿԳՄՆ, Արցախի գիտական կենտրոնի և ՀՀ գիտության պետական կոմիտեի գիտական և գիտատեխնիկական կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված դրամաշնորհային ծրագրերում:</p>	<p>6. ԲՈՒՀ-ի կողմից կարճաժամկետ դրամաշնորհային ծրագրերի մրցույթների բացակայություն:</p> <p>7. ԲՈՒՀ-ի ուսանողների և դասախոսների գիտական համագործակցության համակարգված պրակտիկայի բացակայություն:</p>
<p><i>Հնարավորություններ</i></p>	<p><i>Վտանգներ</i></p>
<p>1. ԱրՊՀ կողմից արդեն իսկ հաստատված միջազգային կապերն ընդլայնելուն ուղղված քաղաքականության հնարավորություն՝ նեղ ցանցային եղանակով, networking-ի պրակտիկայի կիրառմամբ:</p> <p>3. Համագործակցային դաշտում ՀՀ գիտահետազոտական ներուժի օգտագործման և փորձի փոխանակման հնարավորություն:</p> <p>4. ԱրՊՀ ամբիոնների փորձագիտական հետազոտական ներուժի օգտագործման հնարավորություն:</p>	<p>1. Արտաքին և ներքին անբարենպաստ գործոնների ազդեցության արդյունքում գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված անձնակազմի նվազում:</p> <p>2. Ֆինանսական միջոցների խիստ անբավարարություն:</p> <p>3. ԱրՊՀ ամբիոններում գիտահետազոտական ակտիվ աշխատանքով զբաղվածների թվի սակավություն:</p>

Թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

1. Ամբիոնների կողմից քննարկումների արդյունքում հետազոտությանն ուղղված զարգացման հայեցակարգի մշակում և յուրաքանչյուր ուստարվա համար հետազոտությունների ցանկի հաստատում:
2. ԱրՊՀ-ում գոյություն ունեցող դասախոսների հավելավճարի տարբերակված կարգի գործարկում: Դասախոսների վարկանիշավորում ըստ գիտահետազոտական գործունեության բաղադրիչի՝ ԱՀ, ՀՀ և միջազգային գրախոսվող ամսագրերում հոդվածներ տպագրելու, միջազգային գիտաժողովներում զեկուցումների և մենագրությունների առկայության դեպքում:
3. Ներամբիոնային և միջամբիոնային քննարկումների միջոցով արդիական հիմնահարցային թեմաների վերհանում և համահեղինակային ուսումնասիրությունների իրականացում:
4. Համալսարանական և արտահամալսարանական այլընտրանքային ֆինանսավորման աղբյուրների ստեղծում՝ ազգային և տարածաշրջանային թեմաներով փոքր դրամաշնորհային ծրագրերի մրցույթների անցկացման նպատակով: Պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում միջդիսցիպլինար հիմնահարցային և արդիական թեմաներով մրցութային կարգով ընտրված վարձատրվող հատուկ դասընթացների կազմակերպում:
5. ԱրՊՀ գիտահետազոտական ոլորտը համակարգող վարչական օղակի կողմից ԱՀ, ՀՀ և միջազգային դրամաշնորհային ծրագրերի որոնման աշխատանքների համակարգում, ուսանողների և դասախոսների ներգրավվածությունը խրախուսող կանոնակարգի մշակում և ներդրում: Ֆինանսական այլընտրանքային ռեսուրսների ավելացում գիտահետազոտական ոլորտն առավել գրավիչ դարձնելու նպատակով:
6. Պետության կողմից ՄՈՒՀ-ի առջև դրված գիտահետազոտական խնդիրների հստակեցում և դրան նպաստող մեխանիզմների մշակում:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար:

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

Որպես Արցախի Հանրապետության խոշոր գիտակրթական օջախ՝ ԱրՊՀ-ն ձգտում է դառնալ հաստատություն, որը՝

- ունի անհրաժեշտ ուսումնական ենթակառուցվածքներ, ժամանակակից տեխնոլոգիաներ ու սարքավորումներ՝ բարձրորակ հիմնավոր կրթություն և հետազոտություններ իրականացնելու համար.
- համապատասխանեցնում է ֆինանսների կառավարումը ռազմավարական նպատակների իրագործմանը.
- համապատասխանեցնում է ակադեմիական և ֆունկցիոնալ ռեսուրսների կառավարումը բուհի ռազմավարական նպատակներին:

ԱրՊՀ ֆինանսական ռեսուրսների պլանավորումը կատարվում է ստորաբաժանումների կողմից սեփական կարիքների բացահայտման հիման վրա, իսկ պահանջվող ռեսուրսների գնումները՝ ըստ գնումների մասին ԱՀ օրենքի պահանջի և ընթացակարգի:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:	
Հաստատության մասնաշենքերը և դրանց օգտագործման նպատակները Լաբորատորիաները, ուսումնական կաբինետները, արվեստանոցները, արհեստանոցները և դրանց օգտագործման նպատակները Հիմքեր Գրադարանների, պաշտոնական ինտերնետային կայքերի և գրականության հասանելի այլ աղբյուրների ցանկը ԱրՊՀ մասնաշենքերի վկայականներ	
Պատասխանել հետևյալ հարցերին:	%
Արդյո՞ք ուսումնառողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	49,1
Արդյո՞ք դասավանդողները բավարարված են ռեսուրսների ապահովվածությունից:	71,67
<i>Վերլուծել ուսումնական ռեսուրսների համապատասխանությունը հաստատության որակավորումների շրջանակի հետ:</i>	

Վերլուծել ՄՈՒՀ-ում առկա մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի արդյունավետությունը նշելով շահակիցների բավարարվածության աստիճանը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԱրՊՀ ռազմավարական ծրագրի նպատակների իրագործման նախադրյալներից մեկը համապատասխան ուսումնական և աշխատանքային միջավայրի ապահովումն է ([ՌՕ խնդիր 4.3](#)):

Համալսարանն իր գործունեությունն իրականացնում է չորս մասնաշենքերում ([Հավելված 7.1](#) (շենքերի վկայականներ))²: Աղյուսակ 11-ում ներկայացված է լսարանային ֆոնդի, լաբորատորիաների, գրադարանի և ընթերցասրահների ընդհանուր մակերեսները 2019թ. հունվարի 1-ի դրությամբ:

Աղյուսակ 11. Ուսումնական միջավայրի բաղկացուցիչների տվյալները³

Հ/Հ	Ուսումնական միջավայրի բաղկացուցիչներ	Քանակը, հատ	Քառ.մ
1	Լսարաններ	47	1288.3
2	Մասնագիտացված լսարաններ	18	781.05
3	Համակարգչային լսարաններ	6	314.88
4	Լաբորատորիաներ	7	448.89
5	Ընթերցասրահներ	2	71.65
6	Գրադարան առանց ընթերցասրահների	1	282.8

Լսարանների միջին բեռնվածությունը ԱրՊՀ-ում կազմում է 34 ուսանող/լսարան, Լսարանային ֆոնդերի արդյունավետ օգտագործումն իրականացվում է հստակ սահմանված հերթափոխների կիրառման միջոցով:

ԱրՊՀ ռազմավարական նպատակներին հասնելու խնդիրներից է ուսումնական և գիտական նպատակներով գույքային համալիրի արդյունավետ վերակազմավորման և օգտագործման ապահովումը: Վերջինիս հետ կապված՝ յուրաքանչյուր տարի հատկացվում են միջոցներ լսարանային ֆոնդի և նյութատեխնիկական հագեցվածության բարելավման ուղղությամբ (գծապատկեր 4):

Բուհում առկա են 7 լաբորատորիաներ, 6 համակարգչային լսարաններ: Համակարգչային լսարանների օգտագործման հիմնական նպատակը ինֆորմատիկայի մասնագիտական դասընթացների, ինչպես նաև համակարգչային թեստային քննությունների կազմակերպումն է՝ ըստ հաստատված դասացուցակի և ժամանակացույցի: Համակարգչային լսարանները հագեցված են 200 համակարգիչներով:

Առաջիկայում՝ հիմնանորոգվում է համալսարանի գլխավոր մասնաշենքը, 2019թ. ձեռք է բերվել Ասկերանի շրջանի Պատարա համայնքին կից տարածք՝ դաշտային փորձուսուցումը, ամառային դպրոց-ճամբարն, ուսանողական և դասախոսական համակազմի ամառային հանգիստը կազմակերպելու նպատակով:

ԱրՊՀ-ն ունի ուսանողական հանրակացարան (168 տեղանոց), որի ծառայությունից

² Տվյալները վերցված են անշարժ գույքի սեփականության վկայականներից

³ Բեռնվածությունը հաշվարկելիս հաշվի է առնվել, որ ԱրՊՀ-ում ուսումնական գործընթացը կազմակերպվում է երկհերթ սկզբունքով

օգտվում են ոչ ստեփանակերտաբնակ ուսանողները: Հանրակացարանի յուրաքանչյուր հարկում առկա են սանհանգույցներ, լոգախցիկներ և խոհանոց՝ ապահովված էլեկտրական սարքավորումներով: 2020թ. վերանորոգմամբ պայմանավորված՝ կավելանա ևս 56 տեղ:

Համալսարանը ունի նաև հիմնովին վերանորոգված, բոլոր հարմարություններով հյուրասենյակ (12 տեղանոց), որի ծառայություններից օգտվում են ՀՀ-ից և արտերկրից ժամանած դասախոսներ, ուսանողներ:

ԱրՊՀ բոլոր մասնաշենքերում գործում են տարբեր դրամաշնորհային միջոցներով վերանորոգված սանհանգույցներ, ամբիոն և նոր տեխնիկական միջոցներով ու գույքով հագեցած լսարաններ, որոնք առավել բարենպաստ պայմաններ են ստեղծում ուսումնական գործընթացի կազմակերպման համար:

Աղյուսակ 12. Դրամաշնորհային միջոցներով բարելավված ուսումնական միջավայրի տվյալներ

Հ/Հ	Մասնաշենք	Բարելավված ռեսուրսներ	Ֆինանսավորման աղբյուր
1	Հանրակացարան	Սանհանգույցների և նկուղային հարկի վերանորոգում	ԱՀ քաղաքաշինության նախարարություն
2	Հանրակացարան	Կենսաբանության լաբորատոր սարքեր	Հարավային կովկասի շվեդարական հիմնադրամ
3	ԱրՊՀ 3-րդ մասնաշենք	Սանհանգույցների վերանորոգում	ԱՀ քաղաքաշինության նախարարություն
4	ԱրՊՀ 2-րդ մասնաշենք	Ֆրանսերենի կաբինետ	Մեն Շամոն քաղաքի հայ համայնքի պատասխանատու Աննիկ Բոյաջյան
5	ԱրՊՀ 2-րդ մասնաշենք	Հայոց լեզվի ամբիոն	Բեյզ Մեթլս ՓԲԸ
6	ԱրՊՀ 2-րդ մասնաշենք	4-րդ համակարգչային լսարան	ԱՄՆ Լոս -Անջելոսի հայ-կրթական հիմնարկություն, Գյոթրգյան Հովհաննես Վանուշի
7	ԱրՊՀ վարչական մասնաշենք	Իրավաբանական կլինիկա	ԱՀ Մարդու իրավունքների պաշտպան
8	ԱրՊՀ 2-րդ մասնաշենք	Նույլիսի անվան կաբինետ/գույք/	ԱՀ արտաքին գործերի նախարարություն
9	ԱրՊՀ 2-րդ մասնաշենք	Համակարգչային լսարաններում համակարգիչներով համալրում	Ղարաբաղ-Տելեկոմ ՓԲԸ
10	ԱրՊՀ 2-րդ և 3-րդ մասնաշենքեր	Լսարաններում նստարանների, գրատախտակների համալրում	ԱՀ կառավարություն
11	ԱրՊՀ 2-րդ մասնաշենք	Գերմաներենի կաբինետ	EuCfA կողմից

Համալսարանում 2009թ-ից գործում է գրադարան և 2 ընթերցասրահ, որոնցից 1-ը ուսանողական (համակարգչային տեխնիկայով և համացանցով ապահովված), մյուսը՝ գիտական:

Ընթերցասրահները միաժամանակ կարող են սպասարկել մոտ 39 ընթերցողի: Գործում են էլեկտրոնային գրադարան և քարտադարան, որոնք տարեցտարի համալրվում են: 2019թ. հունվարի 1-ի դրությամբ գրադարանային ֆոնդը ԱրՊՀ-ում կազմել է շուրջ 100.000 կտոր գրականություն, գրադարանը մշտապես համալրվել է, իրականացվել է նաև զտում: Ստորև բերված աղյուսակում ներկայացնում ենք ԱրՊՀ գրադարանի համալրման և ընթերցողների թվի վերաբերյալ տվյալներ:

Աղյուսակ 13. Գրադարանի համալրումը և ընթերցողների թիվը

Հ/Հ	Գրադարանի գործունեության ցուցանիշներ	2014	2015	2016	2017	2018
1	ԱրՊՀ գրադարանային ֆոնդի համալրում	2677	2839	1789	1068	1090
2	ԱրՊՀ ընթերցողների ընդհանուր թիվ	2872	2557	2396	2054	2098


Ինչպես երևում է աղյուսակ 13-ից, նվազել է և գրադարանային ֆոնդի համալրումը, և ընթերցողների թիվը: Սա հիմնականում պայմանավորված է ուսանողների թվի նվազմամբ և շենքային պայմաններով /համալսարանի գլխավոր մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքներով պայմանավորված՝ ներկայումս ընթերցասրահների թիվը կրճատվել է/:

Գրադարանային սպասարկման և ռեսուրսներով ապահովվածության գնահատման նպատակով ուսանողների և դասախոսների շրջանում իրականացվել է հարցում, որն անցկացվել է ըստ առանձին կլաստերների (ֆակուլտետ)՝ պատահական ընտրության մեթոդով: Հարցումների համաձայն՝ ուսանողների բավարարվածությունը գրադարանում անհրաժեշտ գրքերից և ամսագրերից օգտվելու հնարավորությունից կազմել է միջին հաշվով 60,8%, իսկ դասախոսների բավարարվածությունը նշված ռեսուրսից՝ 76,6% (զժապատկեր 1, 2):

Գծապատկեր 1.

Ռեսուրսներով ապահովվածությունից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքներ՝

- 1 - Բժշկական օգնության ծառայություն,
- 2 - Անվտանգության ապահովում,
- 3 - Շենքային պայմաններ,
- 4 - Լսարանների կահավորում և նյութատեխնիկական ապահովման աստիճան,
- 5 - Համացանցից օգտվելու հնարավորություն,
- 6 - Կայքում զետեղվող տեղեկատվության օգտակարություն,
- 7 - Գրադարանում անհրաժեշտ գրքերից և ամսագրերից օգտվելու հնարավորություն,
- 8 - Ընթերցասրահների հարմարավետություն,
- 9 - Էլեկտրոնային գրադարանից օգտվելու հնարավորություն:




Գծապատկեր 2.

Ռեսուրսներով ապահովվածությունից դասախոսների բավարարվածության հարցման արդյունքներ՝

- 1 - Բժշկական օգնության ծառայություն,
- 2 - Անվտանգության ապահովում,
- 3 - Աշխատանքային պայմաններ,
- 4 - Լսարանների կահավորում և նյութատեխնիկական ապահովման աստիճան,
- 5 - Համացանցից օգտվելու հնարավորություն,
- 6 - Կայքում զետեղվող տեղեկատվության օգտակարություն,
- 7 - Գրադարանում անհրաժեշտ գրքերից և ամսագրերից օգտվելու հնարավորություն,
- 8 - Ընթերցասրահների հարմարավետություն,
- 9 - Էլեկտրոնային գրադարանից օգտվելու հնարավորություն:

ՊՂ կազմի բավարարվածության աստիճանը բուհի ռեսուրսային ապահովվածությունից



Համալսարանում գործող SS և ՀՄ բաժինը ապահովում է համալսարանի ինտեռնետային կայքի, ներքին ցանցի և էլեկտրոնային ծրագրերի՝ Microsoft Office, Adobe acrobat, Djvue, Nero, Chrome, MSSql, Visual Studio, Pascal, Java (Eclipse), Lisp, Mathcad, Matlab, Php, Mysql, Apache, Codeblocks, Python, Adobe photoshop, Adobe audition, Adobe Dreameaver, Archicad, Autocad, Corel, База данных книг, Электронная библиотека, ՀԾ-Հաշվապահ 7.0.13, բնականոն աշխատանքները:

Համալսարանի www.asu.am կայքում տեղադրվում են ընթացիկ գործունեության հետ կապված նորություններ, անհրաժեշտ տեղեկություններ:

Էլեկտրոնային կայքում զետեղվող տեղեկատվության օգտակարությունը բարձր են գնահատել և՛ ուսանողները, և՛ դասախոսները, համապատասխանաբար՝ 62,4% և 78,5%:

Հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ, չնայած կատարված բարեփոխումներին, և՛ ուսանողները, և՛ դասախոսները բավարարված չեն լսարանների կահավորման և նյութատեխնիկական ապահովման աստիճանից: Մինևույն ժամանակ, և՛ ուսանողները, և՛ դասախոսները առավել բարձր են գնահատել բժշկական օգնության ծառայությունը (համապատասխանաբար 69,2% և 92,2%), էլեկտրոնային գրադարանից օգտվելու հնարավորությունը (համապատասխանաբար 64,2% և 79,2%): Դասախոսների հարցման արդյունքները գրեթե համընկնում են ուսանողների հարցման արդյունքներին կամ մոտ են դրանց՝ բացառությամբ աշխատանքային/շենքային պայմանները, լսարանների կահավորման և նյութատեխնիկական ապահովման աստիճանը, համացանցից օգտվելու հնարավորությունը (գծապատկեր 2):

Համալսարանում գործում է հրատարակչության բաժինը, որը մատուցում է ծառայություններ ուսնաողական կազմին և աշխատողներին: Տպագրվում է ԱրՊՀ թերթերը, տարվա հաշվետվությունները, կատարում վճարովի պատճենահանման և տպագրության աշխատանքներ:

2019թ. ԱրՊՀ-ում դրամաշնորհային ծրագրի շրջանակներում հիմնադրվել է ուսումնագիտական տպարան՝ վերագինված նոր տպագրող պատճենահանող և կազմարարական աշխատանքներ կատարող սարքավորումներով:

Մինչ 2018թ. համալսարանն ուներ մարզադահլիճ, սակայն հիմնական մասնաշենքի հիմնանորոգմամբ պայմանավորված՝ այժմ պարապմունքները անց են կացվում համալսարանի

կողմից վարձակալած տարածքում: Համալսարանի հիմնանորոգումից հետո կունենանք բոլոր հարմարություններով կահավորված մարզադահլիճ:

Համալսարանի ռեսուրսները համապատասխանում են ՈԱՇ-ի 6-րդ և 7-րդ մակարդակների մինիմալ պահանջներին: Մակայն նոր մշակվող ՄԿԾ-ները, ինչպես նախատեսված է ՌԾ-ով, կապահովվեն վերջնարդյունքերին համապատասխան ռեսուրսներով:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն և նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

- Հիմքեր
- Բյուջեի բաշխումը՝ ըստ մուտքերի և ծախսերի
 - Բյուջեի բաշխումը՝ ըստ ՄՈՒՀ-ի առաքելության հիմնական ուղղությունների (դասավանդում և ուսումնառություն, հետազոտություն և զարգացում, ծառայություն հասարակությանը)
 - Բյուջեի բաշխումը՝ ըստ ռազմավարական ուղղությունների
 - Ուսումնական գործունեությունից ստացվող մուտքերի բաշխումը՝ պետական ֆինանսավորում, ուսման վճարներ, վերապատրաստումներ և այլն (արտահայտված տոկոսներով)
 - [ԱրՊՀ կանոնադրությունը](#)
 - [ԱրՊՀ ռազմավարական ծրագիրը](#)

Վերլուծել բյուջեի բաշխման արդյունավետությունը: Արդյո՞ք ուսումնական գործընթացին վերաբերող ծախսերի բաշխումը համապատասխանում է հաստատության ռազմավարական նպատակներին: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԱրՊՀ ֆինանսական ռեսուրսների կառավարումը իրականացվում է տարեկան կտրվածքով բյուջեի նախահաշվի կազմման ([ԱրՊՀ կանոնադրություն](#), կետ 53) և հաշվետու տարվա վերջին բյուջեի փաստացի կատարողականի վերլուծության միջոցով: 2018թ. ԱրՊՀ բյուջեի հիմնական եկամտային հոդվածներն ունեն այս բաշխվածությունը. ուսման վճարները կազմում են ԱրՊՀ բյուջեի մուտքային մասի շուրջ 51.9%-ը, պետական ֆինանսավորումը՝ 42.6%-ը, այլ եկամուտներ՝ 5.5%-ը (տե՛ս գծապատկեր 3)⁴:

Աղյուսակ 14-ում ներկայացված են ԱրՊՀ 2014-2018թթ. մուտքերը:

Աղյուսակ 14. ԱրՊՀ եկամուտների 2014-2018թթ. տվյալներ (հազար դրամ)


Հ/Հ	Մուտքերի բաշխում	2014	2015	2016	2017	2018
1	Պետական բյուջեից մուտքեր	360406.8	478151.1	437206.9	447909.0	414162.2
2	Ուսման վարձից մուտքեր	694049.6	583569.4	566119.0	546904.6	513374.4
3	Այլ մուտքեր,	57476.7	47161.7	44287.0	57949.1	57381.4
4	Ընթացիկ տարվա մուտքեր	1111933.1	1108882.2	1047612.9	1052762.7	984917.9

⁴ Չափորոշիչ բ-ում բերված թվային ցուցանիշները ներառում են ԱրՊՀ, տվյալները: Հիմքը՝ ԱրՊՀ ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների 2014- 2018 թվականների հաշվետվություններ

Ինչպես երևում է աղյուսակ 14-ից, ԱրՊՀ մուտքերը տարեց տարի նվազել են, ընդ որում՝ նվազում է գրանցվել ուսման վարձերից գոյացած մուտքերի մասով, որը պայմանավորված է դիմորդների նվազմամբ:

Գծապատկեր 3.

ԱրՊՀ 2018թ. մուտքերի բաշխվածությունը՝ տոկոսներով արտահայտված



Բուհի ֆինանսական միջոցների մեծ մասը ձևավորվում է վճարովի հիմունքներով սովորող ուսանողների ուսման վճարներից, ապա պետական բյուջեի միջոցներից:

Ֆինանսական միջոցները համալսարանի ռեսուրսային բազայի հիմքն են և ծախսերը պլանավորվում են՝ հիմք ընդունելով ֆինանսական կարողությունները: Ստորև ներկայացնում ենք ԱրՊՀ ծախսերի կառուցվածքը:

Աղյուսակ 15. ԱրՊՀ ծախսերի կառուցվածքը 2014-2018թթ. (հազար դրամ)

Հ/Հ	Ծախսեր	2014	2015	2016	2017	2018
1	Ուսումնական ծախսեր	607536.6	621400.96	587355.92	570578.18	570060.7
2	Ուսումնասօժանդակ ծախսեր	405712.9	429234.04	403127.78	390108.02	400189.15
3	Սարքերի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր	49864.3	26285.3	24310.5	23459.9	16116.65
4	Այլ ծախսեր	14886.7	38671	14555.6	18380.4	46801.18
5	Ընթացիկ տարվա ծախսեր՝ ընդամենը	1078000.5	1115591.3	1029349.8	1002526.5	1033167.7

Ծախսերի դինամիկան տարիների կտրվածքով 2014-2015թթ ունի աճի միտում, 2016-2017 թթ.՝ նվազման, իսկ 2018թ. 2017թ. համեմատ գրանցվել է աճ: Ընդ որում, նշենք, որ առաջին երկու տարիներին աճի միտում է նկատվել հատկապես ուսումնական և ուսումնասօժանդակ ծախսերի մասով, 2016-2017թթ. նվազման միտում նույն ծախսերի մասով, իսկ 2018թ. աճ գրանցվել է այլ ծախսերում, որը պայմանավորված է այլ աղբյուրներից ֆինանսավորման


հաշվին կատարված ծախսերով:

Աղյուսակ 16 . Ծախսերի կառուցվածքը՝ մեկ ուսանողի հաշվով 2014-2018թթ.

Հ/Հ	Ծախսեր՝ մեկ ուսանողի հաշվով	2014	2015	2016	2017	2018
1	Ուսանողների ընդհանուր թիվ	3260	2806	2956	2677	2651
2	Ուսումնական ծախսեր	186.4	221.5	198.7	213.1	215
3	Ուսումնաօժանդակ ծախսեր	124.5	153.0	136.4	145.7	151.0
4	Սարքերի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր	15.3	9.4	8.2	8.8	6.1
5	Այլ ծախսեր	4.6	13.8	4.9	6.9	17.7
6	Ընթացիկ տարվա ծախսեր՝ մեկ ուսանողի հաշվով	330.675	397.574	348.224	374.496	389.728

Գծապատկեր 4.

ԱրՊՀ 2018թ. ծախսերի բաշխվածությունը՝ տոկոսներով արտահայտված



Ծախսերի մեծ մասը բաժին է ընկնում ուսումնական ոլորտին՝ դասախոսների վարձատրությանն ուղղվող միջոցներ: Մեծ տեսակարար կշիռ ունեն ուսումնաօժանդակ ծախսերը՝ 39%, որում ներառված են վերանորոգման, ջեռուցման, շենքերի պահպանման և սպասարկման այլ ծախսերը:

2019թ.-ից բյուջեի բաշխումն իրականացնելիս առաջնահերթություն տրվում է ՌԾ-ին ([ՌԾ. Խնդիր 4.2](#)): Այսպես համալսարանի համար որպես գերակա ուղղություն 2019թ. բյուջեի գիտական աշխատանքների գծով ծախսերն ավելացել են 3 անգամ, նույն միտումը պահպանվում է նաև 2020թ. նախահաշվում:

ԶԱՓՈՐՈՇԻՉ Գ. ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

- Հիմքեր
- [Հաշվապահական հաշվառման մասին ԼՂՀ օրենք](#)
 - [Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները և](#)

[միջազգային ստանդարտների ուղեցույցները հրապարակելու մասին ԼՂՀ կառավարության որոշում](#)

- [Պետական կառավարչական և այլ պետական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված «պետական սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների տարեկան նորմաները» հաստատելու մասին ԼՂՀ կառավարության որոշում](#)
- [Պետական կառավարչական հիմնարկների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների լրիվ մաշված \(օգտագործման համար ոչ պիտանի\) գույքի դուրսգրման կարգ](#)
- [Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանը և դրա կիրառման հրահանգը հաստատելու մասին ԼՂՀ ֆինանսների նախարարի հրամանը](#)
- [ԱրՊՀ կանոնադրությունը](#)

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումը ու շարունակականությունը ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականության արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԱրՊՀ-ում ֆինանսական գործունեության համար հիմք են ծառայում [ԱրՊՀ կանոնադրությունը](#), [Հաշվապահական հաշվառման մասին ԼՂՀ օրենքը](#) (ՀՕ-105, 10.05.2004), [Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները և միջազգային ստանդարտների ուղեցույցները հրապարակելու մասին ԼՂՀ կառավարության որոշումը](#) (N 504-Ն, 26.07.2011թ.), [Պետական կառավարչական և այլ պետական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանն ու օգտագործմանը հանձնված «պետական սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների տարեկան նորմաները» հաստատելու մասին ԼՂՀ կառավարության որոշումը](#) (N 85, 06.03.2006թ.), [Պետական կառավարչական հիմնարկների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների լրիվ մաշված \(օգտագործման համար ոչ պիտանի\) գույքի դուրսգրման կարգը](#), ԼՂՀ ֆինանսների նախարարության հրամանը (N34, 04.03.2008թ.), ինչպես նաև [Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլանը և դրա կիրառման հրահանգը հաստատելու մասին ԼՂՀ ֆինանսների նախարարի հրամանը](#) (N 63 – Ն, 12.07.2012):

Չնայած բյուջեում առանձնացված են ՄԿԾ-ների կարիքներին ուղղված հատկացումները, բայց ռեսուրսները պլանավորվում են՝ ՄԿԾ-ների կարիքներից և նպատակներից ելնելով: Համալսարանի ռեսուրսային բազան, ենթակառուցվածքներն ու համապատասխան մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի առկայությունը հնարավորություն են ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար:

ԱրՊՀ կանոնադրության 7-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ համալսարանը ինքնուրույն է որոշում բոլոր տարակարգերի աշխատողների հաստիքացուցակը, իրականացնելու աշխատողների ընտրությունը, նշանակումը, բաշխումը և ատեստավորումը՝ ներառյալ գիտամանկավարժական կազմի համալրումը, պրոֆեսորադասախոսական կազմի, գիտա-

կան եւ ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների պաշտոնների զբաղեցման կարգերը. ԱրՊՀ կառավարման կոլեգիալ և միանձնյա մարմինները՝ խորհուրդը և ռեկտորը, իրականացնում են ֆինանսական կառավարում՝ իրենց տրված լիազորությունների շրջանակում: Խորհուրդը քննարկում և հաստատում է համալսարանի բյուջեն, լսում և գնահատում է տարեկան գործունեության վերաբերյալ ռեկտորի հաշվետվությունը, իրականացնում է ռազմավարական ֆինանսական ծրագրերի հաստատում և ընթացիկ ֆինանսական գործունեության վերահսկողություն: Համալսարանի ֆինանսական կառավարումը իրականացնում է ռեկտորը՝ համաձայն ԱրՊՀ կանոնադրության 16-րդ կետի 1-ին ենթակետի: Նրա անմիջական վերահսկողության տակ են գտնվում ֆինանսական ռեսուրսների կուտակման և բաշխման գործընթացները: Ռեկտորը, ԱՀ օրենսդրությամբ և ԱրՊՀ կանոնադրությամբ սահմանված կարգով, տնօրինում է համալսարանի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները:

Ֆինանսական միջոցների կառավարման և դրանց նպատակային բաշխման հիմքում են տարեկան բյուջեի նախահաշվի կազմումն ու բյուջեի կատարման վերահսկողությունը՝ հաշվետվությունների ներկայացման միջոցով: Նախահաշվում ներկայացվում են ֆակուլտետների և ամբիոնների կողմից մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների պահանջը, ինչպես նաև կառուցվածքային մյուս ստորաբաժանումների, սպասարկող և ուսումնաօժանդակ մարմինների կողմից ուսումնական միջավայրի ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսները: Նախահաշվի կազմման ժամանակ հաշվի են առնվում նաև ռազմավարական նպատակների իրականացմանն ուղղվող միջոցների բաշխումը, արտացոլվում են գալիք տարում պլանավորվող մուտքերը և ֆինանսական միջոցների բաշխման ուղղությունները, որ տարեվերջին ներկայացվում է խորհրդի հաստատմանը:

Բյուջեի նախահաշվի կազմումը և բյուջեի կատարողականը ներկայացվում են համալսարանի խորհուրդ:

Բյուջեի կատարման կառավարման և մշտադիտարկման նպատակով հաշվապահական հաշվառման բաժինը եռամսյակային կտրվածքով ներկայացնում է հաշվետվություն ստացված մուտքերի և ելքերի վերաբերյալ՝ նշելով փաստացի շեղումները:

Պետական, մասնավոր և դրամաշնորհների տեսքով ստացվող ֆինանսական միջոցների կառավարումն իրականացվում է համապատասխան պայմանագրերի և դրանցով սահմանված ընթացակարգերի հիման վրա:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ղ. ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

- Հիմքեր
- [Կանոնակարգ ԱրՊՀ ՊՈԱԿ ուսումնական պլանների ձևավորման և պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների](#)
 - [ԱրՊՀ ռազմավարական ծրագիր](#)

Վերլուծել որակի շարունակական բարելավումն ու կայունությունը ապահովելու նպատակով ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազայի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ռեսուրսների պլանավորումը և բաշխումը իրականացվում է ըստ ՌԾ-ում նախատեսված

խնդիրների ([ՌՇ](#), էջ 21-23):

Ռեսուրսների ժամանակային բաշխումը նախատեսվում և իրականացվում է տարեկան կտրվածքով: Ուսումնական կարիքների բավարարման և արդյունավետ պլանավորման նպատակով ռեկտորի հանձնարարականով վարչական աշխատանքների գծով պրոռեկտորը տարեվերջին կազմում է գալիք տարվա ընթացքում անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցանկը, և վերջինիս հիման վրա կազմվում է գալիք տարվա գնումների պլանը, որում ընդգրկված ապրանքներն ու ծառայությունները գումարային տեսքով արտահայտվում են բյուջեի նախահաշվի համապատասխան հոդվածներում: Նախատեսված ապրանքների և ծառայությունների գնումն իրականացվում է ԱՀ «Գնումների մասին» օրենքի համաձայն: Տարվա ընթացքում կառուցվածքային ստորաբաժանումները, ամբիոնները և ֆակուլտետները, ելնելով կրթական ծրագրերի իրականացման և ընթացիկ գործունեության կազմակերպման պահանջներից, պահանջագրի հիման վրա ձեռք են բերում գնումների պլանում իրենց ներկայացրած ապրանքներն ու ծառայությունները:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուսումնական բեռնվածության բաշխումն իրականացվում է ուսումնական տարվա վերջին: Յուրաքանչյուր ամբիոն ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին է ներկայացնում ամբիոնի դասախոսների համար նախատեսվող բեռնվածությունը, որը նրանց աշխատավարձերի հաշվարկման և բյուջեում աշխատավարձին ուղղվող ռեսուրսների պլանավորման հիմք է ծառայում: Բեռնվածության հաշվարկման համար հիմք են ծառայում ԱրՊՀ ուսումնական պլանների ձևավորման ու պրոֆեսորադասախոսական [անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների որոշման կանոնակարգը և ուսումնական աշխատանքների հաշվառման նորմերը](#) հաստատելու մասին 2015 թվականի հուլիսի 3-ի N 16-Լ, ԱրՊՀ գիտական խորհրդի որոշումը:

Լսարանային ֆոնդի բաշխումն ու պլանավորումը իրականացվում են ֆակուլտետների կողմից ուսումնական տարվա սկզբին՝ ելնելով յուրաքանչյուր մասնագիտությամբ սովորող ուսանողների թվից:

Համալսարանի ռեսուրսային բազան ապահովում է ուսումնական գործունեության իրականացումը, դասավանդողների և ուսումնառողների կարիքների բավարարման և ուսումնական միջավայրի արդյունավետության բարձրացման նպատակով մշտապես իրականացվում են ընթացիկ և կապիտալ վերանորոգման աշխատանքներ, ձեռք են բերվում նոր սարքավորումներ, նորացվում է լսարանների կահավորումը, համալրվում է գրադարանային ֆոնդը: Ուսումնական միջավայրի բարելավումը, պրոֆեսորադասախոսական անձնակազմի եկամուտների մակարդակի բարձրացումը ներառված են ԱրՊՀ 2019-2023թթ. զարգացման ռազմավարական ծրագրում, որի իրականացմամբ ապահովվում է ԱրՊՀ գործունեության կայունությունը՝ նպաստելով որակի բարձրացմանը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

- Հիմքեր
- [Առաջարկությունների, դիմում-բողոքների ներկայացման և քննարկման կարգ](#)
 - [ԱրՊՀ մասին տեղեկատվության տարածման կարգ](#)

Վերուձել ՄՈՒՀ-ում գործող տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության գործընթացների կառավարման քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապա-

տասխան հիմքերից/:

ԱրՊՀ-ում փաստաթղթաշրջանառության կառավարումն իրականացվում է ԱրՊՀ գիտական խորհրդի 2015 թվականի մարտի 18-ի [Առաջարկությունների, դիմում-բողոքների ներկայացման և քննարկման կարգ](#)ն հաստատելու մասին N2-Լ որոշման համաձայն, որով կարգավորվում է պրոֆեսորադասախոսական, վարչատնտեսական, ուսումնաօժանդակ և այլ աշխատակիցների, ուսանողների, այլ քաղաքացիների (այսուհետ՝ դիմողների) կողմից ԱրՊՀ ղեկավար անձանց դիմելու՝ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Մահմանադրությամբ ամրագրված իրավունքի իրացման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև սահմանվում է համալսարանի ղեկավար անձանց կողմից դիմողների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու ընթացակարգը: Փաստաթղթաշրջանառությունը կատարվում է նաև «Համալսարանի տվյալների բազա» էլեկտրոնային ցանցի միջոցով:

Գործավարության կազմակերպումն իրականացնում է ԱրՊՀ ընդհանուր բաժինը:

Համալսարանում տեղեկատվության տարածմանն ու շահակիցների իրազեկվածության բարձրացմանն էապես նպաստում է կայք էջի միջոցով տեղեկատվության տարածումը: Կայքում տեղադրվում է ԱրՊՀ կառավարման մարմինների, կառուցվածքի, հաշվետվությունների, ընդունելության, ֆակուլտետների, ընթացիկ նորությունների, ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության գործունեության վերաբերյալ տեղեկատվություն:

ԱրՊՀ-ում բարելավվել և ընդլայնվել է ներքին լոկալ ցանցը, որին միացված են համալսարանի բոլոր համակարգիչները: Ցանցի գործառույթների ընդլայնումը այժմ գտնվում է զարգացման փուլում: Այն համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի նպատակներից մեկն է և կարևոր քայլ՝ տեղեկատվության փոխանակման արդյունավետության բարձրացման և տեղեկատվության կառավարման տեսանկյունից:

ՏՏ և ՀՄ բաժնի կողմից կատարվում է էլեկտրոնային փաստաթղթերի արխիվացում, իսկ թղթային տարբերակով փաստաթղթերի արխիվացումը իրականացվում է տարին մեկ անգամ՝ հատուկ հրավիրված մասնագետի միջոցով: Համալսարանում գործում է արխիվ, որտեղ էլ պահպանվում են արխիվացված փաստաթղթերը:

Հարկ է նշել, որ ներկայումս շահակիցների տեղեկացվածության աստիճանը զգալիորեն բարձրացել է՝ շնորհիվ լոկալ ցանցի և կայքի, ինչը նպաստել է տեղեկություն հաղորդելու ժամանակի կրճատմանը:

ԶՍՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Հիմքեր

- Առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների ենթակառուցվածքները
- Առողջության և անվտանգության (հաշվի առնելով առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսումնառողներին) պահպանմանն ուղղված ծառայությունների քաղաքականությունն ու ընթացակարգերը

Վերլուծել առողջության և անվտանգության պահպանման ծառայությունների արդյունավետությունը, հիմնվելով շահեկիցների արձագանքների վրա:

Վերլուծել ՄՈՒՀ-ի միջավայրի ապահովության, առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և

արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Բուհում առկա են առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ենթակառուցվածքներ՝ անձնակազմի սպասարկման բաժինը, բուժկետը:

Անձնակազմի սպասարկման բաժինը ենթակա է վարչական աշխատանքների գծով պրոբելտորին և շուրջօրյա ապահովում է համալսարանի անվտանգությունը: ԱրՊՀ պահպանությունն իրականացնում է անձնակազմի սպասարկման բաժնի 21 հաստիքներով՝ պահակ՝ 16, ցերեկապահ՝ 5: Համալսարանում առկա են տարհանման պլաններ և կրակմարիչներ:

Շենքային պայմաններից ելնելով՝ բացակայում է հատուկ կարիքներ ունեցող անձանց համար նախատեսված հարմարավետությունը:

Համալսարանում գործող բուժկետը ընդգրկված է անձնակազմի սպասարկման բաժնում և իր գործառույթներն իրականացնում է պայմանագրային հիմունքներով: Կա երկու բուժկետ՝ բուժկետի վարիչ, բուժքույր հաստիքներով, վարչական և երրորդ մասնաշենքերում, համապատասխանաբար՝ 9.9մ2 և 11.7 մ2 մակերեսներով: Ստորև ներկայացված է առողջության և անվտանգության պահպանմանն ուղղվող միջոցների 2014-2018թթ. տվյալները (աղյուսակ 17): Աղյուսակից երևում է, որ 2014-2018թթ. առողջության և անվտանգության պահպանմանն ուղղվող ծախսերը ընդհանուր ծախսերի կառուցվածքում տատանվում են 0.01%-0.02% սահմաններում և հիմնականում ունեն կայուն բնույթ:

Աղյուսակ 17.

Առողջության և անվտանգության պահպանմանն ուղղվող միջոցները 2014-2018թթ.

Հ/Հ	Ծախսեր	2014	2015	2016	2017	2018
1	Ընթացիկ տարվա ծախսեր՝ ընդամենը	1078000.5	1115591.3	1029349.8	1002526.5	1033167.7
2	Ուսանողների և դասավանդողների առողջության և անվտանգության ապահովման ծախսեր	202.0	276.7	129.8	230.1	282.7
3	Տեսակարար կշիռը ընթացիկ տարվա ընդհանուր ծախսերի կազմում	0.02	0.02	0.01	0.02	0.02

Բացի վերը նշված մարմիններից, ԱրՊՀ-ում գործում է նաև քաղաքացիական պաշտպանության շտաբ, որն կազմակերպում է ուսանողների և աշխատակիցների պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում: Շտաբը գործում է ըստ կանոնադրության, մշակում է օրացուցային պլան, որի հիման վրա իրականացնում է ընթացիկ աշխատանքները: Քաղաքացիական պաշտպանության շտաբը պարբերաբար անց է կացնում դասախոսների և ուսանողների վերապատրաստման դասընթացներ, մասնակցում է քաղաքացիական պաշտպանության տարբեր միջազատումների:

Շահակիցների շրջանում անցկացված հարցումները ցույց են տալիս, որ ուսանողների 69,2%-ն են բավարարված բուժկետի ծառայություններից և 52,6%-ը՝ անվտանգության

ծառայությունից (գծապատկեր 1): Դասախոսների բավարարվածության աստիճանը վերը նշված ծառայություններից կազմում է համապատասխանաբար՝ 92,2% և 72,6% (գծապատկեր 2): Վերլուծությունների արդյունքում կարելի է փաստել, որ համալսարանի բուժկետի կողմից մատուցվող ծառայությունները, միջավայրի ապահովության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունները գործում են արդյունավետ: Հիմնական թերացումը վերաբերում է հատուկ կարիքներ ունեցող անձանց՝ հիմնականում պայմանավորված շենքային պայմաններով:

Բուհը չունի կենտրոնացված սննդի կազմակերպման համակարգ, այն իրականացվում է անհատ ձեռնարկատերերի կողմից վարձակալական հիմունքներով, ընդ որում դրանք երկուսն էն, որոնց սանիտարահիգիենիկ վիճակը վերահսկվում է բուհի կողմից: Համալսարանի հիմնանորոգվող մասնաշենքում այդ խնդիրները հիմնովին լուծված կլինեն:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Է. ՄՈՒՀ- ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

- Հիմքեր
- Կրթական գործընթացների կարգավորմանն ուղղված ծրագրերը
 - Կրթական գործընթացների իրականացման արդյունքների վերլուծությունը (նշելով արդյունավետությունը)
 - Գործընթացի նպատակների իրականացումն ու ձեռքբերումների գնահատման գործիքները

Վերլուծել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման գործող մեխանիզմների և ծառայությունների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության և արդյունավետության գնահատման միջոց է հարցումների կազմակերպմամբ կարիքների բացահայտումը: Կարիքների բացահայտման կառուցակարգերը դեռևս նոր են ներդրվում համալսարանում, այդ նպատակով մշակվել է հարցաթերթիկ, և կատարվում են հարցումներ ուսանողների շրջանում: Հարցաթերթիկում ներառված է ութ հարց լսարանների, համակարգչային լսարանների հասանելիության և հազեցվածության, գործնական աշխատանքների անցկացմանն անհրաժեշտ սարքավորումների, գրադարանային ծառայության, ճաշարանում սննդի որակի, հանրակացարանի պայմանների վերաբերյալ: Ստացված տվյալների հիման վրա նախատեսվում է ստեղծել բազա, որը հնարավորություն կտա վերլուծելու բավարարվածությունը տրամադրվող ռեսուրսներից:

Ռեսուրսների օգտագործման արդյունավետության գնահատման նպատակով, որպես բարելավման ուղղություն, կարելի է առանձնացնել արդյունավետության գնահատման գործիքների և կառուցակարգերի, ինչպես նաև ընթացակարգի մշակումն ու իրականացումը:

Վերլուծել Չափանիշ 7-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
--------------	--------------

<ol style="list-style-type: none"> 1. ԱրՊՀ գործունեության իրականացման համար ենթակառուցվածքների և ռեսուրսների առկայություն, որոնք բավարարում են իրականացվող ՄԿԾ-երի նվազագույն պահանջները: 2. Ուսանողների և հրավիրված դասախոսների համար ԱրՊՀ հանրակացարանի հյուրասենյակների առկայություն: 3. Գործում է գրադարան, ընթերցասրահներ, էլեկտրոնային գրադարան և հրատարակչություն: 4. Ընդլայնվել է համակարգչային ցանցը, որին միացված են համալսարանի բոլոր համակարգիչները՝ ապահովված մշտապես գործող ինտերնետային կապով: 5. Միջազգային դրամաշնորհային ծրագրի առկայություն: 	<ol style="list-style-type: none"> 1. Ֆինանսական ռեսուրսների հավաքագրման անկատարություն: 2. Ֆինանսների նվազեցում: 3. Հաշմանդամություն ունեցող և հատուկ կարիքներով անձանց համար անհրաժեշտ պայմանների բացակայություն: 4. Ոչ բոլոր լսարանների՝ դասավանդման ժամանակակից պահանջներին համապատասխանություն: 5. Փաստաթղթաշրջանառության կենտրոնացված համակարգի բացակայություն:
Հնարավորություններ	Վտանգներ
<ol style="list-style-type: none"> 1. ԱրՊՀ-ն ունի հնարավորություն վերանայել ՄԿԾ-երը ռեսուրսներով ապահովելու մեխանիզմները: 2. Մշակել ՄԿԾ-երի երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն: 3. Առաջիկայում ստեղծել ավելի անվտանգ և ապահով միջավայր: 4. Նորաստեղծ ճաշարան, անվճար Wi-Fi, բուժկետ, մարզադահլիճ, բարեկարգ բակի ունենալու հնարավորություն: 	<ol style="list-style-type: none"> 1. Ուսանողների թվի նվազում՝ պայմանավորված բնակչության սոցիալական խնդիրներով: 2. Պետական բյուջեի հատկացումների նվազում: 3. Տարածաշրջանին բնորոշ արտաքին վտանգների առկայություն:
<p style="text-align: center;">Բարելավման ուղղություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. Հնարավորություններ փնտրել այլընտրանքային աղբյուրներից ֆինանսական միջոցների ձեռքբերման՝ գիտահետազոտական աշխատանքների ընդլայնման և արդյունավետության բարձրացման, լաբորատորիաները տեխնիկական միջոցներով, սարքերով, սարքավորումներով հագեցման, ուսումնական մասնաշենքերի, ուսումնաարտադրական բազաների վերանորոգման, կահավորման, բարելավման, արդիական տեխնիկայով ապահովման և ժամանակակից չափանիշներով մարզադահլիճի կառուցման ու կահավորման համար: 2. ՄՈՒՀ-ի եկամուտների բազմազանեցման նպատակով կատարվող աշխատանքները ընդլայնել մատուցվող ծառայությունների և իրականացվող ծրագրերի շուկայավարման, վճարովի ծառայությունների տեսականու և ծավալների մեծացման, եկամտաբերության բարձրացման, կրթական, հետազոտական և հանրային ծառայությունների բնագավառում միջազգային դրամաշնորհային ծրագրերին մասնակցության ավելացման ուղղություն- 	

ներով:

3. ՄՈՒՀ-ի փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության գործընթացների արդյունավետ կազմակերպման համար բարելավել ներքին ցանցը և ավելի բարձրացնել սերվերի հզորությունը:
4. Բարձրացնել ստորաբաժանումների և ֆակուլտետների ներգրավվածության մակարդակը ֆինանսական միջոցների պլանավորման հարցում:
5. Բարձրացնել ուսումնագիտական ստորաբաժանումների համագործակցության մակարդակը համալսարանի գրադարանի, ուսումնական և գիտական կաբինետների, լաբորատորիաների հետ:
6. Ընդլայնել ուսանողների և դասախոսների ներգրավվածությունը տեղեկատվական ռեսուրսների պլանավորման, ձեռքբերման և օգտագործման աշխատանքներում:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Ը

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

- Աջակցել հասարակության մտավոր, կրթական, տնտեսական, գիտական և մշակութային առաջընթացին՝ նպաստելով համալսարանի ու նրա գործունեության ճանաչմանն ու արտաքին օժանդակությանը:
- Ապահովել հասարակության առջև բուհի հաշվետվողականությունը:
- Ընդլայնել գիտամշակութային ծրագրերն ու միջոցառումները՝ համալսարանի ներուժի արդյունավետ օգտագործմամբ:
- Զարգացնել սոցիալական համագործակցության համակարգը՝ որպես համալսարանի գործունեության հիմնական ուղղություն:
- Ընդլայնել սոցիալական ոլորտի համագործակցային շրջանակները:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

Հիմքեր

- [Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին ԱՀ օրենք](#)
- [Կրթության մասին ԱՀ օրենք](#)
- [Բարձրագույն և հետբուհական մասնագիտության մասին ԱՀ օրենք](#)
- [Բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգ](#)
- [ԱրՊՀ կանոնադրությունը](#)
- [ԱրՊՀ ՊՈԱԿ ֆակուլտետի օրինակելի կանոնադրություն](#)
- [ԱրՊՀ գործունեության հաշվետվություն](#)

Վերլուծել, թե որքանով է ՄՈՒՀ-ի հաշվետվողականությունը նպաստում կառավարման բարելավմանը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԱրՊՀ հաշվետվողականության գործընթացը կանոնակարգվում է [«Կրթության մասին»](#), [«Բարձրագույն և հետբուհական կրթության մասին»](#), [«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»](#) ԼՂՀ օրենքներով, ԱՀ կառավարության մի շարք որոշումներով, ինչպես նաև [«ԱրՊՀ կանոնադրությամբ»](#):

ԱրՊՀ կառավարման բարձրագույն մարմինը [ԱրՊՀ խորհուրդն](#) է, որը, համաձայն ԱրՊՀ կանոնադրության III մասի 11-րդ հոդվածի 3) ենթակետի՝ *«լսում և գնահատում է ԱրՊՀ-ի տարեկան գործունեության վերաբերյալ ռեկտորի հաշվետվությունը»*: Խորհրդի այս անմիջական գործառույթի իրականացումն ապահովում է ԱրՊՀ հաշվետվողականության ընդհանուր համակարգի բնականոն աշխատանքը:

Տարիների ընթացքում ԱրՊՀ-ում ձևավորվել են որոշ ավանդույթներ, հղկվել և կայացել են հաշվետվողականության մեխանիզմներն ու ընթացակարգերը: Մասնավորապես՝ ԱրՊՀ խորհրդի տարեկան նիստին ռեկտորի կողմից ներկայացվում է հաշվետվություն՝ համալսարանի անցած ուստարվա գործունեության մասին, ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի կատարողականը (գլխավոր հաշվապահ) և այլ փաստաթղթեր (վերջինը՝ [ԱրՊՀ 2019-23թթ. զարգացման ռազմավարական ծրագրի](#) իրականացման ընթացքի և այլն):

Հիմնական հաշվետու փաստաթուղթ պետք է համարել ուսումնական տարվա [ԱրՊՀ գործունեության հաշվետվությունը](#): Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին՝ հուլիս ամսին, ԱրՊՀ ռեկտորի կողմից բոլոր ստորաբաժանումներին հանձնարարվում է սահմանված ձևաչափով ներկայացնել հաշվետվություններ: Աշխատանքների համակարգումը դրված է գիտաբարտուղարի և հրատարակչության բաժնի վրա: Ստորաբաժանումների կողմից ներկայացված հաշվետվությունների նախնական տարբերակները ուսումնասիրվում են համապատասխան պրոռեկտորների և ռեկտորի կողմից, որի արդյունքում շտկումների և լրացումների մասին հանձնարարական է տրվում (գրավոր կարգով) ստորաբաժանումներին: Արդյունքում՝ ձևավորվում է հաշվետվության վերջնական տարբերակը: Վերջին տարիներին հաշվետվությունների ծավալը կազմում է շուրջ 1000 էջ, և այն արտացոլում է ԱրՊՀ գործունեության գրեթե բոլոր ուղղությունները, բնագավառներն ու հիմնախնդիրները: Մասնավորապես ներկայացվում է ԱրՊՀ գործունեության առանցքային ցուցանիշները՝ մասնագիտություններ, ուսանողների և շրջանավարտների համակազմ, պրոֆեսորադասախոսական անձնակազմ, գիտական հրատարակումներ, գիտական գործունեություն, միջազգային համագործակցություն, ուսանողական խորհրդի աշխատանքներ և այլն: Հաշվետվությունը ներառում է նաև բոլոր ֆակուլտետների և մի շարք առանձնացված ստորաբաժանումների հաշվետվությունները:

Երկրորդ կարևորագույն փաստաթուղթը համախմբված ֆինանսական հաշվետվություններն են՝ ֆինանսական տարվա եկամուտների և ծախսերի կատարողականը, ֆինանսական գործունեության մասին հաշվետվություն, որը տպագրվում է տվյալ ուստարվա գործունեությունը ներկայացնող հաշվետվությունների գրքում: Դրանք մշակվում են ԱրՊՀ հաշվապահության կողմից:

Համալսարանի կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով սահմանված է նաև ֆակուլտետների մակարդակով հաշվետվողականության համակարգ: ԱրՊՀ խորհրդի հերթական նիստին ընդառաջ (այն, որպես կանոն, հրավիրվում է տարեվերջին կամ հաջորդ տարվա սկզբին) բոլոր ֆակուլտետներում հրավիրվում են ֆակուլտետների մեծ խորհրդի նիստեր, որտեղ ֆակուլտետների ղեկանները ներկայացնում է իր գործունեության մասին հաշվետվություն (նիստին մասնակցում են ռեկտորը, պրոռեկտորները): Դեկանի գործունեությունը դրական գնահատականի չարժանանալու դեպքում՝ [Ֆակուլտետների օրինակելի կանոնադրության](#) պահանջների համաձայն ռեկտորը մեկ շաբաթվա ընթացքում պետք է հրավիրի ֆակուլտետի խորհրդի նիստ՝ ղեկանին անվտանգություն հայտնելու հարցի քննարկման և որոշում ընդունելու համար: Ֆակուլտետների ամբիոնների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվությունները նույնպես քննարկվում են ֆակուլտետի խորհուրդների նիստում ([Ֆակուլտետների օրինակելի կանոնադրություն](#), կետ 62):

Տարվա ընթացքում համալսարանական մի շարք առանձնացված ստորաբաժանումների (կենտրոններ, վարչություններ, ուսանողական գիտական ընկերություն և այլն) ղեկավարները ներկայացնում են իրենց հաշվետվությունները ԱրՊՀ գիտխորհրդին:

Այսպիսով, հստակ է, որ համալսարանում գործում է հաշվետվողականության համակարգ իր համապատասխան մեխանիզմներով, որոնք ամրագրված են ԱրՊՀ կանոնադրությամբ և մի շարք այլ իրավական ակտերով: Ներկայիս հաշվետվողականության համակարգի հիմնական խնդիրն այն է, որ որոշ ստորաբաժանումների աշխատանքները նախապես հստակ չեն պլանավորվում, չեն սահմանվում թիրախային ցուցանիշներ և այնուհետև հաշվետվությունների մշակման և քննարկման գործընթացում առանձին ստորաբաժանումների մասով ներդրված չեն աշխատանքների գնահատման չափելի ցուցիչներ: Այս թիրախային ցուցանիշների և գնահատման չափելի ցուցիչների միջոցով հնարավոր կլինի առավել օբյեկտիվ գնահատել ստորաբաժանման աշխատանքները՝ տալով որակական գնահատականներ: Այս ուղղությամբ համալսարանում աշխատանքներ են տարվում գնահատման առանցքային ցուցանիշների համակարգ ներդնելու նպատակով, որը հիմք կհանդիսանա աշխատանքների պլանավորման և գնահատման առավել արդյունավետ համակարգի ստեղծման համար, հաշվետվողականության համակարգում որակի բարելավման հետ կապված կսահմանվեն հստակ ցուցիչներ:

Համալսարանում առկա համակարգը ապահովում է ոչ միայն ներքին հաշվետվողականությունը, այլև հաշվետվողականությունը պետության և հասարակության առջև (արտաքին հաշվետվողականություն):

ԱրՊՀ խորհրդի կառուցվածքն ապահովում է ԱրՊՀ արտաքին հաշվետվողականությունը, քանի որ խորհրդի անդամների 25 տոկոսը հանդիսանում են հիմնադրի ներկայացուցիչները, ովքեր առաջադրվում են ԱՀ կառավարության կողմից (պետական պաշտոններ զբաղեցնող անձինք), 25 տոկոսը՝ լիազոր մարմնի ներկայացուցիչները (գիտության, կրթության, մշակույթի, տնտեսության ոլորտի ճանաչված գործիչներ, ԱրՊՀ հետ համագործակցող գործատուներ): ԱրՊՀ գիտական խորհրդի անդամների թվում են ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարը, նախարարության մասնագիտական կրթության և գիտության բաժնի վարիչը, իսկ ֆակուլտետների խորհուրդների կազմում ընդգրկվում են նաև համալսարանի հիմնական աշխատող չհանդիսացող՝ տվյալ բնագավառի հեղինակավոր մասնագետներ, այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ, համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության ներկայացուցիչներ:

Բացի ԱրՊՀ խորհրդին ներկայացվող հաշվետվություններից, համալսարանը տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով հաշվետվություններ է ներկայացնում ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարությանը, ԱՀ հարկային ծառայությանը, վիճակագրական ծառայությանն ու պետական այլ գերատեսչություններին:

Հաշվետվողականության գործառույթն իրականացվում է նաև վերնից ներքև սկզբունքով: Այսպես՝ մինչ ԱրՊՀ ռեկտորը խորհրդի նիստում հաշվետվություն ներկայացնելը՝ հաշվետվությունը նիստի գումարման օրից տաս օր առաջ տարածվում է խորհրդի կազմի ներկայացուցիչների շրջանում՝ այդպես նախքան հաշվետվությունը ներկայացնելը հնարավորություն ընձեռելով լայն շրջանակներին ծանոթանալու նիստում քննարկվող փաստաթղթերին, օրակարգի հարցերին և այլն: Նույն մեխանիզմը

կիրառվում է նաև մյուս ստորաբաժանումներում: Նախքան դեկանների, ամբիոնների վարիչների, այլ ստորաբաժանումների պատասխանատուների կողմից հաշվետվություն ներկայացնելը՝ դրանք քննարկվում են համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչների շրջանում:

Կարելի է նկատել, որ հաշվետվողականության ներկայիս համակարգը նպաստում է կառավարման բարելավմանը, արձանագրվում են բոլոր ձեռքբերումները, հնարավոր է լինում տարանջատել հիմնախնդիրները, մշտադիտարկման ենթարկել զարգացման միտումները:

Մասնավորապես հաշվետվողականության թափանցիկությունը նպաստում է կառավարման բնագավառում առկա խնդիրների վերհանմանն ու դրանց լուծման ուղղությամբ քայլեր ձեռնարկելուն: Վերջին տարիներին բնագավառում տեղի ունեցած օպտիմալացումը, որոշ ֆակուլտետների, ամբիոնների միավորումը, նոր ամբիոնների, նոր ստորաբաժանումների ստեղծումը իրենց նպաստն են ունենում ՄՈՒՀ-ի կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Այդուհանդերձ, ինչպես նշվեց, գործող հաշվետվողականության համակարգը առանձին ստորաբաժանումների և աշխատակիցների գործունեության արդյունավետությունը հստակ գնահատելու հնարավորություն չի ընձեռում՝ համապատասխան թիրախային ցուցանիշների և չափելի ինդիկատորների, այլ գործիքների բացակայության պատճառով: Այս ուղղությամբ կատարվում են աշխատանքներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

- Հիմքեր
- ՄՈՒՀ-ի հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմները
 - [Հաշվետվությունները](#), զեկույցները, վերլուծությունները վերջին 5 տարվա ընթացքում
 - [Բարձրագույն և հետբուհական մասնագիտության մասին ԱՀ օրենք](#)
 - [ԱՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգ](#)
 - [Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ](#)
 - [ԱրՊՀ մասին տեղեկատվության տարածման կարգ](#)
 - [Հանրային նշանակություն ունեցող միջոցառումների կազմակերպման ուղեցույց](#)
 - [Ուսանողների հետ տարվող աշխատանքների և կարիերայի](#) բաժնի կանոնադրություն
 - [Հանրային կապերի և լրատվության բաժնի կանոնադրություն](#)

Վերլուծել հասարակությանը հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԱրՊՀ ընթացակարգերի, գործընթացների թափանցիկության և հասանելիության մեխանիզմներն ամրագրված են մի շարք իրավական ակտերում, մասնավորապես՝ «[Բարձրագույն և հետբուհական կրթության մասին](#)» ԼՀ օրենքում (Հոդվածներ 4.4., 6.7.,

11.5, 22.5., [ԱրՊՀ 2019-2023թթ. զարգացման ռազմավարական ծրագրում](#) (Համալսարանի հիմնարար արժեքները, կետ 3, նպատակ 4, խնդիր 4.2 ենթակետ 2, նպատակ 5, խնդիր 5.1), [Հանրային նշանակություն ունեցող միջոցառումների կազմակերպման ուղեցույցում](#) (1-ին կետի 4-րդ ենթակետ, 2-րդ կետի 8-րդ ենթակետ, 3-րդ, 4-րդ կետեր) և մի շարք այլ նորմատիվ փաստաթղթերում ([«ԱՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման» կարգ](#), [«Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ»](#) և այլն):

2013 թվականին համալսարանում ստեղծվեց ՌԻՀՏԱ, ՀԿ և լրատվության բաժինը, որի հիմնական գործառնություններից մեկը եղավ բուհ-հասարակություն տեղեկատվական հոսքերի ապահովումն ու հետադարձ կապի կայուն մեխանիզմների հաստատումը (լրագրողների հետ աշխատանք, տեղեկատվության տրամադրման հարցումների պատշաճ պատասխաններ, ինտերնետային ռեսուրսների զարգացում, աշխատանք ՀԿ-ների, այլ բուհերի, պետական և մասնավոր կազմակերպությունների հետ և այլն): 2018 թ-ից առանձնացավ ՌԻՀՏԱ բաժինը՝ վերանվանվելով [Ուսանողների հետ տարվող աշխատանքների և կարիերայի](#) բաժին, իսկ նորաստեղծ բաժինը կոչվեց [Հանրային կապերի և լրատվության բաժին](#):

Համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները, իրենց գործունեության բնույթից և խնդիրներից, արտաքին շփումների և իրականացվող աշխատանքների հանրային հետաքրքրության աստիճանից կախված, առնչվում են ԱրՊՀ հանրային կապերի աշխատանքներին: Կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները պատասխանատվություն են կրում իրենց կողմից ղեկավարված ստորաբաժանման հանրային կապերին առնչվող աշխատանքների կազմակերպման համար: Համալսարանն ունի մշակված կարգեր՝ [Հանրային նշանակություն ունեցող միջոցառումների կազմակերպման և Տեղեկատվության տարածման](#), որոնցով կանոնակարգվում են հանրային առնչությունները:

ԱրՊՀ PR աշխատանքների վերաբերյալ հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժինը յուրաքանչյուր ուսումնական տարի ներկայացնում է հաշվետվություն՝ կատարված աշխատանքների մասին:

Վերջին տարիներին նոր հարթության վրա է դրվել ռեկտորի և ղեկավարության շփումը լրատվամիջոցների ու հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչների հետ:

Համացանցային ռեսուրսների անընդհատ զարգացումը լուրջ խթան է ԱրՊՀ գործունեության և ընթացակարգերի թափանցիկությանն ու հասանելիությանը: Համալսարանը հանրային հետաքրքրություն ներկայացնող գիտակրթական կառույց է, և պատահական չէ, որ բուհում տեղի ունեցող քիչ թե շատ հանրային նշանակության միջոցառում արժանանում է լրատվամիջոցների ուշադրությանը: Այդ միջոցառումները լուսաբանվում են նաև ԱրՊՀ պաշտոնական կայքի (www.asu.am) [«Նորություններ»](#) բաժնում: Հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով յուրաքանչյուր ուստարում ներկայացվում է ավելի քան 1000 նյութ:

Համալսարանի գործունեությունն արտացոլող հիմնական հաշվետվությունները ներկայացվում են ՋԼՄ-ների ներկայացուցիչներին: Պարբերաբար հրավիրվում են մամուլի ասուլիսներ, ռեկտորը հաճախակի հանդիպում է լրագրողների հետ: Հաշվետվությունները տեղադրվում են պաշտոնական կայքի [Հաշվետվություններ](#) բաժնում, որն ապահովում է հասանելիություն հանրությանը ([Առկա են վերջին 5 տարվա](#)

հաշվետվությունների էլեկտրոնային տարբերակները): Կայքում տեղադրված են ոչ միայն հաշվետվությունները, այլև բոլոր կանոնադրություններն ու կանոնակարգերը, ԱրՊՀ խորհրդի, գիտական խորհրդի որոշումները, որոնք ամփոփված են [Արցախի պետական համալսարանի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի ժողովածուում](#), որն էլ հասանելի է պաշտոնական կայքում:

Ըստ ԱրՊՀ խորհրդի աշխատակարգի՝ խորհրդի նիստերն արձանագրվում են: Նույնը վերաբերում է նաև գիտական խորհրդին: Նիստը լուսաբանվում և ենթակա է հրապարակման համալսարանի ինտերնետային կայքում:

ԱրՊՀ-ում գործում է [«Արցախի համալսարան»](#) ամսաթերթը (հրատարակվում է 1993 թվականից), որն անդրադառնում է բուհի կրթական, գիտական, հասարակական և մշակութային գործունեությանը: Այն տարածվում է ոչ միայն համալսարանի ներսում (բաժանվում է ուսանողներին և աշխատակիցներին), այլև շահագրգիռ այլ կազմակերպություններում (առաքվում է այլ բուհեր, պետական գերատեսչություններ): Բացի դրանից, ամիսը մեկ անգամ լույս է տեսնում նաև ուսանողական [«Քո ժամանակը»](#) թերթը, որն ազատ հարթակ է ստեղծագործող ուսանողների ինքնադրսևորման համար: Թերթերի էլեկտրոնային տարբերակները հասանելի են պաշտոնական կայքում, և հնարավորություն է ընձեռվում էլեկտրոնային եղանակով ծանոթանալ նաև բոլոր համարներին:

Համալսարանում տեղի ունեցող գործընթացների թափանցիկությունն ապահովում են նաև լույս տեսնող բազմաթիվ բուկլետներն ու ալբոմները, տեսաֆիլմերը: Վերջին նկարահանվածներից [«Նվիզախում»](#) խորագրով տեսանյութը, որտեղ 2016 թ. Ապրիլյան պատերազմին մասնակցած ԱրՊՀ ուսանողները ականատեսի աչքերով պատմում են պատերազմի մասին, մեծ արձագանք գտավ, իսկ առհասարակ համալսարանի մասին պատմող ֆիլմերը, տեսանյութերը ցուցադրվում են նաև դպրոցներում, այլ գործատուների հետ տեղի ունեցող հանդիպումների ժամանակ, տեղադրված են համացանցում:

Ե՛վ թերթը, և՛ ձեռնարկներն ու ֆիլմերը նույնպես տեղադրվում են ԱրՊՀ ինտերնետային կայքում, որն իր ծավալների քանակով առաջատարն է Արցախի բուհերի մեջ: Կայքի զարգացումն ունի բավական դրական դինամիկա:

Կայքը գործնական նշանակություն ունի ուսանողների, ասպիրանտների, հայցորդների, դիմորդների համար, որոնք կայքում կարող են գտնել ամենաանհրաժեշտ տեղեկատվությունը համալսարանի, իրենց ուսումնական գործընթացի մասին:

Կայքը դարձել է համալսարանի մասին ամբողջական տեղեկատվության հիմնական աղբյուրը:

ԱրՊՀ պաշտոնական www.asu.am կայքի հաճախելիությունն ու դիտումները վերջին 5 տարիների ընթացքում

ԱրՊՀ պաշտոնական կայք	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.	2019թ.
Այցեր	18307	27726	27305	32329	34889
Դիտումներ	53417	75399	74977	77736	92743

Այն առաջնորդվում է օպերատիվության սկզբունքով՝ ապահովելով բուհի յուրա-

քանչյուր կառույցի վերաբերյալ թարմ և բազմակողմանի տեղեկատվություն:

Պարբերաբար թարմացվում է համալսարանի մասին տեղեկատվությունը, կայքի համապատասխան բաժնում տեղադրված են բուհի կանոնադրությունն ու ռազմավարական ծրագիրը: Կատարվում են նաև համապատասխան փոփոխություններ և լրացումներ. մասնավորապես, վարչական կառուցվածքում կայքի այցելուները կարող են ոչ միայն անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ բուհի ղեկավար մարմինների՝ ռեկտոր, պրոռեկտորներ, այլև վերջիններիս հետ կապ հաստատել էլեկտրոնային հասցեների միջոցով:

Համալսարանի ստորաբաժանումներից յուրաքանչյուրի գործունեության, խնդիրների և նպատակների մասին այցելուն կարող է նորացված տեղեկատվություն ստանալ համապատասխան բաժնից:

[«Ֆակուլտետ»](#) բաժնում ևս պարբերաբար լրացվում, խմբագրվում և անհրաժեշտ փոփոխությունների են ենթարկվում բուհի ֆակուլտետների, ամբիոնների և դասախոսների մասին տեղեկատվությունը:

Առկա և հեռակա բաժիններում ընդունելության քննություններին ընդառաջ [«Չիմորդ»](#) բաժնում տեղադրվում են մասնագիտությունների նորացված ցանկը, այդ ուսումնական տարվա ընդունելության կարգը, ամբողջական տեղեկատվություն քննությունների և վարձավճարների վերաբերյալ:

Ուսանողական կյանքի լուսաբանումը բուհի կայքի կարևորագույն խնդիրներից է.

[Ուսանողական խորհրդի](#) և [Ուսանողական գիտական ընկերության](#) մասին տեղեկատվություն կարելի է գտնել համապատասխան բաժիններում:

Կայքը նախապես տեղադրում է անցկացվող միջազգային, հանրապետական գիտաժողովների ծրագրերը, հայտարարությունները, անհրաժեշտ այլ տեղեկությունները, ապա օպերատիվ լուսաբանում գիտաժողովների աշխատանքները:

Առավել հաճախակի թարմացվում է [«Հայտարարություններ»](#) բաժինը. տեղադրվում են ուսանողական տարբեր ծրագիր-մրցույթների, կայանալիք բազմաբնույթ միջոցառումների, հանդիպումների և դասախոսությունների մասին տեղեկատվությունները:

ԱրՊՀ գործունեությունը լուսաբանվում է նաև ամենատարբեր զանգվածային լրատվամիջոցների կողմից:

Կայքում տեղադրված են համալսարանի կյանքը ներկայացնող տեսահոլովակներ:

Բուհում մեծ ուշադրություն է դարձվում տեղեկատվության ազատության խնդրին: Վերջին տարիներին համալսարանը որդեգրել է լրագրողների հետ սերտ համագործակցության, նրանց մասնագիտական գործունեությանը համակողմանի աջակցություն ցուցաբերելու քաղաքականություն: Նույն մոտեցումն է ցուցաբերվում նաև քաղաքացիների դիմում-նամակների պատասխաններին, որոնք տրվում են տեղեկատվության ազատության մասին օրենքի պահանջների համաձայն:

Հասարակությանը հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմների արդյունավետությունը նպաստում է ՄՈՒՀ-ի դրական վարկանիշի ձևավորմանն ու ամրապնդմանը, ինչը փաստում են մամուլում ՄՈՒՀ-ի վերաբերյալ դրական հրապարակումները, սոցիալական մեդիայում տեղ գտնող դրական արձագանքները, դիմորդների թվի աճը՝ համեմատած հանրապետությունում գործող այլ ՄՈՒՀ-երի դիմորդների թվի հետ, թողարկած շրջանավարտների պահանջարկը, աշխատող շրջանավարտների վերաբերյալ գործատուների գոհունակությունն ու դրական արձագանքը:

Սակայն հանրության, ինչպես նաև լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ տարվող աշխատանքները դեռևս շատ չեն կարևորվում ֆակուլտետներում և մի շարք այլ ստորաբաժանումներում, և որոշ դեպքերում կատարվում է կամայական սկզբունքով: Այդ իսկ պատճառով ԱրՊՀ ռեկտորի կողմից հրահանգ տրվեց բնագավառը կանոնակարգել և առաջնորդվել ըստ կանոնակարգի:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

- Հիմքեր
- [ԱրՊՀ մասին տեղեկատվության տարածման կարգ](#)
 - [Հանրային նշանակություն ունեցող միջոցառումների կազմակերպման ուղեցույց](#)
 - Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հաստատման քաղաքականությունը և ընթացակարգերը
 - Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի գործիքները

Վերլուծել ՄՈՒՀ-ում գործող հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԱրՊՀ-ն գիտաժողովների, հանդիպումների, տարբեր միջոցառումների ժամանակ ապահովում է լրատվամիջոցների ներկայությունը, մամուլի համար պատրաստում է հաղորդագրություններ, հանրապետական մամուլի էջերում տպագրության հանձնում բուհին վերաբերող հոդվածներ, հրապարակումներ, հետևում օրվա մամուլին, անհրաժեշտության դեպքում՝ պատասխանում դրանց, կազմակերպում հեռուստահաղորդումներ, տալիս հայտարարություններ, պատրաստում գովազդային հոլովակներ: Բազմաթիվ հեռուստահաղորդումներ են կազմակերպվել Արցախի հանրային հեռուստառադիոընկերությունում: Մեծ թվով հոդվածներ են հրապարակվել հանրապետական՝ մեծ սփռում ունեցող թերթերում: Ամսվա ընթացքում բազմաթիվ լուրեր և հոդվածներ են տպագրվում հանրապետական մամուլում:

Կազմակերպվում են հեռուստահաղորդումներ, ասուլիսներ համալսարանի ներկայացուցիչների պրոռեկտորների, դեկանների, դասախոսների մասնակցությամբ:

Հետադարձ կապի ապահովման նպատակով ստեղծվել են համալսարանի մասին պատմող ֆիլմեր եւ լուսանկարների արխիվ: Յուրաքանչյուր տարի պատրաստվում է ֆիլմ-հաշվետվություն, որը ոչ միայն տեղադրվում է կայքում, այլև պահպանվում և ցուցադրվում է տարբեր միջոցառումների ընթացքում:

ԱրՊՀ ռազմավարական կարևորագույն խնդիրներից է հասարակայնության հետ կապերի զարգացումը և հանրային ծրագրերում համալսարանի ակտիվ ներգրավումը («ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագիր 2019-23 թթ.», նպատակ 5, խնդիր 5.2):

Համալսարանի ռեկտորի կողմից հաստատվել է [Հանրային նշանակության միջոցառումների կազմակերպման ուղեցույցը](#) (Հրաման N3-Լ 18.0.2015թ.) ինչպես նաև [«Տեղեկատվության տարածման կարգը»](#) (Հրաման N3-Լ 22.06.2018թ.): Այն կարգավորում է հանրային նշանակության միջոցառումների կազմակերպման ընթացակարգը՝ հասարակության հետ կապի և լրատվամիջոցների հետ աշխատանքի տեսանկյունից, սահմանում է հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող աշխատակարգը:

Մակայն որպես հասարակայնության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի ապահովման արդյունավետ միջոց՝ նախևառաջ կիրառվում է համացանցը: Կայքի այցելուները իրենց հուզող հարցերի կամ լրացուցիչ տեղեկությունների համար հնարավորություն ունեն հարցեր ուղղել համալսարանի տարբեր վարչական և գիտակրթական մարմիններին կայքում գործող [«Հարց-Պատասխան»](#) բաժնի միջոցով: Հարցերն օպերատիվ կերպով ընթերցվում են, հասցեագրվում համապատասխան ստորաբաժանման ղեկավարին, որի պատասխանն էլ տեղադրվում է կայքում: Մա ապահովում է համալսարանի և հասարակության միջև [«վիրտուալ երկխոսություն»](#):

Բացի այդ, ԱրՊՀ պաշտոնական էլ. փոստին (rector.am, lratu.asu@mail.ru) ստացվում են բազմաթիվ նամակներ, որոնք նույնպես արագ արձագանք են գտնում:

Չանագան սոցիալական ցանցերում (*Facebook, Twitter, Google +, Instagram*) համալսարանն ունի իր պաշտոնական էջերը, իսկ առանձին ստորաբաժանումներ ունեն նաև ոչ պաշտոնական էջեր, որոնք նույնպես նպաստում են հանրության հետ կապի ապահովմանը: Մասնավորապես՝ [Facebook](#) սոցիալական ցանցում գործող ԱրՊՀ պաշտոնական էջը, որը 2019 թ. ապրիլ ամսվա տվյալներով ունի ավելի քան 6500 հետևորդ, բավականին ակտիվ է: Այդ էջի միջոցով նույնպես ուսանողներն ու աշխատակիցները, դիմորդներն ու շրջանավարտները, ինչպես նաև լայն հասարակայնության ներկայացուցիչները իրենց հետաքրքրող հարցերն են ուղղում, ստանում պատասխաններ, թողնում կարծիքներ և գնահատականներ համալսարանի գործունեության տարբեր բնագավառների մասին:

Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնի կողմից իրականացվում է պարբերական մամուլի և ինտերնետային պարբերականների ամենօրյա մշտադիտարկում (մոնիթորինգ), առանձնացվում են ԱրՊՀ-ին վերաբերող բոլոր նյութերը, դրանք վերլուծվում և ուղարկվում են շահագրգիռ մարմիններին: Այս գործընթացի արդյունքում համալսարանին վերաբերող ցանկացած հրապարակում չի վրիպում ԱրՊՀ ղեկավարության ուշադրությունից, անհրաժեշտության դեպքում լինում են համապատասխան արձագանքներ, իսկ մոնիթորինգի վերլուծությունը հիմք է հանդիսանում տարվող քաղաքականության գնահատման և վերանայման համար:

Հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի գործիքներից են նաև հասարակական կարծիքի ուսումնասիրման տարբեր մեխանիզմները: Հասարակական կարծիքի ուսումնասիրման միջոցով հնարավոր է դառնում առկա տարբեր հիմնախնդիրների բացահայտումն ու համապատասխան առաջարկությունների մշակումը (ուսանող-դասախոս փոխհարաբերություններ, կրթական ոլորտի առկա խնդիրներ, մամուլում ԱրՊՀ մասին քննադատական նյութերի վերլուծություններ, ԱրՊՀ պաշտոնական կայքի [«Հարց/Պատասխան»](#) բաժնում զետեղված նամակների վերլուծություններ, ԱրՊՀ արտաքին և ներքին վարկանիշին վերաբերող քննարկումներ, էլեկտրոնային ռեսուրսների միջոցով ստացված կարծիքներ):

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ հասարակության հետ կապերի բնագավառում հետադարձ կապի գործիքների կիրառումը և այդ մեխանիզմների կարևորումը աստիճանաբար է զարգացել և դեռևս ունի կայացման խնդիր: Պետք է նշել, որ այդ գործիքների կիրառումը երբեմն համակարգված չէ և կրում է տարերային բնույթ: Ընդհանուր առմամբ, ԱրՊՀ մի շարք ստորաբաժանումներ ինքնուրույն են որոշում իրենց խնդիրների լուծման համար կիրառվող հետադարձ կապի գործիքներն ու մեխանիզմները: Առկա փորձն ու

ներուժը հնարավորություն են ընձեռում առաջիկա տարիների ընթացքում այս գործընթացները դարձնել առավել ինստիտուցիոնալ և կառավարվող:

ԶՍՓՈՐՈՇԻՉ Պ. ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքի (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Հիմքեր	<ul style="list-style-type: none">• ԱրՊՀ կանոնադրությունը• Հաստատության կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման քաղաքականությունն ու ընթացակարգերը
--------	---

Վերլուծել հաստատության կողմից լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների իրականացման արդյունավետությունը և արդիականությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ներկայացնել քաղաքացի դաստիարակելու գործում հաստատության ունեցած դերն ու կատարած ներդրումները: Նշել հիմնական ձեռքբերումներն ու խոչընդոտները:

Համալսարանում պարբերաբար կազմակերպվում են վերապատրաստումներ տարբեր մասնագետների, մեծամասամբ՝ հանրակրթության ոլորտի մասնագետների և ուսուցիչների համար: Համալսարանականները այցեր են կազմակերպում նաև հանրակրթական դպրոցներ, զորամասեր, մանկատներ, տուն-ինտերնատ, կրթական կենտրոններ, որտեղ հանդես են գալիս դասախոսություններով, կրթական, գիտական, մշակութային տարաբնույթ ուսուցողական, ճանաչողական դասախոսություններով, ծրագրերով, միջոցառումներով:

Համալսարանի զարգացման ռազմավարական ուղղության նպատակը կրթության որակի ապահովումն է, որը միտված է է աջակցել հասարակության մտավոր, կրթական, գիտական, և մշակութային առաջընթացին:

ԱրՊՀ գիտելիքների և արժեքների փոխանցման ամենակարևոր մեխանիզմը գործող մասնագիտությունների գծով բարձրագույն ուսումնական հաստատություն լինելու հանգամանքն է, որը ենթադրում է գիտելիքի փոխանցումը հասարակության լայն շերտերին: Այս տեսանկյունից բուհը բացառիկ նշանակություն ունի հանրապետության մանկավարժական կադրերի պատրաստման, ինչպես նաև հանրապետության գրեթե բոլոր բնագավառներին մրցունակ և արհեստավարժ մասնագետներ տալու առումով, ինչն ամրագրված է նաև բուհի առաքելության մեջ: Այս ուղղությամբ բուհն ունի հսկայական ձեռքբերումներ վերջին տարիներին:

Հասարակության շրջանում գիտելիքի տարածումը, նրա կրթական և գիտամշակութային մակարդակի բարձրացումը ամրագրված է որպես ԱրՊՀ հիմնական խնդիրներից մեկը ([ԱրՊՀ կանոնադրություն](#)): Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրում սահմանված են մի շարք խնդիրներ, որոնց նպատակն է աջակցել հասարակության մտավոր, կրթական, տնտեսական, գիտական և մշակութային առաջընթացին ([ՌՕ, խնդիր 5.2](#)):

Առաջին հերթին հարկ է նշել, որ ԱրՊՀ-ն իր ուսանողի առջև ունի ստանձնած պարտավորություն. պատրաստել բարձր որակավորում ունեցող մասնագետ, կրթել ու դաստիարակել հայրենասեր քաղաքացի և նրան փոխանցել գիտելիքներ ու արժեքներ:

Համալսարանը նյութապես աջակցում է սոցիալապես անապահով ուսանողներին՝ տրամադրելով զեղչեր: Ուսանողների հետ տարվող աշխատանքները մեծապես նպաստում են պատասխանատու քաղաքացի պատրաստելու առաքելությանը (մանրամասն տե՛ս 4-րդ չափանիշ), և ներկայումս ԱրՊՀ շրջանավարտները Արցախի Հանրապետության հանրային կյանքի տարբեր բնագավառներում ունեն կարևոր դերակատարություն:

ԱրՊՀ-ն ունի նաև համազգային նշանակություն և տարիներ շարունակ նրա գործունեությունը չի սահմանափակվել միայն կրթական ծառայությունների մատուցմամբ: Մայր բուհի շահակիցներն են նաև հասարակության լայն շերտերի ներկայացուցիչները: Այդ իսկ պատճառով հասարակական պատասխանատվության խնդիրը շատ խորն է ներդրված համալսարանում, որն իր հիմնադրման օրվանից եղել է երկրի հասարակական, քաղաքական, մշակութային իրադարձությունների կիզակետում: Մարդ-քաղաքացի կերտելու լավագույն դրսևորումներից էր, որ ԱրՊՀ-ն /այդ ժամանակ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտ/ ակտիվ մասնակցություն ունեցավ 1988թ. Արցախյան շարժմանը, ապա Արցախի Հանրապետության անկախության կերտման գործում: Արական սեռի ուսանողներից թվով 72-ը՝ Արցախյան պատերազմի տարիներին, ևս 3-ը՝ 2014-2016թթ. սահմանային սրացումների ժամանակ իրենց կյանքն են զոհաբերել Արցախի անկախության կերտման ու պաշտպանության համար մղված պայքարում: Նրանց հիշատակին համալսարանի պուրակում կանգնեցված է հուշակոթող, որին մշտապես իրենց հարգանքի տուրքն են մատուցում համալսարանականները և ներկայացած հյուրերը:

Հասարակությանը արժեքների փոխանցման վաղուց ներդրված մեխանիզմ են հանրային դասախոսությունները շրջաններում և զորամասերում, հանդիպումները հասարակության ամենատարբեր խավերի ներկայացուցիչների հետ, տարբեր քաղաքացիական շարժումներին և ծրագրերին մասնակցությունը (բնապահպանական, բարեգործական և այլն):

ԱրՊՀ-ն կարևորում է մրցունակ գիտական և նորարարական մարդկային ներուժի ձևավորումը, որը կկարողանա հետագոտել և շարունակական լուծումներ առաջարկել Արցախի Հանրապետության հիմնախնդիրների վերաբերյալ, կնպաստի հանրապետության անվտանգության ամրապնդմանը, կայուն զարգացմանը, միջազգային ինտեգրմանը ([ՌԾ, Նպատակ 2](#)):

Ազգային արժեքների պահպանման ու ամրապնդման տեսանկյունից խիստ կարևոր է համալսարանի՝ որպես հայագիտական կենտրոնի դերակատարությունը, որի գործունեությունն ուղղված է ազգային ինքնության պահպանմանը, հայրենիք-սփյուռք հարաբերությունների, ինչպես նաև ազգային հիմնախնդիրների ուսումնասիրմանը:

ԱրՊՀ-ն կազմակերպում է բարձրագույն, հետբուհական մասնագիտական և լրացուցիչ կրթություն, իրականացնում կադրերի վերապատրաստում և որակավորման բարձրացում, գիտահետազոտական աշխատանքներ, մատուցում խորհրդատվական և փորձագիտական ծառայություններ, իրականացնում հրատարակչական աշխատանքներ, կազմակերպում մշակութային միջոցառումներ և այլն:

Համալսարանն աշխատանքներ է իրականացնում հանրակրթական դպրոցների աշակերտների և դիմորդների հետ՝ մատուցելով խորհրդատվական ծառայություններ նրանց մասնագիտական կողմնորոշման բնագավառում (մանրամասն տե՛ս *չափորոշիչ 4.1*):

ԱրՊՀ-ն ունի մեծ ներդրում նաև հանրապետության գիտական մտքի ձևավորման վրա: Լինելով խոշոր գիտական կառույց՝ համալսարանի մի շարք դասախոսներ ներգրավված են հանրապետությունում իրականացվող գիտական թեմաներում և ծրագրերում: Ըստ էության, ԱրՊՀ-ն տալիս է հանրապետության գիտական արտադրանքի մեծ մասը: ԱրՊՀ-ն հրատարակում է նաև գիտական հանդեսներ, որոնցից են՝ [«ԱրՊՀ գիտական տեղեկագիր»](#) և [«Հայագիտական հանդես»](#) պարբերականները, որոնց էլեկտրոնային տարբերակները հասանելի են համալսարանի պաշտոնական կայքում, ինչպես նաև մենագրություններ, դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ և այլն:

Համալսարանի գիտական գրադարանը հնարավորություն է ընձեռում նաև ոչ համալսարանականներին օգտվելու գրադարանի ֆոնդերից:

Համալսարանը մատուցում է նաև հոգեբանական խորհրդատվական ծառայություններ, որն իրականացնում է ԱրՊՀ հոգեբանական կենտրոնը: Նրա ծառայություններից տարեկան օգտվում է շուրջ 300 մարդ, կազմակերպվում են բազմաթիվ դասընթացներ ուսուցիչների, հոգեբանների, սպաների համար:

Համալսարանում գործող իրավաբանական կլինիկան ևս հանրությանը մատուցում է անվճար իրավաբանական աջակցություն՝ խորհրդատվություն, որից օգտվում են քաղաքացիներ հանրապետության տարբեր բնակավայրերից:

Համալսարանը կարևորում է նաև ՀՀ, Միջուռքի և արտերկրի հետ աշխատանքները: Այդ նպատակով 2018 թ.-ից հիմք է դրվել միջազգային ամառային ճամբարի կազմակերպմանը, որը խոստանում է լինել ամենամյա: Ամառային ճամբարը, որին մասնակցում են Արցախի, ՀՀ և արտերկրի բուհերի ուսանողներ, հանրությանը լրացուցիչ գիտելիք, արժեքներ փոխանցելու հարթակ է, ինչպես նաև Արցախը միջազգային հարթակներում ճանաչելի դարձնելու միջոց:

Ունենալով գիտելիքների և արժեքների փոխանցման ավանդույթներ և այդ բնագավառում կատարելով մեծ աշխատանք՝ բացակայում են, սակայն, դրանց գնահատման և հետադարձ կապի մեխանիզմները գնահատող ցուցիչներ:

Անհրաժեշտ է ստեղծել ինչպես ուսանողների և շրջանավարտների շրջանում անցկացվող ամենամյա հետազոտությունների, այնպես էլ հասարակական կարծիքի ուսումնասիրությունների համար հստակ և համակարգված մեխանիզմներ ու գործիքներ՝ նպաստելու ներքին և արտաքին հաղորդակցության արդյունավետությանը:

Այս ուղղությամբ կատարվում են աշխատանքներ:

Վերլուծել Չափանիշ 8-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
<p>1. ԱրՊՀ-ում ներդրվել է հաշվետվողականության համակարգ, որի շնորհիվ նրա գործունեության մասին հաշվետվությունները ներկայացվում են շահակիցներին և հանրությանը:</p> <p>2. ԱրՊՀ հաշվետվությունները քննարկվում են տարբեր մակարդակներում, ապահովվում է հաշվետվությունների քննարկման հրապարակայնությունը և հաշվետվությունների հասանելիությունը:</p> <p>3. ԱրՊՀ-ում գործում է լրատվության և հանրության հետ կապերի բաժինը, ապահովված են համալսարանում իրականացվող գործընթացների թափանցիկությունն ու հասանելիությունը:</p> <p>4. ԱրՊՀ-ում ներդրված են հասարակայնության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները:</p> <p>5. ԱրՊՀ-ում ներդրված՝ հասարակայնության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմները հիմնվում են հանրային կարծիքի վրա /ըստ ՋԼՄ-ների հրապարակումների և ոչ միայն/:</p> <p>6. ԱրՊՀ գործունեության բոլոր ոլորտները միտված են գիտելիքի ստեղծմանն ու տարածմանը:</p> <p>7. ԱրՊՀ-ն ունի հանրային և համազգային նշանակություն:</p>	<p>1. Հաշվետվողականության և հետադարձ կապի գործընթացները առավել չափելի գնահատման ցուցիչների կարիք ունեն:</p> <p>2. Չնայած նրան, որ հանրության հետ հետադարձ կապի գործիքների կիրառման անհրաժեշտությունն ու կարևորությունը ամրագրված են ընթացակարգերով, դեռևս այ գործիքների կիրառումը բավարար համակարգված չէ, երբեմն կրում է տարերային բնույթ:</p> <p>3. Լրացուցիչ և խորհրդատվական ծառայությունների աճի տեմպերը ցածր են, և ոչ բոլոր բնագավառներն են հստակ համակարգված:</p>
ՀՆԱՐՄՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՎՏԱՆԳՆԵՐ
<p>1. Լրացուցիչ պարապմունքները և խորհրդատվությունների պահանջարկը այդ ծառայությունների որակական և քանակական բարելավման պայման է:</p> <p>2. Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) դինամիկ զարգացումը կարող է նպաստել հետադարձ կապի և հաշվետվողականության որակի բարձրացմանը:</p> <p>3. Կրթության ոլորտի առանցքային դերակատարների ներգրավումը կառավարման մարմիններում համալսարանին կրթության</p>	<p>1. Գտնվելով անընդհատ Ադրբեջանի կողմից կիբեռ հարձակման ենթարկվելու վտանգի գոտում, մանավանդ, երբ նախադեպը եղել է, հարձակվել և ջարդել են ԱրՊՀ պաշտոնակալ կայքը, ԱրՊՀ լրատվության և հանրության հետ կապերի բաժինը զերծ է մնում առցանց հարթակում գովազդային ակտիվություն ցուցաբերելուց, քանի որ վտանգ կա, որ, օրինակ, ԱրՊՀ ֆեյսբուքյան էջի գովազդն ակտիվացնելու դեպքում էջը տեսանելի կլինի ադրբեջանական տիրույթում և կենթարկվի կիբեռհարձակման՝ խաթարելով համալսարանի էլեկտրոնային ռեսուրսների</p>

<p>քաղաքականության վրա ազդելու նպատակով պայմաններ է ստեղծում:</p>	<p>բնականոն աշխատանքը: Վերոնշյալ հանգամանքներով են պայմանավորված առցանց հարթակում էլեկտրոնային ռեսուրսների դիտումների թվաքանակը, և, անշուշտ, եթե չլինեին այդ վտանգներն ու սահմանափակումները, արդյունքներն ավելին կլինեին, քան կան:</p> <p>2. Արցախի քաղաքական կարգավիճակի, մասնավորապես Ադրբեյջանի ազդեցիվ քաղաքականության դրսևորումը նաև մեդիադաշտում, տեղեկատվական պատերազմը սպառնալիքներ են նաև համալսարանի էլեկտրոնային ռեսուրսների զարգացման, տեղեկատվական դաշտում անվտանգ գործունեություն ծավալելու համար:</p>
---	--

ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ԵՎ ՎՏԱՆԳՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՎՈՂ ՈՒՂԻՆԵՐԸ

1. Հաշվետվողականության և հետադարձ կապի գործընթացների համար մշակել գնահատման մեխանիզմներ, սահմանել առավել չափելի գնահատման ցուցիչներ:
2. Հնարավորինս համակարգել հանրության հետ հետադարձ կապի գործիքների կիրառումը:
3. Նպաստել դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին՝ էլեկտրոնային ռեսուրսներով տարվող աշխատանքներում ներառելով նաև խաղաղասիրության և տարածաշրջանում կայունության պահպանման բաղադրիչը: Հակամարտության կարգավորման արդյունքում բնականոն զարգացում կապրեն նաև ՄՈՒՀ-ի էլեկտրոնային ռեսուրսները:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ Ը

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

Որպես Արցախի Հանրապետության խոշոր գիտակրթական օջախ՝ ԱրՊՀ-ն ձգտում է դառնալ հաստատություն, որը առաջնորդվում է գիտակրթական համակարգի միջազգայնացման ու եվրոպական ինտեգրման, ինչպես նաև պետության համար արդիական նշանակություն ունեցող ռազմավարական հիմնախնդիրներով:

ԱրՊՀ՝ միջազգային գիտակրթական համակարգին միանալու ձգտումը բախվում է քաղաքական սահմանափակումների, սակայն նրա գործընկեր բուհերի թիվը տարեցտարի ավելանում է, աշխարհագրությունը՝ ընդլայնվում: ՀՀ առաջատար բուհերի հետ գործուն և արդյունավետ համագործակցությունը հնարավորություն է տալիս որոշակիորեն փոխհատուցելու քաղաքական գործոններով պայմանավորված բացը ([ՌԾ, համալսարանի հիմնարար արժեքները – 6](#)):

ԱրՊՀ-ն ապահովում է համալսարանի արտաքին կապերի համակողմանի զարգացումը, խթանում գործունեության միջազգայնացումը, որը կանխորոշվում է հետևյալ գերակայություններով ([ՌԾ, Նպատակ 6](#))՝

- ընդլայնել և բազմազանեցնել համալսարանի միջազգային կապերը, խթանել միջազգայնացման շարունակական գործընթացները արտերկրի համալսարանների և բարձրագույն կրթության միջազգային կառույցների հետ ինստիտուցիոնալ ու ծրագրային մակարդակներում.
- ընդլայնել համալսարանի միջազգային գիտական համագործակցությունը, ձգտել համալսարանի ներգրավմանը արտերկրյա հետազոտական տարածքին.
- բազմազանեցնել գործընկերային կապերը համալսարանի պատվիրատու կազմակերպությունների և հանրապետական հանրային կառույցների հետ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:	
Հիմքեր	<ul style="list-style-type: none"> • Արտաքին կապերի և միջազգայնացման ռազմավարությունը • Արտաքին կապերի և միջազգայնացման տարեկան հաշվետվությունները (վերջին 3 տարվա համար) • ԱրՊՀ ռազմավարական ծրագիր
Վերլուծել փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող	

քաղաքականության ու ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Արցախի պետական համալսարանի արտաքին կապերի հաստատմանն ուղղված և միջազգայնացմանն առնչվող գործառնությունը հիմնված է ԱրՊՀ կանոնադրության և ԱրՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի վրա:

Համալսարանի արտաքին կապերի և միջազգայնացման ռազմավարության կետերը հստակ նշված են համալսարանի [ռազմավարական ծրագրում](#), որտեղ կարևորվում է .

1) խրախուսել բուհում մեկ և ավելի օտար լեզուներով հաղորդակցման քաղաքականությունը.

2) ՄԿԾ-ներում աստիճանաբար ավելացնել օտար լեզուներով դասավանդվող առարկաների քանակը.

3) զարգացնել համագործակցությունը արտասահմանյան երկրների բուհերի հետ.

4) նպաստել հրավիրված օտարերկրյա դասախոսների՝ ԱրՊՀ պարբերական այցելություններին և ընդլայնել ֆակուլտետների կրթական ծրագրերում նրանց մասնակցության շրջանակները.

5) նպաստել ԱրՊՀ-ում օտարերկրյա սովորողների համակազմի աճին.

6) զարգացնել և ընդլայնել միջազգային ամառային դպրոցի աշխարհագրությունը՝ բազմազանեցնելով կրթամշակութային ծրագրերի բովանդակությունը.

7) օժանդակել համալսարանի մասնակցությանը միջազգային գրադարանային ցանցերին և ընկերակցություններին, ապահովել արտաքին տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունը համալսարանի սովորողների և գիտամանկավարժական կազմի համար.

8) նպաստել համալսարանի ուսանողական կազմակերպությունների արտաքին կապերի զարգացմանը և ներգրավմանը միջազգային կազմակերպություններում ու ծրագրերում ([ՌԾ. Խնդիր 6.1](#)):

Ելնելով արտաքին կապերի և միջազգայնացման ռազմավարության կետերից, ԱրՊՀ-ում մշակվել է արտաքին կապերի և միջազգայնացման տարեկան գործողությունների ծրագիր, որտեղ հստակ նախորոշված են միջազգային գիտակրթական ծրագրերի խթանման, ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի շարժունության աջակցման ծրագրային ուղղությունները:

Չնայած մինչև ռազմավարական ծրագրի ընդունումը չենք ունեցել միջազգայնացման մշակված քաղաքականություն, սակայն եղել է ձևավորված ավանդույթ, որը նպատակաուղղված է եղել բուհի և հանրապետության ճանաչմանը:

ԱրՊՀ գիտության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորը ներկայացնում է տարեկան հաշվետվություններ ([2016](#), [2017](#), [2018](#)), որտեղ պարբերաբար ներկայացվում են այլ բուհերի հետ միջազգային համագործակցության ուղիները, ստորագրվող նոր հուշագրերը, համագործակցության շրջանակում միջբուհական կոնֆերանսները:

Արտաքին կապերի զարգացման կարևոր ուղղություն է նաև կապերի հաստատումը և զարգացումը ԱՀ-ում գործող ընկերությունների, կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների հետ՝ ուսումնական գործընթացի առանձին բաղադրիչների արդյունավետությունը բարձրացնելու, գործատուների հետ հետադարձ կապերի ապահովման նպատակով: Այդ կազմակերպություններից են «Միներջի սիստեմս» ՍՊԸ-ն, Ղարաբաղ տեղեկումը, Ֆիդես վարկային կազմակերպությունը, Արցախբանկը, ԱՀ բուհերը,

դպրոցները և այլն:

Կարևորելով համագործակցությունը դպրոցների հետ 2016թ.-ից ԱրՊՀ-ում մշակվել և գործում է բուհ-դպրոց համագործակցության ծրագիրը, որն իրականացնում է մի շարք միջոցառումներ դպրոցների հետ՝ մասնագիտական կողմնորոշման, ուսանողների և աշակերտների համար համատեղ ինտելեկտուալ, մարզական, մշակութային միջոցառումների կազմակերպման և այլ ուղղություններով:

Համալսարանում յուրաքանչյուր տարի կազմակերպվում և անց են կացվում դպրոցականների առարկայական օլիմպիադաներ բարձր դասարանների աշակերտների համար, ինչը հնարավորություն է ընձեռում դպրոցականներին ստուգելու իրենց գիտելիքները, պատրաստվելու դպրոցի ավարտական և բուհի ընդունելության քննություններին:

Բուհ-դպրոց համագործակցության ծրագրի արդյունքում բարձրացել է նաև մանկավարժական փորձուսուցումների կազմակերպման արդյունավետությունը:

Ամբիոններն աշխատանքներ են իրականացնում ուսուցիչներին ներհամալսարանական, ներամբիոնային գիտամեթոդական աշխատանքներին ներգրավվելու ուղղությամբ՝ կազմակերպելով մասնագիտական խնդիրներին նվիրված քննարկումներ:

Այսպիսով ԱրՊՀ-ն ունի բազմազանեցված գործընկերային կապեր տեղական պետական և մասնավոր կազմակերպությունների ու կառույցների հետ և այժմ իր առջև միջազգայնացման խնդիր է դնում:

Համալսարանի միջազգայնացման գործընթացը համակարգելու համար մշակվել և քննարկման փուլում է համալսարանի միջազգայնացման ռազմավարությունն ու քաղաքականությունը:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ք. ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

Հիմքեր

- [Կանոնադրություն ԱրՊՀ ՊՈԱԿ գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության բաժնի](#)

Վերլուծել ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքի աշխատանքների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացը կանոնակարգելու նպատակով 2018թ. սեպտեմբերին ստեղծվել է գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության բաժինը, որի գործունեությունը համակարգում է գիտության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորը: Մինչ այդ միջազգային համագործակցությունը իրականացվում էր համալսարանական կրթության որակի ապահովման և միջազգային համագործակցության բաժնի միջոցով:

Գիտության, ասպիրանտուրայի և միջազգային համագործակցության բաժինը աշխատանքներ է իրականացնում բուհի գործունեության միջազգայնացման, մասնավորապես արտերկրյա բուհերի հետ համագործակցության և դրամաշնորհային ծրագրերում ընդգրկվածության ընդլայնման ուղղություններով:

Իր [կանոնադրությամբ](#) բաժինը կանոնակարգում է միջազգային գիտակրթական

ծրագրերի, դրամաշնորհների և արտերկրյա համալսարանների կողմից առաջարկվող գիտակրթական և ուսումնական ծրագրերի հայտերի մասին իրազեկության գործընթացը:

Հետազոտական գործընթացում բաժինը կանոնակարգում է արտասահմանյան պրոֆեսորների հրավերների կազմակերպումը, միջազգային ամսագրերում ԱրՊՀ աշխատակիցների հրատարակման գործընթացը:

Բաժնի գործունեության որակի ապահովման քաղաքականության արդյունավետությունը գնահատելու համար նախատեսում ենք հետևյալ ընթացակարգային շղթան՝ արտաքին կապերի և միջազգայնացման տարեկան հաշվետվությունների ներկայացում գիտական խորհուրդ, տարեկան հաշվետվությունների հիման վրա արտաքին կապերի և միջազգայնացման գործունեության ցուցիչների մշակում և չափում Որակի ապահովման կենտրոնի կողմից, համեմատական վերլուծություն ռազմավարական գործողությունների պլանով նախատեսված հասանելի արդյունքների կտրվածքով, համեմատական վերլուծության արդյունքներով բաժնի գործողությունների հետագա բարելավման միջոցառումների ներկայացում և դրանց կիրառման մշտադիտարկման իրականացում:

Բաժնի արդյունավետ գործունեությանը խոչընդոտում է անզլերեն լեզվի ոչ բավարար իմացությունը, ծրագրերին մասնակցելու որոշակի հմտությունների պակասը, համապատասխան մասնագետների մոտիվացիայի բացակայությունը:

Բաժնի գործունեության արդյունավետությանը կնպաստի անձնակազմի կառավարման ճիշտ մեթոդաբանության ու գործիքակազմի ընտրությունն ու կիրառումը, ինչը հնարավորություն կտա առավելագույնս օգտագործելու առկա ռեսուրսները:

Արտերկիր մեկնող և այնտեղից ժամանող պրոֆեսորադասախոսական ու ուսանողական անձնակազմերին տրամադրվող ծառայությունները իրականացվում են այլ ստորաբաժանումների հետ համագործակցությամբ:

ՉԱՓՈՐՈՇԻՉ գ. ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

- Հիմքեր
- Արտաքին կապերի և միջազգայնացմանը վերաբերող բոլոր համաձայնագրերը (*Տե՛ս Հավելված 9.3*)
 - [ԱրՊՀ ՌԾ](#)
 - Արտաքին կապերը և միջազգայնացումը արտացոլող այլ հիմքերը

Ներկայացնել վերջին 3 տարիներին արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներում հաստատության հիմնական նվաճումները, համաձայնագրերի չգործելու պատճառները: Վերլուծել ՄՈՒՀ-ի համագործակցության արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:


Արցախի պետական համալսարանը միջազգային համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր ունի շուրջ 47 համալսարանների, հաստատությունների և կազմակերպությունների հետ, որոնց շարքում են՝ Բեյրութի Հայկազյան համալսարանը, Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանը, Բասկերի երկրի համալսարանը, Լյովենի կաթոլիկ համալսարանը, Օռլովի պետական համալսարանը, Ուրալի պետական իրավաբանական համալսարանը, ՀՀ գրեթե բոլոր բուհերը, Մատենադարանը, հետխորհրդային տարածաշրջանի բոլոր չճանաչված պետությունների համալսարանները և այլն: Համագործակցության պայմանագրերը և համաձայնագրերը վերաբերում են

ուսանողների փոխանակման, համատեղ գիտահետազոտական աշխատանքների իրականացման, դասախոսների վերապատրաստման և այլ ուղղություններին:

Սակայն, համաձայնագրերի մեծ մասը նրանցում տեղ գտած գործողությունների մասով դեռևս պասիվ վիճակում են գտնվում հիմնականում Արցախի Հանրապետության միջազգային չճանաչվածության և միջազգային համագործակցությանը ուղղորդվող ֆինանսական ռեսուրսների պակասի հետևանքով: Այդուհանդերձ համագործակցային պայմանագրեր ունենալը համարում ենք դրական , քանի որ դրանց միջոցով մեր մասին տեղեկացվածությունն է աճում, և փաստը, որ մեզ հետ կնքել են պայմանագիր վկայում է, որ մեզ դիտարկել են իբրև գործընկեր:

Իրական կապեր ստեղծելու համար հաճախ ստիպված նախընտրում ենք ոչ ֆորմալ հարթակը:

ԱրՊՀ այլ բուհերի հետ կնքված պայմանագրեր.



ԱրՊՀ-ն 2016թ.-ից ներգրավված է Հարավային Կովկասի Շվեյցարական հիմնադրամի դրամաշնորհային ծրագրում: Դրա շրջանակներում իրականացվել և իրականացվում են մի շարք ծրագրեր, մասնավորապես՝ ուսանողների ուսումնագիտական գործուղումներ, դիվանագիտության բնագավառում մասնագիտացված դասախոսի այցելություններ, ուսանողների և դասախոսների որակավորման ծրագիր, ՀՀ և արտերկրի կրթական ու գիտական կազմակերպությունների կողմից կազմակերպվող գիտակրթական միջոցառումներին ԱրՊՀ դասախոսների մասնակցություն, Ուսանողների մասնակցությամբ «ԲՈՒՀ-գործատու» հետազոտության իրականացումը, Ամառային դպրոց, «Կենսաբանության արդիականացումն Արցախում», ԱրՊՀ ուսանողների և դասախոսների համար սպորտային խմբակների կազմակերպում, Արցախի պետական համալսարանում ուսումնագիտական տպարանի հիմնադրում, «Որակյալ մասնագետ, առողջ բնակիչ» /Հոգեբանական կենտրոնի ծրագիր/:

Դրամաշնորհային ծրագրի շնորհիվ ԱրՊՀ-ում ուսանողների գործուղումների թիվը

զգալիորեն աճել է.

Տարեթիվը	2014	2015	2016	2017	2018	2019
Փորձուղումների քանակը	22	11	14	26	20	24

ԱրՊՀ համագործակցային պայմանագրերը կիրառելի են հատկապես հետևյալ միջոցառումներում. մասնակցություն կոնֆերանսներին, համատեղ հրատարակություններ, հետազոտություններ և այլն:

2018թ. հուլիսին առաջին անգամ համալսարանի պատմության մեջ կազմակերպվեց միջազգային ամառային դպրոց, որին մասնակցում էին ԱրՊՀ հետ համագործակցային պայմանագրեր ունեցող ՀՀ և արտերկրի համալսարանների ուսանողներ, իսկ 2019թ. ամառային ճամփարի մասնակիցների թիվը ավելի քան յոթ տասնյակ էր: Այս ամառ ևս կազմակերպվելու է և պլանավորում ենք տարեցտարի ավելացնել մասնակիցների թիվը: Նմանատիպ ամառային դպրոցները հնարավորություն են տալիս հզորացնել ուսանողների կարողությունները, ստեղծել ուսանողական ցանցեր՝ հետագա համատեղ ծրագրերի իրականացման նպատակով:

Ուսանողների և դասախոսների միջազգային փոխանակման ծրագրեր իրականացնելու գործընթացը բախվում է լուրջ խնդիրների՝ պայմանավորված քաղաքական գործոններով: Փորձում ենք խնդիրը լուծելու տարբերակներ գտնել և ունենք հաջողված փորձ: 2017-2018 ուստարում ԱրՊՀ 2, 2018-2019 ուստարում և 2019-2020 ուստարում՝ 1-ական ուսանողներ հնարավորություն ստացան 1 տարով ուսանել Հունգարիայի Պիտեր Պազմանի անվան կաթոլիկ համալսարանում: 2018 և 2019թթ. ամռանը մեկական ուսանողներ մասնակցել են նույն համալսարանի կողմից կազմակերպված ամառային ճամփարին, իսկ 2 ուսանող՝ Ուրալի պետական իրավաբանական համալսարանի կողմից կազմակերպված «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 70-րդ տարեդարձը. արդի մարտահրավերներ և ժառանգություն» խորագրով մարդու իրավունքների 6-րդ ամառային դպրոցին:

Վերջին երեք տարիներին միջազգայնացմանն ուղղված կարևոր միջոցառումներից են արտերկրից հրավիրված մասնագետների դասախոսությունները:

Հատկապես կարևորում ենք Նիդերլանդների Քլինգենդեյլի համալսարանի պրոֆեսոր, միջազգայնագետ Փոլ Մեերցի, դիվանագետ, պրոֆեսոր Շոն Ռիորդանի դասախոսությունները՝ նվիրված հակամարտությունների կարգավորմանը, չճանաչված պետության դիվանագիտությանը:

2018թ. հունիսի 20-ին CERGE-EI հիմնադրամի նախագահ, տնտեսագիտության պրոֆեսոր Ռանդալ Ֆայլերի՝ ԱրՊՀ կատարած այցի շրջանակներում քննարկվել են համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր, այդ թվում նաև ծրագրի ներկայացուցիչների կողմից համալսարանում դասընթացներ վարելու հարցը: CERGE-EI հիմնադրամը կոչված է զարգացնելու տնտեսագիտությունը հետխորհրդային երկրներում:

2018թ. սեպտեմբերին CERGE-EI (Center for Economic Research and Graduate Education - Economics Institute) ծրագրի ներկայացուցիչ, Պրահայի համալսարանի հետազոտող Դավիթ Ադունցը անգլերեն լեզվով երկամսյա դասընթաց վարեց տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողների համար: Պայմանավորվածություն ձեռք բերվեց առ այն, որ 2019-2020 ուստարում ևս CERGE-EI ծրագրի մասնակից, Պրահայի համալսարանի 2 հետազոտող դասընթացներ անցկացնեն ԱրՊՀ ուսանողների համար: 2019թ. սեպտեմբերին նույն ծրագրի մասնակից Վալենտին Արտեմևը ռուսերեն լեզվով երկամսյա դասընթաց վարեց

նույն ֆակուլտետի ուսանողների համար, 2020թ. ևս նախատեսվում է նման դասընթացի անցկացում:

Արդյունքում ձևավորվում է օտարերկյա դասախոսների կողմից դասավանդման, առկա և հեռահար միջոցներով դասընթացների անցկացման շարունակական ավանդույթ:

2016թ.-ից ԱրՊՀ-ում անց է կացվում ոչ ֆորմալ կրթության ծրագիրը: Ծրագրի շրջանակում դասախոսություններով հանդես են եկել ՀՀ և արտերկրի տարբեր բնագավառների տասնյակ առաջատար մասնագետներ:

ԱրՊՀ-ն արդյունավետորեն համագործակցում է նաև տեղական հաստատությունների հետ՝ նպատակ ունենալով գործատու և հանրային կառույցների հետ բազմազանեցված գործընկերային կապեր հաստատել և ծրագրեր իրականացնել: Այդ նպատակով համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրում կարևորվում են հետևյալ քայլերը՝

1) իրականացնել աշխատաշուկայի առկա վիճակի ու զարգացման միտումների մշտադիտարկում և ձևավորել համալսարանի հնարավոր գործատու կազմակերպությունների տվյալների բազա.

2) ներգրավել գործընկեր կազմակերպություններին համալսարանի և նրա առանձին ֆակուլտետների զարգացման ծրագրերի մշակման ու իրագործման աշխատանքներում.

3) բարելավել համալսարան-գործատու փոխկապակցության համակարգը, իրականացնել մասնագետների և կրթական ծառայությունների շուկայական պահանջարկի կանխատեսումներ ու ներքին ռեսուրսների մշտադիտարկում.

4) կազմակերպել «աշխատանքի տոնավաճառներ» և հիմնական գործատու կազմակերպությունների ու աշխատաշուկային առնչվող հասարակական կառույցների ներկայացուցիչների հետ համալսարանի սովորողների պարբերական հանդիպումներ՝ նպաստելով համալսարանի շրջանավարտներին մասնագիտական աշխատանքով ապահովելու և գործընկերային նոր կապեր ձևավորելու գործընթացին.

5) կազմակերպել հանդիպումներ մասնագիտական հաջողություններ արձանագրած շրջանավարտների և սովորողների միջև ([ՌԾ, Խնդիր 6.3](#)):

Տեղական կազմակերպություններից ԱրՊՀ-ն համագործակցում է դպրոցների, քոլեջների, բուհերի, ԱՀ պետական կառավարման մարմինների, ֆինանսական կազմակերպությունների, բանկերի հետ: Համագործակցության շրջանակներում մեր ուսանողները փորձուսուցում են անցնում այդ կազմակերպություններում:

Պետական մարմիններից հատուկ առանձնացնում ենք ԱՀ արտաքին գործերի նախարարությունը, որի միջոցով հանրապետությունն այցելող արտերկրի հայտնի քաղաքական գործիչներ, պաշտոնյաներ այցելում են համալսարան և հանդիպում ուսանողության և դասախոսների հետ: ԱԳՆ միջնորդությամբ 2020թ. հունվարի 20-22-ը առաջին անգամ համալսարանում կկազմակերպվի Սթեթսոնի անվան 24-րդ տարեկան միջազգային հեղինակավոր դատախազ-մրցույթի /moot court/ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային փուլը, որին արդեն մասնակցության հայտ են ներկայացրել Իրանի 2 թիմ, ԵՊՀ-ից, ՀՌՀ-ից մեկական թիմեր և ԱրՊՀ-ից 1 թիմ:

Պետք է նշել, որ գոյություն ունեն որոշ դժվարություններ, որոնք ազդում են միջազգային համագործակցության արդյունավետության վրա:

Միջազգայնացման գործընթացը բարդանում է Ադրբեջանի վարած հակահայկական քաղաքականությամբ, որն ամեն կերպ փորձում է խոչընդոտել մեր ուսանողների մասնակցությանը միջազգային մրցույթներում: Վերջին նման օրինակը 2019թ. նոյեմբերի

29-ից դեկտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում ԱրՊՀ ուսանողների՝ Թբիլիսիում կայացած «ICPC» ծրագրավորման միջազգային օլիմպիադային մասնակցությունը բոյկոտելն էր:

ԱրՊՀ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» և «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» մասնագիտության 3 ուսանողներ անցել են քառորդ եզրափակիչ փուլը, սակայն նրանց թույլ չեն տվել մասնակցել կիսաեզրափակիչ փուլին:

Այսպիսով, վերջին 3 տարիներին աշխատանքներ են տարվել համալսարանի միջազգայնացման ուղղությամբ: Հարկ է նաև փաստել, որ աճել է համալսարանի համագործակցային շրջանակը՝ ներառելով նոր միջազգային, տեղական գիտահետազոտական և գիտակրթական կազմակերպություններ: ԱրՊՀ-ն կարևորում է միջազգայնացման գործընթացը և քայլ առ քայլ ներդնում է նոր գործընթացներ ու ընթացակարգեր այն առավել արդյունավետ կազմակերպելու համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ դ. ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

- Հիմքեր
- Ուսումնառողների և դասավանդողների օտար լեզուների մասնագիտական մակարդակի իմացությանը նպաստող մեխանիզմները
 - Օտար լեզուներով տեղեկատվական նյութերը

Օտար լեզուներին տիրապետող դասավանդողների, վարչական աշխատողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար:

Համալսարանի մասին օտար լեզուներով տեղեկատվական նյութերը հետևյալն են. ԱրՊՀ պաշտոնական կայքի ռուսերեն և անգլերեն տարբերակը, «Վիկիպեդիա» էլեկտրոնային ազատ հանրագիտարանում առկա է բուհի մասին տեղեկատվություն անգլերենով և ռուսերենով:

Անգլերենին տիրապետող դասավանդողների, վարչական աշխատողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար

Աշխատակիցներ	2016			2017			2018		
	Ընդ.	Քանակ	%	Ընդ.	Քանակ	%	Ընդ.	Քանակ	%
Դասավանդող	278	91	32,7	287	92	32,05	271	125	46,1
Վարչական աշխատող	73	44	60,3	81	52	64,2	89	60	67,4

Ռուսերենին տիրապետող դասավանդողների, վարչական աշխատողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար

Աշխատակիցներ	2016			2017			2018		
	Ընդ.	Քանակ	%	Ընդ.	Քանակ	%	Ընդ.	Քանակ	%
Դասավանդող	278	278	100	287	287	100	271	271	100

Վարչական աշխատող	73	73	100	81	81	100	89	89	100
------------------	----	----	-----	----	----	-----	----	----	-----

Անգլերենին տիրապետող ուսանողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար

Ուսանողներ	2016			2017			2018		
	Ընդ	Քանակ	%	Ընդ	Քանակ	%	Ընդ	Քանակ	%
Բակլավր	1519	308	13,7	1501	256	11,3	1374	498	36,2
Մագիստրոս	271	146	46,1	338	120	31,2	319	155	48,6
Հետազոտող	4	4	100	7	7	100	8	8	100

Ռուսերենին տիրապետող ուսանողների թիվը և տոկոսը վերջին 3 տարիների համար

Ուսանողներ	2016			2017			2018		
	Ընդ	Քանակ	%	Ընդ	Քանակ	%	Ընդ	Քանակ	%
Բակլավր	1519	456	30,2	1501	338	23,2	1374	540	39,3
Մագիստրոս	271	271	100	338	338	100	319	319	100
Հետազոտող	4	4	100	7	7	100	8	8	100

Ներկայացնել և վերլուծել վերոնշյալ գործընթացներում հաստատության վերջին 3 տարվա նվաճումները: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԱրՊՀ-ն ձգտում է ձևավորել միջավայր, որտեղ համալսարանի աշխատակազմի և ուսանողների շրջանակներում օտար լեզուներին տիրապետելու մոտիվացիան կբարձրանա:

Համալսարանում օտար լեզվի իմացությունն անհրաժեշտ է հատկապես արտերկրի գործընկերների, կազմակերպությունների հետ համատեղ ծրագրեր մշակելու և իրականացնելու համար: Ուսանողների մոտ օտար լեզվի անհրաժեշտ մակարդակի ապահովումը կարևոր նախապայման է, քանի որ ԱրՊՀ-ում դասախոսությունները պարբերաբար օտար լեզվով են անցկացնում հրավիրված օտարերկրյա մասնագետները: Այդ իսկ պատճառով համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրում ամրագրված է՝ աստիճանաբար ավելացնել օտար լեզուներով դասավանդվող առարկաների քանակը, խրախուսել բուհում մեկ և ավելի օտար լեզուներով հաղորդակցման քաղաքականությունը և այլ դրույթներ: Վերջին 3 տարիների ընթացքում աշխատանքի ընդունելության պահանջների մեջ ավելացել է օտար լեզվի իմացության պարտադիր պայմանը:

2012թ.-ից գործում է Արցախի պետական համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգ, որի շրջանակներում իրականացվում է դասախոսների օտար լեզվի պարտադիր վերապատրաստումներ: Պետք է նշել, որ վերապատրաստման շրջանակներում ներառված դասընթացներից դասախոսները առաջնային կարևորություն են տալիս օտար լեզվի դասընթացներին՝ ինչը վկայում է բուհի միջազգայնացման միտումների մասին: Առ այսօր օտար լեզվի պարտադիր վերապատրաստում է անցել 123 դասախոս:

Ընդհանուր առմամբ, ԱրՊՀ ողջ անձնակազմի օտար լեզվի իմացության մակարդակը կարելի է բնութագրել որպես միջին/ ռուսերենին տիրապետում է 100%-ը, անգլերենին լավ են տիրապետում 2013թ.-ից ի վեր ընդունված բոլոր ասպիրանտները, ովքեր հանձնել են անգլերեն լեզվի ստանդարտացված թեստ-քննություն/Toefl/, օտար լեզվի ամբիոնի աշխատակիցները/դասախոսները/, վերապատրաստումներին մասնակցած դասախոսները:

Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է արտաքին կապերի ու միջազգայնացման քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն):

ԱրՊՀ-ն միջազգային գործունեության բարելավման նպատակով իրականացնում է գործընկեր հաստատությունների համապատասխան կառույցների հետ բենչմարքինգ /առաջավոր փորձի համեմատական վերլուծություն/:

Նախատեսվում է համեմատական ուսումնասիրությունները իրականացնելիս ընդգրկել տարածաշրջանային չճանաչված պետությունների համալսարանների համագործակցության ասոցիացիայի /Պրեդնեստրովիայի ՏՇԼՆԵՆԿՈՅԻ անվան պետական համալսարան, Աբխազիայի պետական համալսարան, Հարավ-Օսեթիայի Ա.Տիբիլովի անվան պետական համալսարան/ բուհերից, որի հետ ԱրՊՀ-ն ունի զարգացման համանման պատմություն և խնդիրներ, ինչպես նաև եվրոպական բուհ:

Համեմատական ուսումնասիրությունների ընթացքում իրականացվում է վեբկայքերում զետեղված միջազգայնացման գործընթացներին վերաբերող տեղեկատվության /նորություններ, ընթացակարգեր, կառուցվածքային փոփոխություններ, միջազգայնացման ռազմավարական ուղղություններ, միջոցառումներ և այլն/ պարբերական ուսումնասիրություն, իսկ անհրաժեշտության դեպքում կատարվում է հարցում: Ուսումնասիրված գործընթացները և ընթացակարգերը համադրվում են ԱրՊՀ-ում իրականացվող գործընթացների հետ, կատարվում է վերլուծություն և արդյունքներն, ըստ անհրաժեշտության, ներդրվում են համալսարանի միջազգայնացման գործընթացներում: Համեմատական ուսումնասիրություններ են կատարվում նաև օտարերկյա առաջատար համալսարանների հետ՝ հանդիպումների և ուսումնական այցերի ընթացքում, որոնք առավել մեծ հնարավորություն են ստեղծում նմանատիպ ուսումնասիրությունների համար, քանի որ տեղեկատվությունը լինում է չմիջնորդավորված:

Վերլուծել Չափանիշ 1-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ol style="list-style-type: none"> 1. Բազմազան համագործակցային համաձայնագրերի առկայություն ԱՊՀ, Եվրոպայի և ԱՄՆ առաջատար համալսարանների հետ: 2. Բազմազանեցված գործընկերային կապեր տեղական պետական և մասնավոր կազմակերպությունների, կառույցների հետ: 3. Դրամաշնորհային ծրագրում ուսանողության և դասախոսական կազմի մասնակցության ապահովում: 4. Օտար լեզուներին տիրապետող դասավանդողների առկայություն: 5. Ուսանողների և աշխատակազմի օտար լեզվի գիտելիքների բարելավում: 6. Միջազգային համագործակցությունը համակարգող ստորաբաժանման առկայություն /4 հաստիք/: 7. Բավարար պրոֆեսորադասախոսական անձնակազմ 	<ol style="list-style-type: none"> 1. ԱՀ միջազգային չճանաչվածությունը: 2. Միջազգային գործունեության արդյունավետության գնահատման չափանիշների բացակայություն: 3. Գործընկեր համալսարանների հետ համատեղ իրականացվող կրթական ծրագրերի սակավություն: 4. Անգլերեն լեզվի իմացությամբ աշխատակազմի սակավ քանակ: 5. Միջազգային դրամաշնորհային ծրագրերին դիմելու խիստ սահմանափակ հնարավորություններ: 6. Բենչմարքինգի տեխնոլոգիաների ոչ լիարժեք կիրառում: 7. Օրենսդրական դաշտի անկատարություն երկակի և համատեղ դիպլոմների շնորհման վերաբերյալ: 8. Օտարերկրյա ուսանողների բացակայություն: 9. Ստորագրված որոշ պայմանագրերի շրջանակներում պասիվ համագործակցություն:
Հնարավորություններ	Վտանգներ
<ol style="list-style-type: none"> 1. ՀՀ բուհերի հետ համագործակցություն 2. Պետական կառավարման մարմինների հետ համագործակցություն /ԱԳՆ, ԿԳՍ, վիճակագրական ծառայություն և այլն/: 3. Կամավորական շարժման ակտիվացում: 4. Սփյուռքի ներուժի ներգրավում: 	<ol style="list-style-type: none"> 1. Տարածաշրջանում ռազմաքաղաքական իրադրության վատթարացում: 2. Ֆինանսական ռեսուրսների սակավություն: 3. Ներկայումս գործող միակ դրամաշնորհային ծրագրի շարունակական չլինելը՝ պայմանավորված Ադրբեջանի քաղաքականությամբ: 4. Միջազգային գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերի բացակայություն:

Ընդհանուր առմամբ ԱրՊՀ-ն իր գործունեությունը ուղղել է համալսարանի միջազգայնացման նպատակով ռազմավարական խնդիրների իրականացմանը: Օրեցօր առավել ակնհայտ է դառնում օտար լեզուների իմացության կարևորությունը, որը թելադրված է արտաքին և ներքին ազդակներով և նկատվում է աշխատակիցների և ուսանողների հետաքրքրվածության բարձրացում այդ ուղղությամբ:

SWOT վերլուծության արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ բուհի միջազգային գործունեությունն արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է ձեռնարկել բարելավմանն ուղղված հետևյալ քայլերը.

1. ընդլայնել միջազգային համագործակցությունը համակարգող ստորաբաժանումը անգլերենին տիրապետող աշխատողներով և բազմազանեցնել բաժնի գործունեության ձևերը,
2. արդյունավետ զբաղվել դրամաշնորհներ գտնելու ուղղությամբ,
3. կատարելագործել բենչմարքինգի տեխնոլոգիաները և ներդնել առաջավոր բուհերի փորձը,
4. ակտիվացնել օտար լեզուների իմացությունը ուսանողների և աշխատողների շրջանում,
5. արտերկրի գործընկեր համալսարաններից առնվազն մեկի հետ մշակել և իրականացնել համատեղ կրթական ծրագիր,
6. ակտիվացնել համագործակցությունը ՀՀ և տեղական կազմակերպությունների, կառույցների հետ՝ մշակելով համաձայնագրերից բխող կոնկրետ գործողությունների ծրագրեր:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Չափանիշով նկարագրվող ոլորտի համար չափելի տերմիններով համառոտ (մինչև 10 տող) ներկայացնել հաստատության հավակնությունները (ամբիցիաները)՝ հղում տալով այն ռազմավարական փաստաթղթերին, որոնցում այդ ամբիցիաները ձևակերպված են որպես նպատակ կամ խնդիր:

Հաստատության հավակնությունները չափանիշի ուղղությամբ ձևակերպված են որպես նպատակներ ԱրՊՀ որակի ապահովման ձեռնարկում: Առաջիկա տարիների համար նախատեսված է.

- սահմանված կրթական չափորոշիչների պահպանմամբ իրականացնել ԱրՊՀ կրթական ծրագրերն ու որակավորումների շնորհումը,
- բոլոր շահակիցների (ուսանողների, աշխատակիցների, գործատուների, հիմնադրի, լիազոր մարմնի և ֆինանսավորող այլ կազմակերպությունների) առջև ապահովել կրթության որակի համար ԱրՊՀ հաշվետվողականությունը,
- ԱրՊՀ և նրա կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման համար ստեղծել անհրաժեշտ մեթոդական և կազմակերպական հիմքեր,
- ԱրՊՀ-ում խթանել ուսուցման որակի շարունակական բարելավումը և որակի մշակույթի զարգացումը,
- հետամուտ լինել ԱրՊՀ տեսլականին, ռազմավարական նպատակներին և խնդիրներին համապատասխան առաքելության իրականացմանը,
- բարձրացնել մատուցվող կրթական ծառայությունների որակը:

ԱրՊՀ կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների իրականացում՝ սահմանված կրթական չափորոշիչների պահպանմամբ, բոլոր շահակիցների առջև կրթության որակի վերաբերյալ հաշվետվողականության ապահովում, արտաքին գնահատման և հավատարմագրման համար անհրաժեշտ մեթոդական և կազմակերպական հիմքերի ստեղծում, ուսուցման որակի շարունակական բարելավում և որակի մշակույթի զարգացում, մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ ա. ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Հիմքեր

- [ԱրՊՀ որակի ապահովման համակարգի ձեռնարկ](#)
- [Կանոնադրություն ԱրՊՀ ՊՈԱԿ որակի ապահովման կենտրոնի](#)
- [ԱրՊՀ ՊՈԱԿ կրթության որակի ապահովման քաղաքականությունը](#)
- [Աշխատակարգ ԱրՊՀ ՊՈԱԿ գիտական խորհրդի՝ Որակի ապահովման մշտական հանձնաժողովի](#)

- [ԱրՊՀ ՊՈԱԿ դասալսումների կազմակերպման և անցկացման կարգ](#)
- [Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապատրաստման և պաշտպանության կարգերը](#)
- [ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգ](#)
- [ԱրՊՀ ՊՈԱԿ ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյական հատկանիշների գնահատման սոցիոլոգիական հարցման կանոնակարգը և հարցաշարը](#)

Ներկայացնել և վերլուծել ՄՈՒՀ-ի որակի ապահովման ներքին համակարգի քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը և արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Արցախի պետական համալսարանի որակի ապահովման համակարգի ստեղծման մեթոդական հիմք է ծառայում 2012թ. սեպտեմբերի 1-ից գործող՝ համալսարանական կրթության զարգացման կենտրոնի ստեղծումը, ինչպես նաև ԱրՊՀ գիտխորհրդի 2014թ. հոկտեմբերի 7-ի N44-L որոշմամբ հաստատված [Արցախի պետական համալսարանի կրթության որակի ապահովման քաղաքականությունը հաստատելու մասին](#) կարգը:

Կենտրոնը, որը 2014թ. վերանվանվել էր համալսարանական կրթության զարգացման բաժին, իր գործունեությունն իրականացնում էր իրավական հիմքերով սահմանված գործառույթների շրջանակում: Այն համալիր վերահսկողություն էր իրականացնում ուսումնական գործընթացի կազմակերպման ուղղությամբ՝ կրթության որակի հետևողությամբ: Այդ վերահսկողությունն ապահովում էր ուսումնական գործընթացը սահմանված ընթացակարգերին համապատասխան իրականացնելուն: Այն փաստը, որ կրթության որակի կարևորումը առաջնային էր բուհի զարգացման ծրագրում, վկայում են բաժնին վերաբերող իրավական հիմքերի լրամշակումները, համապատասխան ակտերով գործառույթների հստակեցումը: Բացի այդ, ուսումնական գործընթացի վերահսկողության, կրթության որակի բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետության հիմնավորման հիմք կարող են լինել այդ ժամանակաշրջանում ուսումնական գործընթացին վերաբերող մի շարք ընթացակարգերում կատարված փոփոխությունները և ընդունված նոր կարգերը:

Մինչև ՌԾ-ի մշակումը և նրանում համալսարանի առաջնահերթությունների սահմանումը՝ ուսումնական գործընթացը կազմակերպվում էր ավանդական սկզբունքով՝ ելնելով նպատակներով սահմանված առաքելությունից և հետևելով ներքին կանոնակարգերին ու ընթացակարգերին: Եթե նշենք միայն գիտխորհրդի ընդունած որոշումների թիվը, ապա 2016-2018թթ. այն կազմել է 121 (այդ թվում՝ կարգեր՝ 11, կանոնակարգեր՝ 7, ընթացակարգեր՝ 1, ներքին կանոնադրություններ՝ 11), որոնք բովանդակային առումով ընդգրկում են ուսումնական գործընթացի կազմակերպման տարբեր կողմերը և հավաստում են, որ ընթացիկ աշխատանքներում երևան եկող բոլոր հարցերը կարգավորվում էին կոլեգիալ սկզբունքով և օրինական ուղղությունը կարևորելով:

Դա վկայում է, որ ուսումնական գործընթացը մշտական հետևողությամբ էր իրականացվում և փոփոխությունները կատարվում էին արդյունավետության գնահատմամբ: 2014 թ-ից գիտխորհրդին կից ստեղծվել է նաև որակի ապահովման մշտական հանձնաժողով, որի գործառույթները սահմանվել են [աշխատակարգով](#):

2014թ. մշակվել և ընդունվել է ԱրՊՀ կրթության որակի ապահովման քաղաքականությունը, որը սահմանում էր որակի ներքին ապահովման հիմնական հասկացությունները, որակի

մշակույթի զարգացման փուլերը, որակի ապահովման կարգախոսը, սկզբունքները և մոդելը, որոնցով էլ մեկնարկեցին որակի ներքին և արտաքին ապահովման բնագավառի կարգավորման գործընթացները:

Ձեռնարկված գործողությունները դրական տեղաշարժ արձանագրեցին, քանի որ առաջին անգամ բուհի գործունեության և մատուցվող ծառայությունների որակի ապահովման հարցերը սկսեցին քննարկվել համալիր, համակարգման փորձ արվեց: Այդ ամենն իրականացվում էր՝ ելնելով բուհի զարգացման ծրագրի դրույթներից: Բայց և բուհը չունեւ ճանապարհային քարտեզ, որը առաքելությունից սկզբնառվեր և քայլերով հաշվարկված ռազմավարությամբ իրականացվեր, ինչը կապահովեր առաքելության իրացմանը միտված հավաստելի ու սահմանված վերջնարդյունքներ:

2017-2018 ուստարվանից հնարավորությունների իրացման և աշխատանքների իրականացման նոր ընթացք նախանշվեց՝ պայմանավորված ԱրՊՀ ՌԾ-ի ընդունմամբ: ԱրՊՀ-ը բարեփոխումների, մատուցվող ծառայությունների լավարկման նոր ուղեգիծ որդեգրեց: Նախ գնահատվեցին ունեցած մասնագիտական և նյութական ռեսուրսները, ներքին ու արտաքին հնարավորությունները, ապա հետագա գործունեության ծրագրավորման մեջ ներառվեց յուրաքանչյուր գործոն և ուժ՝ նպատակային առաջընթաց ապահովելու համար: Ըստ այդմ՝ 2018թ. սեպտեմբերի 1-ին ԱրՊՀ համալսարանական կրթության որակի ապահովման և միջազգային համագործակցության բաժինը վերանվանվեց «Որակի ապահովման կենտրոն» և գիտական խորհրդի 2018թ. նոյեմբերի 9-ի N34-Լ որոշմամբ հաստատվեց կենտրոնի նոր կանոնադրությունը ([Կանոնադրություն ԱրՊՀ ՊՈԱԿ Որակի ապահովման կենտրոնի](#)), որի հետագա գործունեությունը արտացոլում է համալսարանի ՌԾ հիմնական դրույթները՝ հիմնարար արժեքները, համալսարանի զարգացման ռազմավարական նպատակները, խնդիրները և դրանց իրագործման ուղղությունները:

ՌԾ-ի համապատասխան՝ որակի ներքին համակարգն ունի կառավարչական, ակադեմիական և մանկավարժական ուղղվածություն: Ըստ դրա՝ փորձ է արվել ստեղծելու կուռ համակարգ, որի գործիքակազմը սերտորեն կապվում է ռազմավարական նպատակների իրագործման հետ, ինտեգրված է բուհում բոլոր գործընթացների պլանավորման և կառավարման աշխատանքներում: Այն կապահովի շահակիցների հետ հաղորդակցությունը և հետադարձ կապի միջոցով վեր կհանի կարիքները՝ գտնելով պահանջների բավարարման ճանապարհները՝ անընդհատ նոր և ճշգրիտ տվյալներ հավաքագրելով, վերլուծություններ կատարելով և խնդիրների լուծումներ առաջարկելով:

ԱրՊՀ-ում որակի ապահովման գործընթացները կանոնակարգելու նպատակով մշակվել է [«ԱրՊՀ որակի ապահովման ձեռնարկը»](#), որտեղ ընդգրկված են որակի ապահովման և որակի կառավարման հիմնահարցերը: Որակի ապահովման հիմքում դրվեցին հետևյալ չափանիշները:

- կրթական գործընթացի կազմակերպումը (ենթակառուցվածքների կառավարում, որակի ապահովում, գնահատում և մշտադիտարկման մեխանիզմների առկայություն),
- կրթական գործունեության պայմանները (մասնագիտական կրթական ծրագրեր, բարձրորակ կադրեր, կրթական և տեղեկատվական նորագույն ռեսուրսներ),
- մասնագիտական կրթական արդյունքները (ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի համապատասխանությունը բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներին, որակավորումների ազգային շրջանակին համապատասխան բակալավրի, մագիստրոսի կրթական արդյունքների ապահովում, շրջանավարտներին

աշխատանքի տեղավորում),

- տեղեկատվական, ուսումնամեթոդական ապահովվածությունը (գրադարանային ֆոնդի վիճակը, ուսումնատեղեկատվական բազայի և ուսումնամեթոդական ուղեցույցների առկայությունը),

- նորագույն տեխնոլոգիաների առկայությունը, կիրառումը ուսումնական և գիտական գործունեության ընթացքում և համալսարանի կառավարման գործում,

- նյութատեխնիկական բազան (պայմանների առկայություն, կաբինետների, լսարանների, լաբորատորիաների համապատասխանությունը բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչներին),

- ուսանողների սոցիալական աջակցությունը,

- գիտական հետազոտությունների ուղղվածությունը, դրանց ֆինանսավորման ծավալը ԱրՊՀ կողմից,

- գիտամեթոդական աշխատանքները (դասախոսների մենագրությունների, դասագրքերի, մեթոդական ձեռնարկների առկայությունը, ուսանողության գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեության բարձրացման արդյունավետությունը),

- դասախոսների որակական կազմը (գիտական աստիճան և կոչում) և դրանց տոկոսը հիմնական և համատեղությամբ աշխատողների թվում:

Ձեռնարկում ներկայացվում են որակի ապահովման քաղաքականությունը, սկզբունքները, ռազմավարությունը, որակի ապահովման հիմնական գործընթացները և պարբերականությունը, հիմնական հասկացություններն ու տերմինները:

Այն ուղղված է համալսարանի առաքելության, ինստիտուցիոնալ նպատակների և 2019-2023թթ. ռազմավարական ծրագրի իրագործմանը: Որակի ապահովման քաղաքականությունը կողմնորոշված է ռազմավարության նախատեսված վերջնարդյունքներին, արդյունավետության գնահատման համակարգված մոտեցմանը: Այն տվյալներ և տեղեկատվություն է ապահովում բուհի զարգացման վերաբերյալ, պայմաններ է ստեղծում արտաքին գնահատման համար: Որակի ապահովման քաղաքականությունը նպատակաուղղված է որակի մշակույթի ձևավորմանն ու զարգացմանը, հաստատության առաջընթացին, կրթության որակի բարձրացման գործում շահակիցների պատասխանատվության բարձրացմանը, բոլոր մակարդակների համապատասխան գործընթացներում նրանց մասնակցության աճին:

Որակի ապահովման ռազմավարությունը բուհի գործունեության բոլոր մակարդակներում և բնագավառներում կարևորում է արտաքին վերահսկողությունից անցումն ինքնավերահսկողության: Դրան հասնելու համար նախատեսվում է պարբերաբար բարելավել որակի ապահովման ներքին համակարգը՝ որակի ապահովման շրջափուլի համաձայն:

Որակի ապահովման կենտրոնի կողմից մշակվում է «ԱրՊՀ որակի ապահովման մեխանիզմների գործիքակազմ» ձեռնարկը: Ձեռնարկում նկարագրված մեխանիզմների գործիքակազմը նպատակաուղղված կլինի պարզելու ռազմավարական ծրագրի նպատակների և խնդիրների ակնկալվող արդյունքների համապատասխանությունը պլանավորածին: Պլանավորվում է, որ յուրաքանչյուր վերջնարդյունք կունենա որակի ապահովման իր գործիքակազմը: Գործիքները չեն լինելու միատեսակ, այլ հնարավորություն կտան գնահատելու վերջնարդյունքները տարբեր տեսանկյուններից: Ձեռնարկում կնախանշվեն վերհանված խնդիրների լուծման ընթացակարգերը, տեսանելի կլինի որակի ապահովման կառույցի կապը բուհի կառավարման և այլ մարմինների հետ:

Կենտրոնի աշխատակիցները, առաջնորդվելով որակի շարունակական բարելավման և մասնագիտական կրթության հավատարմագրման անհրաժեշտության սկզբունքներով, ինչպես նաև մասնակցելով վերապատրաստման դասընթացների, ձեռնամուխ են եղել համալսարանում կրթության որակի ապահովման գործընթացների մի շարք հայեցակարգային փաստաթղթերի մշակմանը, որոնց թվում՝

- [«Արցախի պետական համալսարանի կրթության որակի ապահովման քաղաքականությունը հաստատելու մասին»](#) կարգը,
- [«Արցախի պետական համալսարանի բակալավրի կրթական ծրագրի կառուցվածքի և բովանդակության»](#) կարգը,
- [ԱրՊՀ որակի ապահովման ձեռնարկը](#),
- [Դասընթացի նկարագիրը](#),
- [Դասընթացի մասնագիրը](#),
- [«Մասնագիտության կրթական ծրագրի» ձևաչափը \(Կրթական ծրագրի ձևաչափը լրացնելու մեթոդական ցուցումներ\)](#):

ԱրՊՀ-ում գործում են նաև մի շարք ընթացակարգեր, որոնք նպատակաուղղված են ուսումնական ծրագրերի, դասախոսական կազմի և ուսումնառության որակի շարունակական բարելավմանը:

Ուս գործընթացները կանոնակարգող փաստաթղթերը տրամադրվում են համալսարանի տարբեր ստորաբաժանումներին և տեղադրվում են ԱրՊՀ պաշտոնական կայքում: Համալսարանում որպես Ուս մեխանիզմներ դիտարկվում են դասալսումները ([ԱրՊՀ ՊՈԱԿ դասալսումների կազմակերպման և անցկացման կարգ](#)), ակադեմիական անագնվությունը կանխարգելող միջոցառումների իրականացումը ([Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապատրաստման և պաշտպանության](#) համապատասխան կանոնակարգերը), ՊԴ կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպումը ([ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգը](#)), սոցիոլոգիական հարցումները ([ԱրՊՀ ՊՈԱԿ ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյական հատկանիշների գնահատման սոցիոլոգիական հարցման կանոնակարգը և հարցաշարը](#)), ընթացիկ, կիսամյակային և ամփոփիչ ատեստավորման քննությունների, փորձուսուցման արդյունքների ամփոփիչ վերլուծությունները (որոնց հիմամբ վեր են հանվում խնդիրները և առաջարկվում բարելավման միջոցառումներ) և այլն:

Կրթության որակին առնչվող մշակված և հաստատված բոլոր փաստաթղթերը մշտական արդիականացման նախապայմանով են ուղղորդվում:

ՉԱՓՈՐՈՇԻՉ Բ. Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

- Հիմքեր
- [Կանոնադրություն ԱրՊՀ ՊՈԱԿ որակի ապահովման կենտրոնի](#)
 - [Աշխատակարգ ԱրՊՀ ՊՈԱԿ գիտական խորհրդի Որակի ապահովման մշտական հանձնաժողովի](#)
 - [Ֆակուլտետային որակի ապահովման հանձնաժողովների կազմի հաստատման մասին ֆակուլտետների նիստերի առձանագրությունների](#)

քաղվածքներ

- [Մասնագիտությունների կրթական ծրագրերի պատասխանատուների հաստատման ռեկտորի հրաման](#)
- [Քննարկումներ մասնագիտությունների կրթական ծրագրերի պատասխանատուների հետ](#)
- [Ինքնագնահատման հանձնաժողովի քննարկումներ](#)
- [ՈԱԿ-ի կողմից քննարկումներ քստ ինքնավերլուծության չափանիշների](#)

Վերլուծել որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման համար տրամադրվող ժամանակային, մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

ԱրՊՀ-ում ՈԱ գործընթացները կառավարող և իրականացնող առանձնացված կառույցներ կամ մարմիններ նախկինում չեն եղել: ՈԱ ընդհանուր վերահսկողությունը իրականացվել է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից, իսկ ՈԱ առկա գործընթացները (ուսանողական հարցումներ, շրջանավարտների բավարարվածության հարցումներ, դասախոսների որակավորման բարձրացման ծրագրեր և այլն) իրականացվել է համալսարանական կրթության զարգացման կենտրոնի (ՀԿԶԿ) կողմից: Այնուհետև, վերանվանվելով համալսարանական կրթության որակի ապահովման և միջազգային համագործակցության բաժնի ([ՀԿՈԱ և ՄՀ բաժինը](#)), գործառույթներին հավելվեց ՈԱ վերոնշյալ գործընթացների կազմակերպումը, իրականացումը և վերահսկողությունը:

ԱրՊՀ ՌԾ ընդունումից հետո որակի ապահովումը դարձավ կրթության և ուսուցման գործընթացի բարելավման ուղենիշ, և անհրաժեշտություն առաջացավ ստեղծելու ինքնուրույն համահամալսարանական մասնագիտացված կառույց՝ ՈԱ՝ ավելի լայն և մասնագիտացված գործառույթներ իրականացնելու համար: Ըստ այդմ համալսարանական կրթության որակի ապահովման և միջազգային համագործակցության բաժնի հենքի վրա ԱրՊՀ ԳԽ-ի որոշմամբ և ռեկտորի հրամանով ստեղծվեց ԱրՊՀ որակի ապահովման կենտրոնը (ՈԱԿ) և հաստատվեց նրա [կանոնադրությունը](#): ՈԱԿ-ը դարձավ անկախ կառույց, որն անմիջապես հաշվետու է գիտխորհրդին և ռեկտորին: ՈԱԿ-ի հիմնական նպատակը համալսարանում ՈԱ ներքին մեխանիզմների և ընթացակարգերի գործադրումը և որակի շարունակական բարելավման մշակույթի խթանումն է:

Կենտրոնի խնդիրների շրջանակը սահմանված է նրա կանոնադրությամբ, մասնավորապես.

1) ԱրՊՀ ՈԱ քաղաքականության և ռազմավարության մշակման գործընթացին մասնակցություն ու աջակցություն դրանց իրագործմանը.

2) որակի միասնական չափանիշների պահպանում, ՈԱ գործընթացների ներդաշնակեցում և իրականացում ԱրՊՀ գործունեության բոլոր հիմնական ոլորտներում.

3) կրթության որակի համար ԱրՊՀ հաշվետվողականության ապահովում ներքին (ուսանողներ, դասախոսական, վարչական կազմ, այլ աշխատողներ) և արտաքին (դիմորդներ, շրջանավարտներ, գործատուներ, կառավարություն, լիազոր մարմին) շահակիցների առջև.

4) կանոնակարգային և կազմակերպական հենքի ստեղծում ու վարչական օժանդակություն՝ համալսարանի և նրա կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման ու հավատարմագրման համար, որակի ներքին և արտաքին գնահատման գործընթացների միջև կապի ապահովում.

5) ազգային, տարածաշրջանային, միջազգային ՈԱ գործակալությունների ու համալսարանների ՈԱԿ-ների հետ կապերի հաստատում և ամրապնդում:

ՈԱԿ-ն ունի 4 հաստիք՝ կենտրոնի վարիչը, 2 մեթոդիստը և 1 մասնագետ. նրանց գործառույթները սահմանված են ՈԱԿ-ի կանոնադրությամբ: Քանի որ կենտրոնը՝ որպես բազմագործառույթ համակարգ, նոր է ներդրվել (շուրջ մեկ տարի է), ապա նրա գործունեության արդյունավետությունը գնահատող բավարար հիմքեր դեռևս չկան:

Կենտրոնը ԱրՊՀ վարչական մասնաշենքում ունի 1 գրասենյակ, անհրաժեշտ կահույք և տեխնիկա (3 համակարգիչ, 1 պատճենահան սարք և 1 պատճենահան սարք՝ հեռապատճենի հնարավորությամբ): Համալսարանի գլխավոր շենքի հիմնանորոգման պատճառով կենտրոնն այժմ իր գրասենյակը կիսում է Փորձուսուցման բաժնի հետ, սակայն շինարարության ավարտից հետո կենտրոնի գործունեության պայմանները կբարելավվեն:

ԱրՊՀ ՈԱ գործընթացներում կարևոր դերակատարություն ունի ԱրՊՀ ԳԽ-ը, որը հաստատում է ՈԱ ոլորտին առնչվող իրավական ակտերը:

ՈԱ գործընթացների կանոնակարգային և մեթոդաբանական հենքը ձևավորելու նպատակով 2014 թ. ստեղծվեց [ԱրՊՀ գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովը](#) (գիտխորհրդի 2014թ. հոկտեմբերի 7-ի թիվ 13 արձանագրությունը), որի գործունեության նպատակն իր կանոնակարգման ոլորտի հարցերի ուսումնասիրումը, նախագծերի նախապատրաստումը, դրանց վերաբերյալ գիտական խորհրդին առաջարկություն ներկայացնելն ու դրանց կատարման վերահսկողությունն է:

Հանձնաժողովում ընդգրկված են վարչական, դասախոսական և ուսանողական (մեկ ուսանող) կազմերի՝ ԳԽ անդամ 5 ներկայացուցիչներ: Հանձնաժողովն ունի իր աշխատակարգը, որը սահմանում է հանձնաժողովի հիմնական գործառույթները՝

1) մշակել ԱրՊՀ գիտական խորհրդի հաստատմանը ենթակա ներքին իրավական ակտերի նախագծեր.

2) եզրակացություն տալ համալսարանի կառավարման մարմինների և կառուցվածքային ստորաբաժանումների կողմից հանձնաժողովին ներկայացվող փաստաթղթերի իրավական հիմնավորվածության վերաբերյալ.

3) իրականացնել ԱրՊՀ իրավական ներքին ակտերի իրավական փորձաքննություն.

4) տալ ԱրՊՀ իրավական ներքին ակտերի կամ դրանց որոշ դրույթների կիրարկման վերաբերյալ պարզաբանումներ:

ԳԽ ՈԱՄՀ-ն ունի [աշխատանքների իրականացման ամենամյա պլան](#), որը հաստատվում է ԳԽ կողմից, իսկ ուստարվա վերջում ներկայացվում է հաշվետվություն: ՈԱԿ-ն, մշակելով տարբեր բնույթի ծրագրեր, կազմակերպելով քննարկումներ, մշտապես համագործակցում է ԳԽ ՈԱՄՀ-ի հետ:

Գիտակցելով համալսարանում որակի ապահովման գործառույթների ցանցային համակարգի ստեղծման անհրաժեշտությունը ֆակուլտետներում ստեղծվել են ֆակուլտետների խորհրդներին կից որակի ապահովման մշտական հանձնաժողովներ ([ՖՈԱՀ](#)): Նրանց կազմում ընդգրկված են ֆակուլտետներում իրականացվող տարբեր բնույթի աշխատանքների գծով պատասխանատուներ, որոնք իրականացնում են ՄԿԾ-ների մշակման և վերանայման, ուսումնամեթոդական աշխատանքների վերահսկման և բարելավման, ՊԴ կազմի որակավորման, ԳԽ և ռեկտորատի որոշումների իրականացման աշխատանքներ: Հարկ է նշել, որ բոլոր ՖՈԱՀ-ի և ԳԽ ՈԱՀ-ի կազմում ընդգրկված են նաև ուսանողներ: Հանձնաժողովների աշխատակարգը գտնվում է մշակման փուլում:

ԱրՊՀ ՌԾ-ն ընդունելով որպես իրականացվող աշխատանքները ուղենշող փաստաթուղթ սահմանված Նպատակ 1, խնդիր 1.1-ից բխում և ենթադրվում էր ունենալ մասնագիտական կրթական ծրագրերի պատասխանատուներ: Ըստ այդմ՝ ամբիոնների վարիչների ներկայացումների հիմքով առաջարկվել են բոլոր [մասնագիտությունների կրթական ծրագրերի պատասխանատուներ](#), որոնց թեկնածությունները հաստատվել և ռեկտորի հրամանով ամրագրվել են ([Հավելված 10.2](#)):

Համալսարանի ինքնագնահատման գործընթացն իրականացնելու նպատակով ԱրՊՀ ռեկտորի 2017թ. դեկտեմբերի 29-ի №323 հրամանով ստեղծվել է ԱրՊՀ [ինքնագնահատման հանձնաժողով](#), որը բաղկացած է 7 անդամից, իսկ ԱրՊՀ գործունեության առանձին ոլորտներում ինստիտուցիոնալ հավատարմագրման պետական չափանիշներին համապատասխան ինքնագնահատումն իրականացնելու և համապատասխան զեկույցների նախագծերը կազմելու համար ստեղծվել են 10 աշխատանքային խմբեր՝ յուրաքանչյուրում 4-6-ական անդամ (ներառյալ մեկական ուսանող՝ բոլոր խմբերում): [Ինքնագնահատման](#) հանձնաժողովը և [ՈԱԿ-ը](#) դիտարկել են աշխատանքային խմբերի կողմից կազմված ինքնագնահատման զեկույցները, ի մի են բերել դրանք մեկ ընդհանուր զեկույցում, կազմվել է համալսարանի ինքնագնահատման զեկույցի վերջնական տարբերակը, որը պետք է հրապարակվի և լինի հանրությանը հասանելի:

ՈԱԿ-ն ուսանողներին նույնպես ներգրավում է իր աշխատանքներում. օրինակ՝ սոցիալ-ցումների թերթիկները կազմելու ժամանակ ուսանողները հրավիրվում են քննարկմանը՝ հարցաշարը փորձարկելու, ճշգրտելու, ավելի մատչելի դարձնելու համար: ՈԱ մշակույթի ձևավորման, որակի կառավարման նպատակով ՈԱԿ վարիչը, ինչպես նաև ԱրՊՀ որոշ աշխատակիցներ, 2018/2019 ուս.տարվա ընթացքում մասնակցել են ՀՀ ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված «Որակի ներքին ապահովման համակարգի ներդրում և զարգացում» թեմայով վերապատրաստումներին, ինչպես նաև փորձագետների պատրաստման դասընթացներին: ՀՀ ՈԱԱԿ-ի աշխատակիցները մեր հրավերով մի քանի անգամ այցելել են ԱրՊՀ՝ թրեյնինգներ և խորհրդատվություններ կազմակերպելու նպատակով: ԱրՊՀ ներկայացուցիչները նաև մասնակցել են ՀՀ ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված «Կրթության որակ. մասնագիտական կրթության բարեփոխումներ» խորագրով [համաժողովին](#): ԱրՊՀ-ում կազմակերպվել է ՀՀ Մասնագիտական կրթության ՈԱԱԿ 10-ամյակին նվիրված «Որակավորումների արժանահավատ շնորհում և հավատարմագրում» թեմայով [էնթոյա համաժողով](#):

ՉԱՓՈՐՈՇԻՉ Գ. Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

- Հիմքեր
- Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվություն ([Հավելված 2.9.1](#), [Հավելված 2.9.2](#))
 - [«Ֆինանսների նկատմամբ մասնագիտական պահանջները ժամանակակից աշխարհում» թեմայով կլոր սեղանի կազմակերպում ֆինանսների ամբիոնի կողմից](#)

Ներկայացնել որակի ներքին ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը և վերլուծել արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը / կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից:

Որակի ներքին ապահովման գործընթացներում ներգրավված են ինչպես ներքին (ուսանողներ, դասախոսներ և վարչական կազմ), այնպես էլ արտաքին շահակիցներ (ԱՀ պետական

կառավարման մարմինների և գործարար հատվածի ներկայացուցիչներ, ԱրՊՀ շրջանավարտներ): Որակի աշխատանքային խմբերը ձևավորվել են բուհի պրոֆեսորադասախոսական, ուսանողական և վարչական կազմի ներկայացուցիչներից, գործատուներից և շրջանավարտներից:

Այդ ընտրությունն իրականացվել է հետևյալ կարգով.

- Պրոֆեսորադասախոսական կազմից աշխատանքային խմբի թեկնածուներին առաջադրել են ամբիոնները:

- Ուսանողների ներկայացուցիչներից աշխատանքային խմբի թեկնածուներ են առաջադրել ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերությունը:

Որակի աշխատանքային խմբում ներգրավվում են նաև վարչական անձնակազմի ներկայացուցիչներ, գործատուներ և շրջանավարտներ:

ԱրՊՀ քաղաքականության մեջ կարևորվում է շահակիցների մասնակցությունը որակի ապահովման գործընթացներին: Այդ նպատակով կազմակերպվում են հանդիպումներ ԲՈՒՀ-ի արտաքին շահակիցների հետ: Այսպես, օրինակ, 2019թ. մարտին ամսում, ԱրՊՀ-ն կազմակերպել է Ստեփանակերտ քաղաքի հանրակրթական դպրոցների տնօրենների, ուսմասվարների, մասնագիտական կողմնորոշման աշխատանքների գծով տեղակալների, դասղեկների, ԱրՊՀ վերջին 7 տարիների շրջանավարտ հանդիսացող ուսուցիչների, հոգեբանների, սոցիալական ու հատուկ մանկավարժների մեկշաբաթյա մասնագիտական հավաքներ, որի նպատակն էր պարզել համալսարանի կողմից որակյալ կրթության ապահովման աստիճանը և վերհանել առկա խնդիրներն այդ բնագավառում:

Արտաքին շահակիցների (գործատուների և շրջանավարտների) հետ հետադարձ կապի ամրապնդման և բուհ-աշխատաշուկա հարաբերությունների զարգացման ուղղությամբ զգալի աշխատանքներ են կատարվում նաև ստորաբաժանումներում. օրինակ՝ տնտեսագիտության ֆակուլտետում հաճախակի են կազմակերպվում կլոր սեղաններ, գիտական ընթերցումներ և քննարկումներ՝ ներգրավելով ֆակուլտետի տարբեր տարիների շրջանավարտների և գործատուների: Արդյունքում՝ բուհում ձևավորվում է ՈԱ մշակույթ:

Պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի մեջ ընդգրկվում են արտաքին շահակիցներ: Նախագահների հաշվետվությունները քննարկվում են ԳԽ նիստում, և տեղ գտած նկատառումները հաշվի են առնվում ամբիոնների և համապատասխան ստորաբաժանումների կողմից հաջորդ տարիների ընթացքում կատարվող աշխատանքներում ([Հաւվելված 2.9.1](#), [Հաւվելված 2.9.2](#)):

ԱրՊՀ-ն կարևորում է աշխատաշուկայում մասնագիտությունների պահանջարկի վերլուծությունների իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև պետական և մասնավոր հատվածների գործատուների առաջարկությունները և նոր կրթական ծրագրերի մշակման գործընթացում փորձում է ապահովել արտաքին շահակիցների ներգրավվածությունը:

Ներկայումս համալսարանի արտաքին շահակիցները ([գործատուները](#)) անմիջականորեն մասնակցում են մագիստրոսական կրթական ծրագրերի մշակմանը և իրականացմանը: Համալսարանը նպատակ ունի այս սկզբունքը տարածելու բոլոր մասնագիտությունների և կրթական ծրագրերի վրա:

ԱրՊՀ ինստիտուցիոնալ կարողությունների վերլուծության և գնահատման նպատակով «Ուսանողները», «Հետազոտությունը և զարգացումը», «Ենթակառուցվածքը և ռեսուրսները» չափանիշների վերաբերյալ ուսանողների և դասախոսների շրջանում իրականացվել են հարցումներ: Այդ գործընթացներն իրականացվել են շահակիցների լայն շրջանակների ներգրավ-

մամբ:
 Հարցման արդյունքները վերլուծելուց հետո, ամփոփիչ զեկույցը ՈԱԿ-ի կողմից կներկայացվի գիտխորհրդի նիստին, իսկ հետո՝ կհրապարակվի:

ԶԱՓՈՐՈՇԻՉ ղ. Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

- | | |
|--------|--|
| Հիմքեր | <ul style="list-style-type: none"> • Որակի ներքին ապահովման համակարգի վերանայման քաղաքականությունը և ընթացակարգերը • Որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմները և գործիքները • ԱրՊՀ ՊՈԱԿ կրթության որակի ապահովման քաղաքականությունը • ԱրՊՀ որակի ապահովման ձեռնարկ • Կանոնադրություն ԱրՊՀ ՊՈԱԿ որակի ապահովման կենտրոնի • Աշխատակարգ ԱրՊՀ ՊՈԱԿ գիտական խորհրդի՝ Որակի ապահովման մշտական հանձնաժողովի • Ֆակուլտետային որակի ապահովման հանձնաժողովների կազմի հաստատման մասին ֆակուլտետների նիստերի առձանագրությունների քաղվածքներ • ԱրՊՀ ՊՈԱԿ ուսանողների կողմից ՊԴ կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյական հատկանիշների գնահատման սոցիոլոգիական հարցման կանոնակարգ • ԱրՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցման կանոնակարգ • ԱրՊՀ ՊՈԱԿ դասալսումների կազմակերպման և անցկացման կարգ • Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապատրաստման և պաշտպանության կարգերը • ԱրՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգ |
|--------|--|

Վերլուծել որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմների արդյունավետությունը: Հիմնավորել մոտեցումը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ինչպես արդեն նշվեց, ԱրՊՀ ՈԱ համակարգը դեռևս գտնվում է կառուցման փուլում և գործունեության արդյունավետության գնահատում չի իրականացվել: Սակայն համակարգի այն բաղադրիչները, որոնք նախկինում էլ գործել են, ժամանակի ընթացքում պարբերաբար վերանայվել և կատարելագործվել են՝ ելնելով դրանց իրականացման արդյունքներից: Այսպես՝ ԱրՊՀ գիտական խորհրդի 2014թ. հոկտեմբերի 7-ի N44-L որոշմամբ հաստատված ԱրՊՀ ՊՈԱԿ կրթության որակի ապահովման քաղաքականությունը ենթարկվել է փոփոխության (14.12.2018թ., N38-L), ինչը կապված էր ՈԱԿ ստեղծման հետ: Քանի որ ՈԱԿ-ի առջև դրած նպատակները և խնդիրները չէին համապատասխանում որակի ապահովման համակարգին ներկայացվող պահանջներին և ուղենիշների չափանիշներին, ուստի այն ամբողջովին վերանայվեց և ԳԽ-ի կողմից հաստատվեց կենտրոնի նոր կանոնակարգը ([ՈԱԿ-ի կարգը](#)):

Դասավանդման արդյունավետության և որակի վերաբերյալ ուսանողական հարցումները համալսարանում անց են կացվում դեռևս 2008 թվականից: Դրանց միջոցով գնահատվում են

դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական որակները, ինչպես նաև դասընթացների մատուցման որակը, որոնց արդյունքները նպատակուղղված են գործընթացների բարելավմանը (հիմնական դասախոսական կազմի վերընտրություն, պարզևատրում և այլն):

2017թ. փետրվարի 28-ի №7-Լ որոշմամբ հաստատվել է [ԱրՊՀ ՊՈԱԿ ուսանողների կողմից պրոֆեսորադասախոսական կազմի գիտամանկավարժական գործունեության և բարոյական հատկանիշների գնահատման սցենարի հարցման կանոնակարգը և հարցաշարը](#): Փոփոխությունների է ենթարկվել ինչպես հարցաշարի բովանդակությունը, այնպես էլ հաստատվել են նոր հարցաշարեր՝ ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ, դասավանդվող մոդուլից բավարարվածության հարցում՝ բակալավրիական ուսուցման կուրսերում, ուսանողի կողմից մագիստրոսական ուսուցման որակի գնահատման հարցաթերթեր:

Հարցաթերթերի բովանդակային փոփոխությունները հիմնականում վերաբերում են դասավանդման որակին առնչվող հարցերին և ուսանողների համար դրանք ավելի ընկալելի դարձնելուն:

Հարցումների արդյունքները քննարկվում են ամբիոնների և ֆակուլտետների նիստերում:

Դասախոսական կազմի որակավորման բարձրացման ու կատարելագործման ծրագրերը նպատակուղղված են դասախոսական կազմի մասնագիտական և մանկավարժական հմտությունների բարելավմանը: Որակավորման դասընթացները ԱրՊՀ-ում իրականացվում են 2012 թվականից, իսկ համապատասխան [ընթացակարգը](#) վերանայվել է 2013 և 2018թթ-ին:

ՊԴ կազմի որակավորման ծրագիրը ԱրՊՀ-ում իրականացնում է ՈԱԿ-ն: 2012 թվականից առ այսօր մասնակցել են որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կրթական հետևյալ մոդուլներին՝

- Անգլերենը ակադեմիական միջավայրում (I մակարդակ) – 85 դասախոս,
- Անգլերենը ակադեմիական միջավայրում (II մակարդակ) – 29 դասախոս,
- Անգլերենը ակադեմիական միջավայրում (III մակարդակ) – 6 դասախոս,
- Համակարգչային գրագիտություն (կիրառական ծրագրեր) – 104 դասախոս,
- Լսարանային ցուցադրությունների պատրաստում – 66 դասախոս,
- Մանկավարժական-հոգեբանական պատրաստություն (Խոսքի մշակույթ) – 60 դասախոս,
- Մասնագիտական պատրաստություն (մասնագիտության արդի հիմնախնդիրներ) – 14 դասախոս:

ԱրՊՀ-ն կարևորում է պրոֆեսորադասախոսական կազմի որակի բարելավումը, այդ իսկ պատճառով վերապատրաստումները շարունակական բնույթ ունեն: ՈԱԿ-ն նախատեսում է 2019/2020 ուսումնական տարվա II կիսամյակի ընթացքում նույնպես կազմակերպել որակավորման դասընթացներ՝ ըստ ամբիոնների կողմից ներկայացրած հայտերի:

Դասալսումները, ինչպես և բոլոր բուհերում, ԱրՊՀ-ում ծառայում են որպես դասավանդողների կողմից մատուցվող ծառայություններում սովորողների գիտելիքների յուրացմանն ու զարգացմանն ուղղված գործողությունների արդյունավետության բարձրացման միջոց: 2014 թվականին այդ գործընթացը ԱրՊՀ-ում կանոնակարգվեց և ԱրՊՀ ԳԽ կողմից հաստատվեց [ԱրՊՀ ՊՈԱԿ դասալսումների կազմակերպման և անցկացման կարգ](#) (2014թ. օգոստոսի 28, որոշում № 40-Լ), որը ենթարկվեց փոփոխությունների 31.10.2016 (№28-Լ որոշում) և 14.12.2018 (№38-Լ որոշում): Դասալսումները կազմակերպվում են՝ 1) Ամբիոնների (ներամբիոնային դասալսումներ), 2) ԳԽ կից մրցութային մշտական հանձնաժողովի, 3) ՈԱԿ-ի (ներհամալսարանական

դասալսումներ) կողմից:

Ամբիոնները տարվա սկզբին իրենց տարեկան աշխատանքային պլաններում ընդգրկում են դասալսումների անցկացման ժամանակացույցը: Մրցութային մշտական հանձնաժողովի կողմից կիսամյակային պարբերականությամբ իրականացվում են պրոֆեսորադասախոսական համակազմի ընտրության և թափուր պաշտոնների տեղակալման համար հայտարարված մրցույթներին հայտ ներկայացրած հավակնորդների վարած փորձնական պարապմունքների դասալսումները: Որակի ապահովման կենտրոնը կազմակերպում է համահամալսարանական դասալսումներ, որոնց կարող են մասնակցել ռեկտորը, պրոռեկտորները, դեկանները, համապատասխան ամբիոնի մասնագետը և ՈԱԿ-ի ներկայացուցիչը: 2014 թ-ից առ այսօր ՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է մոտ 280 դասալսում:

2019/2020 ուս. տարվա I կիսամյակում ՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է 18 դասալսում, որոնք նպատակաուղղված էին պարզելու «Ռուսաց լեզու», «Անգլերեն լեզու», «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» մոդուլների դասավանդման որակը ոչ մասնագիտական խմբերում: Դասալսումների այդ փուլը ավարտելուց հետո ՈԱԿ-ն հրավիրել է [նիստեր](#), որոնք վարել է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը, և մասնակցել են համապատասխան ամբիոնների վարիչները, ՊԴ կազմի ներկայացուցիչները, ՈԱԿ-ի աշխատակիցները:

Համալսարանում իրականացվող բոլոր դասալսումների արդյունքները քննարկվում են, վեր են հանվում խնդիրները, առաջարկվում են բարելավման ուղիներ:

ԱրՊՀ-ում ուսանողների գնահատման անաչառությունն ապահովելն ու գրագողության ու ակադեմիական անազնվության դեմ պայքարելը իբրև արժեքներ են ընդունվում: 2017թ. դեկտեմբերի 29-ի №323 որոշմամբ ԳԽ կողմից հաստատվել են կուրսային, [ավարտական աշխատանքների](#) և [մագիստրոսական թեզերի նախապատրաստման և պաշտպանության](#) համապատասխան կարգերը, որոնց մեջ 2015 և 2017 թթ. կատարվեցին լրացումներ և փոփոխություններ՝ գրագողությունից և վերջին 3 ուստարիների ընթացքում իրականացված թեմաների կրկնությունից խուսափելու նկատառումով: Միայն 2019-2020 ուսումնական տարում ՈԱԿ-ի կողմից իրականացրած վերահսկողության արդյունքում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների վերնագրերի կրկնության 14 դեպք է արձանագրվել: Ամբիոններին առաջարկվել է վերանայել դրանք:

Վերոնշյալ կարգի համաձայն՝ ուստարվա ավարտին՝ նախապաշտպանությունից մեկ ամիս առաջ, ամբիոնների կողմից ՈԱԿ-ին ներկայացվում են աշխատանքները, որոնք ստուգվում են՝ գրագողությունը բացառելու նպատակով:

Ներկայացնել այն կազմակերպությունների ցանկը (նշելով երկիրը), որոնց օրինակով ՄՈՒՀ-ը կատարել է որակի ապահովման գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի բենչմարքինգ (առաջավոր փորձի համեմատական վերլուծություն):

ԱրՊՀ-ն որակի ապահովման համակարգի բարելավման նպատակով կարևորում է գործընկեր հաստատությունների համապատասխան կառույցների հետ բենչմարքինգի իրականացումը:

Առաջավոր փորձի համեմատությունը սահմանափակվում է ճանաչողական ուսումնասիրությամբ. կատարվում է վերկայքերում զետեղված որակի ապահովման գործընթացներին վերաբերող տեղեկատվության (նորություններ, ընթացակարգեր, կառուցվածքային փոփոխություններ, ռազմավարական ուղղություններ, միջոցառումներ և այլն) պարբերական ուսումնասիրություն, ինչպես նաև ՀՀ բուհերի (*Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետա-*

կան տնտեսագիտական համալսարանի, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, Վանաձորի պետական համալսարանի) համապատասխան փաստաթղթային փաթեթների համեմատական վերլուծություն: Ուսումնասիրված գործընթացները և ընթացակարգերը համադրվում են ԱրՊՀ-ում իրականացվող գործընթացներին, արված հետևություններն ու դրանց արդյունքներն, ըստ անհրաժեշտության, ներդրվում են համալսարանի որակի ապահովման գործընթացներում:

ԶԱՓՈՐՈՇԻՉ Ե. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

- Հիմքեր
- [ԱՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման](#)
 - [ԱրՊՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներ \(2014-2018 ուստարիների\)](#)
 - [Հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին ԱՀ կառավարության որոշում](#)
 - [Ինքնագնահատման հանձնաժողովի քննարկումներ](#)
 - [ՈԱԿ-ի կողմից քննարկումներ ըստ ինքնավերլուծության չափանիշների](#)

Հիմնավորել տրամադրված հիմքերի հավաստիությունը և մոտեցման արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Արցախի պետական համալսարանի ինքնագնահատման գործընթացը և որակի ապահովման արտաքին գնահատումն իրականացնելու նպատակով ԱրՊՀ ռեկտորի 2017թ. դեկտեմբերի 29-ի №323 հրամանով ստեղծված ԱրՊՀ ինքնագնահատման հանձնաժողովը գործունեությունն իրականացնում է [ԱՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման](#) կարգին համապատասխան:

[Ինստիտուցիոնալ ինքնագնահատման գործընթացը](#) եզրափակվելու է համապատասխան վերլուծական զեկույցի պատրաստմամբ: Զեկույցի վերաբերյալ ստացված առաջարկություններն ու դիտողությունները հաշվի առնելուց հետո դրանց վերջնական տարբերակները կներակայցվեն ազգային հավատարմագրող կառույցին (ՈԱԱԿ) և հասանելի կլինեն նաև արտաքին այլ շահակիցների համար, որի արդյունքում արտաքին գնահատման նպատակով կկազմվի փորձագիտական զեկույց:

Դրանք բավարար հիմքեր կտրամադրեն ԱրՊՀ ՈԱ գործընթացների արժանահավատ գնահատման և բարելավող միջոցառումների իրականացման համար:

ՈԱ արտաքին գործընթացներին էապես նպաստում են նաև ԱրՊՀ-ում երկար տարիներ գործող «վերից-վար» հաշվետվողականության համակարգը, որը ներառում է ֆակուլտետների և այլ ստորաբաժանումների տարեկան հաշվետվություններն իրենց գործունեության արդյունքների վերաբերյալ և ԱրՊՀ գործունեության վերաբերյալ ռեկտորի ամենամյա հաշվետվությունը (որը հրապարակվում և տարածվում է համալսարանում և նրա սահմաններից դուրս): Կարևոր նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ ՈԱ

գործընթացներին առնչվող բոլոր պաշտոնական փաստաթղթերը հրապարակվում և տարածվում են ստորաբաժանումներում, ինչպես նաև տեղադրվում են համալսարանի պաշտոնական կայքում:

ԱրՊՀ գործունեության [գնահատման առանցքային ցուցանիշների](#) 2014-2018 ուստարիների համար լրակազմը, որը հրատարակվել է 2019թ-ին, նպատակ ունի քանակական ցուցանիշների օգնությամբ ներկայացնելու համալսարանի գործունեության արդյունքները վերջին 5 տարիների համար և տրամադրելու հենանիշեր համալսարանի ՌԾ-ի իրականացումն ուղղորդելու համար:

Տարբեր գործընթացների գնահատման մեխանիզմները հստակեցնելու նպատակով վերջին 2 տարիների ընթացքում իրականացվող բոլոր գործողությունների համար հիմքեր են ապահովվում և արձանագրվում են՝ համապատասխան վերլուծությունների երաշխիք ստեղծելու և իրականացրածի արդյունավետությունը գնահատելու համար:

ՉԱՓՈՐՈՇԻՉ զ. Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

- Հիմքեր
- [Տարեկան հաշվետվությունները](#)
 - [ԱրՊՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներ \(2014-2018 ուստարիների\)](#)
 - [ԱրՊՀ պաշտոնական կայքը](#)
 - [ԱրՊՀ Ֆեյսբուքյան էջը](#)
 - [ԱրՊՀ ՈԱԿ Ֆեյսբուքյան էջը](#)

Վերլուծել ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը ապահովող մեխանիզմների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

Ներքին և արտաքին շահակիցների համար ԱրՊՀ գործունեության թափանցիկությունն ապահովելու համար կարևոր է նրանց տեղեկացվածությունն ապահովող համակարգերի առկայությունը: Այդ նպատակով համալսարանում գործադրված են ներքին տեղեկատվության մի շարք մեխանիզմներ, որոնցից են.

- ԱրՊՀ գործունեության արդյունքների վերաբերյալ ամենամյա հաշվետվությունը, որտեղ ամփոփվում են համալսարանի ուսումնական, գիտահետազոտական ու վարչական կառույցների գործունեության հիմնական արդյունքները (տարբեր ուստարիների [գործունեության հաշվետվությունները](#)):
- ԱրՊՀ ռեկտորի ամենամյա հաշվետվությունը ԱրՊՀ խորհրդին, որտեղ ամփոփվում են համալսարանի նախորդ ուստարվա գործունեության արդյունքները (այդ թվում նաև ֆինանսական):
- ԱրՊՀ ֆակուլտետների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների (բաժինները, կենտրոններ) գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները:
- ԱրՊՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների լրակազմը, որը հրատարակվել է 2019 թվականին ([ԱրՊՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները 2014-2018 ուստարիների համար](#)):
- Դասավանդման արդյունավետության և որակի վերաբերյալ ուսանողական հարցումների և ԱրՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների

բավարարվածության վերաբերյալ հարցումների արդյունքների ամենամյա հաշվետվությունները:

- ԱրՊՀ կայքէջում (www.asu.am) տեղադրվող տեղեկատվությունը, որն առնչվում է ներքին գործընթացներին և կանոնակարգային դաշտին: Այն հնարավորություն է տալիս ուսանողներին, ապագա դիմորդներին և այլ արտաքին շահակիցներին ծանոթանալու համալսարանին և նրա տրամադրած կրթական ու գիտական ծառայություններին: Կայքէջն ապահովում է նաև հետադարձ կապի (հարց ու պատասխանի) հնարավորություն: Ներքին և արտաքին շահակիցները համալսարանի գործունեության վերաբերյալ իրենց կարծիքն արտահայտելու հնարավորություն ունեն ԱրՊՀ ֆեյսբուքյան էջում:
- «Արցախի համալսարան» պաշտոնաթերթում պարբերաբար տեղեկատվություն է հրապարակվում ԱրՊՀ գործունեության վերաբերյալ:
- Կրթական գործընթացների վերաբերյալ ուսանողների դիտարկումները, առաջարկությունները:

Հարկ է նշել, որ ԱրՊՀ-ն դեռևս չունի միասնական կենտրոնացված տեղեկատվական համակարգ՝ տվյալների մեկ ընդհանուր բազայով: Համալսարանի համար այն ռազմավարական խնդիր է, ինչն արտացոլված է ՌԾ-ում: Նպատակ 5-ում Համալսարանն իր առաջ խնդիր է դնում՝ հասարակության առջև բուհի հաշվետվողականության բարձրացում: Սահմանված են 7 քայլեր, որոնց իրականացնելու դեպքում այս բնագավառում բուհը կհասնի ակնկալվող արդյունքին:

Վերլուծել Չափանիշ 10-ով նկարագրվող տիրույթում հաստատության ուժեղ և թույլ կողմերը, արտաքին հնարավորությունները և վտանգները:

Ներկայացնել թույլ կողմերի և վտանգների հաղթահարման պլանավորվող ուղիները:

SWOT վերլուծություն	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>1. ԱրՊՀ-ում գործում են ընթացակարգեր, որոնք նպատակաուղղված են ուսումնական ծրագրերի, դասախոսական կազմի և ուսումնառության որակի շարունակական բարելավմանը:</p> <p>2. ԱրՊՀ-ում առկա է ՈԱ համակարգի ձևավորման և զարգացման փաստաթղթային բազա (ՌԾ, ՌԾ-ի իրականացման ժամանակացույց-պլան, ՈԱ ձեռնարկ, ԱրՊՀ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներ):</p> <p>3. ԱրՊՀ-ում գործում են ՈԱ</p>	<p>1. Որակի ապահովման ներքին համակարգի քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը պարզաբանող մեխանիզմների ոչ բավարար փորձարկումը:</p> <p>2. ԱրՊՀ որակի ներքին ապահովման համակարգի ընթացակարգերի վերանայման քաղաքականության անկատարություն:</p> <p>3. Ներքին (ՊԴ և վարչական կազմի, ուսանողների) և արտաքին շահակիցների (գործատուներ և շրջանավարտներ) որակի ապահովման գործընթացներին ներգրավվելու թույլ մոտիվացիա:</p>

<p>կառույցներ (ՈԱԿ, ԳԽ ՈԱՄՀ, ՖՈԱՀ, ՄԿԾ պատասխանատուների ինստիտուտ):</p> <ol style="list-style-type: none"> 4. ՈԱԿ-ն անկախ է և հաշվետու: 5. Որակի ապահովման բաժնի կողմից մշակված մի շարք կարգեր և ուղեցույցեր: 6. ԱրՊՀ Որակի ներքին ապահովման համակարգի ընթացակարգերը պարբերաբար վերանայվում են: 7. Համալսարանի հետագա գործունեության բարելավման նպատակով իրականացվող ուսանողական և ՊԴ կազմի հարցումներ: 8. Բուհում առկա են շահակիցների տեղեկացվածությունն ապահովող մեխանիզմները, որոնք նպաստում են ՈԱ ապահովման և շահակիցների հետ հետադարձ կապի ձևավորմանը: 9. ՈԱ համակարգի ձևավորմանը նպաստող փոխադարձ այցեր (բուհի աշխատակիցների մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին, ՀՀ ՈԱԱԿ-ի աշխատակիցների կողմից ԱրՊՀ-ում թրեյնինգների և խորհրդատվությունների կազմակերպումը): 10. Գործընկեր բուհերի ՈԱ վերաբերյալ գործընթացների և ընթացակարգերի համադրում և ըստ անհրաժեշտության՝ ներդրում համալսարանի որակի ապահովման գործընթացներում: 	<ol style="list-style-type: none"> 4. Ուսանողական և ՊԴ կազմի հարցումների իրականացման և տվյալների մշակման ծրագրի անկատարություն: 5. Շահակիցների տեղեկացվածության աստիճանի գնահատման և ԱրՊՀ միասնական կենտրոնացված տեղեկատվական համակարգի անկատարություն: 6. Որակի ապահովման շրջափուլի իրականացումը ոչ բոլոր օղակներում: 7. Որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմների և գործիքների ոչ կատարյալ մշակում: 8. Որակի ապահովման գործընթացների իրականացումը երաշխավորող ֆինանսական և այլ ռեսուրսների բաշխման վարչական կարգավորման անհրաժեշտություն: 9. Բենչմարքինգի տեխնոլոգիաների ոչ լիարժեք կիրառում:
Հնարավորություններ	Վտանգներ
<ol style="list-style-type: none"> 1. Գործատուների հետ համատեղ կրթական ծրագրերի իրականացում՝ համապատասխան աշխատաշուկայի պահանջներին: 2. ՈԱԱԿ-ի հետ համագործակցության փորձն ու հնարավորությունները: 3. Որակի ներդրմանն աջակցող դրամաշնորհային ծրագրերում մասնակցության հնարավորություն: 	<p>ԱՀ ռազմաքաղաքական իրականությամբ պայմանավորված՝ որակի միջազգայնացման հնարավորության սահմանափակություն:</p>

Բարելավման ուղղություններ

1. Որակի ապահովման ներքին համակարգի քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետությունը պարզաբանող համապատասխան մեխանիզմների մշակում:
2. Որակի ներքին ապահովման համակարգի ընթացակարգերի վերանայման քաղաքականության կատարելագործում:
3. Ներքին և արտաքին շահակիցների՝ որակի ապահովման գործընթացներին ներգրավվելու մոտիվացիայի ստեղծում:
4. Որակի ապահովման գործընթացներում ուսանողների մասնակցության ընդլայնում:
5. Ուսանողական և ՊԴ կազմի հարցումների իրականացման և տվյալների մշակման ծրագրի կատարելագործում:
6. Շահակիցների տեղեկացվածության աստիճանի գնահատման և ԱրՊՀ միասնական կենտրոնացված տեղեկատվական համակարգի ստեղծում:
7. Որակի ապահովման շրջափուլի իրականացում բոլոր օղակներում:
8. Որակի ներքին ապահովման համակարգի պարբերաբար վերանայման մեխանիզմների և գործիքների կատարելագործում:
9. Որակի ապահովման գործընթացների իրականացումը երաշխավորող ֆինանսական և այլ ռեսուրսների բաշխման վարչական կարգավորման կատարելագործում:
10. Բենչմարքինգի տեխնոլոգիաների կիրառում:
11. Որակի ապահովման գործընթացի շարունակականությունն ապահովելու նպատակով վերապատրաստումների իրականացում: